ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ

17

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ

ԿԱՄ

ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ

ԵՒ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Տ. Հ. Թ. ՍԱՒԱԼԱՆԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՆԱՒ

ՏՆՕՐԷՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Ս. ԱԼԹՈՒՆԵԱՆ

A II 36664

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑ

ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

1888



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

Ի ԳԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՅ

Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Ի ՅԻՇԱՏԱԿ

ԹԱԼԱՍՅԻ

ՀԱՆԴՈՒՑԵԱԼ ԱՋԴԱՄԷՐ ԱՇԷԴԵԱՆ

ՀԱՄԱՐՈՏ

ԷՑԷՆՏԻԻ

ԵՒ

ԲԱՐԵՀԱՄԲԱՒ

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԻՒՐՈՅ

ՄԵՆՏՈՐ

ՄԱՆԿԱՆՑ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՈԴԻՍԵԻՍ Իթակայ թագաւորը Տրոյական պաշարման երթալով, իւր մանկահասակ որդին Տելեմաքը՝ պալատի մէջ մնայ առանց օգնականի ու դաստիարակի՝ հաղարուսմէկ վտանգներով պաշարուած։ Բայց Ամենաս գիտուութեան շաստուածուհին, նորա ժիր քաղդ վիճակին վերայ դթացաւ, և Մենտորի կերպարանք մտնելով, (որ իւր դպրուն ամենէն առաքինի և խելացի մարդը կը համարուէր,) ոչ միայն երիտասարդ իշխանին մօտ գնայ նորա կրթութեանը հոգ տանելու, այլ և ուզեց ընկերանալ նորա հետ երկար ճանապարհորդութեանց մէջ որոնց ձեռք զարկաւ Տելեմաք իւր հայրը գտնելու համար։ Վերջապէս մեկնեցաւ նա Մենտորի անուանով. հեռացուց Տելեմաքէն այն ամէն պատահարները, որոնց հանդիպեցաւ իւր ճանապարհորդութեան մէջ. ազատեց գինքը բոլոր որոգայթներէն. [illegible] իրեն լարեցին. շատ հարկաւոր խրատներ [illegible] անոր. խնայուց իրեն այն

խորհուրդներն , որոնցմով կրնար առաքինի մարդ և բարեկրօն թագաւոր մի լինիլ . և իւր հայրը սեանելու բաղձանքին հասցընելէն ետեւ , ապրաւ զինքն Խմակայ կղզին , ուր Տելեմաք իւր սքանչելի առաքինութեամբք ժողովուրդը զարմացուց , և կառավարեց զանոնք ու սիրելի եղաւ ամենուն ։

Այս դիպուածներուս բոլորն ևս իրօք եղած ճշմարիտ բաներ չեն , այլ բանաստեղծական երեւակայութեամբք ճշմարտութիւնը զարդարած է . բայց առնցմով կ'ուսանիմք գտնել սա հարկաւոր ճշմարտութիւնը , թէ ազգք ինքնին ոչ բաւական միտք և ոչ փորձառութիւն ունենալով իրենք զիրենք կրթելու , պէտք կ'ունենան միշտ Ոգիաւոր ազգաց նման՝ առաջնորդի մի , որ զիրենք կրթէ , ուղղէ եւ իրենց տկարութեան օգնական լինի , եւ աշխարհիս թշուառութիւններէն զիրենք պաշտպանէ , որոնց կը պատահին՝ եթէ իրենց գլխաւոր միտքով ամէն տեսակ կրից անձնատուր լինին ։

Այս , սիրելի որդեակք իմ , դուք եւս գըրեթէ նոյն ծաղկահասակ Տելեմաքի փոխուակ վիճակին մէջ կը գտնուիք , և ձեր կենաց ընթացքն ևս ուր պիտի մնանէք , նորա անցած մեծամեծ ծռմերէն քիչ փոանգաւոր չէ ։ Բայց թէ դուք ևս նոյն փոանգաց մէջ էք , պիտի ունենաք նորա պէս Մենտոր մի , որ ձեր ճշմարիտ բարութեան համար ունեցած բարի նախանձաւորութենէն քաջալերուելով , ձեզի ինքնին եկածը զանց չպիտի առնու , որ զձեզ այն

վասնզնեբէն ազատ պահէ։ և Ոգիսեւսի որդին Ամենասէն ինչ ծառայութիւններ որ ընդունեց, նոյնը ձեզ եւս պիտի ասայ։ Զեր Մենտորը պիտի լինի այս գիրքս։ Ասիկայ պիտի ցուցնէ ձեր երիտասարդին եւ այն դարուցուս ուղղութիւնքն՝ որոնց մէջ դիւրաւ կ'ընկնիք թէ որ ձեր շար կրից անձնատուր լինիք, կամ շար օրինակներուն՝ որոնք միշտ ձեր աչքին առջեւն են։ Այս գիրքը պիտի ուսուցանէ ձեր կատարելու պարտքերն, և ձեր աչքին դիմաց պիտի բերէ այն պակասութիւնները՝ որոնցմէ զգուշանալ պարտիք, կամ եթէ ունիք՝ պէտք է ուղղէք զանոնք։

Այս գիրքը, հերիւնցընեմ, այն է՝ որ կը ջանայ ձեր միտքը լուսաւորել և ձեր սիրտն ուղղել. պիտի ուսուցանէ ձեզ այն ամէն բաները, որոնք կրնան խնայուն, առաքինի և երջանիկ ընել զձեզ։

Մի կարծէք թէ ասիկայ խիստ և անաչառ կերպով մի պիտի կրթէ զձեզ, ոչ, իմ սիրուն զաւակներս, և ոչ վարժապետի նման, այլ բարեկամօրէն պիտի խօսի հետերնիդ։ Իւր դասերը ձանձրալի չպիտի լինին, այլ պիտանի, զուարճալի և հետաքրքրական պատմութիւններով զարդարուած։ Զեր Մենտորն ամենեւին առանց օրինակ մի բերելու բան չպիտի ուսուցանէ ձեզ. և իւր խօսքերէն առնլի պիտի ջանայ առաքինութիւնը քաղցրացնել՝ առաքինի մարդոց գործերը ձեր աչքին առջեւ բերելով, զորոնք պատմութեանց մէջ կը կարդանք։

Որպէս զի աւելի զուարճալի լինին ձեզ այս երկար վարդապետութիւնները, կը սկսիմ մանր պատմութիւններէ, որոնց շատ կը հաճին ձեր հասակի տղայք։ Կը տեսնէք սատ մի քանի հաճուոց առակներ, որոնց մէջ ասեղնագործուած են զուարճալի քօղով մի պիտի ջանամ օգտակար գաս մի տալ ձեզ։

Բայց, սիրելի զաւակներս, զձեզ կրթելու համար ուսեցած իմ աշխատութիւններս՝ ի զուր կ'երթան, եթէ դուք եւս ինքներս հոգ չտանիք օգուտ մի քաղել այս իմ դասերէս։ Կարդացէք զասանք մտադրութեամբ, և ամէն բանէն աւելի ջանացէք՝ ի գործ դնել։ Կրկին անգամ միտքերնիդ կը ձգեմ, թէ երիտասարդ Տելեմաքն իւր խելացի առաջնորդին խրատներուն ակնջ դնելով ազատեցաւ ապառնալից վտանգներէն, եւ հասաւ իւր քաջերամսա ուցանկալի վիճակին։ Ոչն կերպով, այսմիքն դուք եւս ձեր վարքն այս օգտակար առածներով ուղղելով, զարունք հետզհետէ պիտի ցուցնեմ ձեզ, պիտի կարենաք ինքզինքնիդ պաշտպանել մոլութեան ագետալի հետեւանքներէն, և առաքինութեամբ վարուելով անգին օգուտներ քաղել։ Երանի՜ թէ այս գրքիս մէջ ձեզ տրուած դասերէս եւս նոյն պտուղները քաղէիք։ վասն զի այն ժամանակ իմ բաղձանքս խակ կը լեցուէր, և իմ երջանկութիւնս խիստ կատարեալ կը համարուէր, եթէ զձեզ երջանկացընելու կարող լինէի։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ երբեմն հարկաւոր է որ ոչոյք ճանկռտիմնէ անոնց առաջնորդեան հետեւիլ։

Ա.ՀԱ, սիրելի զաւակունք իմ, շատահաս հասակի մէջ կը գտնուիք հիմայ։ Դուք ձեր օրոցքին բոլորտիքը պատող փոսանգներէն ազատուելով՝ նոր ընթացք մի կը մտնէք. հիմա կը սկսիք աշխարհիս կեանքը վարելու։ Ձեր հիմակուան հասակը շատ զգաստալի, բայց վտանգաւոր և շատ փոսանգաւոր և փոփոխակ է։

Օրինակի համար, դիցուք թէ, մի մարդ երկար և ձախորդութեամբ լեցուն ճանապարհորդութիւն մի պիտի ընէ, եթէ նա խելացի և բախտաւոր է, ճանապարհ ելնելու ժամանակ իւր առաջին քայլն ապէկ ճանապարհի մէջ կը նետէ, և իւր փափաքելի նպատակին դիւրաւ կը հասնի։ Բայց եթէ դժբաղդութեամբ խաբուելով, ծուռ ու մոլար ճանապարհներու մէջ ինկնի, իրաւ շատ կը քայլէ, բայց ամենեւին առաջ չ'երթար, ուր որ է՝ հոն կը կենայ, եւ բնաւ տեղէն չհեռանար։ Պտըտուած կ'երթայ թանձր ու մութ անտառներու մէջ, և գինքը յանկարծ այնպիսի զարհուրելի գահավէժ տեղաւանք կը գտնէ, ուսկէ շատ անգամ եւս չկրնար ազատիլ։

Ա.հա այսպէս է ձեր հիմակուան վտանգաւոր վիճակը։ Դուք հիմայ աշխարհիս դրանը շեմին վերայ կանգնած էք։ Երկու այլ և այլ ճանապարհներ առջեւնիդ բաց ունիք, այսինքն՝

մին մոլորեալն եւ միւսն առաքինեալն։ Եթէ ձեր միտքը շարունեալն պառկած լինելոյ՝ առաջնոյն մէջ քայլել ուզէք, ինքզինքնիդ անխորշելի փառնդի մէջ կը ձգէք, և ամէն մէկ քայլ առնելուդ՝ մէկ անդունդէն միւս անդունդը կ'ինկնիք։ ու միջոցակէս զարհուրելի դարուփոս ուղղ մի կը գտնիք կ'երթամք։ ապ ուղղ կը գտնէք ձեր միջին խշուառուխիւնը։ Բայց ընդ հակառակն՝ եթէ դուք խնամուն և խելացի լինելով, առաքինեալն Ճանապարհին մէջ քայլէք՝ որ ամէն փոխերէն ու փառնդներէն ազատ է, քաղցր և հանգիստ կեանք մը կ'անցնէք։ Առաւելոյ խոստացած փարձքերը կը առնէք, որ միայն առաքինի հոգւոյ համար պահուած է։ Առաջեցէք հիմայ, սիրելի զաւակներք իմ, արշալոյս կարեւոր է որ գիտնաք ընտրուիլ ընել այս երկու Ճանապարհաց մէջ, որոնց ներքսամիջեալը մէկիկու այնքան հակառակ են։

Ամէն բան այս ընտրուիլն եւ կենաց առաջին առաքինեալներուն մէջ բարեկարգ եղանակով փարուելն կախեալ է։ Փոյթ դի՝ ինչպէս որ ազէկ կամքով սնուած ոգւոյք կատարեալ առաջնորդիւն կ'ունենան։ Նոյնպէս՝ անոնք որ մանկութիւն մէջ առաքինեալ հայրն առած են, հաստատ կը պահեն զայն իրենց բոլոր կեանքը մէջ։ և կրնամ ըսել՝ թէ բնականապէս միշտ առաքինի կը լինին։

Օրէնագրի եւ հանճարոց պատմութիւնք։

Լիգուրիան Լակեդեմոնացւոց օրէնագիրն, երկու հատ շուն լսիսոներ առաւ քովը, որոնք մէկ հօրէ եւ մէկ մօրէ ծնած էին, եւ զանազան եղանակով զանոնք կրթեց, այնպէս որ՝ երկուքն եւս իրենց ամբոխմեւոյթը՝ մին իւր որկրամոլութիւնը կշտացընելու կը ջանար, եւ միւսը միայն որսորդութիւնն կը ցանկար։

Լիգուրիոս երբոր կրցաւ իւր խորհեցած փորձը գլուխ հանել, գնաց օր մի Լակեդեմոնացւոց առջեւ, որոնք՝ ինչպէս ամբոխութիւն էր, հրապարակին մէջ հաւաքուած էին խորհուրդ ընելու համար, եւ ասաց անոնց. «Լակեդեմոնացիք, մտիկ ըրէք ինձ։ Շատ հարկաւոր բան է ազգաց օրոմին մէջ մանկութիւն ժամանակին առաքինութիւն սերմը ձգել։ Կարելի է որ բաւական չ'ինամք գուք այս ճշմարտութիւնս, բայց ես հիմա յայտնի ապոյ ցուցընեմ ձեզ զայն»։ Այս խօսքերն ասելէն յետոյ, յառաջ քշեց երկու շուներ, եւ այն բազմութիւն ժողովրին մէջ կենդանելով զանոնք, առջեւնին ամանով մի կաթ տուաւ եւ ոչ նապաստակ մի դնել առաւ։ Շուն մէկը անմիջապէս նապաստակին եւնելէն վազեց՝ որ կը փախչէր, եւ միւսը մեծ ախորժանօք մի նեղուելու ամանին վերայ, ու մէջի ապուրը մէկէն լափեց հատուց։ Այս բանը տեսնելով ամէնքն զարմանքի մէջ մնացին, բայց ոչ ոք չէր գիտեր նորա գաղտնիքը բացատրել։ Լիգուրիոս սկսաւ շարու-

նակել այն ժամանակ իւր խօսքը՝ ասելով. «Այս երկու շուներդ մէկ հօրէ և մէկ մօրէ ծնած են. բայց իրարմէ տարբեր եղանակաւ կրթուելնուն, մին որկրամոլ և միւսն որսորդ եղաւ։ Այս օրինակիս ձեր ուշադրոյ ինչ վախճան ունենալը դուք եւս վճռեցէք. և գիտնաք որ անոնք իրենց մանկութեան ժամանակ ինչ ուսմունքեամբ որ մեծցան, նոյն կերպով կ'անցընեն իրենց բոլոր կեանքը »։

ԱՌԱԿ

Երկու նաւաքարերը։

Գեղեցիկ և պարզ օր մի Անտելմոս և Փիլերոս երկու նաւաքարք, իրենց նաւակին մէջ ապրանք բեռցած կ'երթային։ Մին ամենեւին արհեստէն չհասկնալով և բնաւ վարանգէ եւս անելիքիւ՝ նաւուն ծայրը նստած կ'երգէր. իսկ միւսն աչքը ալիքներուն վերայ միշտ ուղղած ունենալով, գիտէր թէ նոցա տակը ինչ որոգայթներ ծածկուած կան։ Այսպէս երկար ատեն գետին երեսը երկուքն եւս առաջ կ'երթային ալիքներուն հետ կռուելով. հոգին իրենց յաջողակ էր և վարանգէ վախ չունէին. և ահա յանկարծ նայիս, ալիքներուն վերայ կամուրջ մի կ'երեւի կամարներով։ Անտելմոս կը պատայ Փիլերոսին. «Այդ մեզ, այս ինչ ձիւն է որ մեր գլուխն եկաւ. կը տեսանե՞ս այդ կամուրջը, անկարելի է մեզ որ դորա միւս կողմը անցնինք.

ալ ջանայ վարպետութեամբ մի նաւուն գլուխը այսպիս դարձնելու։ Պատասխան տուաւ անմիտ երիտասարդը. «Ինչու այդքան կը վախնաս. մինթէ Աղամանդքաշ եմք մենք. կամուրջը մեզմէ հեռու է, եւ եթէ կ'ուզես՝ մի անցնիր հիմայ անոր կամարները տակէն։— Չէ, կրկնեց ծերը բարկանալով. այս բոպէն է, ուսկէ մեր վիճակը կախեալ է՝ թէ բարեյաջող և թէ աղետալի. դարձիր աջ դիդ, ջանա ու արտորա, թիակները աղէկ բանեցընելով։ Փուռ տեղը կը պոռայ կը ապառնայ խելացի նաւավարը. Ի զուր կ'երթային իւր զգուշացմունները, եւ անմիտ ոգայն քնաւ մտիկ չէր ըներ, այլ իւր նաւուն ծայրը կ'ուղղէր դէպ ի այն կամրջին կողմը, ուր տեղ ալիքները կատղած էին։ Ահա այն երկայնալի ժամն եկաւ հասաւ, և վախնալով որ չխեղդուի. արիւն քրտինք կը մնան ու կը յոգնի, և կրկին խառնարնակի թիք քաշել. «Վայ ինձ դժբաղդիս. կը պոռայ. հասիք, վայ գլխուս, ահա ծովուն տակ գնացի։ Այսպէս ասելով նաւակը կամարին կը զարնէ, կը խորտակի, խեղճ ոգայն կամրջին տակէն թարմնին (¹) նաւուն մէջ ինքզինք կը գտնէ։

Անմտիրձ երիտասարդներ, ձեզ կ'ըսեմ. դուք որ այս մահկանացու աշխարհիս ընդունայն և ծաղկալից ճանապարհին մէջ քայլելու կը փափագիք, վախցիք Փիլոսոփին աղետալի և

(¹) Թարմն էր ըստ առասպելաց՝ ծերունի նաւավար. որ մանկաց ոգիները իւր նաւակով Սոխրաց գետն կ'անցնէր։

անգութ ճակատագրէն։ Եւ որ իւր ուրբը ալ-
խոյլ ճանապարհի մէջ կը կոխէ, նա որ անմոռ-
թեամբ ճանապարհէն դուրս կ'ելնէ, սառի
վերայ գնացողն պէս՝ մեծ աշխատութիւն պիտի
ունենայ միշտ որ չսահի ու չ'ինկնի. բայց անա-
գուտ, վասն զի վերջապէս ոսկորը կոտրելով
կ'ինկնի սոսկալի փոսի մի մէջ։

ԳԼՈՒԽ Բ.

Հնութեամբ ամբիշներս լաւ կ'խնայեն ազգայց՝ թէ գժուար
բան է մանկութեան ժամանակ ստացած շար սովորութիւնները
ուղղել։

Շատ ազգք կարծեն թէ իրենց ունեցած պակասութիւնը տարիներ անցնելով կ'ուղղին։ Բայց ընդհակառակը փորձով կը տեսնենք ամեն օր, թէ անոնք որ իրենց մանկութեան ժամանակին շար սովորութիւններ ստացեր են, շատ տարիներ վրան անցնելով՝ չեն կրցեր բնաւ զանոնք ուղղել։ Այսր հակառակ, մոլութեան սէրն ժամանակ անցնելով կ'աճի, և մոլի ազգայք միշտ անառակ ու շար մարդիկ կը լինին։

Երիտասարդ Իշխանի մի քերայ կանխատացութիւն՝
Իսօք ատուգեալ։

Սուրբ Գրիգոր և սուրբ Բարսեղ Ամէնդի մէջ ուսանէին կ'ուսանին Յուլիանոս երիտասարդ իշխանին հետ, որ յետոյ ուրացող ատելի

A II 36664

մակաւորը ժառանգելու արժանի եղաւ։ Խիստ յառաջմանէ խմացան այս սուրբերն իրենց գաղափարներին մաքուր անկարգութիւնը՝ անոր դիմաց գծագրութիւնէն և բոլոր արտաքին շարժուածներէն գուշակելով։ Աչքերը կրակի նման փայլուն բայց շիլ էին. նայուածքն յայտնի կը ցուցնէր իւր գաղանութիւնը. բարկացած ու գոռոզ տեսք մի ունէր. ծաղրական կերպով մի կը կոտրտուէր. առանց պատճառի ամէն րոպէ գլուխը կը շարժէր. ամուր ու բարձր ձայնով կը ծիծաղէր. յանդուգն խնդիրներ կ'առաջարկէր, և իւրեան բան մի հարցնողին երկդիմի և նենգամիտ պատասխաններ կուտար։ Զախաղանց փափաք ունէր հնութեանց փիլիսոփայութեան մէջ վարժուելու։ Խիստ քիչ սէր ունէր քրիստոնէական ճշմարտութիւնը ուսանելու. խելքը միտքը միայն աստղաբաշխութեան, կախարդութեան և ուրիշ հնութեանական սնապաշտութիւններու տուած էր։ Բոլոր այս գիտողութիւնները և ուրիշ շատ պակասութիւններ եւս, զորոնք Յուլիանոս չէր կարող ծածկել, թէպէտև կ'աշխատէր կեղծաւորութեան քօղով յայտնի չընելու, սակայն ասել տուին Սուրբ Գրիգորին թէ՝ Հռոմայու սէրութիւնը իւր գրկին մէջ մի հրեշ կը սնուցանէ։ Զբոլոր բուեցաւ սուրբը, երբ անիկայ իրօք փորձեր տուաւ նորա կարծիքը խիստ ճշմարիտ լինելուն։ Յուլիանոս իւր երիտասարդութեան հասակին մէջ օրքան շատ ունակութիւններ ունէր, ամենուն աչքին յայտնի երեւցաւ՝ երբ մեծացաւ։

ԳՐԱԴԱՐԱՆ

Քրիստոնէութեան խիստ սխալիմ թշնամիներէն մէկն է եղած, և իւր սիրարշաւութիւնն այնքան աւելցած, մինչև հրաման հանեց ընդհանուր հրամարտակաւ մի, որ կռապաշտներուն տաճարները բանան, և ինքն իւր վերայ առաւ քահանայապետութեան մեծ պաշտօնը. այս կերպով կը ջանար իւր ընդունած սուրբ մկրտութեան կնիքը ջնջել կռոց նուիրած զոհերուն արիւնովը։

Ուրեմն դուք հիմայ ձեր բռնած ճանապարհը ձեր ապագայ ընթացքին անսխալ գուշակութիւնը պիտի հանարիք։

Տգայութեան մէջ ստացած շար մոլութիւններդ կը նմանին, կ'ասէ հեղինակին մէկը, պզտիկ ծառի մի կեղեւին վերայ փորագրուած գրերուն, որոնք ծառին հետ միասին դէպ կը մեծնան և իրր թէ նորա մէկ մասը կը լինին։

Եթէ հիմակուց ջանք ընէք ձեր սիրտն առաքինութեան սիրով վառելու, կրնաք ամէն բանի յաջող, և ամէն բան ձեռք բերել կատարեալ հաւատքին մէջ։ Բայց եթէ ընդհակառակը մոլութեան շաւղին մէջ կրսկսիք քայլել, մէկ դժբաղդութենէ միւս դժբաղդութեան մէջ կ'ինկնիք, և չէք կրնար ուղիղ ճանապարհը գտնել։

Գէշ կրթութեամբ մեծցող իշխանի մի զգուշութիւն։

«Եթէ գէշ կրթուեցայ, կ'ասէր Մեծն Պետրոս Ռուսաց կայսրը։ Իմ դատախարակներս փոխանակ կատաղի բնութիւնս զսպելու, նորա

սատկանալուն եւս կ'օգնէին։ Հիմայ նոյն բը-
նութիւնս վերայ կ'ուզեմ. եւ այս սովորու-
թիւնս այնքան զօրացած է իմ վերայս, զոր չեմ
կրնար բարկութիւն եկած ժամանակս զսպելու։
Եւ որ իմ հպատակացս բնութիւնը ուղղեցի,
չեմ կարող ինքզինքս ուղղել։

Ահա այս բանս դուք եւս պիտի փորձէք,
եթէ հիմակուց շաշխատիք ձեր կիրքերը սան-
ձելու. որոնք հիմայ կայծերու կը նմանին որ
դիւրաւ կը մարին, կամ առիւծի կորիւններու՝
որոնք դիւրութեամբ կը նուաստին եւ մինչեւ
կրնայ մարդ զանոնք իւրեան ընտանեցընել։
Բայց, ցէր մի արասցէ՝ որ այն կիրքերը դըժ-
բաղդութեամբ ձեր սրտին մէջ մեծալով ուժ
առնուն մեծնան, վասն զի գէշ հրդեհ մի կը
ձգեն սրտերնուդ մէջ, եւ քիչ ժամանակէն
կատղած առիւծներ կը դառնան եւ կը պատ-
ռեն զձեզ։

Ինչպէս որ հիւանդութիւն մի եթէ մեր
վերայ մեծալով հնանայ, վերջապէս 'ի գերեզման
կ'ինկեցընէ զմեզ. այնպէս կիրքերն հնանալով
մեր սրտին մէջ՝ մեր հոգին կը սպանանեն։ Ապրի
բերան սովորաբար թեթեւ հիւանդութիւն մի
են, որ դեղով դիւրութեամբ կը բժշկին. բայց
եթէ հոգ չը տանիմք շուտով անոնց ճար մի
դանելու, եւ այն գէշ խմորը վերցընել մեր վե-
րայէն, որ հիւանդութեան պատճառն է, յե-
տոյ կրսկսի խմորիլ այն. եւ մեր բոլոր արիւնը
կ'ապականէ. այն ժամանակ կ'ինկնինք բժիշկնե-
րուն ձեռքը ոտքը, դեղ սա դարման խնդրելով,

բայց ամենեւին օգուտ մի կը լինի արդեւք, ոչ երբէք, այլ կ'առնու կը տանի զմեզ այն թեթեւ հիւանդութիւնք, որ կրնար բժշկուիլ եթէ առջի բերան զեղ ընէինք։

Երանի ուրեմն այն ազգայոց ու երիտասարդաց, որ իրենց մատաղ հասակէն կրկնին առաքինական սովորութեանց հետեւիլ. և արքան կը ցաւիմ անոնց, որ զէշ մոլութիւններ կը սառնան։ Եթէ ասոնք իրենց գլուխը գալիք դժբաղդութիւնք չեն իմանար, յետոյ երբ մեծնան՝ պիտի լան նորա վերայ. բայց ճար մի պիտի գտնե՞ն արդեւք։

ԱՌԱԿ

Կացեին եւ. նորաբոյս տունկ։

Տղուն մէկն իւր հօրը հետ տան մէջ եղած պարտէզը կը մտնէ զուարճանալու համար։ Մէկէն աչքը ընուն կը հանդիպի նորաբոյս տունկ մի, որ սասոսկ փոքրիկն երեւէն ծառելով գլուխը վար իջեցուցեր էր։ Հայրն՝ որ միշտ կը ջանար օրինակներով խրատել իւր որդին և նորա վարքն ուղղել, դարձաւ ասաց. — Կը տեսնե՞ս այս ծառս, որ թէպէտ մեծցած և տերեւներն իսկ թափած է, բայց ինչպէս աղեղի նման ծռուեր է։ Գնա՛, տիրելի որդիս, գնա՛ այն ծառն առաջինին պէս շտկէ։ — Խիստ աղէկ, պատասխան տուաւ իսկոյն որդին, և սկսաւ ձեռքովը վեր ընել զայն ու շտկեցուց։

—Ապրիս, կրկնեց հայրը. բայց այն տեղ կաղնիի (մէշէ) մի ծառ կը տնկենեմ, որուն բունը շատ գիտէր քանի ժամանակէն ի վեր այնպէս ծրուռուեր է. Իրաւ քիչ մի ծեր է, բայց ինչ օգուտ որ այն ալ մատղաշ տունկին պէս ուզղելու հարկաւորութիւն ունի. Աղէ, շուտով մօտեցիր նորա քով, եւ քաջութեամբ նոյն ծառն եւս շակէ տնտնեմ։» Ցզան խնդալով մի ատաց իւր հօրը. «Հայր իմ այնքան կարողութիւն չունիմ եւս, եւ ոչ Սամիսոն եմէ ոգի բլլար՝ կրնար զայն ուզղել։ Ոչ թէ միայն ցուցրցած կաղնիի ծառերդ, այլ եւ թեզաշի ծառն, նոյնպէս կնձնին (գարա ագաճ) եւ եղեւինն (չամ) մատներդ արմատէն կը խլէի կը հանէի, եմէ զզտիկ լինէին։ Բայց այն ծառն որ անգամ մի գետնի տակ խորուն արմատներ ձգեր է, խլելու կարողութիւնը կացինին միայն շնորհուած է։—Այ՛, եւ եւս այս կ՚ուզէի, կրկնեց բարեմիտ հայրն, այս կ՚ուզէի ուսուցանել քեզ քո բերնիդ խօսքերովը։ Նորահատակ տղու մի սրտին՝ սիրոյ, ցանկութեան, եւ յիմարական կիրքերը, փոքր ծառերուն նման մէկմէկ վերքեր են, զոր բժշկելու համար բաւական չեն այնքան քրտինքներն, աշխատութիւնն եւ տառապանքներն, որոնց վերայ տարիներ անցած են, եւ հին մոլութիւններդ միշտ աւելու կը ջանան զանոնք։»

Այս առակը միտքս գեղեցիկ պատմութիւն մի ձգեց, եւ ուրախութեամբ պիտի կարդայ դուք եւս, վասն զի լաւ կ՚իմացընէ թէ որքան

հարկաւոր է մարդոյս որ իւր ուղղութեան ժամանակ ունեցած պակութիւններդ ժամ մի յառաջ ուղղէ։ Ահա այս տեղս կը դնեմ, ինչպէս որ Հարանց վարքին մէջ կը պատմուի։

Ճգնաւորի մի խնամուն ջրաղնէն իւր աշակերտներուն հետ։

Ճգնաւորի մի աշակերտներն հարցուցին իրեն օր մի, թէ ինչ ընեն որ գիւրութեամբ յաղթեն իրենց կրքերը։ Եւ որովհետև մի հանապազորդ անտառի մէջ կը բնակէին ասոնք, ուր կային մեծամեծ ծառեր եւ նոճիներ, ուստի բարի Ճգնաւորը փոխանակ պատասխան տալու անոնց, պզտի ծառ մի ցրցուց եւ հրամայեց անոնցմէ մէկուն որ երթայ զայն արմատէն փրցուներ հանէ։ աշակերտն շուտ մի կատարեց նորա հրամանը միայն մէկ ձեռքովն աշխատելով։ Յետոյ ուրիշ ծառ մի ցրցուց անկէ մեծ, որ թէպէտ այն ալ հանեց աշակերտը, բայց քիչ մի դժուարութեամբ, և հարկ եղաւ որ երկու ձեռքով աշխատի։ Յետոյ առելի մեծը ցրցուց անոր, զոր չկրնալով միանակ իրեն հանել, իւր ընկերներէն մէկուն ալ նոյնպէս շատ աշխատելով այնպէս իրեց։ Վերջապէս իսնամուն ծերը մի մեծ և բուսակուռ հսկայ ծառ ցոյց տուաւ անոնց որ հանեն։ Ուստի ամէն աշակերտներ միասնաբար գալով՝ իրենց բոլոր ուժովն աշխատեցան որ այն ծառն իրեն հանեն, բայց չկարացին։ Այն ժամանակ տեսրը Ճգնաւորն սկսաւ խրատել իւր աշակերտներն՝ ասելով. «Որելի

գաւակունք, ահա մեր կիրքերն եւս առանց կը ենթանին. քանի որ արմատացած չեն, դիւրին է խլել զանոնք. եթէ քիչ մի ջանամք անոնց յաղթելու, բայց երբ առնն անցնելով մեր սրտին մէջ արմատ ձգեն, շատ դժուար կը լինի յաղթել անոնց։ Ապա ուրեմն քանի որ այդ մատաղ հատակի մէջէն, ջանացէք որ յաղթէք ձեր թշնամեաց, այսինքն ձեր կրից. եթէ ոչ հեռագիտէ այսպէս ուժ կ'առնուն անոնք, որ ձեր յաւիտենական կորստեան եւս պատճառ կը լինին։

ԳԼՈՒԽ Գ.

Աստուածպաշտութեան վերայ։

ԶԱՐ սովորութիւններէն զձեզ պահելու համար, որոնք ձեր ազգայական հատակը կը խանգարեն, և պատճառ կը լինին ձեր բոլոր կեանքը թշուառաբար անցընելու, Աստուածպաշտութենէ ուրիշ աւելի օգտակար և անդրդուն միջոց չկայ։ Ասոր համար է որ կ'ուզեմ նորա հարկաւորութիւնն և օգուտները ձեզ խնայելով այս տեղ։

ՅՕԳՈՒԱԾ Ա.

Աստուածպաշտութենէ աւելի հարկաւոր բան չկայ։

Աստուած զձեզ ստեղծեց որ իրեն ծառայէք, և սիրտ մի տուաւ ձեզ՝ որ զինքը սիրէք։

Աբեմն պէտք է ձեզ, սիրեն զաւակունք, որ անհրաժեշտ պարտաւորութիւն համարիք նորա ծառայելն ու սիրելն։

Անշուշտ բնութիւնն գուցա ոչու մի տեղ կը դնէիք դուք զձեզ, եթէ չսիրէիք ձեր ծնողքն, որոնք ձեզ կեանք տուին, և իրաւունք կ'ունենայիք։ Բայց մտածեցէք անգամ մի, որ դուք երկնքին մէջ հայր մի ունիք, որ քան զամենն մարդիկ արժանաւոր է ձեր սիրոյն։

Այս գիտած և կատարեալ հայրը՝ Աստուած է։ Նա ամենն մարդոց կը հրամայէ որ զինքը սիրեն, բայց աւելի կ'ախորժի եթէ երիտասարդ ոչու մի որոնէն հնազանդութեան ու սիրոյ նշանն ընդունի, քանզի որ՝ պզտիկ ոչուն սիրան աւելի մաքուր և ողջախոհ է։

Օր մի Առաքեալներքը Յիսուսի քովէն մէկդի հեռացընել կ'ուզէին պզտիկ ոչուն, որոնք կ'աշխատէին նորա մօտենալու։ Բայց Յիսուս տեսնելով զանոնք, «Թողէք ասաց, որ այս պզտիկ ոչուն ինձ մօտենան, վասն զի անոնց (և անոնց նմանող ոչուոց) է երկնից արքայութիւնը»։

Աստուծոյ սիրելի նորա, սիրեն զաւակունք ջերմեռանդ և ճշմարիտ աստուածպաշտութեամբ։ Աստուծոյ սիրելի լինելու համար՝ ոչ հազուագիւտ տաղանդ և ոչ ազնուութիւն հարկաւոր է, և ոչ ուրիշ խնամտութեան յատկութիւններ, որոնք մարդկանց քով միայն հաճոյ և պատուական բաներ են։ Աստուծոյ քով միայն աստուածպաշտութիւնն է որ արժէք ու-

նէ, որով միայն կրնամք հաճոյ լինել նորա առաջը։

Թագաւոր Եզոց հոգիւց։

Աստուած խոստանալով իւր ժողովրդեան մի թագաւոր տալու, հրամայեց Սամուէլին որ երթայ Յեսսէին եւ թագաւոր օծէ նորա որդւոցը մէջէն զայն, որ Աստուած ընտրուիլն արժանի դատի։ Յեսսէ ցրցուց Սամուէլին Եղիաբ անուն անդրանիկ որդին, որուն վրայ կերպարանքը եւ հասակին մեծութիւնը տեսնողը կ'ասէր՝ թէ թագաւոր լինելու արժանի մարդ է։ Ուստի մարգարէին աչքին եւս այնպէս երեւալով՝ օծելու վերայ էր զանիկայ, երբ Աստուած խնայեց նորա իւր սխալանքը։ Յեսսէ իւր միւս վեց որդիքն եւս նոյնպէս հեռացուցեալ ցոյց տուաւ Սամուէլին, բայց Աստուած խօսեցաւ անոր թէ՝ անոնց մէջ եւ ոչ մէկն ընտրուիլն արժանաւոր էր։ Վերջը միայն փոքր որդին Դաւիթը, որ ոչխարները կ'արածէր, ուստի կանչել տուին զանիկայ, որ գալուն պէս՝ դարձեալ խօսեցաւ Աստուած Սամուէլին հետ եւ ասաց։ «Էլ, օծէ Դաւիթն, ինչու որ զայդ ընտրեցի ես թագաւոր իմ ժողովրդիս վերայ»։

Գիտէք արդեօք ինչու համար Դաւիթ միւս եղբայրներէն աւելի արժանաւոր համարուեցաւ, որոնք առաւել յարմարութիւն ունէին թագաւորելու։ Նոյն ինքն Աստուած ասոր

պատճառը յայտնեց Պաղեստինի, երբ նա Եգիպտէն ընտրել կ'ուզէր, և ասաց. «Մարդիկ միմիայն արտաքին կերպարանքը կը տեսնեն, բայց Աստուած սրտին մէջ եղած գաղտնիքները կը յայտնէ»։ Ասել կ'ուզէ թէ՝ մարդիկ այլոց արժանաւորութիւնն ամենայն արտաքին երևութէն կը գտնեն. իսկ Աստուած ոգւոյն բնաւորութիւնն ու սրտին զգացմանց վերայ կը դատէ։ Ուստի պէտք է որ միշտ զԱստուած ու ծառայենք իրեն, որպէս զի նորա շնորհաց արժանաւոր լինինք. և աստուածպաշտութիւնէն ի զատ ուրիշ ոչ մի բան չկայ, որպէս մարդ կարող լինի հաճոյ գտնուիլ նորա աչքին։

ՑՕԴՈՒԱԾ Բ.

Ամեն բանէ առաջի Աստուածպաշտութիւնն ընտրելի է։

Թէպէտ և բնութիւն խիստ գեղեցիկ և ընտիր ձիրքերով զարդարուած լինիք, աշխարհիս բոլոր գիտութիւններուն տէրեան և հարստութիւններ և պատիւ ստացած լինիք, եթէ ձեր սրտին մէջ աստուածպաշտութիւն չկայ, Աստուծոյ աչքոյ ոչինչ չէք համարուիր։ Բայց թէ որ, ընդհակառակն, բնութիւն և բազդին պարգևներէն զուրկ մնացած, և մի միայն Աստուծոյ սէրն և երկիւղն ունենաք, նորա առջև աւելի մեծ կ'երևիք քան զբոլոր նշանաւոր գիտցողներն, որոնց վերայ աշխարհս կը զարմանայ. բայց երկնաւոր Դատա-

ուրը կը գտանուի և կը յանդիմանէ զանոնք, եթէ աստուածպաշտութիւնն անոնց գիւղաղնութեան հիմը չլինի։

Լուդովիկոս Թագաւորի իւր որդւոյն տուած խրատները։

Լուդովիկոս Թ. (¹) Գաղղիոյ Թագաւորը, որ իւր գիտութիւնէն եւ քաջութիւնէն աւելի իւր առաքինութիւններովն և սուրբ վարքովը պայծառացուց զԳաղղիան, քրիստոնեայ անունը աւելի մեծ կը համարէր իրեն՝ քան թէ Թագաւորական տիտղոսը, և զաստուածպաշտութիւնը աշխարհիս բոլոր մեծութիւններէն վեր կը դասէր։ Ուստի երբ մահուան դուռը մօտեցաւ, իւր մօտ կանչեց որդին, եւ յետագոյ խրատներըս տուաւ անոր, որոնք արժանի են բոլոր ազգայոց ականջին միշտ կրկնելու։

«Սիրելի զաւակս, առաջին խրատս զոր քեզ պիտի տամ, այս է, սիրէ զԱստուած բոլոր սրտովդ, վասն զի առանց այս սուրբ սիրոյն փրկութեան չեմը համարիր։

«Զգոյշ կաց չընել այնպիսի բան մի՝ որ Աստուծոյ անհաճոյ լինի, այսինքն մեղք գործելէն։ Լաւ համարէ դու մեծամեծ տանջանքներ կրել՝ քան թէ զԱստուած վշտացընել։

(¹) Գաղղիոյ տիտղոսը նոսրագ խիստ տառերի և խիստ մեծ թագաւորներէն մին եղած է Լուդովիկոս Թ.ը։ Քրիստոնէական կրօնին վերայ այնքան մեծ նախանձաւորութիւն ունէր, որ երբեմն անգամ սուրբ երկրին տիրելու գնաց։ Մեռաւ Թունիսան (Թունուզ) քաղաքը 1270 թ։

«Սակայն սակայն մեղքերդ խոստովանիր, ուստի նայիր որ խոստովանահայրդ գիտուն և աստուածապաշտ լինի, որ կարենայ ուսուցանել քեզ այն բաները, զոր պարտաւոր ես գործելու՝ եթէ բարի են, կամ՝ անոնցմէ հրաժարելու՝ եթէ չար են։

«Արքայն պաշտօնեներու և տուրք պատրաստողներ ջերմեռանդութեամբ միշտ ներկայ գտնուիր. և զգոյշ կաց որ այլոց հետ չխօսիս, եւ աչքերդ այսպիս այնպիսի չը պտտցընես. այլ մտքովդ և սրտովդ ջերմեռանդաբար աղօթէ։

«Զգոյշ եղիր որ շինկերանաս այն մարդոց հետ, որոնք ճշմարիտ առաքինի չեն։

«Բարիքներն ամէն բանէն վեր դասէ, և առէ այն չարիքներն որ այլոց վերայ կը տեսնես։

«Այս կերպով քո աստուածպաշտութիւնդ օրինակ լինի այլոց. և այն ժամանակ ոչ ոք չհամարձակիր քո առաջդ և ոչ շնչին խօսք մի զրուցել, որով ընկերի սիրոյն դէմ մեղանչէ կամ մեղք գործելու պատճառ լինի։

«Սակայն փառք տուր Աստուծոյ իւր բոլոր երախտեաց համար՝ զոր քեզ շնորհեց, որպէս զի արժանի լինիս միշտ աւելի բարիքներ ընդունելու անկէ»։

Ինչ որ այս բարեպաշտ մարգարէն իւր որդւոյն ասէր ասէր կ'ասէր, նոյնը և ես ձեզ կը կրկնեմ, սիրելի զաւակունք իմ. և ահա այս խրատներն են զոր կ'ուզեմ ձեր սրտին և մտաց մէջ խորունկ տպաւորելու։

Վախցիք Աստուծմէ, կ'ասէ իմաստունն,

և պահեցէք նորա պատուէրներն, որոնցմէ կախեալ է մարդոյս երջանկութիւնը։

Գիտութիւններ, հարստութիւններ, պատիւ, ամենքն եւս բարիք են, բայց առանց աստուծոյ եւս կրնամք լինել. իսկ աստուածպաշտութիւնն անհրաժեշտ հարկաւորութիւն մի է։ Զամենայն բան օգտակար կը լինի. առանց աստուծոյ ամենն ինչ թոյնի կը փոխուի, և ամենն ինչ յանցաւոր ու դժբախտ կ'ընեն զմեզ։

ՑՕԳՈՒԱԾ Գ.

Աստուածպաշտութիւնը միայն կրնայ ցմեզ երջանիկ ընել։

Պարապ տեղ աշխարհիս բարեաց եւ հաճութեանց մէջ կը փնտրուի մարդս իւր երջանկութիւնն, որ միայն աստուածպաշտութեան եւ Աստուծոյ ծառայութեան մէջ կը գտնուի։ Ամբարշտին համար խաղաղութիւն չկայ, կ'ասէ Հոգին Սուրբ։ Խղճմտանաց խայթերը միշտ մտքութեան հետ կ'ընկերանան, եւ անառակութիւնը մարդս ողբալի ու թշուառ կ'ընէ։

Անառակութեան չար հետեւանքները։

Անառակ ազգայն՝ զոր սուրբ Աւետարանին մէջ կը կարդամք, ձգեց իւր հօր տունն եւ գնաց հեռացաւ իւր հայրենիքէն, յուսալով այն տեղ ուրախ ու զուարթ կեանք մի վարելու. բայց տես թէ ինչ գէշ հետեւանքներ ունեցաւ

այս իւր ըրած անմիտ առաջադրութիւնը, իւր բոլոր ունեցած սուակները, ուրախութիւններու, կոչունքներու և ամեն տեսակ անառակ գործքերու մէջ ուտել վատնելէն ետքը, նայեցաւ որ բռնած ճանապարհը ելնելու ճանապարհ չէ, ջանք ըրաւ ինքզինք զսպել քիչ մի և իւր ազատութեան առնձ գնել, այն ազատութեան որու համար կատղելով յեսոյ յանձնառու եղաւ երթալ պարոնի մի քով ծառայութիւն ընելու, սատրկ տառապանքներ և նախատինքներ կրել անկէ, մինչեւ ուտելու հայց չգտնելով, այն գարշելի անասուններուն կերած եղջիւրին գոհ կը լինէր, այն ալ թէ որ տային։

Ահա այս թշուառ վիճակիս մէջ կ'ինկնին բոլոր այն ազգք, որ Աստուծմէ կը հեռանան, մեր ճշմարիտ Հօրէն, իրենց շար կիրքերը կատարելու համար։ Կը կարծեն անոնք թէ իրենց սրտին բոլոր հաճութիւնը, զբօսանաց և մարմնապաշտութեան մէջ կը կայանայ. բայց անոնցմէ միայն վիշտ և դառնութիւններ քաղելով, կըստիպուին յեսոյ խոստովանիլ թէ միայն աստուածպաշտութիւնն է որ զմեզ ճշմարտապէս երջանիկ կ'ընէ։

Սղոմոն իմաստնոյն նշանաւոր խօսքերը։

Սղոմոն աշխարհիս բոլոր թագաւորներէն հարուստ, զօրաւոր և իմաստուն էր։ Աշխարհիս ջրոս ծայրերէն կուգային անթիւ մարդիկ անոր հրաշալի իմաստութիւնը մտիկ ընելու։

Սոդոմն չէ թէ միայն իւր հարստակիներէն, այլ և բոլոր ազգերէն ու թագաւորներէն յարգ ու պատիւ կ'ընդունէր, ու կը սիրէին զինքը։ Իւր գիտութիւնն ամէն բանի վերայ կը տարածէր, և մինչև քնութեան խիստ խորին գաղտնիքներն ու սիրոյ կ'առնոյր կը հասկընար։ Իւր պալատներն առատ ոսկիով և արծաթով զարդարուած արքունական նման կը փայլէին։ Սակայն, թէպէտ և բոլոր այս բաներս ինք կը վայելէր, որոնց մէջ մարդս կարծէ թէ մարդկային երջանկութիւնն կը կայանայ, բայց միշտ այս խօսքերս կը գրուցէր. «Ամէն բան ընդունայն է և միշտ սրամ, բաց ի Աստուծոյ երկիւղէն և նորա սրբազան ծառայութենէն»։

ՑՕԴՈՒԱԾ Դ.

Աստուածպաշտութեան զարգացումներէն գիրքերուն կրնան ի գործ դրուիլ։

Աստուածպաշտութեան պահանջած պարտաւորութիւնները թէպէտ և ծանր են, բայց ձեր կարողութենէ վեր բան չհրամայեր ձեզ. և կան ձեր հասակով անհամար պզտիկ ուղիներ, որոնք հաւատարմութեամբ կը կատարեն միշտ անոր պարտքերը։

Աստուածպաշտ և չերմեռանդ տղայ։

Տովբիթ իւր տղայութեան ժամանակէն ի վեր Աստուծոյ ծառայելէն ի զատ ուրիշ բանի

մի չէր ախորժեր. երբ իրեն հասակակից եղող-ներբը կուց առջեւ երկրպագութիւն ընելու կ'երթային, ինքը ճշմարիտ Աստուծոյ տաճարը կը մտնէր աղօթք ընելու։

Ամուսէլ իւր ծաղիկ հասակին մէջ Աստուծոյ տաճարն ընծայուելով, այնքան սիրելի եղաւ Աստուծոյ իւր աստուածպաշտութեանն և առաքինութեանց համար, որ երբ տասներկու տարիքն հասաւ, մարգարէութեան գերագոյն աստիճանի բարձրանալու արժանաւոր եղաւ։

Սուրբ Ներսէս Լամբրոնացին ձեր տարիքով ոգայ մի էր, որ քանի կը մեծնար հասակաւ, Աստուծոյ շնորհքն եւս իւր հետ կը մեծնար, ջերմեռանդութիւնն և աստուածպաշտութիւնն օրէ օր կ'աւելնային. աշխարհիս զուարճութիւններէն բոլորովին հրաժարուելով, միայն աղօթքն և սուրբ գիրքեր կարդալն իրեն հաճութիւն համարած էր։ Օր մի իւր ոգեւորութեան ժամանակ՝ Կոստանդինուպոլիս Ամուսէլ կայսեր մօտ տարին գինքը. կայսրը գիրկն առնելով՝ ուզեց նորա միտքն ընել որ իւր մօտ մնայ, և հոգիին աւելի մեծ պատիւներու հասցընելու եւս խոսք կուտար։ Իսկ սուրբ ոգին պատասխան տուաւ և ասաց. "Եթէ այդ մեծութիւններն անանցանելի լինէին, մտիկ կ'ընէի խօսքիդ. բայց եւս կը չանամ անանցանելի մեծութեան հասնելու"։

Արդեօք դուք այն ոգոցմէ՞ն էք, որոնք կ'ասեն թէ՝ երիտասարդութիւնը զուարճութիւններու ժամանակն և եղանակն է, և թէ՝ ծերու-

թեան մէջ միայն պէտք է մարդ զինքը Աստուծոյ ընծայէ և հոգւոյն վերայ մոռանէ։ Եթէ դուք եւս այս մտքով էք, կարդացէք հետագայ պատմութիւնն և օգուտ քաղեցէք այն իմաստուն պատասխանէն, զոր սուրբ տղայն տուաւ։ և ահա այս է։

Սուրբն Ղեղոս իւր տղայական ծաղիկ հասակին մէջ, աշխարհիս խաբէբայ հրապուրանքներուն, գժբախտութեամբ անձեռնտուր եղած էր։ և իւր շար ընկերներէն՝ որոնց հետ միշտ կը տեսնուէր, մանաւանդ անդունդին մէջ զինքը ձգեր էին։ Բայց կրօնքին վերայօք եղած այն մեծ ճշմարտութիւնները, զոր իւր տղայութեան ժամանակ յաճախ լսեր էր, այնպէս զեղջ մի ձգեցին իւր սրտին մէջ, մինչ զի ծանր հիւանդութեամբ պատկած լինելով, որ զինքն մահուան դուռը հասուցեր էր, և գեռ լաւ չբժշկուած՝ երբեմն իւր հօրը տունէն, գնաց գէպ ի անապատ որպէս զի զինքը բաղդատիցի Աստուծոյ յանձնէ։ Ճանապարհին Սարակինոսի (1) մի կը հանդիպի, որ կը հարցուներ իրեն թէ՝ ո՞վ ես դու, ո՞ւր կուգաս և ո՞ւր կ'երթաս։ Ղեղոս պարզմտութեամբ յայտնեց անոր իւր դիտաւորութիւնը։ Սարակինոս տեսնելով նորա երիտասարդական հասակը, ասաց. "Պէտք է որ ապառաջիր և ծերութեան հասած ժամանակդ կրօնական կեանքն ընդունիս։ — Ծերութեան ժամանակ, կ'ասես, պատասխան տուաւ Ղեղոս. թէ որ դու մի մեծ

(1) Սարակինոս կը կոչուէին հին Թուրքերն և Իսմայէլացիք։

իշխանի մեծ ծառայութիւն ընելու միտքդ դնէիր, կրսպասէիր որ քո տարիքդ եւ ուժդ հասնելէն յետոյ նորա ծառայութեան մտնես։ — Ոչ, պատասխանեց Սարակինոսը։ — Ուրեմն ինչո՞ւ կ'ուզես դու, կրկնեց Նեզոս, որ գերագոյն Թագաւորին ընեմ այն բանը, զոր դու այս աշխարհիս մէջ եղող Թագաւորին չես ուզեր ընել։ Սարակինոսը չկրցաւ ուրիշ պատասխան տալ, և զարմացաւ Նեզոս երիտասարդին խնամութեան վերայ։

Այս օրինակիս հետեւեցէք դուք եւս ձեր միտքը ուղղելով, սիրելի զաւակունք իմ, և մի երբէք հաւատաք՝ Թէ առաքինութիւնն եւ աստուածպաշտութիւնը յատուկ չեն ձեր հասակին։

Զէ՞ք քամահրեր դուք այն տղայքը, որ կը համարձակին ասել Թէ՝ քանի որ փոքր եմք, պարտաւոր եմք մեր հայրը սիրել, և Թէ՝ այս պարտաւորութիւնը կատարելու ժամանակն ուրիշ է։ Ուրեմն ինչպէս կրնայիք համարձակիլ դուք այս կարծիքն ունենալ Աստուծոյ համար, որ բոլոր հայրերէն գերագանց է։

Գիտէք դուք Թէ պիտի հասնիք միանգամ ծերութեան հասակին, ուր երիտասարդներուն մեծ մասը հասնելէն յետոյ միտքերնին կը դնեն այլ եւս այնուհետեւ զգաստանալ եւ շիտակ ճանապարհին մէջ մնալ, Թէպէտ և միշտ ետ կը մնան անկէ։ և միթէ կրնա՞ք բոլորովին Աստուծոյ նուիրել ձեր անձը։ Սիրելի որդեակք իմ, անդամ մի մոռացեցէք՝ որ մահն ոչ տարիք

և ոչ կարիք կը նայի, այլ անգիտութեամբ կը վերցնէ կը տանի աշխարհէս թէ երիտասարդներն և թէ ծերերը։ Ո՜հ Աստուած, ինչ խեղճութիւն կը լինի ձեզ, երբ մահը կուգայ յաւիրջատակելու զձեզ ձեր կրից նոր բորբոքած ժամանակ, ինչպէս եղաւ Արիստոդեմին և ուրիշ անթիւ մարդկանց։

Գուցէ Աստուած նոյն անաչառութեամբ չվարուիր այն ազգայոց հետ, որոնք իրենց երիտասարդութեան մէջ իրմէ կը հեռանան, սակայն և ոչ իսկ կը թողու զանոնք առանց խրդճմտանաց, որ զինքը մոռցողներուն և իրեն դէմ մեղանչողներուն տանջանքն է։

ԳԼՈՒԽ Գ.

Աստուածպաշտութեան այլ և այլ կրթութիւնները։

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ մէջ չկրնար մարդ առաջ երթալ, բայց եթէ շատ կարգալով։ Արհեստներու մէջ մինչեւ որ երկար ժամանակ կրթութիւններ չընէ, չկրնար երեւելի լինել, և ոչ նմանապէս կրնայ մարդ ճշմարիտ և հաստատ աստուածպաշտութիւն ունենալ առանց ի գործ դնելու շարունակ անոր այլ և այլ կրթութիւնները։ Ուրեմն ամէն բանէն աւելի պէտք է որ այս կրթութիւններն ընէք, եթէ կ'ուզէք կատարեալ աստուածպաշտ լինել։ Այս վախճանը հասնելու կ'աշխատիմ ցուցնել ձեզ մէկիկ մէկիկ անոնց հարկաւորութիւնն և օգուտները։

ՅՕԴՈՒԱԾ Ա.

ԱՄՈՒ.

Աստուածպաշտութիւն խիստ հարկաւոր կրօնութիւններին մէկն է Աղօթքը. Առով ոչ թէ միայն Աստուծոյ պէտք եղած պատիւը կատարենք, այլ և իւր խիստ պատուական և գերագանց երախտեաց արժանաւոր կը լինինք. և ասոր համար է որ Պօղոս առաքելոյն խօսքին նայելով՝ պարտաւոր ենք միշտ ապաշխել զԱստուած առանց դադրելու. Բայց թէ որ դուք ժամանակին մեծ մասը չէք կարող աղօթքով անցընել, գոնէ ամէն առաւօտ և երեկոյ զանց մ՝ առնէք երբէք աղօթք ընելու.

Բաբելկիրթ ազգայոց մէջ չկայ մէկն որ իրեն պարտք չհամարի առաւօտ և երեկոյ իւր ծընողքը բարեւելու. Անուարակոյս դուք եւս ամէն օր այս պարտքս կը կատարէք. և թէ որ ձեր երկնաւոր Հօրը չընէք այն բանը՝ զոր երկրաւոր հօրեղբուդ կ՝ընէք. թողութիւն կըրնաք գտնել.

Սուղծողն է միայն արժանի ձեր առաջին և վերջին յարգանացը. թէ առաւօտ լինի եւ թէ երեկոյ. մի մոռնաք բնաւ Աստուծոյ առջեւ երկրպագութիւն ընելով աղօթել, շնորհակալ լինիլ. ձեր սիրտն նորա նուիրել. և իրեն ծառայելու համար հարկաւոր եղած ընդհանրն անարամբ խնդրել. Առանց Սուղծողին կարող չենք մենք բան մի ընել. իսկ անոր

օգնութիւնդն տուն բանի կարող եմք։ Որովհետև հոգ տարէք իւր խոստումն ոչինչ օգնութիւնը խնդրելու, մանաւանդ երբ ձեր հոգին աղաղակ արձակեցու եւ յաւիտենական փրկութիւնը կորսնցընելու վտանգի մատնեցած կը լինի։

Ինչպէս փոքր ոչոյ մի, որ դեռ կարողութիւն չունի քայլելու, ստիպի վերայ կոչուած մանուկ վախենալով որ չիմանի, իսկոյն օգնութիւն կը կանչէ իւր մայրը, և կ՚աղաչէ որ ձեռքն իրեն երկնցուցանէ ու ապատէ զինքն ինկնալու վտանգէն։ Որովհետև և դուք, սիրելի զաւակունք իմ, աղաչանք ըրէք Աստուծոյ, նա որ բոլոր հայրերէն գերազանց է, և միշտ ձեր մօտ կը կենայ, որ զձեզ պահէ ու պահպանէ։ Աղաչեցէք որ ձեր տկարութիւնն օգնական լինի, և պահէ զձեզ չարէն։ և մի փոխանակ բնաւ իմ ձեր ապաշանքն ընդունելի չըլլիցի։ Նոյն ինքն Աստուած խոստացաւ մեզ իւր բերանովը, մեր բոլոր ուզածը շնորհելու։ և անհամար օրինակներով կրնամ ցուցընել ձեզ՝ իմ Աստուած միշտ հաւատարիմ է իւր խոստմանցը մէջ։ թայց երբեմն փոխելու համար՝ միայն մէկ օրինակ մի յառաջ կը բերեմ, որ հնութիւրբրբական և իրաւական նամակներու մէջ գրուած է։

ՑՕԴՈՒԱԾ Բ.

Սուրբ դատարան։

Առաւօտեան եւ երեկոյեան աղօթքներէն ՝ի զատ, զոր պարտաւոր էք բնաւ զանց չառնել

որ և իցէ պատճառաւ, օրէնք դրէք ձեզ՝ ամէն սուրբ պատարագի ներկայ գտնուելու։

Յիսուս Քրիստոս այս պատարագիս մէջ կը նորոգէ մեր մեղաց համար մեր Հայրը Աստուծոյ Գառնոյ լերան վերայ։ Անիկայ սրբութեան սեղանին վերայ Աստուծոյ ողորմութիւնը կը խնդրէ մարդկանց համար, և հոն կը տարածէ առատօրէն իւր շնորհքը։ Ձեր նոքա դէմ առնեցած երախտագիտութիւնը, ձեր մատնաւոր շահն և իւր փառքը, ամէնքն եւս կը պարտաւորին զձեզ ներկայ գտնուելու երկրպագելի անմահ Պատարագիս։

Ձեր մատնաւոր շահն ըսի, վասն զի Աստուծոյ հոգեւոր շնորհքներէն ի զատ, զոր հատուցակօրէն կը բաշխէ անոնց որ Ջերմեռանդութեամբ հոն կը գտնուին, ուրիշ առաւել զգալի և երեւելի բարիքներ եւս կ՚ընէ, ինչպէս պիտի տեսնէք հիմայ հետեւեալ գործէն, որ Եկեղեցական պատմութեանց մէջ կը կարդացուի։

Կառաջնորդ Երիտասարդի մի քրիստոնէից սուրբ դասց։

Սուրբ Գրիգոր կը պատմէ թէ, երբ մեծն Աղէքսանդր զոհ կը նուիրէր կռոց, իւր երիտասարդ ազնուական ծառաներէն մէկուն վերարկուին թեւին մէջ կրակ մի կ՚ինկնի, որ այրելով սատակ ցաւ մի կը պատճառէ, և թէպէտ անտանելի էր, բայց ակռաները սեղմելով համբերեց երիտասարդը, և ամենեւին ձայն չհանեց, վախնալով որպէս զի զոհագործնա-

թեան ժամանակ շփոթութիւն մի չձգէ։ Ուստիք ասկէ, կը յարէ սուրբը, թէ որքան մեծ պարկեշտութեամբ և ակնածութեամբ պէտք է որ կանգնիք մեր սուրբ Սեղանոյն երկրպագելի Զոհին ժամանակ։

ՑՕԳՈՒԱԾ Գ։

Սակաւ հաշտարարութիւն առնել։

Աղօթակցութիւնն որքան որ հարկաւոր է մարդոյ, նոյնքան առաւել հարկաւոր է հաղորդուիլ ամեն պատեհ ժամանակի։

Ուրեմն ձեզ պարտք մի համարեցէք սակայն խոստովանել քահանային, և առ նուազն գոնէ տարին երկու անգամ եւս հաղորդուիլ։ Բայց չըլլայ որ առանց հարկաւոր պատրաստութիւնն ներ տեսնելու մտնենք այս սրբազան խորհրդին, ինչպէս որ օրէնքը կը պատուիրէ, և դրպրատան մէջ քրիստոնէական վարդապետութիւն դաս առած ժամանակ կ'ուսանիք։

Եթէ այս խորհուրդներն առողջապէս կերակուր մի են անոնց որ մաքուր սրտով կ'ընդունին, նոյնպէս կրնամք ասել թէ՝ թոյնի կը փոխուին այն մարդոց սրտին մէջ, որ պղծութեամբ կ'ընդունին։ Խոստովանութիւնն աւելի եւս մեզաւոր կ'ընէ այն ապաշխարող անձը, որ իւր դժբախտութեամբն աղէկ պատրաստութիւն տեսած չէ, ինչպէս յայտնի կը խօսի մեզ Պօղոս առաքեալն թէ՝ «Որ ընդունիցի անար-

ժանտութեամբ զնարմին տեսան մերոյ Քրիստոսի Քրիստոսի, զատուցան անձին իւրում ժողովի ։

Եթէ ուղիղք խնամաց թէ Աստուած ինչ կերպով պիտի պատժէ զանոնք՝ որ չարաչար կը գործածեն սուրբ Հաղորդութիւնը, բաւական է միայն միտքերնիս բերենք այն պատուհասները, որով հին Օրինաց մէջ որբապիղծ մարդիկը պատժեց՝ այլոց օրինակ տալով։

Պատիժ կրոց արբանիցներց։

Տապանակին ուխտի Եղուսաղէմ տարած ժամանակին, Ոզա՝ որ իւր եղբարցը հետ ոչխին առջեւէն կ'երթար, որու վերայ էր Տապանակը, տեսնելով թէ եզները գետնարանով ոչխը քաշել, եւ եւ կ'երթային, և Տապանակը գետին պիտի կործանէր, անմիջապէս ձեռքն երկնցուց որ բռնէ զայն, բայց բռնելու ժամանակ ինքն ինկաւ յանկարծ ու մեռաւ։ Կ'ասէ սուրբ Գիրքը, թէ Աստուած բարկանալով նորա յանդգնութեանը վերայ, զարկաւ զինքն սպանելց, որպէս զի երկիւղ մի ձգէ միւսներուն սրտին մէջ, որ Ոզայէն օրինակ առնելով՝ սուրբ Տապանակի արժանաւոր եղած յարգութիւնը չմոռանան տարու, որու մատնելու արժանի միայն քահանայք են։

Աստուած Պաղեստար թագաւորի հետ եւս խստութեամբ վարուեցաւ, որու ամբարշտութիւնն այնքան աւելցած էր, որ սկսէր էր մին

չեւ Յաճարին սրբազան անօթներըդ ոչնչել։ Երբ մի հանդիսաւոր հացկերութիւն մէջ սուրբ անօթներով գինի կը խմէր իւր մեծամեծաց և կանանց հետ, և ուստի խմելէն զատ ուրիշ բան չէր մտածեր, մարդոց ձեռք մի տեսաւ իւր սրբապիղծ ժողովին մէջ, որ պատին վերայ երեք խորհրդաւոր խօսք կը գրէր, և ասոնք՝ զոր ինքն ամենեւին չէր հասկնար, իւր գաւառապարտաւորեան վճռագիրն էին։ Զոյն տեսնելով թագաւորը, մէկէն ի մէկ երեսին գոյնը նետեց, յանկարծակիի եկաւ, և յետոյ կանչել տուաւ իսկոյն Բաբելոնի մէջ գտնուած քաջագոյն մոգերը, որ այն խօսքերը մեկնեն և գինքն երկիւղէ ազատեն, որու մէջ ձգեր էին պատին վերայ գրուած գրերը։ Բայց որոմհետեւ մոգերը կերպով մի չկրցին զանոնք մեկնելու, ուստի ինկաւ Պաղատասար Դանիէլին ոտքն, որ այն գրերը կարդալուն պէս՝ համարձակութեամբ մի ասոց թագաւորին, թէ Աստուած այն երեք բառերով կ'իմացընէր թէ, իւր թագաւորութեան վախճանը հասած է իւր մեղաց պատճառաւ, և թէ՝ նորա թագաւորութիւնը Մարոց եւ Պարսից բաժնուելու է։ Այս մեկնութիւնը շուտով կատարեցաւ, վասն զի Աւրոս Բաբելոն մտնելով, իւր զօրագլուխներէն երկու հոգի Պաղատասարին պալատը մտան, եւ նոյն գիշեր գինքը սպաննեցին, ինչպէս որ Դանիէլ մարգարէացեր էր։

Ահա սիրելիք իմ, այս կերպ վարուեցաւ Աստուած նոցա հետ, որոնք Յաճարին սուրբ

ապականերուն արժանաւոր յարգութիւնը չտալ։ Ապա ուրեմն թնչպէս սաստիկ վրէժխնդրութեամբ չպիտի պատժէ զանոնք՝ որ կը հաստատձգիին պղծել իւր մարմինն և պատուական արիւնը։

Այսքան սոսկալի օրինակներս պիտի ասէին զձեզ սրբոցման խորհուրդները սաստիկ ջերմեռանդութեամբ և խիստ մեծ և զգուշաւոր պատրաստութեամբ ընդունելու, որքան որ կարելի է ձեզ։ Երբ մաքուր սրտով մօտենալու լինիք նոցա, շնորհաց և օրհնութեան աղբիւր կը լինին ձեզ։

ՑՕԳՈՒԱԾ Դ։

Աստուածպաշտութեան գրքերուն ցնթերցումը։

Սրբազան խորհուրդները ձեզ ոգեշահ լինելու, և ձեր սրտին մէջ կրօնի և աստուածպաշտութեան ոգին միշտ եռանդուն պահելու համար, հոգեւոր գրքեր կարդալէն ՝ի զատ ուրիշ միջոց չկայ։ Այս գրքերուն մէջ եղած հոգեշահ վարդապետութիւնը, ձեր աչքին առջեւ կը բերեն ձեր պարտաւորութիւնները, և կը քաջալերեն զձեզ զանոնք կատարելու, ձեր միտքը կը լուսաւորեն, ձեր սիրտը կը վառեն և հոգին կը զօրացնեն մոլութեան հրապոյրներուն և չար օրինաց դայթակղութեան դէմ։

Գոմաբեթեամբ կը խօսի Սարգիս Շնորհալի աստուածային գրոց վերայ, և թէ զանոնք չկար-

գայոզներդ ինչ մոլեմիտներու կուսան գի-
ներնք։ « Զերոքս առի, կ'ասէ, աստուածային
գրքերդ, նաեւ Կամիոզիկեայց գրքերդ, եւ մրա-
քով զանոնք կարդալու ժամանակս անշահ ու-
բախտութեամբ լեցուեցայ։ Եւ ուրախութենէս
քիչ մը ուրիշ կերպ կը փոխուիմ, ու սրտիս խրն-
դութենէն վեր վեր կը ցատկեմ, երբ այսպէս
հոգեւոր փողերու կը հանդիպիմ։ . . . Եւ ա-
զամիքով կը խնդրեմ Աստուծմէ, որ եկեղեցւոյ
բոլոր զաւկներդ այսպիսի գործի պարապէին,
եւ այս գրքերդ կարդային միշտ, եւ իրենց վայել-
չութիւն ու արժանք համարէին զանոնք . . . .
Այլ ես հակառակը կը տեսնեմ։ ոմանք ուրիշ
տեղ զատուեր գացեր են, եւ գատարկութեամբ
իրենց կեանքը կ'անցընեն։ վասն զի այսպիսի
երկնաւոր բարիքներու համար չեն առած։ Որը
վաճառականութիւն կը սիրէ, օրն ագահու-
թիւն։ կան որ կատակերգութիւն, ատելութու-
թիւն եւ գատարկաբանութիւն կը սիրեն։ ոմանք
ես քուն եւ գատարկութիւն, որ թշուառու-
թեան մայրն է եւ ամէն գործի վնասակար։
Դարձեալ աստուածային գրոց ընթերցմունքը
ձշմարիտ գանձ են, եւ չխաբուելիք մեծութիւն։
Եւ անոնք որ սրտա սիրովը կապուած են եւ
քաղցր պտուղներդ ճաշակած, չեն կշտանար
անոնց խորհունին եւ անոնց մէջ եղած գեղեց-
կութիւնը գտնելու »։

ՑՕԴՈՒԱԾ Ե.

Պատգամ հրեշտակին առաքելոյ Թեմար
հանդերձեալոյ Յիսուսի ցնոց Երիսաստրդց։

Տոմբիմ նահապետ տեսանելով որ իւր մեռանելու օրերը կը մօտենար, կանչեց որդին իւր մօտ և ոգեշահ խրատներ տալէ յետոյ ասաց, թէ Հռապիս քաղաքը Գաբայել անուանով մէկ կամ մօտ տասն քսակ ոսկի առնելիք ունի, և երթայ զայն պահանջէ։ Տոբիա չէր գիտեր ոչ քաղքին ուր լինելն և ոչ ճարդը. ուստի առաջնորդ մի կը խնդրէր որ հոն տանի զինքը։ Երբ տրնէն դուրս ելաւ, վայելչահասակ և գեղեցկադէմ երիտասարդ մի հանդիպեցաւ, որ ճամբորդի կերպարանքով կ'երևէր թէ դուրս պիտի երթար։ Տոբիա չգիտնալով թէ Ռափայել հրեշտակն էր այն, որ Աստուած խրկեր էր իրեն, հարցուց թէ՝ ովքեր դուն և ուր կ'երթաս։ Եւ լսելով անկէ թէ Գաբայելը կը ճանչէ, ապաշէց զինքն որ երթայ իրեն համար հօրը հասկրցնէ. և հայրն ևս մօտ կանչելով խօսքը կարեց, խոստանալով վարձատրել զինքն և որդին նորա յանձնեց Հռապիս քաղաքը տանելու, որ Գաբայելի հետ խօսի և առնելիքը պահանջէ։ Հրեշտակն որ հասարակ ճարդոյ կերպարանք մտած էր, հաձեցաւ ծերոյն քաղձանքը կատարել. և ինկաւ ճամբայ նորա որդւոյն հետ։ Հանգիստ ճամբանին կը քալէին, և ամենեւին վտանգի չհանդիպեցան առաջին օրը. բայց երկրորդ օրը, երբ Տոբիա գետեզերք մի

կեցած ոտքերը կը լուար. Հարկ դուրս մեծու-
թեամբ ձուկ մը գէպ իրեն փաղեց և պիտի կը-
լլար զինքը. Տղայն զայն տեսածին պէս, մեծ
ձայն մը ձգեց ընկերէն օգնութիւն խնդրելով.
բայց հրեշտակն նորա պատմեր երիւզը փարա-
տելով ասաց. «Բռնէ թեւերէն՝ դուրս քաշէ
որ մեռնի. յետոյ բայց փորը հանէ սիրտը լերդն
ու լեղին որ հեռներնիս տանինք»։ Ինչ որ ասաց
հրեշտակը՝ Տոբիա կատարեց։

Մի քանի օրէն յետոյ հասան Հռագուէլ մօտ.
և քաղաքին մէջ դեռ ոտք չիոխած՝ հրեշտակն
ասաց Տոբիայի. թէ պէտք է որ Հռագուէլ
իւր աղջկանին տուն երթայ Հանդչի. նորա
միակ աղջիկն իրեն հարս առնելու։ Այս վեր-
ջի խօսքիս վերայ վախցաւ տղան. ինչու որ լը-
սեր էր թէ ասած աղջիկն եօթն էրիկ առեր.
և եօթն եւս առագաստ մտնելու գիշեր դիւա-
հարելով մեռեր էին։ Բայց երբ հրեշտակն նո-
րա սիրտն Հանդչեցուց ասելով՝ նոյն վտանգէն
ինքն ազատ կը մնայ. եթէ տարիք խրատներուն
համեմատ վարուի. գնաց Հռագուէլին տունը
և վախը մէկդի թողլով՝ առաւ նորա աղջիկն և
իրեն հետ հօր տունը բերաւ Գաբայէլէն ասած
դրամով։ Ճերմուն հօր մօտ որ դարձաւ. նորա
աչուընները լաւացուց ձկան լեղիով շփելով
զոր հետը բերած էր. յետոյ մէկիկ մէկիկ պատ-
մեց նորա ինչ որ իւր հետ տարիմ առաջնորդն
իրեն ասած էր. և այս խօսքերուս վերայ այն-
պէս երախտագիտութեան խորին զգացում մի
պատճառեց նորա սրտին մէջ, որդւոյն միաբան

հաւանութեամբ շնորհեց նորա իբր վարձ՝ իւր բոլոր ստացուածոց կէսը։ Բայց Ռափայէլ հրեշտակ յայտնեց անոնց իրեն այն երանելի ոգիներէն մէկն լինելը, որոնք Աստուծոյ յաւիտենական Աթոռոյն առջեւ կը կանգնին միշտ. և զիրենք մխիթարելէն և քաջալերելէն յետոյ անհետացաւ։

Ձեր պահապան հրեշտակն եւս, սիրելի զաւակներս, թէպէտ և անտեսանելի կերպով, սակայն ձեր ծնած օրէն ի վեր ըրաւ և կ՚ընէ միշտ այն ծառայութիւնները, որ Տոբիա իւր երկնային առաքնորդէն ընդունեց։ Նա ամենեւին եւս չմնաց զձեզ պաշտպանելէ և ձեր վերայ հսկելէ։ Անհամար անգամ զձեզ ազատեց մեզք գործելու վտանգէն, որ զՏոբիան կը լլեալու գազանէն աւելի մեծ ու սոսկալի հրեշ մի է։ Քանի քանի անգամ իւր հոմանաւորութեամբ սատանայի խաբէութիւններէն և որոգայթներէն գազտուկ ազատեց։ և իւր քաջալեր և զօրաւոր պաշտպանութիւնը պատրաստ է միշտ ամէն վտանգներէն պահպանելու զձեզ։

Ուրեմն գութ եւս այս Խորայելացի տղուն խնամատուն վարմունքին հետեւեցէք, եւ ձեր պահապան հրեշտակին ցրցուցէք այն զգացմունքները, զոր Տոբիա իւր սաբր առաքնորդին վերայ ունէր։ Նա ձեր ընչից կէսը ոչ կը պահանջէ և ոչ իսկ կ՚ընդունի, եթէ ձեռքերնիդ լինէր նորա նուիրել, այլ միայն ձեր երախտագիտութեան, սիրոյն և ձեր հաւատարմութեան կը կարօտի։

Զը լինի թէ ապերախտ գտնուելով՝ ձեր նորա դէմ ունեցած պարտքերնիդ չկատարէք։ Ամէն օր ջերմեռանդ սրտով օգնութեան կանչեցէք զինքը, մանաւանդ առաւօտ և երեկոյ։ Մի մոռնաք, մի զանց առնէք ի գործ դնել այն բաներդը որ ձեր աստուածպաշտութեան ոգին կը սնուցանեն և կ'աւելցնեն։ Առանց աստուածպաշտութեան ամէն ինչ անօգուտ է. անով միայն կրնամք երջանիկ լինել թէ այս և թէ հանդերձեալ աշխարհին մէջ։

ԳԼՈՒԽ Ե.

Անմեղութեան վրայ։

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉՈՒԹԻՒՆՆԻՆ յետոյ, որու մեծութիւնն և հարկաւորութիւնը ձեզ ցոյց տուի, ամէն բաներէն աւելի պիտի սիրէք անմեղութիւնն, որ ձեր հոգւոյն գլխաւոր և խիստ գեղեցիկ զարդն է, և զձեզ հրեշտակներու հետ կը նմանեցնէ։ Աշխարհիս մէջ որքան շահաւոր իր կայ, չկրնար բաղդաւորել այս անգին գանձուն հետ. և դուք հետ պէտք է ամէն ինչ զոհէք, քան թէ ձեր անմեղութիւնը կորսնցընէք։ Եթէ անիմաստ պահելու լինիք, բառական հարուստ կը համարիք. բայց անգամ մի որ կորսնցընէք, ամէն բաներէն թշուառաբար զրկուած կը համարիք։

Անմեղութիւնը կորսնցնելու ազնուագի հետևանքը։

Աղամ ու Եւա խիստ երջանիկ վիճակի մէջ էին, քանի որ անմեղութիւնը ձեռքերնին էր։ Ո՛չ վատ կիրքեր ունէին, ոչ հիւանդութիւն և ոչ մահ կը ճանաչէին։ այլ Հանգիստ իրենց օրերն կ՚անցընէին մի գեղեցիկ և պտղաւէտ պարտէզի մէջ, որ առանց աշխատելու և ճգնելու ամէն տեսակ պտուղ ինքնին կը բերէր։ Ո՛չ արեւուն տաքութիւնն անոնց կը վնասէր և ոչ ձիւնն սառոյց ցուրտը։ Խաղաղ և ճշտագեղաւոր գարուն մի կը փայլէին։ ամէն տեսակ կենդանիներ նոցա իշխանութեան ներքեւն էին։ Իրենց բաղձանքը կատարելու համար բան մի չէր պակսեր, և ամէն կողմէն երջանիկ էին։ Բայց Աստուծոյ դէմ անհնազանդ կենալով՝ իրենց առաջին անմեղութիւնն կորսնցընելնուն պէս, այն գեղեցիկ տեղէն գուրս փոքնուցան։ երկիրն է սկսաւ պտուղ շրերել։ տարուան եղանակները դառն եղան, և իրենց առջի երջանկութեան եռեւէն սկսան գալ բոլոր իմշուառութիւնք։

Այս ձեզ ճշմարիտ պատկեր մի, որոր նայեցէք և ուսիք՝ թէ ձեզ եւս այսպէս կը հանդիպի, եթէ սակայն զմբարդութեամբ մի վիրաւորեսուն աստուծոյ ընդունած ձեր անմեղութեան գանձը կորսնցընելու լինիք։ Անկէ յետոյ ձեր վերայ տիրող կիրքերուն գերի կը լինիք, անդամ խղճմտանաց տէր և Աստուծոյ սէրէն զրկուելով՝ իւր սարսափելի բարկու-

թեան կրակը ձեր գլխէն քնաս չպակսիր։ Ա՛հ։ Աստուած չպրպռնէ որ այսպիսի ապերասպի թշուառութիւն մի կրէք։

Լուգովիկոս Թագաւորին իւր իշխաններուն մէկուն հետ ըրած խօսակցութիւնը։

Լուգովիկոս Գաստիլացւոց թագաւորն էր մի ժամանակի իշխանին հետ մէկտեղ գտնուելով որ իւր պարտքն առաջին ատենի իշխաններէն մին էր, հարցուց անոր՝ թէ այս երկուքնիս մէն ուրն աւելի նախանձոտ կը համարիս։ քսան ու բորբոն լինել, թէ մահացու մեղք մի գործել։ Իշխանը համարձակ գլխով առանց ամչնալու պատասխան տուաւ։ «Երեսուն անգամ մահացու մեղք գործել կ'ուզեմ, քան թէ իմ մարմնոյս զգուելի բորբոսութեամբ ծանկուած մնալ։» — Դու, ասաց թագաւորը, խենդի նըմանն կը խօսիս։ վասն զի մահացու մեղքէն աւելի զզուելի գէշ բորբոսութիւն չկայ։ և ով որ այս բորբոսութիւնն ունենայ իւր վերայ, սատանայի նման կը լինի։ Դարձեալ, ամէն մարդ գիտէ՝ թէ երբ մարդս կը մեռնի, իւր մարմնոյն բորբոսութիւնը կ'անցնի։ բայց երբ մահացու մեղք գործող մարդ մի մեռնի, ասոյգ է որ Աստուած անոր թողութիւն չտար։ և պիտի գիտնայ նա ու վախենայ, թէ հոգւոյն բորբոսութիւնը կը մնայ նորա վերայ։ քանի որ Աստուած՝ Աստուած է։ Ասոր համար կ'ապաշխարէ գլուխ բոլոր արտասուքով։ որ աւելի սիրելս որ և իցէ ցաւալի

եւ անուանելի հիւանդութեանց մէջ ինկնիլ, քան թէ մի անգամ միայն մահացու մեղք գործել։»

Թագաւորին այս խօսքերը՝ զոր իւր պալատականին զրուցեց, հիմայ ես ալ ձեզ կը զրուցեմ, ով սիրելի զաւակունք։ Այո, որքան որ մեծ է ձեր վերայ ունեցած սէրս, այլ գիտնաք որ աւելի կ'ուզեմ զձեզ մեռած՝ քան թէ ձեր գեղեցիկ անմեղութիւնէն զրկուած տեսնել։ Եթէ մեր կեանքը կորսնցնելու լինիմք, մարմնոյս միայն կը վերաբերի այն կորուստը, իսկ անմեղութիւնն որ կորսուցանենք, մեր հոգւոյն կը վնասէ, և յաւիտենական թշուառութեան մէջ կը ձգէ զայն։ Ուստի ինչպէս կը տեսնենք, այն մարտիրոսներն որ հաւատոյ ճշմարիտ հոգւով վառուած էին և Աստուծոյ սէրը երկիրը արտերնուն մէջ էր, դառն փորձութեանց մէջ ինկած ժամանակ աւելի ուժգնութիւն և մահը կ'ընտրէին, քան թէ մեղք գործել։ որովհետև մեր արտին անմեղութիւնը կ'ապրեցնէ։

Յակոբ առաքեալն որդին աղքատահոգի Յովսէփ քահանայի որ զինքը յանիրաւի զրպարտեն շարչարեն, խառար բանտի մէջ գնեն, քան թէ այն մեղքը գործէ, զոր խիստ անուշ և շողմարար խօսքերով զինքը կը փորձէին որ յանձն առնու։

Անեմիա երիտասարդներ և կոյս աղջիկներ այս գեղեցիկ և վեհանձնական օրինակիս հետևեցէք, քաջ հանդիսացէք անհնարին տանջանքներ կրել, քան թէ Աստուծոյ աչաց առելի

լինել։ Ասենց դիւցազնական քաջասրտութիւնը ձեզ ցրցուցնելու համար կ՚ուզեմ այս տեղ երկու պատմութիւն դնել։

Եօթն հրեայ տղայոց իրենց կրօնի մէջ ունեցած յարմանալի հաստատութիւնը։

Ամբարիշտ Անտիոքոսը իրեն կանչելով Մակաբայեցի եօթն եղբայրը մօրը հետ, ըսուխելց զանոնք խոսի միս ուտելու, զոր Աստուծոյ սուրբ օրէնքը կ՚արգիլէր Հրէից։ Իսկ նոքա ամենքին միաբերան համարձակութեամբ պատասխան տուին թէ՝ ամենքս պատրաստ ենք մեռնելու, քան թէ յանցաւոր երեւալ Աստուծոյ առջեւ՝ որ աշխարհս գերագոյն Թագաւորն է։ Անտիոքոս տղայ մանկանց անելիքիւզ պատասխանը լսելով բարկացաւ։ Եւ հրամայեց որ զամենքն եւս մերկացնեն և հարաւոր ծեծ մի քաշեն իրենց։ Անդրանիկ եղբայրին թագաւորին դառնալով ասաց։ "Ի՞նչ կը սպասէք մեզմէ։ մենք ամենքս պատրաստ ենք մեռնիլ։ քան թէ մեր հայրենի օրէնքը կոխել անցնիլ"։ Թագաւորը սաստիկ բարկութեամբ լցուելով, հրամայեց բրաւ սապակներ կամաներ տաքցնել։ Եւ մօրն ու եղբարցը առջեւ անդրանիկ տղուն լեզուն կտրել։ գլխոյն կաշին քերթելով երեսին վերայ անցընել։ Եւ ձեռքերուն ու ոտքերուն ծայրերը կտրատել։ Այսպէս ձեռք ոտք անպիտան ընելէ յետոյ քաջասիրտ տղայն։ տաքցուցած կամարի մէջ ողջ ողջ նետել տուաւ։

Առաջինն այս կերպով մեռանելէն յետոյ, երկրորդին ձեռք դարկին։ Գլխուն կոշին մազերով մէկտեղ քերթեցին հանեցին, և ասրէն կը հարցընէին՝ թէ ուսերը ես խոզի միս։ Իսկ նա պատասխան տուաւ թէ՝ ոչ. ուստի նոյն տանջանքներով չարչրկեցին զայն ևս։ Երբ հագին առանդելու վերայ էր, այսպէս խօսեցաւ թագաւորին. «Մի՛ շարք և ամբարտաւան իշխան. դու զմեզ այս աշխարհէս կը վերցընես, բայց նա որ երկնի և երկրի Թագաւորն է, օր մի մեզ դիտի յարուցանէ յաւիտենական կենաց համար, եթէ իւր սուրբ օրինաց վերայ մեռանելու լինիմք»։

Ասորմէ յետոյ երրորդը բերին, որ խսկոյն լեզուն դուրս հանեց, և ձեռքերը քաջասրտութեամբ երկնցուց դէպ ի դահիճներն որ կային. «Այս անդամներն, ասաց, Աստուած ինձ տուաւ, և յոժարակամ իրեն կը զոհեմ իւր օրինաց վկայութեան համար»։ Անօրէն թագաւորն և իշխանները անգամ կը զարմանային այս տղուն գերմարդկային քաջասրտութեանն, որ այնպիսի սոսկալի ցաւերն բանի տեղ չէր դներ։

Չորրորդը տանջանաց տեղը բերելով՝ նոյն բարբարոսութեամբ կը չարչարէին. որ իւր մեռանելու ժամուան թագաւորին դառնալով՝ «Լաւ է մեզ, ասաց, որ մարդացեալ զոհ լինիմք, վասն զի յոյս ունիմք մեռելոց յարութեան ժամուան ասրէն փառաւորապէս ծնանելու. իսկ ձեզ համար չկայ յարութիւն»։ Հինգերորդ

ոգայն եւ տանջանքներուն մէջ խօսեցաւ Անտոքրոսին և ասաց. «Դու հիմայ ինչ որ կ'ուզես՝ կ'ընես մեզ, սակայն՝ մեզ նման մահկանացու. դու քեզ տրուած իշխանութիւնը շարաչար կը բանեցրնես, բայց մի կարծեր թէ Աստուած մեր ազգն երեսէ ձգած է։ Կաց դու, շատ շերմեռանդ նորա սքանչելի զօրութիւնը կը տեսնես, ինչպէս քեզ և քո բոլոր ցեղդ պիտի չարչարէ»։ Անկէ յետոյ վերադարձը բերին, որ իւր վերջին շունչը հառնելով՝ այսպէս ասաց անգութի իշխանին. «Կը խաբուիս դու, սակայն թագաւոր. և գիտցիր որ մեր մեղքերն են այս մեր քաշած վիշտերուն պատճառը. բայց մի կարծեր թէ անպատիժ կը մնաս, դու որ Աստուծոյ հետ կը պատերազմիս»։

Վերջապէս մեռաց եօթներորդ տղան, որ ամենէն փոքրն էր։ Անտոքրոս բռնաւորն շատ աշխատեցաւ անոյշ խօսքերով տղուն խելքը դարձնել, յորդորելով որ իւր կեանքը մահէն ազատէ, նաեւ երդմամբ խոստացաւ փարթամութիւնն եւ մեծ պատուոյ հասցնել, թագաւորին բարեկամը կանչուիլ, միայն թէ իւր նախահայրց օրէնքը թողու։ Երբ տեսաւ թագաւորը թէ նա բնաւ իւր խօսքին ականջ չդրնեց, կանչեց նորա մայրն խրատելու, ապաշնչեց որ խրատէ իւր զաւակը, որպէս զի անողորմութեան չենթարկուի։ Մայրը յանձնառու եղաւ խօսել իւր սիրելի զաւկին հետ խրատելու լեզուով եւ ասաց. «Ողորմէ քո մօրդ, որդեակ իմ. միտքդ բեր որ ես քեզ ամիս ապրանոցիս մէջ կրեցի զքեզ, երբեք

տարիի շատ իմ կամքս անուցի. և մինչև այդ հասակն հասուցի բերի. Հիմայ կ'ազատիմ ըզքեզ. բայց աշխարհիդ. որքան զաւակս. նայէ երկինքն ու երկիրը. սատանք են Աստուծոյ ձեռքի գործերը. զոր դու կը պաշտես. նոյնպէս բազմ մարդիկ անարմէ ստեղծուած են. Զօրացիր. որքա՜ա. ես մի վախնար այս անգամ դահճէն. այլ քո եղբարցդ արժանի լինելով կեանքէն ուրիշ մահն ընտրէ քեզ. որպէս զի ամենքս միասին գոնուիմք Աստուծոյ արքայութեան մէջ. որ մեզ կը ազատէ։ Երբ մայրն այս միսիթարական խօսքերը կը խօսէր անոր. ազայն մէկէն ի մէկ պոռաց. "Որո՞ւ կը ազատէք. ինչո՞ւ կ'ուշացնէք. մահի ընելու չեմ ես մատնուիր. այլ միայն Աստուծոյ արքայութեան օրինաց հնազանդ եմ։ և շարունակելով իւր խօսքը՝ մարգարէական ոգւով այսպէս խօսեցաւ. "Իսկ դու որ մեզ այսքան տանջանք և մահ կրել կուտաս. չարիս ազատիս Աստուծոյ ձեռքէն. Մեր մեղքերն են որ այս պատուհասներն մեր գլուխը բերին. և Աստուած զմեզ խրատելու համար իւր բարկութեան հանդիպցուց. որ շուտով պիտի դադրի. և իւր ողորմութեամբ պիտի հաշտուի իւր ծառայից հետ։ Այլ դու. անօրէն. չարիս ազատիս նորա արդար դատաստանէն։ Անմիջապէս բարկութեան շատ շգտնուեցաւ. մէկէն հրամայեց միւս եղբայրներն ալ ունդմութեամբ տանջել զինքը. որ անարատութեամբ աւանդեց հոգին գառն շարչարանաց մէջ։ Յետոյ մայրերին

նահատակեցաւ, որոյ արիւնն իւր քաջասիրտ որդւոց արեան հետ խառնեցաւ, զորոնք իւր ներկայութեամբն և իւր յորդորանօք քաջալերելով մարտիրոսութեան արժանի արաւ։

Զեմ երկիւղիր ասելոյ, սիրելի դաւակունք իմ, որ այս սքանչելի ազգայոց դիւցազնական մեռց հաստատութիւնք ձեր սիրտք շարժած չլինի, նաև հաստատ առաջադրութիւն մի ընել շատց ձեզ իրենց պէս ամէն կերպ տանջանք կրելու, քան թէ յանցաւոր երեւալու Աստուծոյ առջեւ։ Այլ ձեզ միշտ սիրտ տալու համար, որ ձեր անմեղութեան անգին գանձը անվնաս պահէք, աշխատութենէն չեմ փախչիր պատմել ձեզ ուրիշ զարմանալի օրինակ մի ևս։

Քրիստոնեայ ոգու մի տէրը հուտոյց մէջ ունեցած դիւցազնական հաստատութիւնց։

Կապադովկիա Կեսարիայի մէջ երիտասարդ մի կար Կիւրեղ անուն, որու հայրը կուռապաշտ էր։ Սա չկրնալով իւր ազգին համոզել որ սուտ չաստուածոց երկրպագութիւն ընէ, վերնատեղ իւր տունն ելաւ ծեծ մի տալէն յետոյ։ Քաղաքին դատաւորը լսելով զայն, քանի մի զինուորներ խրկեց, իրեն բերել տուաւ ազգին և քաղաքութեամբ ասաց նորա։ — Որդեակ իմ, եւ քո յանցանացդ կրնեբեմ, մատղաշ հասակիդ վերայ խղճալով։ Քու հօրդ աչքը մնոնելն և նորա ունեցած ապրանքներն վայելել քու ձեռքդ է։ Խելքդ գլուխդ բեր ուրեմն, և թող այդ կրօնքն

որ բոլորովին անարգաշտութիւն է ։ Առաքելն
ողջոյն հանգերութեամբ պատասխան տուաւ
նորա . « Եւ իմ բրածներուս համար յանդիմա-
նութիւն ըսելու շատ գոհ եմ ։ Աստուած դիս
իւր մօտ կը կանչէ , եւ նորա մօտ իմ հոգիս
աւելի հանգիստ կը լինիմ ։ Իմ հոգս ոչինչ վը-
ռընտուելուս չեմ դժուարիր , յուսալով որ ու-
րիշ աւելի ընդարձակ եւ գեղեցիկ տուն մի մէջ
պիտի բնակիմ ։ Ցօժար սրտով կը հրաժարիմ
այս աշխարհիս մեծութիւններէն , Երկնից աբ-
քայութիւնն ստանալու համար ։ Չեմ վախնար
մահէն , որ պատճառ պիտի լինի ինձ լուսոյն
կեանք մի ձեռք բերելու ։ Այս խօսքերս այն-
պէս քաջասրտութեամբ կը զրուցէր , ուսկէ
յայտնի կ'երեւէր թէ Աստուած իրեն խօսել
կուտար ։ Այն ատեն գաւառորը բարկանալով
խիստ դէմքով եւ զարհուրելի ձայնով պոռաց
սուրբ ողուն երեսին , որպէս զի վախցնէ զինքն ,
ու ասաց . « Հիմայ մեռցընել կուտամ զքեզ ։
Ցետոյ կապել տուաւ երկու հատ ծառի ճիւ-
ղերով , որպէս թէ տանջելու պիտի տանին զին-
քը . հրաման տուաւ փայտակոյտ մի պատրաս-
տել եւ ներքնէն կրակ դնել . բայց որքանչելի
ողջոյն վախնալու տեղ՝ աւելի սիրտը պնտացուց
եւ բնաւ հոգ չէր ըներ . տարին զինքը կրակին
մօտ եւ կը սպառնային մէջը նետել այրել ։ Գա-
ւառորը պատուիրած էր անոնց՝ որ այն պատ-
րաստութիւններով միայն վախցընեն զինքը .
բայց ողջոյն ամենեւին մտքէն չխախտեցաւ ։
Ուստի գաւառորին առջեւ տարին , որ սպան-

նայով ասաց. «Կը տեսնե՞ս այս տաքն եւ այս կրակն, որ քո կամակորութիւնդ պատժելու համար պատրաստուած են։ Թերեւ դու չես ուզեր բերել, եւ իմ ու հօրդ կամաց հնազանդելով՝ արժանի լինիլ նորա սիրոյն, որ կերկին զքեզ իւր տունն ընդունի»։ Պատասխան տուաւ Կիւրեղ. «Դու զիս անօրէն մարդոյ մի տեղ դրիր՝ քո առջեւդ կանչել տալով։ Գիտնաս ուրեմն որ ես ոչ կրակէ կը վախնամ եւ ոչ սրէ, եւ կը փափաքիմ երթալ այն ցանկալի բնակարանն՝ որ այս աշխարհս մէջ չէ, եւ կը քաղցամ տանոյ այն մեծութիւններն՝ որ իմ հօրս ուղեցածներէն խիստ գերազանց են։ Աստուած է որ պիտի տայ ինձ զանոնք։ Շուտ ըրէք մէկ ժամ առաջ տուէք ինձ մահն, որ իմ յաւիտենական երջանկութեանս սկիզբը պիտի լինի»։ Այն տեղ գտնուողներն նորա այսպէս խօսիլը լսելով, կուլային, բայց Կիւրեղ դարձաւ ասաց նոցա. «Դուք պէտք է ուրախանաք ինձ հետ, եւ ձեր արտասուքներովն իմ սիրոս թուլցնելու տեղ՝ ապէկ կ'ընէք որ քաջալերէք զիս համբերութեամբ կրելու այս տանջանքները։ Ո՛հ, դուք չէք գիտեր այն փառքն՝ որ ինձ կը սպասէ, եւ ոչ իմ ուզեցած յոյսս՝ թէ ինչ բանի համար է։ Թողէք զիս որ այս յաւուով մեռնիմ»։ Այս կարօտութիւնները քաշելով նահատակեցաւ սուրբ տղայն։

Դուք հիմայ այսպէս շարչարանքներ կրելու վախ չունիք, սիրելի որդեակք իմ, եւ ոչ այսպէս մեծամեծ զոհեր ընելու չափ վառնգի

մէջ կ'ինկնիք ձեր անմեղութիւնը պահելու համար. բայց գիտցած եղէք որ այս անմեղութիւնը շատ զգուշութիւն կը պահանջէր ձեր կողմէն, ինչպէս որ հետեւեալ գլխոյն մէջ պիտի զրուցեմ։

ԳԼՈՒԽ Զ.

Անմեղութեան պահանջած իւրայնութիւնքն և նախազգուշութիւնները, և զանիկոյ պահպանելու միջոցները։

Ա.ՆՄԵՂՈՒԹԻՒՆՆ նման է գեղեցիկ ծաղկի որ պայծառ գոյներով ներկուն ուրաք մի կ'ուզենայ, և իւր շուրջը զարմանալի անոյշ հոտ մի կը բուրէ. բայց մի քիչ ծուխ կրնայ սեւցնել, և մի քիչ հոտը կրնայ խլել ու գեղեցիկ ձգել. չը կրնար մարդ անվնաս պահել զայն, բայց եթէ հոգ տանելով որ փոքր օրիկն չմօտենէ, այսինքն բոլոր վտանգաւոր բաներէն հեռացընելով։

Վատ զրոյց մի, շատ օրինակ մի և մոլի ընկերութիւն մի կրնայ կորսուցընել ձեր անմեղութեան պատուական գոհարը։ Դուք պարտաւոր էք ամրիծ եւ անարատ պահել զայն. վասն զի Աստուած այս գաշնիքով ձեզ հագուցած է, և օր մի խիստ բարակ հաշիւներ պիտի պահանջէ ձեզմէ։

Իրբ Յովսեփայ եղբարքը զինքն խտացեալ վաճառականաց վաճառեցին, յանցանքնին իրենց հօր Յակոբէն ծածկելու համար, որ Յովսեփայ վերայ խիստ փափուկ սէր ունէր. առին նորա վերայի հագուստն և նոր մորմռուած ոչխարին մի արեան մէջ թաթխելով, զրկեցին մէկուն հետ իրենց ծեր հօրն Յակոբին։ Այս մարդս նորա դիմացն որ եկաւ, մինչպէս որ ուսուցեր էին իրեն անոգորմ եղբայրնեքը։ «Հա՛, ասաց անոր, ասիկայ գտանք, տե՛ս թէ քո որդւոյդ զգեստն է։ — Վա՛յ ինձ, կոչեց խեղճ հայրը, գիտեմ ապէկ որ այդ իմ զաւկիս պատմուճանն է։ Բայց ո՞վ Աստուած, ի՞նչ եղեր է այդ։ Ա՛հ, անշուշտ կ'իմանամ, տարակոյս չկայ. իմ որդիս Յովսէփ ողջ չէ. չար գազան մի կերեր է զայն, Աստուած իմ։» Այսպէս ասելով կը հառաչէր, կը ծեծկուէր, արիւն արտասուելք կը թափէր, այնքան որ ազգականներքը չկրցին մխիթարել փշտագին ծնողաց արտին ցաւը։

Հրեշտակներն եւս օր մի ձեր անմեղութեան պատմուճանը պիտի ներկայացնեն գերագոյն Դատաւորին առեանն ասելով անոր, մինչպէս Յովսեփայ եղբայրնեքրուն զրկած մարդն ասաց Յակոբին. «Տե՛ս այս է քոյ որդւոյդ պատմուճանը։» Ի՞նչ խեղճութիւն կը լինի ձեզ, եթէ ձեր պատմուճանը բոլորովին մեղքով աղտոտի։ Ձեր թշուառ վիճակը յաւիտենական պիտի լինի, վասն զի երկնից

արքայութիւնն մէջ ամենեւին պիտի եւ ազատութիւն չմտնեք. եւ եթէ կ'ուզէք որ զձեզ ներս առնուն, պէտք է կամ ամենազօրութիւնդ պահէք, կամ եթէ կորսնցուցած էք՝ ապաշխարութեամբ վերստին ձեռք բերէք զայն։

Զգոյշ կացէք ուրեմն, որ չլինի թէ քանի ձեզ հատնար՝ ինչ որ Զոմսեփայ հատնաց զբուցցին, թէ շար գաղան մի կերաւ զայն։ Վասն այն է՝ որ զձեզ ուտող այս ստակոտն գազանը մեղքն է։ Փախիք ուրեմն անկէ, կ'ասէ խնամառուն, ինչպէս որ թռչնաւոր օձ մի տեսնելնուդ կը փախչիք։ Եւ 'ի գործ դրէք Յիսուսի Քրիստոսի ուսուցած երկու միջոցները, այսինքն՝ Աղօթքն եւ Հակումը։

Երիտասարդի մի քան գեղեցիկ աղօթք։

Ուրախանոյ երիտասարդն, որ տասն եւ եօթ տարեկան ծաղկափթիթ եւ սուրբ հատակին մէջ մեռաւ, ինչպէս կը կարդացուի իւր վարուց գրքին մէջ, սովորութիւն ունէր թէ առաւօտ եւ թէ երեկոյ այս գեղեցիկ աղօթքն ընելու Աստուծոյ. «Աստուած իմ, երբ կը տեսնես որ իմ ամենազօրութիւնս կորսնցուցեալս վասնդին հասած եմ, վերցուր զիս այս աշխարհէս. վասն զի ես միտքս դրած եմ, եւ կը փափաքիմ աւելի մեռնիլ՝ քան թէ ապրիլ առանց զքեզ սիրելու։»

Շատ կը ցանկայի որ դուք եւս, սիրելի զաւակունք իմ, այս աղօթքն ընէիք միշտ,

որով անշուշտ մեծ օգնութիւններ կ'ընդունիք Աստուծմէ՝ որ զձեզ մեղքէ կը պահէ. մանաւանդ եթէ ասէպ հաղորդութիւն առնելու լինիք։

Եկեղեցւոյ բոլոր արքայական Հայրերը՝ զանմեղութիւնը պահելու համար խիստ ազգու միջոցներէն մին համարած են Հաղորդութիւնը։ Այն է որ մեր կրից եռանդը կը մարէ. մեր հոգւոյն վերայ նոյն ազդեցութիւնը կ'ընէ. ինչ որ մի անգամ ոգու մի մարմնոյն վերայ ըրաւ՝ հրաշքով կրակնեռաւն մէջէն զինքն ազատելով։

Աւետ հոմարիոն նայուածքին յառաջ եկած քառաները։

Գաւթի մարգարէն միմիայն նայուածքով յանցաւոր եղաւ։ Մինչեւ այս յանցանքը գործելու ժամանակ՝ անմեղութեան և ստուգապաշտութեան օրինակ մի էր. բայց գժբաղդաբար որ մի տանիքին վերայ ժուռ եկած ատեն, նայեցաւ որ կին մի կը լուացուէր. և այս միմիայն հասարակ նայուածքը իրեն պատճառ եղաւ յափշտակելու զայն, և ետեր անմեղ ամուսինը մեռցնել տալու, որ իրեն կին ընէ։

Ուրեմն խիստ մեծ զգուշութիւն պէտք է ունենանք մեր աչաց վերայ, եւ չմոռնանք որ տեսնեն այնպիսի բաներ, որ մեր անմեղութեան ցաւալի վնաս մի հասցնեն։ Այս զգուշութիւնն առաւել ևս մարդի ժամանակիս մէջ պէտք է ունենանք, ուր կ'երեւի թէ անհա-

մեռութիւնն և անպարկեշտութիւնը դրոշակ անկած են։

Պարկեշտութիւնն և ամօթխածութիւնը անմեղութեան հաւատարիմ պաշտպաններն են, ինչպէս անառակութիւնն և մոլութիւնը հաստատակ պատուղներն են համարձակութեան, զոր ապայք ամենեւին բանի տեղ չդնելով, ամեն ինչ թէ ազէկ և թէ վատ, կ՚ուզեն տեսնել. ամեն գիրք կարդալ, և ամեն բան կ՚ուզեն մրտիկ ընել. շնորհ թէ ինչ շատ հետեւանքներ յառաջ կուգան ասոնցմէ։

Քանի քանի երիտասարդներ իրենց մասնաւոր հասակին մէջ ասոնց փորձերն ըրին թշուառութեամբ։ Քանի հոգի իրենց շատ հետաքրքրութիւնը կատարել ուզելով, անզգուշութեամբ շատերնին չգիտցան, և անմեռաքար մեծ մեծ անկարգութեանց մէջ ինկան։

Այս շեմ հաւատար բնաւ, սիրելի որդեակք իմ, թէ դուք եւս ասոր պէս լինիք։ Բայց եւ այնպէս եմէ գժբաղդութեամբ ծանր յանցանքով մի ձեր անմեղութեան պատուհասն ազատած լինիք, շուտով առանց ժամանակ անցընելու խոստովանեցէք եւ ապաշխարեցէք որ թողութիւն գտնէք. վասն զի ինչպէս որ գիտէք, այս սուրբ Խաչհարդը՝ մկրտութենէն յետոյ գործուած մեղքերը ջնջելու համար սահմանուած է։

Եթէ ձեր վերայ ծանր և վատնգաւոր հիւանդութիւն մի գալու լինի, իսկոյն հոգ կը տանիք, բժիշկներուն ոտքը կ՚ինկնիք, դեղեր

կ՚առնուք որ ձեր առաջին առողջութիւնը ձեռք բերէք։ Որովհետև ոչքան աւելի մեծ հոգ ունիք ձեր հոգւոյն՝ եթէ հիւանդանալու լինիք։ Հոգւոյն վերայ բացած մեղաց վէրքերն հազար անգամ մարմնոյն հիւանդութիւններէն մեծ և վտանգաւոր են։ Մահն ամեն ժամ պատրաստ կեցած է ձեր գլխաւն առակ. թէպէտ կը լինի ձեր վիճակն երբ մահացու մեղք մի գործելէն յետոյ՝ մահը ձեր հոգին առնու. թէպէտև հանդիպեցաւ մի գժբաղդ երիտասարդի, որոյ ցաւալի մահը կը պատմէ նոր հեղինակ մի։

ԳԼՈՒԽ Է.

Մի բարեկամաց վերայ։

ՀՈԳԻՆ Սուրբ նոյն ինքն կը հաստատէ մեզ, թէ դիտուն և առաքինի բարեկամը քաղցր դանձերէն պատուականն է. բայց ասիտաս որ շատ դժուար է գայն ձեռք բերել։ Դիտուն մարդիկ ասած են թէ, նոյն մարդոցմէ մեծ մասը, որոնք կը պարծենան ճշմարիտ բարեկամ լինիլ իրենց բարեկամաց, բարեկամութիւնն միայն արտաքին պարզ երեւոյթներն ունին իրենց վերայ։ Այս առածս իսկոյն ապացոյց և փորձով եւս հաստատուած է։ Վասն զի սուտ բարեկամները ոչ թէ մարդոց հետ սիրով կապուած են, այլ միայն անոնց ստացուածոց հետ, որոնց հանգրստութեան և ունեցած վարկին աչք ունեցած են։

Սոցա բազմանքը միայն իրենց օգուտն համար է, զոր կը յուսան բարեկամաց երեսէն ստանալ, դրամանց տէր ցուցընելով անոնց։ Ուստի նոցա այս տեսակ բարեկամութիւնն այնքան ժամանակ կը տեւէ, որքան որ իրենց շահաւոր է։ Այս բանիս խիստ յարմար կուգայ Լատին հեղինակին մի առակն, զոր այս տեղս կը գնեմ։

ԱՌԱԿ

Խնձորին ծառն իւր զուռցներին մերկացած։

Խնձորի ծառ մի լեցուն պտուղներով, բայց առաւել գոռոզութեամբ լեցուած, կը գառնայ օր մի մօտի ծառերուն, որ այն երկրին պարծանքն էին, և այսպէս կը սկսի խօսիլ. «Տեսէք, ով բարեկամներ, քանի գովութիւններ կուտան ինձ, քանի մեծարանք և պատիւ կ'ընծայեն այս օրերս իմ վաստակոց արժանի։ Պարտիզին տէրը կուրծքը ունկած և ուրախ դէմքով կուգայ զիս տեսնելու. երբեմն կը գովէ, երբեմն լուռ կեցած երեսէս վայր կը հիանայ կը մնայ։ Մինչեւ ոմիկինն և իւր պզտիկ տղայքը շատ անգամ կուգան իմ շուքիս տակ կը նստին. ուստի պահապանին քանի կ'ասես, որպէս շուքէդ որ մօտէս հեռանայ։ Մէկին իմ պտուղներուս անուշ հոտով կ'ըզմայլի, ուրիշն ազուոր գոյներդ տեսնելով կը գովէ, և գրեթէ ամենուն բերանին ջուրը կը վազէ, սոցա . . . ինչ կ'ասեմ սոցա, այլ բոլորին ետ խելքը մոռցն իմ վերաս է։ Ո՞վ ուրիշ այսպէս գեղեցիկ ետ պտղաւէտ գանձ մի։

Երջանիկ և բարեբախտ եմ ես. աշխարհիս մէջ, ոչ, չկայ ասկէ աւելի փարթամութիւն։— Ազնիւ խնձորենի, պատատոհան տուաւ ցած ձայնով տարին առած մի տանձենի, կ'աղաչեմ, ներեցէք եթէ կը համարձակիմ խօսքիդ դէմ կենալ։ Իրաւ է որ հիմայ ամէն մարդ կը փափաքի կ'ուզէ հնազանդ և սիրելի երեւել քեզ. բայց մի վատահիր մարդկանց, որոնք բնութեամբ ագահ լինելով՝ սովոր են միշտ առել և խօսքերնուն վերայ չկենալ։ Կամ որ այն բարբարոս ձմեռն գայ փոքրիկ զաշունն, եւ այն առնէ կը տեսնես թէ նոցա պարծենցած բարեկամութեան կապը հատուած է»։ Ցանձենեայն տաւած խրատը խիստ խելացի էր և խիստ յարմար, մանաւանդ թէ մարգարէի նման խօսեցաւ. եթէ հաւատալու լինիք Եզոբոսին։ Վասն զի հարարտ խնձորին ծառը իւր պտուղները կորառնցրնելով մօրէ մերկիկ մնաց, և իւր տերոջն ու ծառաներուն երեսէն եւս ինկաւ։ Այս փորձանքն որ գլուխն եկաւ, սկսաւ ցաւիլ և զարմանալ։ «Ո՛հ, կ'ասէր, ահա հիմայ կ'իմանամ այն խաբէբայ գողերուն ըրած մատնութիւնը. բայց ի՞նչ օգուտ, առնն անցաւ, վայ իմ գլխուս։ Նոցա ինձ տուած սէրն երեւանց էր, կեղծաւորութիւն էր ըրածնին, որ երեսէս 'ի վայր կը հրատային կը մնային. և իմ պատիւս աւրել է եղեր այն չարագործներուն միտքը»։ Կրկնեց այն առնն տանձենին. «Ահա հիմայ ճշմարիտ կը խօսիս և շատ խարուիր. վասն զի եւս տարիներ եմ անցուցած միտքս որ վարը-

մուրացայ շնորհում նոցա սուտ գովեստներէն, և խոհեմութեամբ յայտնել նոցա խարէութիւնն և խարդախութիւնները. և իմ վնասուս խնայայ մի՛ թէ ինչ որ մեր գլուխը կը բերեն այդ մարդիկը, նոյն վնասն իրենց մէջ իրարու եւս կուտան; Քանի որ մի բարեկամի երեսէ իրենց գործը կը յաջողի և անկէ օգուտ մի կը ստանան, անոր պատիւ կուտան և կը մեծցնեն, և կեղծաւորութեամբ ձեռայ վերայ մուտ կ'ածեն, հաստատուն սէր և հաւատարմութիւն կը ցուցնեն. Այսպիսի բարեկամներ անիմաստ են, որոնք իրենց շահը կը նային, և միայն զուարճութեան և ոչ թէ մտերիմ բարեկամութեան կապով կապուած են »։ Անմիտ խնձորենեայն վերայ նայիս իսկոյն եկաւ հատուս ապրանութիւն վիշտ եւ ցաւ . . . . Ամենքն երեսէ ձգեցին, եւ ոչ ոք մօտը կուգայր. եւ չկայր մէկն որ նորա դարմն եւ ողորմելի վիճակին մէջ ցաւակից ելայ իրեն։

Այս ճշմարտութիւնն իրաւ շատահաս մարդկանց այնքան ապրելցութիւն չտայր, բայց եւ մանաւորապէս հարկաւոր կը համարիմ փոքր տղայոց իմացընել, որպէս զի երբ կրսկսի խելքներնին տեղ բնել, ուսնին ճանչել զմարդիկ, և նոցա սուտ երեւոյթներնէն չխաբուին։

Դժուար է առաքինի և հաւատարիմ բարեկամ գտնելը, ընդ հակառակն խիստ դիւրին է նենգամիտ և սուտ բարեկամներ ստանալ. ուստի իմ միտքս այն է որ զգուշացընեմ զձեզ այն վտանգէն, ուր անզգուշութեամբ կ'ինկ-

նին, նոքա որ քարեկամութեամբ հետեւեցին կը կապուին։

Կ'ուզէի որ դուք յայտնի թշնամի ունենայիք՝ քան թէ վատ ու մոլի քարեկամ։

Եթէ ձեր թշնամին յայտնի լինի, կրնաք շխաբեցիլ անոր, եւ զգուշանալ նորա լարած որոգայթներէն. իսկ ընդհակառակն՝ ընդհանրապէս խաբելով, բնաւ վախ մի չունենար մարդ այն քարեկամէն, որոյ հետ ընտանեբար կը ուտուի։ Ուստի վայ կը լինի ձեզ՝ եթէ սիրով կապուիք այն բնութիւնը ունեցող քարեկամներուն մէկուն հետ. քիչ քիչ առանց խնամելու նորա վատ սովորութիւնները կ'ընդունիք. շար օրինակները կ'ուսանիք եւ կամաց կամաց կը լինիք դուք եւս նորա պէս շար և նենգամիտ մարդ։

Մոլի քարեկամաց զատմամբ. ՀԱՏ ԵՂԵՑ ԵՊԻՍՏՈՄԻՍ ԻՒԻՆՑ։

Քանի որ Ներսէս Հռոմայու կայսրը՝ սիրով ակամբ կը գնէր Պուրբոյի և Սենեկայի խրատներուն, որոնք նորա դաստիարակ ընտրուած էին, ամէն մարդիկ կը զարմանային նորա քաջութիւնեանն եւ ազնուութեան վերայ։ Իւր պաշտօնատարներէն մէկը օր մի գնաց մօտն և ուզեց որ դատապարտութեան մի թղթի մէջ իւր ստորագրութիւնը դնէ. «Երանի թէ, պատասխան տուաւ Ներսէս, գիր գրել չգիտնայի, որ հիմայ այդպիսի վնասոյ մի ստորագրութիւն

գնէր։ Ուրիշ անգամ մի քաղաքի կառավարչին գիր գրեց ասելով թէ՝ աշխարհներուն բուրդը միայն խուզել պէտք է և ոչ կաշին մրուտեղ սկրդել։ Ասով ուզեց խնայցնել անոր։ թէ ժողովուրդը պէտք չէ ազքատացնել շատագանց տուրք պահանջելով և գրկանք տալով նոցա։ Բայց եւ այն երբ Ներսէս շորս գիր առին շաղքորթի և վատ վարք ունեցող պաշտամանեանք։ այն քաղդը և մարդասէր իշխանք կատղած ուրեմն մի գարձան։ որ միայն մարդկանց արիւնով կը սնանէր։ Վեծամեծներն և Հասարակ ժողովուրդը։ մանաւանդ քրիստոնեայներն նորա անգթութենէն զոհ եղած էին։ Ոչ միայն իւր Պուրրոյ և Սենեկա վարժապետներն ի մահ դատապարտեց։ այլ մինչև Ագրիպպինա մայրը և Հոկտաւիան կիներ սպաննել տուաւ։ Շատ անգամ կ'ասէր։ թէ կը ցանկայի որ աշխարհիս բոլոր մարդիկ մէկ գլուխ ունենային։ որպէս զի մէկ անգամ սուր գարնելով զամենքը մէկէն սպաննէի։ և զատարձանայի։ Իւր անգթութիւնը այնքան շատէն անցաւ։ որ մինչև Հրամայեց կրակի տալ Հռոմ քաղաքն։ և ինքը մի բարձր աշտարակի վերայ նստած կը զատարձանայր կրակին բոցերը տեսնելով։ և Տրոյադայի հրկիզութենէն վերայ շինուած բանաստեղծական քերթուած մի կ'երգէր։ ինչ տեսնն Հռոմ բոցերուն մէջ կայրէր կը մրկէր։

Եպիրոտ տիեզերք։

Վասն բարեկամաց կենակցութեանք քիշ մեռաս շատաս Յովասա Յուդայի թագաւորին եւս։ Այս երիտասարդ իշխանն խնամութեամբ կառավարեց քանի որ Յոսիդա քահանային խրատներուն հետեւեցաւ, որ զինքը Գոմորղիայի բարկութենէն ազատելով նորա ամուսնոյ նամուսցուցեր էր։ Այս առաքինի մարդոյս վերայ Յովասա ունեցած ակնածութիւնը և պատիւը զինքն առատաձգաշնութեան եռանդով և առաքինութեան սիրով կը վառէին։ Բայց Յովիդային փախճանելէն յետոյ, քիշ ժամանակի միջոցին մէջ փոխեց նա իւր վարքն, և իւր օրինակովը յայտնի ցրուաւ, թէ մարդս որուհետեւ որ շատ տեսնուի նորա կը նմանի։ Վասն զի տէրութեան իշխանութեան երիտասարդութիւն ընելու գաղով նորա առաջը, Յովասա միտքը դարձուցին։ Յովասա եւս նոցա շողոքորթութիւններէն եւ անոյշ խօսքերէն խաբուելով մտիկ ըրաւ նոցա խօսքին, և այն չար մարդիկն իրենց ուզած պատուոյն հասուց, իւր հաւատարիմ իշխանները պաշտօնէ ձգելով։ Ահա այսպէս անկարգութեանց անձնատուր լինելով թագուցին թէ ինքն և թէ իւր պարտակցիներն իրենց նախահայրց ճշմարիտ Աստուածն, և ծառայեցին կռոց։ Եւ իւր շարութիւնն այն աստիճան հասուց, որ միանգամ ապանեալ առաւ Յովիադա քահանայի որդին Զաքարիաս, ամենեւին միտքը չբերելով նորա հօր իւր վերայ ունեցած գութն, որ զինքն ամուսնոյ նամուսցուցեր էր։

Եղբարդ տիկնայ՝ առաջնորդն ասելի նշանագրոյ։

Զոր որ Զարհամանելն ասելոյ առաքելոյն Եփեսացոց գրեաց մեզ ի գրիչս ազգի, այլ սակայն շարադրեալ գրագրութիւն մեզ կարի սրբազան եւ խորհրդաւոր գրոց։ որ հարիւրս տեղիս ի բերանոյ հրեշտակին կրաւոյն Նոյն գաղտագրեն եղանակաւորեալն ի՝ սակաւս սակաւս։ Ոչ՝ սակայն որ մատնեսցուս զոր մեզ ասելոյ ոչ ասելոյ։ զոր գիտեմ կրկնեալ Եկեղեցեաց եւ Հիւսիսոյ Գրիգորեանց սակայն Եպիսկոպոսաց յանձնեալ եղեալ։ եւ զոր որ Զարհամանելն ասելոյ Նոր գրոցս՝ գրագիրս յԵփեսացոց։ Եպիսկոպոսաց բերանոյ ասելոյ ոչ ասելոյ։ մատնեսցուս զոր Հայոց հրամանաւ։ եւ Հայոց ի Հիւսիսոյ։ Գրիգորեանց ասելոյ ասելոյ։ Նոր գրոցս գրագիրս։ եւ

ժամանց անդամանդին մէջ, մինչև որ անօրէն ընկերներու հետ առաջակաց խառնիք մի կազմեց, և ինքն նոցա առաջնորդ և գլուխ եղաւ։

Քանի մի ժամանակէն յետոյ, սուրբ Առաքելոյն՝ եկեղեցւոյ վերաբերեալ մասնաւոր գործերու համար Եփեսոս եկաւ։ Եւ զանոնք ընդունելէն զետի, հաշիւ խնդրեց եպիսկոպոսէն իրեն յանձնուած աւանդին վերայ։ Եպիսկոպոսը խառնիկաւ այս հարցմանէն, կարծելով թէ գրամի աւանդ էր նորա ուզածը։ Գիտէր սոյգ որ անկէ ամենեւին բան մի ընդունած չէր։ այլ չէր համարձակեր հարցնել թէ ի՞նչ աւանդ է խնդրածը։ «Իմ զրուցած աւանդս, սասց անոր սուրբը, այն երիտասարդն է զոր ես քո պահպանութեան եւ խնամոյ յանձնեցի։ քո եղբօրդ հոգին»։ Այն ժամանակ ծերունին աչքերը գետին իջեցնելով և սասոիկ լալով պատասխանեց՝ թէ մեռաւ նա։ — Ի՞նչպէս, կրկնեց սուրբ Յովհաննէս, ի՞նչ մահով մեռաւ։ — Ո՜հ խեղճը, սասց նորէն առաջնորդը, նա մեռաւ հոգւով, քան որում ինքզինքն անառակութեան տալով՝ չար ու անիրաւ մէկն եղաւ։ մէկ խօսքով՝ ճամբու վերայ գողութիւն կ'ընէ հիմայ։ Եկեղեցիին գաղտուկ փախչելով, լեռներու մէջ պահուրտած է իրեն պէս չարաւորներու խմբով մի»։ Սուրբ Առաքեալն այս լսելուն՝ վերայն զգեստը պատռեց, ցաւալի ազաղակ մի հանեց, և ձեռքը գլխուն զարնելով, «Ո՜հ, ի՞նչ աղէկ հովուութիւն է այս, սասց, որուն ես պարծենութեամբ մեր եղբայր

հոգին յանձնեցի։ Այդէ, շուտով սրբեմայ ձի մի բերել տար ինձ, և մէկ առաջնորդ։ Հեծաւ ձին ու երաւ եկեղեցին գարբս ժամանակ շտեղուցած՝ վերայի հագուստովը։ Գազերուն եղած տեղը հասածին պէս, անոնցմէ մին՝ որ հոն պահպանութիւն կ'ընէր, բռնեց զինքը, բայց, սուրը Առաքեալն առաջ եւ քաշուելու։ "Տար զիս, ասաց համարձակութեամբ մի, տար զիս ձեր գլխաւորին մօտ։ Դորա հետ խօսակցելու համար յատկապէս եկած եմ ես։"

Անոր էն խմբին գլխաւորն անելիքը և զինուորուած կեցած կը սպասէր որ իմանայ թէ ով է նա որ զինքը կը խնդրէր։ Բայց երբ տեսաւ եւ Ճանչցաւ որ Առաքեալն էր, ամաչելուն փախաւ անկէ։ Սուրբ Յովհաննէս իւր ծերութեան շնայելով, ձիոյն ետեւը թողուլ այնպէս կը վազէր եւ տեսնէն եւ կը պոռար։ "Որդեակ իմ, որդեակ, ինչո՞ւ կը փախչիս հօրդ երեսէն, և մի ոգորմելի ծերուն էն որ առանց զէնքի գրեթէ փնտռելու կուգայ։ Ողորմէ ինձ, որդեակ իմ, մի փախիր։ Քո փրկութեան համար յոյս ունիմ։ Եւ քեզ համար հաշիւ կուտամ Յիսուսի Քրիստոսի, և եթէ հարկը պահանջէ, իմ կեանքս եւս յօժարակամ կուտամ քեզ համար։ Ինչպէս որ մեր Փրկիչն Յիսուս Քրիստոս իւր կեանքը մեզ համար զոհեց։ Կաց և գիտցիր որ նոյն ինքն է որ ասաւ խրկեց զիս քո հոգւոյդ փրկութեան համար։"

Այս խօսքերուս վերայ երիտասարդին սիրտը դող ելնելով կանգ առաւ, աչքերը գետին խո-

նարհեցուց. նեռանց վերայի զէնքերն, և գլխէն մինչև ոտքերն սկսաւ դողալ։ Սուրբ Առաքեալը նորա մօտենալով, ոտքն սկսաւ առաւ, և աչքերէն աղբիւրի պէս արտասուք թափելով փաթթուեցաւ իւր աղաչին վիզը։ Սուրբը նորէն սկսաւ առաւ նորա, երդում քաւ թէ մինչև նորա համար թողութիւն ընդունիր էք Աստուծմէ, աղաչեց՝ ծնկան վերայ եկաւ, համբուրեց նորա աչքը, զոր իւր արտասուքով թրջեր էր, յետոյ բերաւ եկեղեցին։ Սուրբ Յովհաննէս շատ աղաչեց զԱստուած նորա համար, և նորա հետ շատ օր ծամ պահեց. վերջապէս չգնաց մօտէն՝ մինչև որ նորէն եկեղեցոյ գաւակ չդարձաւ զինքը, որ յետոյ ճշմարիտ ապաշխարութեան հայելի և օրինակ եղաւ ամենուն։

Դուք կը զարմանաք հիմայ, սիրելի որդեակք իմ, տեսնելով թէ ինչպէս երիտասարդ մը ասուածպաշտութեան եւ առաքինութեան ճանապարհի մէջ քայլած ժամանակ, այսպիսի անօրէնութեանց սոսկալի անդունդին մէջ ինկեր էր։ Բայց զարմանալու չէ բնաւ. վասն զի շատ մարդոց հետ ընկերանալու որ լինիք, Ի հարկէ նոցա կը նմանիք. որպէս համար կ'ասէ Առակը թէ՝ «Սա՛ ինձ ոմէ քս ընկերդ, և զիանամ ինչ մարդ լինիցդ»։

ԳԼՈՒԽ Ը.

Ղէպն Նոխթին վերայ, որոմանքն նոյն փոփոխին որում մէջ կ'թեկնին ապայք մոլի բարեկամաց հետ ուտուելով։

ԻՆՉՊԷՍ որ տարափոխիկ հիւանդութիւն ունեցող մարդու մօտենալու որ չենիմք, նորա հիւանդութիւնը մեր վերայ եւս կը փոխադրուի. այսպէս՝ մոլի բարեկամաց հետ ուտուելու որ չենիմք, նոցա մոլութիւնը մեր վերայ կ'անցնի։ Բայց ինչպէս լսի, հիւանդ մարդուն մինչեւ որ չմօտենամք, նորա տխրալ չենք ուտեներ։ Ուստի եթէ մէկն ըսելու լինի ձեզ թէ՝ այս ինչ մարդն կամ այս ինչ ազգն տարափոխիկ հիւանդութիւն ունի, կամ ժանտախտէ բռնուած է, զուք որ այս լսէք, չէք զգուշանար եւ չէք հեռանար անոնցմէ. այսպէս եւ ասկէ առելի զգուշութեամբ պէտք էք հեռանալ անառակ եւ շար ազգայոց բարեկամութիւններէն ու ուսումներէն։

Ամիրի եւ մոլի բարեկամաց ձիրաց երկու սուրբ ոգեաց ունեցած կարծիքը։

Սուրբ Գրիգոր աստուածաբան կ'ասէ թէ "Երբ սուրբ Բարսղի հետ Ամէնքի մէջ գիտութիւն կ'ուսանէինք, ամենեւին ուսումնութիւն չէինք ըներ այն գաղտնիքներուն հետ, որոնք սատանայի, կռապարար եւ անկիրթ էին. այլ միայն նոցա հետ կը ուսանուէինք՝ որոնք իրենց պարկեշտութեամբն եւ խոհեմութեամբ կրնային

մեզ օգտակար լինել մեր դիտաւորութեան մէջ հաստատ կենալու համար. զոր բրած էին այնպիսի կեանք մի վարելու, որ ամենեւին բամբասանաց եւ պարսաւանաց պատճառ չտանք այլոց, այլ ազէկ դիտցուի թէ շար օրինակները սարսափելի հիւանդութեանց կը նմանին, որ դիւրաւ կը փոխուին մարդոց։

Վասն բարեկամները կրնան նմանիլ փտած պտուղներու, որոնք շուտով կը փտեցնեն իրենց քով եղած միւս պտուղներն եւս։ Բայց այս զանազանութիւնը կայ փտած պտուղներուն և վատ բարեկամաց մէջ, որ առաջինները իւկոյն յայտնի կը լինին որ փտած են։ Նոցա վերայ սեւ ու կապուտ նշանները տեսնելով, դիւրաւ կ'իմանամք որ մէջէն փտած են։ իսկ ընդհակառակն՝ անառակ ոգոյք սովորաբար ներսերնին ինչպէս որ է, նոյնը դրսէն չեն ցուցներ։ Նոքա իրենց արտին շարութիւններն արտաքին պարկեշտութեամբ կը ծածկեն։ Յամրշտակիչ գայլեր են ոչխարի մորթով ծածկուած, որ դիւրութեամբ կը յարձակին և կը պատռեն կ'ուտեն անմեղ գառնուկները։ Ուրեմն մի հաւատայք նոցա արտաքին խաբեբայ կերպարանաց, այլ այն մարդոց բարի խրատներուն մտիկ ըրէք, որոնք ազէկ կը ճանչնան նոյն թշուառականներն, և ձեզ եւս կը խրատեն որ փախչիք անոնցմէ։ Յովհաննէս Պլուզ վարդապետն գեղեցիկ խրատ կուտայ մեզ ճշմարիտ բարեկամի մեզ ճանչցընելով. «Իշխանի և պարոնի, կ'ասէ, պարտէ որ զայն մարդն սիրէ, որ յիւր երեսն

խոսք. և յանդիմանէ՝ յորժամ անիրաւ բան առնէ. զի այն ի սրտէ բարեկամ է. Եւ մարդ որ զինչ պարտնն առնէ. և նա ասէ՝ թէ լաւ է, առ ժամանակն զարտի դիւրն խոսի. նա յետոյ բարեկամ է. և հոգւոյն չարիկամ։

ԱՌԱԿ

Պզտի մուկն եւ Ծեր կատուն։

Պզտի մուկ մի. որ դեռ կամէր նոր կրտրուած էր. իւր խորուանկ բոյնէն դուրս կ'ելնէր. և ուրախութեամբ կը սկսի ինքն իւր վերայ նայելով պարծիլ և ասել. ինչ գեղեցիկ և սիրուն եմ։ Թեղջն իւր հայրենի բոյնին մէջ շնչառութիւն ուրիշ բան չէր գիտեր. նայիս գրուխը ծակէն դուրս կը հանէ. իւր թամբիկները կը թմբռնէ, և նոր աշխարհ եկած կը կարծէ զինքը։ Արեւուն լոյսը քնաւ չէ տեսած. կը խնդայ կ'ուրախանայ. բայց ինչպէս հանար՝ չգիտեր։ Բարին ու վատը չճանչնար. խարեութիւն չգիտեր. սիրտէն և ցաւէն չմախնար. ամենեւին բանէ մի խնայ չունի։ Թեղջուկը մէկ մի կ'երթայ կը պտտուրտի. այլ իւր սրտին մէջ ապատութիւն ունի՝ նորէն դուրս կ'ելնէ. կը հեռանայ անտիրջ կենդանին իւր հայրենի բնակարանէն, և ուրախութեամբ սիրտը կը լեցնի։ Ոդորմելին չունի մտն խնամուն բարեկամ մի որ իրեն առաջնորդ լինի. կամ բարի խրատ մի տայ։ Աչքերը շորս դին կը

զարթուցիչ, և կը տեսնէ որ խաստուտիկ գոյնով կատու մի տաքերը երիքնցուցեր արեւուն մէջ հանգարտիկ նստեր է։ Շատ պատերազմներու մէջ գտնուելով այս անօրէն գողը վարժուած էր ծեծի, և մէկ կողմ երիքնցեր փռուեր էր, և այնպէս կը կեղծէր զինքն՝ որպէս թէ երիքնքին երեսը կը գիտէ, և միամտութիւնը երեսէն կը վազէ։ Մեր անմիտ պղտի մուկը կը նայի անոր և ուրախութենէն կը սկսի ցատքռտել։ Նենգամիտ կատուն ամենեւին տեղէն շարժիր և հոգը չըներ, այլ ինքզինքը խելօք ձեւացընելով՝ մեծ սէր ցոյց կուտայ անոր։ Մուկն ուրախութենէն կը գիւռնվնայ և կը սկսի նորա բոլորտիքը ցատքռտել, եւ իրենց լեզուով կ'ասէ անոր։ «Սիրուն կենդանի, շնորհալի է քու դէմքդ, փայլուն են աչքերդ։ Ասա ինձ ի՞նչ է անունդ, որ տեսնեմ թէ քու արժանաւորութեան հաւասար է։ Վերելի, եթէ իմ վերայ դէշ աչք չունիս, կ'ուզէի որ մեր երկուքին մէջ բարեկամութեան կապ մի հաստատենք։ Քեզի՝ զատ ուրիշ ոչ կրնայի գտնել ինձ աղէկ առաջնորդ, կամ հաւատարիմ ընկեր»։ Այսպէս խօսելով անմիտ և տխմար մուկը կը մօտենայ խաբած կատուին, որ իւր ագռին աւերիչն է։ Կեղծաւորն՝ որ բնաւ զուր տեղ չփորձեր պարզամիտները, ճանկերը խոկոյն վերան կը նետէ, կը բռնէ ակռաներով, և խեղճին սիրտը պատառ պատառ կ'ընէ։ — Այս առակս կ'ուսուցանէ, թէ շատ անգամ մարդոց մէջ եւս կը գտնուին, որ երբեմն աչքերով, լեզուով, և երբեմն իրենց

խոնարհն կերպարանքով կը խոսքնէ զնոսդ։ եւ
հրամէց սրբոյն Հոգւոյն մի քարկոծ մի եւ սարսեցեալ
սարդիոնոսն Հոգւոյն քաջին տակ շարք խոսդսխոս-
ին եւ կերդնուս սրբոյն Հոգւոյն ծանկանդ ունին։
Բարեկարգեաց քնարոյն Հոգեն ասաս եղանակ կա-
խեալ է ձեր սեռեն զոս Հոգւոյն սրբոհարսնոս Հոգին
կամ կորուսանք։ Զասն զի խեղդէս կ՚ասէ Հոգին
Սուրբ։ «Դուք քարեալ Հոգւոյն քարի։ եւ շարեալ
Հոգւոյն՝ շարք ու ձոյն կը մնիք»։

Բեկ եւ մինչեւ այդ Հասանին սուսարիոս-
Հոգեսեն Հասած եւս մնիք։ այլ Հաստատեալ
մեռ՝ որ մինչեւ շարք բնեկերն քաղաքն է զձեզ
դիմեն Հանեալս եւ հրեն ոչ մնա մնեալս։ Փոր-
ձով կը տեսնեսիք ասեն օր։ Եթէ երիտասարդ
տղայոյ մեծ մասդ կ՚երեսն մեռ խնդրելիքնին այս
ցաւոյն քարին կը զարնեն։ Հետեւեալ օրինա-
կը կարդեսի՝ որ մեծ տղեն ցաւեսին եւ երկիր-
կուսոյ այն տղայոյ արանին։ որոնք քնաս մեն
զգուշանար այնպիսի բնեկերնեն Հեռու կե-
նալ։

Պարդեսական ոգեն ցաւոյն մասին։

Պարեսական երիտասարդ մի այնքան խեղճացի
եւ տառապեսաստարեալ էր։ որ ամենեն կը զարմա-
նային եւ երանի կուսային նորա ծնողաց։ քայց
դժբաղդաբար սեռաստ եւ անտանեսի տղա մի
Հեռ քարեկամանոցով՝ խիստ մեծ անկարդաս-
ին տառապանք։ Նորա խոսքերն եւ օրի-
նակներդ քիչ ժամանակի մէջ խանդաղատեցին ան-
դադար երիտասարդին սիրտն ու միտքը։

Պարկեշտութիւնն և համեստութիւն մեկ-
դի թողլով, որով այնքան լաւ անուն ստացած
էր, խիստ անամօթ լրբութեանց անձնատուր
եղաւ։ Խելքն ու միտքը զբօսանաց, կերու-
խումի և խաղի հետ էր։ Իւր ծնողքը, բարե-
կամներն և վարժապետները ի զուր կը ջանային
մոլութեան ճանապարհէն դուրս հանելու զին-
քը, և որքան արգելքներ որ կը դնէին նորա
առջեւ, ամենեւին օգուտ չընելէն զատ, իւր
շար կիրքերն աւելի կը դրդռէին, մինչեւ որ կա-
մակորութեամբ անզգջութեան միճակն ինկաւ։
Իւր ծագիկ հասակին մէջ մահաբեր հիւան-
դութեամբ մի պառկելով, մի քահանայ եկաւ
որ ապաշխարութեան յորդորէ զինքն և Աս-
ուծոյ հետ հաշտեցընէ, ոչ այն նորա խօսքն
և ոչ իսկ մտիկ ըրաւ, բայց գթասիրտ և մար-
դասէր քահանայն՝ քանի որ նա իւր սիրտը կը
խոստացընէր, այնքան աւելի կը յորդորէր հայ-
բարար։ Նախ թշուառական ազուն խղճմտա-
նաց խայթերը յանկարծ սասսիկ ոտք ելնելով,
և ժանգոտ դեմքը քահանային դարձընելով,
այս սոսկալի խօսքերը զրուցեց։ «Վա՜յ այն
թշուառականին որ դիս գլխէ հանեց և մոլորե-
ցուց։ Իմ յանցանքներս խիստ մեծ են, և չեմ
յուսար որ Աստուած թողութիւն տայ ինձ»։
Այս խօսքերս տխուր և վշտագին ձայնով զրու-
ցելուին, երեսը միւս կողմը դարձուց, որպէս
զի այլ եւս չլսէ բարի քահանային ասածներն։
և մի քանի րոպէէն յետոյ մեռաւ յուսահա-
տութեամբ դժբաղդ երիտասարդը։

Ահա տեսէք, սիրելի զրգեակք իմ, շար ընկերութեանց պտուղը։ Աւասիկ ինչպէս կը ճշմարտի Հոգւոյն Սրբոյ ասածը, թէ «Ով որ ձեռքը ձիւթին մէջ կը խոթէ, մատուքները ապտուած դուրս կը հանէ (1)»։ Ասել կ'ուզէ թէ, ում որ վատ և անզգամ բարեկամաց հետ շատ կը տեսնուի, նոցա մոլութիւններն ինքն կը սառանայ, և զրկանքներուն կը հետեւի։

Այս յօդուածոյս վերայ քիչ մի երկար խօսելուս մի զարմանաք, վասն զի խիստ կարեւոր նիւթ է։

Եթէ սոյգ գիտնամ որ ձեր սրտին մէջ տսկուժ և վախ մի կրցի պատճառել լերբ տղայոց ընկերութեան մասին, այն ժամանակ կրնամ ճշմարտապէս հաւատալ՝ թէ ձեր անմեղութիւնը վտանգէ ազատեցի։ Հիմայ կը մնայ մեզ մի ուրիշ ապառամ քար, ուսկէ հեռանալու համար պէտք է որ մեծ հոգ և զգուշութիւն ունենանք։ և այս բուռն ապառամս վատ գրքերու ընթերցմունքն է, որոնց վերայ հետագայ գլխուն մէջ պիտի խօսիմ։

---

(1) Սիրաք։ ԺԳ։ 1։

ԳԼՈՒԽ Բ.

Վնասակար և վատ գրքերը։

Ինչպէս որ կերակուրը մեր մարմնոյն, նոյնպէս և գրքերը մեր հոգւոյն սնունդն են։ Կերակուրը կը սնուցանէ և ուժ կուտայ. բայց ասոնց մէջ կը գտնուին երբեմն որ մեր առողջութեան օգուտ ընելու տեղ, կը տկարացնեն և կը վնասեն. այնպէս, սիրելի ընթերցող իմ, գրքերուն մէջ կը հանդիպին, որոնք մեր միտքը լուսաւորելու և կարողութիւն տալու տեղ՝ կը կուրցնեն և կը խաւեցնեն։ Այսպէս են բան մեծի մասին մոռացած պատմութիւնները, սրբոյ վերայ շինուած բանաստեղծութիւնները, և ընդհանրապէս կրօնի և բարոյականութեան դէմ եղած գրքերը։

Բոլոր այս բաած գրքերուս մէջ բարակ թոյն մի կայ, որ կամաց կամաց նոյն գրքերը կարդացողներուն սրտին մէջ մնալով, աստուածապաշտութեան դէմ ատելութիւն կը սերմանէ. Աստուծոյ սուրբ երկիւղն և բոլոր բարի բնաւորութիւններն անկէ կը հալածէ, և վերջապէս նորա հոգին թշուառաբար կը մահացնէ։

Այս բաներս ճշմարտութեան համար կը նոյն ատ շատ օրինակներ բերել, և շատ երիտասարդներ եւս կը ճանչնամ որ այս ճշմարտութիւնս իրենց վնասով փորձեցին։ Մինչեւ աւելի կը յիշեմ մի երիտասարդի վերայ պատմուածը, որու վատ գրքերը բոլորովին միտքն

աբելով մոլորցուցին. եւ ահա այս է պատ-
մելիքս, մոլիկ ըրէք։

Տգու մի ջան գրքեր կարդալոյ գլխի եկնելը։

Այս երիտասարդը խիստ ջերմեռանդ եւ
աստուածապաշտ էր, եւ միանգամայն գիրք
կարդալու չափէ դուրս սէր ունէր։ Առանց
ընտրողութեան ինչ գիրք որ ձեռքն անցնէր՝
կը կարդար։ Դժբաղդութեամբ այնպիսի գրքե-
րու եւս հանդիպեցաւ, որ կարծես թէ դժոխքի
փոխուանք են, և անզգոյշ երիտասարդաց բնու-
թիւնն եւ բարի սովորութիւնները կ'աւրեն։
Առջի բերան սկսաւ զանոնք աչքէ անցընել՝
առանց վտանգն իմանալու, եւ կամաց կամաց
այնպէս կապուեցաւ այն գրքերուն, որ մէջի
թոյնին համն լաւ մի առնու։ Նոյն ժամանակէն
յետոյ իւր աստուածպաշտութեան եռանդը
պաղեցաւ. հրաժարեցաւ եկեղեցւոյ սուրբ
խորհուրդներէն. իւր սովորութիւն ըրած ա-
ղօթքները թողուց, և առջի բնաւորութենէն
փոխուելով՝ եղաւ մէկ ուրիշ տղայ։ Իւր վար-
ժապետներն անգամ չէին հասկընար՝ թէ ինչ է
արդեօք նորա այսպէս յանկարծ փոխուելուն
պատճառը։ Բայց օր մի Խոզոյն իւր բերնով
գինքը մատնեց. բազմութեան մէջ գտնուելով,
ինքնակար եւ գարշելի խօսք մի փախուց բեր-
նէն, զոր մի վատ գրքի մէջէ ուսեր էր, և գրքին
անունն եւս տուաւ։ Այս որ լսեց իւր վար-
ժապետն որ այն տեղ կը գտնուէր, իսկոյն եկաւ

գնաց նորա գրանցքը տեսանելու, և մէկիկ մէկիկ աչքէ անցընելով շատ վատ եւ անպարկեշտ գրուածքներ գտաւ. յաւ մի յանդիմանեց զինքը. ցուցընելով միանգամայն այն տեսակ գրքեր կարդալէն յառաջ եկած ցաւալի հետեւանքներն։ Խնայաւ պատանին նորա խօսքին ճշմարտութիւնը, ուզիղ սրտով խոստովանեցաւ՝ թէ իւր այնպէս փոխուելուն առաջին պատճառ այն գայթակղեցուցիչ եւ մահաբեր գրքերն էին։ Եւ որովհետեւ մարդս լաւէն աւելի վատին հակամէտ է, ուստի նորա այն վատ գրքերէն ծրծած շար գաղափարներն, այնպէս խորունկ տպաւորած էին իւր սրտին մէջ, որ մեծ աշխատութիւն կրնց միւնչեւ որ զանոնք ջնջեց. եւ քանի որ կենդանի էր, մարէն չելաւ բնաւ անոնց՝ մարդոյս միտաց մէջ գործած վատանգաւոր տպաւորութիւնները։

Վատ գրքերուն զատճառած գործերուն գեղեցիկ օրինակ մի։

Պժոխային օձը յոյս տուած էր մեր նախածնողաց, թէ Աստուծոյ պատուիրած պտուղն ուտելով կը լուսաւորին և աստուծոյին նման կը լինին. «Կ'ըստանանք, ասաց անոնց, բարւոյ և չարի գիտութիւնը»։ Ադամ ու Եւա այս տեսա խոստմանէն խաբուելով, ձեռքերնին կ'երկարեն այն թշուառ պտղոյն. բայց նորա համն դեռ շատած, իրենց անմեղութենէն մերկացած և կուրութեան ու թշուառութեան մէջ ընկղմած կը տեսանեն զիրենք։

Դուք եւ ահա ձեր հետաքրքրութեամբն այս գժբաղդութեան կը հանդիպիք, եթէ Աստուծոյ պատուէրն բանի տեղ չդնելով՝ յանդգնութեամբ կարդալու լինիք այն նախատական գրքերը։ Զգոյշ կեցիք սրտին որ չմոլորիք բանարկութիւն տուա խառնուածներէն։ Դուք նախահայրց պէս հաստատուած պատուղ ունիք ազնիւ և հաճելի, այսինքն անհատնում ընտիր և գեղեցիկ գրքեր, որոնցմով կրնաք սնուցանել ձեր հոգին։ և զանոնք կարդալը չէ թէ միայն ներելի է ձեզ, այլ և կը պատուիրեմ իսկ որ կարդաք և հետեւիք այն գրքերուն։ Իսկ միւսները նման են դրախտին մէջի արգիլուած պտուղներուն, որոնց վերայ խօսելով՝ կրնամ և ես ասել ձեզ հոն որ Աստուած Ադամին ասաց արգիլեալ պտղոյն համար, թէ «Քանի անգամ որ ուտելու լինիք, համը առնելու ժամանակ՝ կը մեռնիք»։ այսինքն անմեղութիւնդ կը կորսուցնէք, որ հոգւոյն կեանքն է։

Բայց որոմիներու այս վատ եւ ամառակար գրքերը չեն կրնար ճանչցուիլ, և քան որում իրենց թոյնը հատարակօրէն ճշմարտութեան կերպարանք ունեցող անուան մի տակ ծածկուած կը լինի, նորա համար եթէ ի՞ուրէք խնդիրներ վարուիլ և շարուիլ անոնցմէ, ամենէն լաւն այն է որ, ինչպէս ըսինք, բնաւ գիրք մի չէք կարդար, մինչեւ որ տարբերի և լուսաւորեալ մարդու մի խորհուրդ չհարցնէք այն գրքին վերայ՝ թէ արդեօք օգտակա՞ր է թէ ամառակար, և անոնք ինչ խրատ որ կուտան

ձեզ՝ սիրով բռնեցեք։ Եթէ այս զգուշութիւնն չընէք, կը խաբուիք այն գրքերուն առաջ պայծառութենէն, որոնք կ'երեւան թէ միանակար բան մի շկայ մէջերնին գրուած, եւ այն անմիտ ու յանդուգն ոգուն հանգիպած փորձանքին կը պատահիք, զոր այս տեղս սիրոյ պատմեմ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱԾ

Երկրագործն ու սղայն։

Աշնայժ եւ բարեկամիս ոգուն մէկը, որ մի քիչ փարժապետին հետ միասին գեղ կ'երթայ եւ ինքն միւսակ դուրս պրծուելու կ'ելնէ։ Դաշտերը մեր ու փար կուսայ եւ թռչունները անուշ ձայնով կը զմայլի։ Կը տեսնէ այն տեղ մարգագետնի մի վերայ աղուոր ծաղիկներ։ Խնդալով գէպ 'ի այն կողմն կ'արագայ կ'երթայ որ անոնցմէ ժողվէ։ Եւ ահաւասիկ մարգագետնի մէջ կոխելով, այն գեղեցիկ ծաղիկները տեսնելուն եւ անուշ հոտերն առնելուն այնպէս կ'ուրախանայ՝ որ երեսին վերայ զուարճութիւնն եւ խրախճանքը կը փայլին։ Եւ անոնցմէ մի քանի փունջ քաղելու համար, երկու ձեռքը մէկէն կ'երկարէ, եւ մի փունջ կազմելու չափ կը քաղէ չքաղելը։ Անդիմն ծեր երկրագործին մէկը դուրս կ'ելնէ։ — Օ՜հ։ ինչ կ'ընես, ազա՛յ։ խե՞նդ ես դու, կը պոռայ անոր։ Այդ ծաղիկներուն մէջ

թունաւոր օձերը պահուրտած կան, որոնք ուշ-
ամբ ոտքերը խածելը են առանց մէջ խարդացած
ժամանակներին։ Այս քո բարեոյդ համար կը խա-
սիմ, որդեակ, հաւատա ինձ, և ասկէ դուրս
ելնելը նայէ։ Ցզայն վախնալով՝ խսկոյն դուրս
կը ցատկէ, և ձեռքի քաղած ծաղիկները կը նե-
տէ։ Բայց ձերը նորէն իւր գործին գառնալով,
անմիտ ոգայն սկսաւ նախատել զայն՝ ասելով.
«Անքան և վախկոտ եմ ես, թէ որ այն խոֆած
մարդուն մոխիկ ընեմ, որ երեսանց առաջ սէր
ցուցընելով՝ զիս ծաղը ընել կ'ուզէ»։ Ապայ՝
և նորէն ետ դարձաւ այն տեղ, ուր շար օձ մի
կարծես թէ իրեն կը սպասէր խայթելու։ Այն
ծաղիկներուն և խոտերուն մէջ դարձեալ ձեռ-
քը կը խոթէ, և մանուշակներ քաղելու ժամա-
նակ նորա ձեռքին կը պլլուի և այնպէս կը խայ-
թէ, որ ոգայն կիսամեռ գետին կ'ինկնի կը
փրռուի։—Այս ծաղիկներն և խոտերը, ով երի-
տասարդք, այն գեղեցիկ սէրք ունեցող գրքերն
են, որ մարդս գլխէ կը հանեն և կը մոլորեցը-
նեն, վասն զի իրենց թունաւոր խօսքերն քաղցր
և զուարճալի ոճով մի ծածկած են։

Ինչ որ գրքերու ընտրութեան մասին առա-
ջի ձեզ, նոյնը ալ ոչ է իմանալ նաև լրա-
գիրներու և պարբերական թերթերու և հան-
դէսներու մասին. և մեծ զգուշութիւն ալ ոչ է
զանոնք կարդալու ժամանակ, որոնց շատին մէջ
ազգասիրութեան և ազատասիրութեան ոգին
կարծես թէ կը փայլէ, բայց գիտցիք որ նոցա
մէջ նաև այնպիսի բարակ ու անզգալի թոյն

մի կայ, որ ձեր բարեպաշտական ու կրօնական հոգին կը սպանանէ. և անհաւատութեան անդունդին մէջ կը գահավիժէ։

ԳԼՈՒԽ Դ.

Տղայ պարտաւորութիւններն իրենց ծնողաց դէմ։

ԱՆՁ կեանք տուողներուն դէմ ունեցած պարտաւորութիւնին այնպէս յարմար են մեր սրտի զգացողութեանց, որ գրեթէ աւելորդ կը թուի զանոնք ձեզ յիշեցնել։ Այսու ամենայնիւ՝ քանի որ՝ շատ տղայք կը տեսնենք որ իրենց այս պարտքը չկատարելով քնութենէն դուրս կը համարին, ուստի և ես, սիրելի որդեակք իմ, պարտաւորութիւն կը համարիմ ինձ զգուշացնել զձեզ նոցա օրինակներուն դէմ. որպէս զի այն ապերախտութեան հրեշներուն չհետեւիք՝ ի զուր, քարեկիրթ եւ առաքինի տղու մի պէս վարուիք։

Լաւ կը ճանաչէք դուք Աստուծոյ պատուէրն, որով յայտնապէս կը հրամայէ պատուել մեր հայրն ու մայրը։ Բայց այս պատիւն ինչ բանի մէջ կը կայանայ արդեօք։ Մտիք ըրէք ինչ որ պիտի զրուցեմ ձեզ հիմայ, և ջանացէք օգուտ քաղել անկէ։

Առաջին դարձուածք։

Առաջին պարտքդ զոր ձեզ վերայ կը դնէ ՀԳ-ոյ անունը. ձեզ ծնողաց հնազանդիլն է։ Եմեկ Աստուած յանկարծ երևէր ձեզ աչքին, եւ իւր բերանով խնդրէր ձեզ իւր կամքը. անշուշտ դուք չէիք կրնար չհաւատալ և չհնազանդիլ։ Ուրեմն անոնք որ ձեզ կեանք տուին, այս աշխարհիս մէջ այն Գերագոյն Արարչին փոխանորդներն են, որ մեր առաջին Հայրն է։ Աստուծ այնպէս պատրաստ սիրտ չունիք նոցա ամէն մէկ հրամանք սիրով կատարելու, որպէս եմեկ նոյն ինքն Աստուած հրամայած լինէր։

Երկրորդ դարձուածքն մէջ հաւատարիմ եւ իւր ծերոց հրամաններուն անհնազանդ եղող տղայն։

Տղան մէկը երբ անգամ մը պատրաստուած էր Հաղորդութիւն առնելու, նոյն ատուածաբնակ Խորհրդոյն վերայ քարոզչին ասած խօսքերն այնքան ատաստիկ զգածուեցաւ, որ միտքը դրաւ բոլոր սրտանց ամէն բան էր հրամարելու յետ այնորիկ և Եկեղեցւոյ բոլոր պատուէրներն ամենայն խղճով բռնելու. և այս իւր դիտաւորութիւնը գործով եւս կատարեց, շաղերով նեմանիլ ոգոյոց մեծագոյն մասին, որոնք գրեթէ իրենց գործովք միշտ ասա կը հանեն խոստմանքներին։ Ասոր Հայրն որ քրիստոնէական պարտաւորութիւնները կատարելու այնքան ըզգուշաւոր չէր, ամենեւին պաս չէր բռներ

և ոչ մեծ պահոց մէջ. և իւր արդիւն եւս այնպէս վարժեցուցեր է զմանկութիւնն։ Իսկ այս ամենայնմ, երբ նոքին ուտեաց կերակուրքն զերիւն սեղան, ապայն անուշ կերպարանքով մի շնորհակալ եղաւ իւր հօրմէն. և միանգամայն համարձակ զրուցեց՝ թէ «Այսուհետեւ այդ կերակուրքն չպիտի ուտեմ պաս օրերը. վասն զի Եկեղեցին հրամանն շատ։— Թեան լաւ պատասխան տուաւ հայրն արդարելով և զարմանալով, որովհետեւ չեւ ուզեր իմ առածս ուտել, հայցէն 'ի զատ ուրիշ բան չպիտի ուտես։— Դիտցիս վերայ, կրկնեց ապայն, կրնայեր ինձ կը պատասխանէ հնազանդիլ ձեզ՝ իբրեւ Աստուծոյ, երբ սուրբ օրենաց դէմ հրամայելու չը լինիք ինձ, Աստուծոյ պատուէրներուն նեմն կ'ընդունիմ և կը հնազանդիմ ձեր հրամանաց»։ Այսպիսի խելացի պատասխանը պէտք էր հօրը բարկութիւնն իջեցընէր. բայց բնութիւնքն խիստ և կրակոտ լինելով, բնաւ սիրտը չկարողցուց իւր արդարն դէմ։ Այսպէս չէր մայրն. այլ բուխիրս ելլելով և իւր ամուսինն առելի խռնեմ և իրաւունք հասկցող լինելով, սիրտը խիստ ցաւեցաւ նորա բրածին. և զաւակին վերայ հօրն անիրաւութիւնքն գրած պատիժը թեթեւցընելու համար, գաղտուկ պատուան կերակուր բերաւ անոր. ապահովելով թէ՝ իւր հայրը չկրնար հասկընալ։ Բայց առաջինի ապայն շնորհալի դէմքով մերժեց զայն. և որովհետեւ մայրը խիստ կ'ապաշէր զինքն որ ուտէ, պատասխան տուաւ նորա. «Զի, մայր իմ, անհը-

նարին է որ ես ասկէ առաջ, զոր դուք զիս սիրելնուդ համար բերած էք։ Իմ հայրս հրամայեց, ինչպէս դուք ես լսեցիք, որ հացէն զատ բան չառնեմ։ Ես միայն հացով կրնամ ապրիլ. բայց թէեւ անօթի ես մեռնելու լինիմ, լաւ կը համարիմ մահը քան թէ անհնազանդութիւնը։» Բարեսիրտ մայրն այս խօսքերուն՝ լացէն ի զատ պատասխան մի չկրցաւ տալ. ես շուտով իւր ամուսնոյն երթալով, պատմեց անոր խօսածները. որուն վերայ այնքան սիրտը շարժեցաւ, որ իւր ըրած անիրաւութեան և գայթակղութեան ճար մի գտնելու և ազատ սիրտ առնելու համար, անկէ յետոյ պաս օրերն ուտեաց կերակուր բերել չտուաւ սեղան. և հաստատ պահեց Եկեղեցւոյ պատուէրները։

Այս բարեպաշտութեան և հնազանդութեան գեղեցիկ օրինակս կ'ուսուցանէ, թէ պէտք չէ ծնողաց կամքին հնազանդիլ՝ երբ Աստուծոյ կամաց հակառակ է այն. ապա թէ ոչ՝ պարտաւոր է որդիական հնազանդութիւն ցուցնել անոնց, թէպէտ և ուռած հրամանները սաստիկ և դժուար լինին։

Որդիական հնազանդութեան կատարեալ օրինակներ։

Յիսուս Քրիստոս նոյն ինքն հնազանդութեան օրինակ տուաւ մեզ, զոր ամէն ոգոյ իւր հօրն ու մօրը պարտաւոր է։ Ինքն երկնի և երկրի թագաւորն էր, և ամէն ինչ իւր իշխա-

նութեան տակն էր. այսու ամենայնիւ Աստուածաշունչը կը վկայէ՝ թէ Զոսիմեփայ և Մարիամայ հնազանդ էր, և թէ մինչև երեսուն տարեկան լինիլն նոցա հպատակութենէն չելաւ։

Իսահակ հին օրինաց մէջ լուսաւոր օրինակ մի տուաւ որդիական հնազանդութեան։ Աբրահամ իւր հայրը լերան մի գլուխը տանելով զինքն Աստուծոյ զոհ ընելու համար, ինչպէս որ յերկնից հրաման ընդուներ էր, Իսահակ առանց բերան բանալու հնազանդեցաւ իւր հօր կամաց. թողուց զինքն որ կապելով խարուկին վերայ դնէ, և պատրաստեցաւ ընդունել մահացու հարուածն իւր հօր ձեռքէն։ Բայց Աստուած չուզեց որ այսպէս վիհանձնական հնազանդութեան՝ մահն լինի փոխարէն։ Նորա ամենայն սիրով կատարելիք զոհին Աստուած հաճելով, ձայն տուաւ Աբրահամին նոյն ժամուն որ ձեռքը վերուցեր էր սրով անմեղ զոհին վիզը կտրելու, չթողուց որ զոհէ, այլ նորա հաւատարմութիւնը վարձատրելու համար, խոստացաւ իւր օրհնութիւններն Իսահակայ վերայ տարածել, երկնից աստղերուն պէս նորա զաւկունքը շատցնել, և բոլոր ազգքն նորա զաւակովն օրհնել։

Բայց եթէ Աստուած՝ ծնողաց հրամանէն դուրս չելլող տղայոց հնազանդութիւնը կը վարձատրէ, անհնազանդ և լիրբ տղայքն եւս կը պատժէ և կ'անիծէ, որոնք չեն ուզեր կատարել այսպիսի պարտաւորութիւնը։

Ազնտամբ տղու մի առակաշի դատիցը։

Աբիսողոմ իւր հօրը Դաւթի մեղաւորութիւն դէմ գլուխ վերցնելով և նորա վերայ պատերազմի ելնելով։ Դաւթի իւր զօրքերը խրկեց որդւոյն դէմ, ապագրելով բանակի զօրավարին որ շտապանեն իւր ապերախտ որդին Աբիսողոմը, եթէ զօրքերն յաղթելու լինին։ Երկու բանակներքը մի կամի կու գարնուելով, թէպէտ Աբիսողոմայ զօրքերը խիստ անհամար և զօրաւոր էին, այլ բոլորովին խորտակեցան, այնպէս որ Աբիսողոմ պարտաւորեցաւ փախչել։ Բայց իւր ատակի ջորին խիստ արագութեամբ վազելով, երբ մի ուռենոյ կաղնիի ատակին կ՚անցնէր, գլխի երկայն մազերքը ծառին ճիւղերուն պլլուելով կախուած մնաց։ Մինչև անկա Յոմաբ երեք նետ զարկաւ նորա սրտին՝ Հակառակ Դաւթի պատուէրին։ Բայց Ասուած ներեց Յոմաբին անհեռատեսութիւնը։ Աբիսողոմայ ապստամբութիւնն և ապերախտութիւնը պատուելու համար։

Այս օրինակէս լաւ կը տեսնէք դուք, սիրելի զաւակունք իմ, թէ ինչպէս յանցաւոր կը համարի ոգոյ մէջ, որ իւր ծնողաց դէմ կը դառնայ։ և ինչպէս սոսկալի պէտք է այսպիսի վարմունքին։ Նա առաւել զգուշանալու է որ դուք ևս ձեր ծնողաց պարտաւոր եղած յարգութիւնն և հնազանդութիւնն դէմ բան մի չգործէք։

Երկրորդ զարտուղութիւն։

Այն պատճառն որ կը պարտաւորէ զձեզ ձեր ծնողաց հրամանները կատարելու, նոյնպէս կը պարտաւորէ զձեզ որ զիրենք յարգէք և պատուէք. և որոմհետեւ ձեր ծնողքն՝ ինչպէս մեր ըսինք, Աստուծոյ փոխանորդներն են, չէք կրնար նոցա հարկաւոր եղած պատիւը չտալու. վասն զի այն ատեն Աստուծոյ պարտաւոր եղած պատուէն պակսած կը համարիք։

Իւր ցօրէն անիծուած ազգին։

Քամ, որ Նոյի որդւոց մէկն էր, համարձակեցաւ ըրուելուն ծաղր ընել իւր հայրը, որ խորտնակ կը քնանար, և իւր եղբարց օրինակին չհետեւեցաւ, որոնք յարգուելուն և պատուուելուն վարուեցան իրենց հօր հետ։ Բայց Քամայ ըրած յանցանքն անպատիժ չմնաց, վասն զի Նոյ քնէն արթնանալն իմանալով նորա ըրածը, անէծքեց զիրեն ասելով՝ թէ քո եղբարցդ ծառայ լինիս, և ընդհակառակն օրհնեց զՍեմ ու զՅաֆեթ՝ երջանկութիւն ասելով անոնց։ Աստուած՝ Նոյի տուած անէծքն և օրհնութիւնն իրօք կատարեց. Քամ իւր կենաց օրերը թշուառութիւնով անցուց, և իրեն տառապանքներն իւր զաւակներուն և սերնդին հետ անցան. իսկ մինչ եղբարքն երջանիկ կեանք մը ունեցան, և բարեբաղդ վիճակներն իրենց ցեղի զաւակաց հետ անցուցին։

Կերեւի թէ Աստուած իսկ նոյն կերպով կը վարուի նոցա հետ, որոնք այս յանցանքս կը գործեն։ Իսուս քիչ անգամ կը պատահի որ կռուատէր և վատ ոգւոյք յառաջանան և գործերնին յաջողի։ Սոքա չէ թէ միայն առելի և քամահրելի են բարեկիրթ մարդոց առջեւ, այլ նաեւ շատ անգամ կը տեսնենք որ մեծամեծ դժբաղդութեանց կը հանդիպին, որու միմիայն պատճառն իրենց ծնողաց պատիւ չցուցընելն է, և իրենց պարտաւորութենէն պակսելնուն արդար պատիժը։

Տղու մի իւր հայրը նախատելու համար գոտած դատիցը։

Մի չարագործ մարդ, որու նամանը խիստ քիչ կը գտնուի աշխարհիս վերայ, իրեն պէս ժանտագործ և ապիրատ որդի մի ունէր։ Սոքա ամեն տեսակ յանցանք գործելով, ամեն անգամուն դժբաղդութեան պատահեցան, որ նոցա սովորական հետեւանքներն են։ Կամակոր, անկիրթ եւ անհնազանդ ոգւոյն միանգամայն այնպէս բարկացաւ էր, որ միւնչեւ մէկը եթէ փոշ բանի համար իրեն խօսքին դէմ կենար, իսկոյն կրակ կը գառնար։ Օր մի հայրն ուզելով յանդիմանել և կշտամբել զինքն իւր վարմունքին համար, թշուառական ոգւոյն խիստ բարկութեան ելնելով, կը վազէ ծեր հօրը վերայ, կը զարնէ գետին կը փռէ, և մազերէն բռնելով պահէն դուրս կը քաշէ կը տանի, որ տընէն դուրս ձգէ։ Սանդուղքին կէսն որ հասաւ, հայրը

բերանը բանալով. «Թշուառական՝ն, գոչեց, բաւական է, ոչ ասկէ վար մի նեռոեր գիս. եւ իսկ միւնչեւ այս տեղ քաշկրտելով բերի իմ Հայրս, երբ քո Հասակիդ չափ էի ։ Անօրէն Հայրն այս վայրկենիս մէջ ճանչեց Աստուծոյ արդարութիւնն և վրէժխնդրութիւնը, որ զինքը պատժելու Համար թողուցեր էր որ իւր որդին եւս նոյն կերպով վարուի նորա հետ ինչպէս որ ինքն իւր Հօրը հետ վարուէր էր ։

Այս բանս խիստ շատ անգամ կը Հանդիպի. ուստի ամէն ոչայք պէտք է որ խրատուին ասով, և իրենց ծնողաց հետ այնպէս վարուին, ինչպէս կ՚ուզեն որ իրենք եւս զաւկի տէր որ լինին, օր մի իրենց հետ նոքա վարուին. վասն զի ոչայ մի իւր Հօրն ինչ որ ընէ, նոյնն իւր զաւկներէն կը գտնէ, թէ բարի և թէ չար ։

Իւր յանցանքն քաւող տղայն ։

Գրիգորոնեաց տղուն մէկը օր մի բարկանալով նախատական խօսքեր խօսեցաւ իւր մօրը դէմ, և բոլոր դրացիներուն գայթակղութիւն տուաւ ։ Նոքն ինքնիրեն գալով և իւր բերնէն ելած խօսքերը յիշելով, կանչեց բոլոր դրացիներն, և ծնկան վրայ գալով նոցա առջեւ, թողութիւն խնդրեց իւր մօրմէն՝ ըրած պակասութեան Համար ։ Յետոյ իւր յանցանքը քաւելու Համար, խելացի տղայն ծանր ապաշխարանք մի դրաւ իւր անձին, և մօտն եղողներուն

գառնալով՝ այսպէս ասաց. «Քրիստոնեայ մի առաւաւոտաշրջանի դէմ կրնայ մեզանել եւ իւր բնկերը գայթակղեցընել. բայց իւր կրօնքը կ'ուսուցանէ նորա գործած յանցանքը խակոյն քաւել. որպէս հանար է որ ազատեցի զձեզ. որպէս դի իմ բրած սրտանց ապաշխարութիւնս զուք եւս միոյ լինիք»։

ԷՐՐՈՐԴ ԴԱՐԱՍԱՐՈՒԹԻՒՆ։

Բաւական է. սիրելի աշակերտք իմ. միայն պատիւ ասել ձեր ծնողաց. այլ պէտք է նաեւ որ սիրէք. եւ պատրաստ լինիք միշտ օգնել անոնց երբ հարկը պահանջէ. Երբայ փոխուկ սէրը զոր ձեր միջոց ունեցան. անոնցմէ ընդունած կերպ կերպ օգնութիւնները. զձեզ կրթելու համար անոնց քաշած միջոցներն եւ նեղութիւնները. բոլոր սոնք կը պարտաւորեն զձեզ զիրենք սիրելու. Երախտագիտութիւնը կը պատուիրէ դայն. կրօնքը յայտնապէս կը հրամայէ եւ ձեր ծնողքն՝ որ այնքան սիրեցին զձեզ. եթէ փոխարէն զուք եւս զիրենք սիրելու չը լինիք. պէտք է որ անարիւն եղած լինիք. կամ երկրքի սիրտ մի ունենաք։

Շնորհանելն եւ կուսապաշտելն անգամ այս արդիական սիրոյն միջոց անհամար գոմիլ օրինակներ տուած են։

Գեղեցիկ տիկնայ որդիական սիրոյ։

Կապաշտ ազգաստ կնկան մէկն այրն մեռաց ներ էր երեք զաւակով, և աշխատութեամբ իւր ապրուստը կը ճարէր։ Բայց տղայքը՝ կամ շահաւոր գործ մի չըլլալուն, կամ իրենց արհեստն լաւ չգիտնալնուն՝ չէին կրնար քսան բաւականին շահիլ. սորա համար ամենքն միտնալով ապուսաց առաջադրութիւն մի ըրին։ Այն օրերը գոգութիւն մի պատահելով, մեռնելոյն հրապարակաւ ձայն տուած էր՝ թէ ում որ գոգը բռնէ ու գատաւորին բերէ, նորա փոխարէն մեծ գումար մի դրամ կ'ընդունի։ Այս երեք եղբարքը, որ իրենց շքաւորութենէն աւելի ծերերնուն պատճառքը կը հոգային, խորհուրդ ըրին որ իրենց մէջէն մին գոգ հանարուի, և միւս երկուքն ետ բռնեն գատաւորին տանին զինքը։ Ուստի մէջերնին վիճակ ձգեցին որ տեսնեն թէ որո՞ն կ'ինկնի որդիական սիրոյ զոհ լինել. վիճակը պզտի եղբօր վերայ ինկաւ, որ իսկոյն թողուց որ զինքն կապեն և գատաւորին դիմաց տանին։ Երբ սկսան քննութիւն ընել, տղայն ինքն իւր բերնով խոստովանեցաւ յանցանքին տէր լինելը։ ուստի դրին ի բանտ, և միւս երկու եղբարքն առին գատաւորէն խոստացեալ գումարը։ Սորա տուն գառնալէն յետոյ կնոջը գանելով դիւրութեամբ բանտը մտաւ, ուր կարծելով թէ ամենեւին ոչ ոք զիրենք չէր տեսներ, փոխարինուելոյն իրենց անմեղ եղբօր վիզն և գառն արտասուքներով հաղիւ իրարմէ զատուելոյն։

Գառաւորն զիրգաւածով այնպիսի տեղ մի նրա-
ստած էր, որ կրնար գտնուիլ տեսնել. ուստի
խիստ զարմացաւ երբ տեսաւ թէ գողը զինքը
մատնողներուն այնպէս արտաքոյ բարեկամա-
թիւն կը ցուցնէր. Խեղճն ծառաներէն մէկն
կանչեց, և պատուիրեց որ այն երկու ամբաս-
տաւոր մարդկանց ետեւէն երթայ, և աչքին
առջեւէն չկորսուցնէլ զանոնք, մինչեւ որ լաւ
մի շնորհքնոց ոգոյ մէջ լինիլը։ Պառաւն հետ-
զանոնց եղաւ, զնոց ետեւէն որ լրտեսէ. յե-
տոյ եկաւ պատմեց զառաւորին՝ թէ ապրանքի
ատեն մի մէջ մնալով այն երկու եղբարքը, մինչեւ
եւս գայլը կրցածին չափ ատեր մնալով լա-
տեր էր որ մարդերուն կը պատմէին իրենց բրա-
ծը, իրաւունք բերելով թէ՝ զինքն ապրանա-
թիւնէ ապատելու համար գործած են, թէ՝ մոյ-
բերնին երբ լսեց զայն, սկսաւ ողբալի ձայնով
կանչել և ասել թէ որդւոց, որ շատով ատելի
գրաւեն ատ ատելի որ ատ լեր, մինչեւ որ լաւ է
կ՚ասէր, որ անօգնի մեռանիմ՝ քան թէ որդւոյս մա-
հուամբն իմ կեանքս պահպանեմ։ Այս որ լսեց
զառաւորը, կանչեց խեղճն բանտին մէջ եղողն
եւ ղրկէն հարցուց գողութեան մասին, կրկին
կրկին հարցուցանելը բրա որ տեսնէ թէ արդեօք
ղորս խօսքերուն մէջ սիրտ կամ հակառակ գրոյց
մի կը գտնէ։ Վերջապէս տեսնելով թէ թէ
ամէն հարցմունքներն իրարու համաձայն էին,
և չկրնար ղորս բերնէն այս գաղտնիքն առնել,
յայտնեց ամէնը թէ որ մինչեւ խնայելը էր, և հե-
տեւաբար պարտաւորեց զինքն որ ամէն թէ

խոստովանի իրեն։ Յետոյ գնաց գաղաւորը կայսեր խնայուց այս լուրը։ կայսրն եւս զարմանալով այսպիսի դիւցազնական գործին վերայ։ ուզեց որ աչքով տեսնէ երեք եղբարքն։ որոնք երբ իւր մօտ գնացին։ շատ մարդասիրութիւն ցոյց։ մեծ եղբօր 150 թալէր տարեկան եկամուտ կապեց։ և Հինգ Հարիւրական եւս միւս երկուքին։

Ա։ ԲԻՆԱԿ ՈՐԴԻԱԿԱՆ ՍԻՐՈՅ։

Զինացի երիտասարդի մի Հայրը։ իւր տանեակարութեան պաշտօնին մէջ խիստ մեծ յանցանքներ գործած լինելով։ գտատարուաւեր էր գլխատուելու։ Իւր որդին գնաց կառավարչին ոտքն ինկաւ և բռնադատեց երդմամբ որ ընդունի իւր ընելու տղայութիւնը։ այսինքն Հօրը տեղ զինքը գլխատել տայ։ Վանտարին Հարցուց երիտասարդին՝ թէ այս առաջարկութիւնն ինքն իւր անձամբը կ'ընէ։ թէ ուրիշ մի խրատուած է։ Յետոյ խնամելով նորա որդիական սիրոյ զգացումն և պարզմտութիւնը։ գիր մի գրեց կայսեր։ որ իսկոյն ուրոյ թողութիւն շնորհեց։ և տղուն եւս պատուոյ նշան մի տուաւ։ Բայց տղայն ամենեւին չուզեց յանձն առնուլ այն պատիւը։ «Թէ որ այս պատուոյ նշանն ընդունելու լինիմ։ կ'ասէր։ իմ Հօրս յանցանաց յիշատակութիւնն երբէք չպիտի մոռցուի Հասարակութեան մտքին մէջէն»։ Զարմանալով կայսրն այսպիսի ազնուական խորհրդածութեան մի

վերայ, ուզեց իւր պարտուն մէջ առնուլ ոչ-
զայն, և մանաւոր հոգ տարաւ անոր. յետոյ
շատ չքաշեց, նորա արժանաւորութիւններն
տեսնելով, տերութեան պաշտօնատարին ատա-
ճառ բարձրացուց։

Այս օրինակներէս պէտք է մակարերելք,
թէ ուր որ լինի, գովելի են և կը վարձատ-
րուին միշտ այն երիտասարդներն, որոնք իրենց
որդիական սիրուն երեւելի կը հանդիսանան.
բայց հետագայ երկու պատմութիւններն որ
պիտի գրուցեմ, աւելի մեծ ապացոյց մի կը-
նան լինիլ։

Էրրոդ Պիտակ որդիական սիրոյ։

Փրեսերիկոս Բ. Բրուսիոյ թագաւորը օր մի
իւր փոքրիկ զանգակը զարկաւ, և մարդ մի
շերեւցաւ։ Դուրս ելաւ որ նայի ինչու մէկը
չգար, և տեսաւ որ իւր սենեկապետը նստա-
ծանի մի վերայ պառկեր խորունկ կը քնանար.
մօտեցաւ անոր որ արթնցնէ, և տեսաւ որ
նորա գրպանին մէջէն թղթի մի ծայր կ'երեւայ։
Շնորհքրքրութիւնը չկրցաւ բռնել, ուզեց գիտ-
նալ ինչ գիր լինիլը. ուստի քաշաւ կարդայ և
իմացաւ որ ուզուն մայրը գրած էր զայն, որու
մէջ շնորհակալ կը լինէր իւր զաւակէն, նորա
համար որ ուղարկեր իւր ստացած թոշակին մէկ
մասն մօրն կը ղրկէր, նորա կարօտութեանն օգ-
նելու համար։ Ղամակը կը վերջացնէր մայրը
շատ օրհնութիւններ տալով իւր զաւակին, որ

իրեն վերայ մեծ խնամք և սէր կը ցուցընէր։ Թագաւորը կարդալէն յետոյ, մնաս նորէն լռութեամբ իւր սենեակն, և փոքրիկ գուսանը մի ոսկի թղթէ ծրարի մէջ փաթթելով գրաւոր նոյն նամակին մէջ, և զգուշութեամբ կրկին խոմեց նորա գրպանն, ուսկէ որ առեր էր։ Դարձաւ յետոյ իւր տեղն և այնպէս սասսիկ զարկաւ զանգակը, որ ոգոյն քունին մէջէն ցատկելով վազեց նորա մօտ։ «Կ'երթաս թէ խիստ ուշ կը քնանայիր, սասսի Փրեսերիկոս»։ Խեղճ ոգոյն մերթ յարգութիւն ցուցնելով, մերթ վախնալով, կ'ուզէր ներում խնդրել. և շփոթելով մի ձեռքը դէպ 'ի գրպան տարաւ. բայց տեսնելով թէ նամակը ծանր էր մէջի եղած ոսկւոյն պատճառաւ, միտքը հաստատ ու մէկ կասկածներու գնաց։ Գրպանէն գուրս կը հանէ ծրարած ոսկին, թագաւորին կը նայի և գետի նման արտասուք կը թափէ, առանց կարենալու բերանէն խօսք մի հանել։ «Ի՞նչ ունիս, հարցուց թագաւորը։ — Ո՛հ, տէր իմ, պատասխան տուաւ բարեսիրտ ոգոյն. մնաս-բարութիւն ըրած են ինձ։ Իմ եռեւս ինկնող թշնամի մի ունեցած պիտի լինիմ ես։ Զե՞մ գիտեր ուսկէ է այս գրպանիս մէջ եղած ոսկին։ — Միրոյ հանդարտ բռնէ, ոգոյս, կրկնեց թագաւորը. Ասուած իւր բարութիւնները նաեւ մեր քնացած ժամանակին ես կը շնորհէ մեզ։ Այդ ոսկը մարդ խրկես, իմ կողմէս ես բարեւ գրես և ասես՝ որ ես թէ՛ նորա և թէ քեզ հոգ պիտի տանիմ»։ Երիտասարդ ոգուն

ցաւն և տրտմութիւնն առաջ վերայ ուրախութեան փոխուեցան, և փոքձով գիտցաւ՝ թէ ոգայ մի երջանիկ լինելու համար ամենեւաւելի պատուաւոր միջոց, քան ծնողաց կարօտութեան օգնելու մոտք՝ ամենեւին ներդուիեւանց յանձնառու լինելով աշխատելն է։

Որ ժամանակներս տեսանուեցաւ որդիա կան սիրոյ օրինակ մի, որ պատմելու արժանի է, և ահա այս տեղ կը դնեմք։

Զորրորդ օրինակ որդիական սիրոյ։

Աղնուական գերդաստանէ երիտասարդ մի որ զինուորական արքունի փարժանան մէջ կը կրթուէր, միայն ապուր եւ քիչ մի եւս հաց ջրին մէջ թաթխելով կ'ուտէր և անոյշ կը բաւականանայր։ Դպրատան գլխաւոր կառավարիչն այս բանս դիտելով, յանդիմանեց զինքն, կարծելով թէ շատապանց ջերմեռանդութենէն կ'ընէր։ Տղայն մոխիկ ջրաւ, այլ իւր ժուժկալութիւնը կը շարունակէր առանց մէկուն յայտնելու իւր գաղտնիքը։ Փարիզ Տիւմէրնէյ ազուն բրած զարմանալի հանգերձութիւնն խնամելով, կանչեց իւր մօտ, և շատ բան ըսելէն յետոյ՝ թէ պէտք է դպրատան սովորութեանց հետեւի, և ինքնիրեն նոր բաներ չհնարէ, ապառնացաւ եւս ասելով՝ եթէ խօսք մոխիկ չընես և քո գիտցածդ եւս չկենաս, հօրդ տունը կը խրկեմ զքեզ։ — Ա՛խ, ասէր իմ, ասաց այն ժամանակ ազայն, որովհետեւ դուք խնամով կ'ուզէք թէ

ինչ պատճառաւ բռնադատուած եմ այս բանս ընելու, և ես չեմ ուզեր ձեզմէ իմ գաղտնիքս պահել։ Գիտցած եղիք ուրեմն որ ես հօրս տունը կորս մի սեւ հացէն ի զատ ուրիշ բան չէի ուտեր։ Մենք շատ անգամ ծարաւութիւնս մարելու համար ջրէն զատ բան չէինք ունենար, հիմայ այս տեղ պատուական ապուր կը ճաշեմ, հացն եւս ապուրս և պէտք եղածէն աւելի։ Վերջապէս մինչեւ կշտանալս ուտելէ զատ, կերած հացս եւս պատուական է, բայց ինչպէս կրնամ ասկէ աւելի ուտել, երբ կը մտածեմ (որ բնաւ մոքէս եկած չունի այս ցաւալի յիշատակը,) թէ ինչ վիճակի հասած են արդեօք իմ հայրս ու մայրս։» Փարի Տիւվէրնէյ և կառավարիչը հապիւ կրնային իրենց արտասուքը բռնել, տեսնելով առաքինի ազուն որոնին այնչափ զգացողութիւնն և հաստատութիւնը։ «Եմէ քո հայրդ, ասաց Փարի, թագաւորին զօրաց մէջ ծառայութիւն ըրած է, ինչպէս կարելի է որ իւր թշուակը չընդունի։ — Զէ, պատասխան տուաւ ազուն, անիկայ թշուակ չունի։ Թէպէտ այս բանիս համար ապէրասպրեր տուաւ, և մէկ տարին չափ շատ աշխատեցաւ որ առնու, բայց պարապն եկաւ։ Եւ ապրուստութիւնն եւս չմաղուց որ իւր իրաւունքներն յայտնէ, թէպէտ յեսին ձիրք թափեց։ Վերջապէս քաղաքին մէջ եւս պարտքի տակ չմնալնելու համար՝ վերջին կարօտութեան հասաւ։ — Խիստ ապէկ, կրկնեց Փարի, թէ որ ճշմարիտ է ասածդ, որս վերայ բնաւ չեմ երկբայիր,

որովհետև քո բերանդ կը լսեմ, կը խոստանամ քեզ միջնորդ լինել թագաւորին որ հինգ հարիւր ֆրանք տարեկան թոշակ մի կարգէ անոր. Ըստ որում քո ծնողքդ այսքան խեղճութեան մէջ են, հաւանական է որ դքեզ առա խրկելու ժամանակնին և ոչ քիչ մի առակ կրցած պիտի լինին քեզ ճարելու. Ա՛ռ ուրեմն հիմայ իմ ձեռքէս այս երեք ոսկի դահեկանը, զոր թագաւորին կողմէն կուտամ քեզ. և քո հօրդ եւս առաջին վեց ամսականը կանխիկ պիտի խրկեմ իւր տարեկան թոշակէն, զոր կը յուսամ ընդունիլ թագաւորէն նորա համար. — Ի՞նչպէս պիտի կրնաք տէր իմ, կրկնեց տղայն, հօրս ձեռքը հասցընել այդ գումարը. — Այդ իմ գիտնալու բանն է, պատասխանեց Փարի Տիւվէրնէյ, նորա հնարքը գտնել մեզ համար բան մի տալ չէ. — Ո՛հ, տէր իմ, կրկնեց նորին աշակերտն, որովհետև այս դիւրութիւնն ունիք, շնորհք ըրէք այս երեք ոսկին եւս խրկել, զոր դուք մարդասիրութեամբ ինձ պարգեւեցիք. Ես այս տեղ ամէն քարիք առատապէս կը վայելեմ, ուստի ինչպէս կը տեսնէք՝ անօգուտ են ինձ ասոնք. ուր ընդհակառակն խիստ մեծ օգուտ կրնան ընել իմ հօրս և իւր խեղճ ընտանեացն, որոնք մեծ նեղութեան մէջ են ».

Ո՛հ. ինչ մխիթարութիւն է, սիրուն արդեակք իմ, այսպիսի ազնուական զգացողութիւններ ունենալն. ինչպէս որ մեծ ամօթ է խաստասիրտ մարդուն՝ որ չկրնար իւր ծնողաց սիրոյն փոխարէն ինքն եւս զանոնք սիրել, այլ

միայն անուրջներ և առելի սէր կը ցուցնէ։ Աստուած չընէ որ դուք եւս առանց պէս չինիք։ շատ ապէկ է որ ուղղայ մի իւր ճօրն արգանդին մէջ մնանի, քան թէ նոցա կենաց օրերը գանանացընէ այնպիսի վարմունքով՝ որ ազնուական ազգս մի չը վայելեր։ Ո՛վ որ պատիւ, հնազանդութիւն և սէր չցուցըներ իւր ծնողաց, ոչ քրիստոնեաց և ոչ իսկ մարդ կանչուելու արժանի է։ այլ գարշելի եւ հրեշաւոր գազանի տեղ պէտք է դնել այնպիսին։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Տէրոց իրենց գաստիարակաց և վարժապետաց դէմ ունեցած պարտաւորութիւնները։

Ա.ՇԱԿԵՐՏԱՑ պարտաւորութիւնները՝ որ իրենց գաստիարակաց և վարժապետաց դէմ ունին, գրեթէ հաւասար է ազգայոց իրենց ծնողաց դէմ ունեցած պարտաւորութեանց հետ։ վասն զի վարժապետ ասելն՝ երկրորդ հայր ասել է։

Այս ճշմարտութիւնս խիստ ապէկ իմացեր էր մեծն Աղէքսանդր, որ սովոր էր միշտ ասել թէ՝ «Փիլիպպոս իմ հօրս որքան որ պարտաւոր եմ, նոյնքան եւս Արիստոտէլ վարժապետիս պարտաւոր եմ»։ և ապէ տա իրաւունքը մէջ կը բերէր։ թէ մին իրեն կեանք էր տուեր, և միւսն ապէկ կեանք վարել ուսուցեր էր։

Ուրեմն և դուք ձեր վարժապետաց համար այն պատիւն և երախտագիտութիւնը պէտք է ունենաք, զոր ձեր ծնողաց պարտաւոր էք. և ծնողք առաջին պիտի լինին այս ազնուական զգացմունքներդ ձեր սրտին մէջ ծնուցանել առ լու. եթէ աշակերտաց իրենց վարժապետներուն դէմ ունեցած երախտագիտութիւնն և հնազանդութիւնն իրրեւ սկիզբն կը համարին քարի վարուց եւ կրթութեան, որու վերայ պիտի զրուցեմ հիմայ։

Ինքնակալի մի իմաստուն քարտուղը։

Երբ Թէոդոս կայսրն իւր Արկադէոս որդւոյն կրթութիւնն Արսենիոս արժանապատիւ մարդոյն յանձնեց, սա նշանաւոր խօսքն խօսեցաւ անոր. «Դուք ասկէ յետոյ իրեն հայր պիտի լինիք ինձմէ առելի»։ Բայց այսքան խօսք բաւական չհամարելով, ուզեց որ որդին եւս իւր կողմէն վարժապետի պատիւն ճանչելով՝ արժանաւոր յարգութիւն ասոյ անոր։ Ուստի օր մի մտաւ այն սենեկին մէջ, ուր Արսենիոս դաս կուտար Արկադէոսին, տեսաւ որ վարժապետն ոտքի վերայ կանգնած է և աշակերտը նստած, շիրցաւ կայսրն իւր բարկութիւնը զսպել, յանդիմանեց զվարժապետն՝ որպէս թէ իւր իշխանութեան օրէնքներդ չէք պահեր։ Արսենիոս թողութիւն խնդրեց ասելով՝ թէ անվայելուչ բան կ'երեւի ինձ որ թագաւորաշուն իշխան մի ծիրանիներդ հագած՝ իմ դիմացս

ապրի վերայ կանգնի։ Թէոդոս՝ որ կը ջանար մեծ յարգ ցուցընել տալ արդեւոյն իւր վարժապետին դէմ, շուտ մի հանել առաւ նորա վերայէն թագաւորական նշանները։ և հրամայեց որ Աբսենիոսի առջեւ միշտ ոտից վերայ եւ գլխիրաց կանգնի։

Վարժապետին տեսչութիւնքը կարգի մտնոց աշակերտաց։

Իմաստուն և առաքինի Ցենելոնը, որ Քամբրիճի արքեպիսկոպոս էր, վարժապետութեան պարտք մի համարեց հասարակ ազգաց պէս կրթելու Պորկոնիոյ դուքսն, որ իւր աշակերտն էր. քաջց ուրիշ կերայ մի բանեցուց։ Որ մի առիթ գտնելով, երբ խստութեամբ կը խօսէր երիտասարդ իշխանին հետ, գոռոզութեամբ մի այսպէս պատասխան առաւ անկէ. «Ո՛չ, պարոն, ես հրամցողդ չեմ ուզեր։ Գիտեմ ով եմ ես՝ և ով ես դուն»։ Խոհեմ վարժապետն այն միջոցին բերանը չբացաւ, այլ աւելի շատ համարեց լուռ կենալ և ոխուր կերպարանք մի ցուցընել, և յետոյ տալ անոր իւր օգտակար խրատները։ «Չեմ գիտեր, պարոն, ասաց անոր հետեւեալ օրը. միտդ է արդեօք երեկուան զրուցածդ։—Գիտեմ ով եմ ես՝ և ով ես դուն—։ Հիմայ իմ պարտքս է խնայցընել ձեզ. թէ այս երկու խօսքն ես չէք գիտեր ինչ կը նշանակեն։ Ուրեմն դուք միտքերնիդ այնպէս դրած էք թէ ինձմէ վեր էք։ Գիտեմ անտարակոյս որ պարտի որ և իցէ ծառաներէն մին կրնայ ասել ձեզ

իսկ դրուագներդ. և նա փոխ մի շաբաթամ ասելու
ձեզ, որոնցմէ ասեալ դուք կը քանդուիք դիս.
ասասի կը հաստատեմիր զրուցիլ մեր նա
ձեզմէ մեր նա. Ընդ կ կը հասկնանք թէ այս
ասելդ ցեղի մերոյ չէ մեր խառնքը. Եթէ մի մարդ
ուրեմն լինի թէ ինչն Աստուծմէ մատնուած
շնորհք գտնելոյն հաստար, ասենքներդ միայն իւր
արտերքուն մէջ ասելոյով պարզուքներ ցրուած է,
իսկ դրացուոյն արտերն և ոչ թափուած. Ընդդ այս
մարդդ դուք նա ամենարարոյս ասելանոր ասելդ
կը դնէք. ապա ուրեմն դուք նա ասիէ խե-
լացի չէք կրնար հաստարուիլ, եթէ ձեր ցեղին
մերոյ անասարծելու լինիք, որ ասենեն ոչ ուս
մի չգիտէ ասենանալուն արտասանարուելեանց.
Ձէք կրնար միտել երբէք ձեզմէ վերադոյն
լինելու, թէ հանձնարարով և թէ գիտուելեամբ.
Դուք ինձմէ ուսանիլդ աւելի քան չէք գիտեր,
և ձեզ ուսուցանող ոչինչ քան մի է. եթէ քաղ-
դասեմ դեռ ուսանելիքներուդ հետ. Երբ-
ասարդ իշխանը խիստ լաւ միտք առաւ այս
գեղեցիկ դասս. և իւր սիրելի վարժապետն
նա ուրախացաւ՝ խնդանալով որ նորս արտին
մէջ հնարանդուելեան հաւնարը ծլեր է գուռ-
զուելեան տեղ. Այս դուքարը յետոյ աշխարհիս
խիստ գիտուն եղան ապագայ միտն եղան.

Քաղցր վարժապետները պատուելու ժամա-
նակ կը վայելէ նաև որ երախտապէտ և գիտ-
նողաց սիրտ ցուցնէք անոնցմէ ընդունած
ծառայութեանց հաստար. վասն զի եթէ որ
իրենց ապերախտութիւնը կը յայտնեն եթէ

ցոյց չտան, այլ նաեւ ինքզինքնին յանցաւոր կ'ընեն՝ եթէ պարտաւոր եղած երախտագիտութիւնը ցոյց չտան անոնց, որոնք մեր բարեկրթութեան պատճառ եղած են, եւ իրաւունք տացած ունին մեր վերայ։

Մարդս բնութեան ձեռքէն եղած ժամանակ կը նմանի կոշտ ու պրշտ մարմարիոնի, ուստի մարդկութեան հարկաւոր եղած կատարելութիւնն առնելու համար, պէտք է որ կրթուի, լուսաւորուի, ինչպէս որ այն մարմարիոնն եւս գեղեցիկ արձան շինելու համար, հարկ է մրճով տաշել եւ յղկելով մաքրել։ Մեր վարժապետաց պարտաւոր եմք այն գեղեցիկ առաքինութիւններն եւ գիտութիւնները, որոնք մեր միտքն եւ սիրտը կ'ուղղեն։

Աշակերտի մի իւր ջերմեռեռաց դէմ ունեցած չափազանց երախտագիտութիւնը։

Մարկոս Աւրելիոս կայսրն այս բաներս այնպէս արուեստով գրացեր է, որ մինչեւ շատիկ դուրս անարժան երախտագիտութեամբ մի իւր վարժապետաց արձանները կուռց մէջ տեղ կանգնել տուաւ, եւ անոնց գերեզմանացն ամեն տարի զոհեր կը նուիրէր։ Նաեւ կենդանեաց մէջ եւս տեսնուած են սիրոյ եւ երախտագիտութեան օրինակներ, զորոնք պարտաւոր է մարդս ցուցընել անոնց՝ ուսկէ որ բարիք մի կը տեսնեն։

Երիտասարդին մէկը Անտրոկղէս անուն, գերի ինկած էր մի հռոմայեցիի ձեռք, որ Ամբրիկէի մէջ փոխհիւպատոսի պաշտօն կը վարէր։ Անտրոկղէսին իւր տիրոջմէն սաստիկ օրուան քաշած նեղութիւններն այնքան սիրտը թափեցին, որ միտքը դրաւ փախչիլ նորա ձեռքէն։ Թէպէտ և շատ վտանգաւոր էր։ Եւ որովհետեւ շատ կը վախնար որ նորէն իւր անգութ տիրոջ ձեռքը կ'ինկնի եւ վրէժխնդիր կը լինի իրեն, ուստի գնաց պահուըտեցաւ Ղումիդիոյ մէջ այնպիսի անապատ մի, ուր հնար չէր որ քնաւ մէկը մտնոյ։ Մինչեւ աչքն առաւ այն տեղ մեռնելու, եթէ ուտելու բան չգտնէ։ Արեւուն ճառագայթներն այնպէս սաստիկ տաք էին, որ չէր կրնար ճանապարհին քայլել։ Շուք տեղ մի փնտռեց որ գլուխը խոթէ քաշուի, բայց յարմար տեղ չգտաւ։ Այն դիւռ կողմն քար ոչ մի տեսնելով մտի եւ խոր։ Մտաւ ներս այս մտօք՝ որ քիչ մի ատեն անցնելէն յետոյ ուրիշ աւելի ապահով տեղ գտնէ։ Ոտքը ներս խոթեց չխոթեց, նայիս դիմացն առիւծ մի ելաւ, որ մէկ թաթը ցաւէն չէր կրնար գետնին դպցընել, ուսկէ արիւնը գետի պէս կը հոսէր։ Եւ սաստիկ ձայնով մի մռնչելով քարայրը կը սարսեցընէր։ Անտրոկղէս այս որ տեսաւ, սաստիկ վախուն ինքզինք մեռած համարեց, բայց առիւծը զինքը տեսնելուն՝ մօտեցաւ անոր հեզ և ընտանի անասնոյ նման, երկարեց անոր իւր

թամբը, ցոյց տուաւ վէրքն, և կ'երեւէր թէ իւրմէ օգնութիւն կը խնդրէր։ Գերին՝ որուն քաշած թշուառութիւնները ուսուցեր էին իրեն խեղճերուն օգնելու, խնայաւ նորա միտքը, քնեց նայեցաւ ոտքն և մէջէն հատաւ փուշ մի քաշեց հանեց, յետոյ խոցը տրօրեց, մէջի թարախը վազցուց և մինչեւ նորա շրջանն ադէկ հոգ տարաւ։ Առիւծն ոտքին ցաւը դադրելուն պէս՝ փռուռեցաւ իւր բարերարին ոտքին տակ և իւր թաթն անոր ձեռքերուն մէջ դնելով՝ հանգիստ քնացաւ։ Այն օրէն յետոյ ճիշտ երեք տարի միատեղ ապրեցան նոյն քարայրին մէջ։ Առիւծն իւր լրած որսերն Անտրոկղէսին կը բերէր, և նա կերակուր կը պատրաստէր ոտք արեւուն մէջ եփելով։ Բայց այսպէս մի նակուկ կեանք վարելէն ձանձրութիւն գալով իրեն, օր մի երբ առիւծն որսի ելեր էր անապատին մէջ, առիթ գտնելով ելաւ ճանապարհ, թէպէտ ուր երթալը չէր գիտէր։ և երեք օրէն յետոյ, խեղճ գերին դժբաղդութեամբ զինուորներու ձեռք ինկաւ, որոնք բռնեցին Հռոմ բերին, ուր իւր տէրը տեսնելով ճանչեց զինքն և գաստապարտեց գազանները դիմաց նետելու տեսարանի մի մէջ, որ պատրաստ պատրաստ ընեն։

Օրն եկաւ հասաւ, երբին Անտրոկղէս տեսարանին մէջ կանգնեցուցին, ուր տեղ կային կատաղի և անօթի գազաններ, որ կարծես թէ պիտի պատրաստէին զինքն։ Ասոնց մէջ սովալի առիւծ մի եւս կար, որու աչքերէն կրակ կը ցատքէր, և ճակտի բաշերն մէկմէկու խառ-

ձեռքով՝ և մեծելքս ահագին ձայնելով բոլոր
հանդիսականներքը մեծ ահուդողի մէջ կը ձգէր։
Կ'երևար թէ ահագին գազանը դիտցին ելնողը
պիտի պատռէ ուտէ։ բայց զԱնտրոկլէս տեսա-
ծին պէս իսկոյն կանգ կ'առնու։ կամաց կամաց
մօտը կուգայ։ և բնական գազանութիւնն մէկ-
դի ձգելով՝ կարծես թէ ծանօթ էր իրեն խնդա-
գերին։ քծնելով մի կը մտնէնայ և ոտքերու-
թիւնն պոչն օրելով կուգայ կը քսուի անոր և
ձեռքերն ոտքերը կը լիզէ։ Առիւծին այսպէս
քծնելը տեսնելով Անտրոկլէս՝ կ'ուշադրէր։ աչ-
քերը կը բանայ և կը տեսնէ որ առիւծն եւս
իրեն կը նայէր։ և որպէս թէ երկու բարեկամ
միրար ճանչելով։ առիւծն ու մարդն իրենց
ուրախութիւնն և քաղցր սէրը կը յայտնեն։
Հանդիսականք այս բանիս վերայ զարմանալով
ապշութիւնն ձայներ հանեցին։ կայսրն եւս իրեն
մօտ կանչելով զգերին։ մանրամասնաբար պատ-
մել տուաւ թէ որ ինչ ձեւ հաւատարմութիւնամբ
պատմեցին։ Ժողովուրդն որ իմացաւ զայս։ գո-
չեց մեծ ձայնով։ Փառութիւն շնորհուի գերին
։ եւ առիւծն եւս իրեն պարգեւ տրուի։
կայսրը բարեհաճելով երկու իսնդիրքն եւս
կատարեց։ Անտրոկլէս իբր ետուն ձգեց իրեն
ազատիչը՝ վերցնն փոկ մի կապած։ և նորա հետ
միասին Հռոմայոց փողոցներուն մէջ կը պտըտ-
էր։ ժողովուրդը նորա վերան ծաղիկներ եւ
պարգեւներ կը տեղացնէր՝ այսպէս ազաղակելով։ «Ահա առիւծն հիւրընկալաց մարդուն։
և մարդն գազանի առիւծուն»։

Գիտեմ որ սիրտ զարմանալոյ հիմնոյ այս երախտագէտ գաղանեան փարեանդրեան. բայց ա-սեմ թեան Աղաթանգեղոսէ ընդունեալ երախտիքն թանչ շնչին բան է. եթէ բաղդատելոց լինիցիս ձեր զաստիարակներէն և փարձապետներէն ամենն որ ընդունեալ ծառայութեանց հետ. Որքան գէշ ծիլեր և ոչքան փշեր ձեր սրտին մէջէն կը փրցնեն կը հանեն նորա եռեռ եռեռ ուղղելով. Որքան խնամքով կը սնուցանեն նորա ձեր միտքն և հոգին գեղեցիկ գաղերով և հոգեշահ խրատներով. Ա՛ր թէ ոչ զա՛ր անուանե-նելին առելի անզգոյ չէիք լինիր. եթէ ապե-բախտութեան մինչև մանկաց կամ զուցէ արհամարհելու եւս լինէիք այն փարձապետ-ներ՝ որոնք ձեր ազէկութեան համար բարի նախանձութեամբ այսքան հոգ կը տանին. և արժանի չէք լինիր նոյն յանդիմանութեան՝ զոր մանանեակս Բոյն երիտասարդի մի ըսին.

Աղերսիս երիտասարդի մի նցան յանդիմանութիւն.

Այս երիտասարդը շատ տարիէ՛ի մէջ միւ-լիոնատոյի մի մեծ փարձառէր և կրթուած էր. որ զինքը գիտուն և առաքինի ընելու համար աշխատութեան քնաս չէր փափշեր. բայց երի-տասարդն իւր բարեեռանդ փարձապետին ոգարատութեան երախտագիտութեան նշանները չը ցուցնելէն՝ ի զատ. ինքնիրեն կը պարծենար և կը քաջալերէր զայն. որ մի եւս լրատութեամբ առաց առեր. քան անարդ անուանոց կը նեղանի.

և անուանոյն անուանն իսկ առաւ։ — Զեմ գիտեր, պարոն, պատասխան տուաւ փիլիսոփայն, թէ կը նեղանիս եւ արդեւք այդ կենդանւոյն, որուն դու դիս կը նեղանցընես. այլ գիտեմ ապէր որ դու կը նեղանիս մի ապերախտութենէ, որ քեզի կենդանեաց մէջ ամենէն ատելին եւ գարշելին է։

Ա. Հա, սիրելի որդեակք իմ, այս բանս կարելի է որ օր մի ձեզ հասնար եւս ասեն, եթէ դժբաղդաբար զանց ընէք ցոյց տալու ձեր վարժապետաց երախտագիտութեան պարտքերնիդ, կամ եթէ վերը պատմած երիտասարդին պէս, անոնցմէ ընդունած ապէկութեանց փոխարէն պակաս վարձատրեք մի կամ յոյժ ատելութիւն ցուցնէք։

Սրամտութիւնն՝ ծոյլ մարդիկը մրջիւններու գարուանը կը խրկէր, որ անոնցմէ ուսանին աշխատասէր լինիլ, և իրենց ծուլութեան վերայ ամչնան։ Այս օրինակիս վերայ կ՚ուզեմ և ես հետեւեալ առակը պատմել ձեզ, որուն մէջի կենդանիներն կրնաք բան ուսանիլ։

ԱՌԱԿ

Իւր անքը խանեաց շուանը։

Հաւատարիմ և անկեղծ բարեկամն անգին գանձ մի է, որուն մեր ազնիւ և փոյթաւոր ազատանդամներն եւս ամէն ոչինչ հատուցուած են։ Բարեկամութիւնն ճշմարիտ սրտակիր՝ անքան կենդանեաց մէջ շատն է, թէպէտ ամենուն

յայտնի է. և ամեն մարդ գիտէ թէ ինչպէս այս կենդանին իւր տիրոջ հրամանները կատարելու արագաւն և պատրաստ է միշտ. և նորա դէմ ունեցած հաւատարմութիւնն իւր հետ միասին ծնած է.

Մի հարուստ երիտասարդ այսպէս գեղեցիկ շուն մի ունէր, որ ծաղրական և սիրուն շարժուածքներուն համար անունը Միմոս դրած էր. Գիշերներն արթնաւն կը կենար. մի փոքր ձայն լսելուն կը հաչէր. եւ ամենեւին օտար մարդ տունն ներս չէր մտցներ. Բարեկենդանի օրերն եկան եւ Միմոս տունն չէր հեռանար. իւր տիրոջ հետ ոչ ի թատրոն կ'երթար և ոչ ի պարահանդէս և ոչ ի հացկերոյթ. Գիշերն իւր ոտքերակնին ակն ականջներն դէպ ի դուռը ունկած կը սպասէր. Անձրեւոտ երեկոյ մի էր. ուշ ատեն և մութն այնպէս կոխեր էր՝ որ աչք աչքի չէր տեսնուէր. նայիս տէրը կախարդ կնիկն կերպարանք մտած և երեսը դիմակ անցուցած տուն դարձաւ մտնակ. և յոգնած լինելով՝ վերայի լամպերը պիտի փոխէր ու պառկեր քնանար. Շուն այս պրանդակ մարդը տեսնելուն պէս՝ ականջները կը կրճատէ. և գոռ կարծելով կը վազէ նորա դէմ՝ և սասափիկ կը խածնէ. խեղճ տէրը ցաւէն մեծ ձայնով կը պոռայ. շուն իւր տիրոջ ձայնը ճանչնալուն պէս կանգ կ'առնու. և նորա դէմ գարձած շարունակեն վերայ անմխիթար արտասուելուն կը լեցուի. Կը փախչի կ'երթայ կը պահուրտի. և ապերախտ դառնալուն համար գլուխը գետնէ

գետին կը զարնէ։ Թէպէտև ամէն անուշա-
խնդութիւնք ներսն անուշներ ապագայ կը կանչէ և մեռ-
կ'ներսիդայ կը շրջէ։ բայց ինչ օգուտ։ վասն զի
շուտով արտասուք կանխիմէն ինքզինքը կ'ուտէր։ սիրոյ
ցաւագրեալ սէրը մարիկ չէր բնար։ և ինչ որ
ապրիլն՝ թերասոր չէր գներ։ Վերջապէս այս իւր
անձին սիրազանութիւնը պատասխան հանար։ անօթի
ծարաւ և ցաւոյ մեռան խեղճ կենդանին։

Այս առակս ինքնանշանակ շինարարէ։ այլ
Հնդարիոն պատմութիւն է։ ինչպէս որ արժա-
նապատուս հնդիկներուն մէկը կը վկայէ։ Ասոր
նիմէ կենդանի մը մարդոյս վերայ այդպան սէր
կը ցուցնէ։ որքան պէտք է որ ապերախտը
ամչնան իրենց վերայ։

Պատմեն թէ շուն մը ծշան մանուկ մէ
արիւնակ է հաստատուած եղեան և սիրոյ։ զոր մինչ
մեր մարդասիրաբար դէմ պարտաւոր եմք ունե-
նալ։ և այս բանիս ապացոյց՝ շիտ գեղեցիկ օրի-
նակ մը պատմեմէ առեալ։ Ասուած տայր։
սիրելի արդեակք իմ։ որ դուք եւս այս ապեր-
խանութեան գաղափար մէջ չիմնիք։ Նիմէ գիտ-
նամ որ դուք այսպէս մեծ շարաւիղութիւն մը գոր-
ծելու չէք ամաչեր։ մէկէն կը ձգէր զանց մեր
դէմ սիրոյնն ունարդ կուտայ։ և երբեմն անդամ
չէր նայիր։ բնաւիմնէ գաւրս ապայք հանարելոյ
զանց։ վասն զի շիտ առելի բնաւիմնան հա-
կառակ բան մը։ քան ապերախտ գտնուիլ նոր-
ցս դէմ։ որոնց պարտաւոր եմք այնպիսի ան-
գին երբեմնոյնք մը։ ինչպէս է մեզ ասուած բա-
նիկերիմնաւիմնութիւնն։

Բայց եթէ այս ապերախտութիւնն ինչ և իցէ առաւելութիւնք ունիցի, առելի և ամենայն կրկին մեծագոյն, առելի գոսկեղի են առաքինութիւնք մարդոյ մեռեալ դեռեւս որ երախտագէտ են իրենց վարժապետաց, որոնք դեռեւս ազգայնութեան հատակը կրթուելու եւ ուսանելու զարգացուցին։ Երանելի Տաճիրլի կոմսին գեղեցիկ գործոց մէջէն այն կատարը, որ իրեն մեծ պատիւ բերաւ եւ իրբեւ օրինակ բարի միշտ յիշատակութեան արժանի պիտի լինի, կ՚ուզեմ այս առիթ մեզ պատմել։

Գեղեցիկ օրինակ երախտագիտութեան։

Տաճիրլի կոմսը Կոսմէ քաղաքը պաշտպանելէն յետոյ, այնպիսի քաջութեամբ որ իւր թշնամիներն ոնգամ զարմացուց։ Վերադարձաւ Լուդովիկոս ԺԳ. թագաւորին ներկայութեանը։ Թագաւորն դեռեւս բլուր պաշտպանութիւնը լուսի չիներով, շատ գոսկեց գինեցն։ և քաջալերեց որ իւր արտին ուզած շնորհքն իրմէ խնդրէ։ — Ցնէր իմ, պատասխանեաց տուաւ Տաճիրլի։ այս շնորհքը միայն ձեզմէ կը խնդրեմ, որ թագաւորութիւնս ընէք իմ հարազատարանս։ որ Պասդիլիոն մէջ բանտարկեալ կը կենայ։ — Ո՞վ է բանս հարազատարան։ կրկնեց թագաւորը զարմանալով։ — Պարոն որ Պրիսնարն է։ ասաց Տաճիրլի։ Այս մարդուս դեռեւս մէջն էր։ որուն՝ իմ երիտասարդութեանս մէջ դիս կրթելու հանար ունեցած հոգերը եթէ չմոռնամ։

ապերախտ զիւրն հանդերձեմ։ Զարմանացաւ մեծ թագաւորը Եռամիլլի ոգւոյն վերհանձնումեան վերայ, որ իւր անձնական շահը մէկդի թողլով՝ բարեբարին օգուտն միայն կը մտածէր. և իւր կոյն շնորհեց անոր իւր ուզած խնդիրը։

Զեր արտին մէջ աւելի զգացընելու համար երախտագիտութիւնը, որ գեղեցիկ հոգւոց առաքինութիւնն է, կ'ուզեմ այս տեղ ձեր առջեւ գնել այնպիսի օրինակ մի, որ այնքան աւելի մեծ ազդեցութիւն ունի, որքան որ գործողը բարբարոս համարուած է։

ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ։

Լուդովիկոս ԺԴ. Գաղղիացւոց թագաւորը Թունեանն (Թունուզ) քաղաքը ամրակոծելէն յետոյ, մէջի բնակիչները նայելուն որ շատով կրնան նորա նաւատորմիղն իրենց ծովեզերքներէն հեռացընել, յոյսերնին կտրելով՝ մէջերնին որոշեցին որ Գաղղիացի գերիները թմեմանամեղներուն քերանը կապեն և նեռելու ժամանակ զանոնք ջարդուբարդ ընեն, որունց ջախջախուած անդամները կ'երթային Գաղղիացւոց նաւերուն մէջ կ'ինկնէին։ Այն ժամանակները Թունուզի նաւապետ մի ապստամբութիւն բրած ժամանակ Գաղղիացւոց ձեռքը գերի ինկած լինելով, անոնցմէ շատ մարդասիրութիւն գտած էր բոլոր իւր գերութեան մէջ. երբ տեսաւ թէ թմեղանամեղներուն քերանը կապուողներուն մէջ պատուաւոր պիտուոր մի կայ, ան-

դաշեց ոմ լինիցի. վասն զի ինքն նորա մօտ եղած ժամանակ շատ բարեկամութիւն առած էր անկէ. Այս ազնուագոյն մարդոյս մէջ իւր բարեբարքը մատնուանէ ազատելու համար ձեռքէն եկածէն աւելի ջանք ըրաւ, ազաչեց և իրաւունքներ բանեցուց. բայց ամէն ինչ զարդարդ եկաւ. Արդէն զարտուղաւոր էին մինդանումին կրակ տալու, որուն գիտնց կապուած էր Գաղղիացոյն գլուխը. և ահա յանկարծ Թուռնուզդի գերիին աչքերը սեւցած՝ կը նեռուի նորա վերայ ասելով. «Ա՛զէ. հիմայ կրակ տուր մինդանումին. որովհետև չեմ կրնար բարեկամիս կեանքն ազատել. գոնէ նորա հետ մեռնելով միսիմարութիւն եւ արդիս ցաւ չլինի»». Հոն գտնուող Գէյին սիրուն այնպիսի շարժեցաւ այս ասուարանին վերայ. որ գլուխնին մոռնալ թեհմեւ շնորհելէն յետոյ. երկուքին եւս ազատութիւն տուաւ.

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վարժապետաց անաչառութիւնը պետք չէ որ աշակերտաց սիրը պակսցնէ անոնցմէ.

ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ իրենց վարժապետաց դէմ ունեցած երախտագիտութիւնն եւ սէրը սովորաբար պարզագոյնդ ունոյց անաչառ վարմունքն է. որով երբեմն կրնան իրենց աշակերտաց հետ վարուիլ. թեհմեւ յանդիմանութիւն մի եւս եմիկ լանի. իսկոյն կը մոռնան նոցա

բոլոր հոգերն աշխատութիւններն և ծառայութիւնները. մինչև զանոնք իրենց թշնամին կը համարին քան թէ բարեբարը. Բայց եթէ նոցա այսպէս անաշառութեամբ վարուելնուն պատճառը գիտնային, անշուշտ իրենց սիրտ կարծիք ուներնալին կը հասկնային։

ԱՌԱԿ

Որոն և այլեգործք։

Օր մի կարիք ըլլա, կ'ասէ Եզոպոս, որմէն այգեգործին հետ, նորա համար որ իւր ձիւղերուն և տերեւներուն շատը կը կտրէր։ — Թշնամանք չունիս դու երբէք, ասաց գիւղացւոյն, որ քեզ հետ այսպէս խստութեամբ կը վարուիս. կ'երեւի թէ խիստ քար սիրտ մի ունիս դու որ ամենեւին իմ ցաւերս չես զգար, անդութ մարդ. ասա նայիմ ինչո՞ւ համար այսքան կը վիրաւորես զիս։ Իրաւ է որ ինձ համար այսքան խնամք և հոգ կը տանիս, և ես դորա համար ապերախտ չեմ լինիր քեզ. կամ ապահովութեամբ իմ խաղողներս քեզմէ շեմ խնայեր, որոնք քու տակառներդ գինիով կը լեցնեն։ Քանի քանի անգամ ասացիր դու ինձ թէ իմ քաշած նեղութիւններս և թափած քրտինքս և բոլոր իմ սէրս, չմոռ այգեգործ, քեզ համար է, և մինչև քու անգթութեամբ տուած վէրքերդ եւս ինձ համար են նշան։ Դուրսամ խեղճու

գեղեցիկը կը թքնեմ. քայց ինչ օգուտ, վայ ինձ. եթէ դու այդպէս միշտ քարոզիր ես ինձ դէմ. ես զքեզ կը սիրեմ կ'ասես. ուստի անդուխ սիրոյս, որ ամէն կերպ ատելութիւնէ վատ է. — Յանձէ քո լայդ, դադրեցու քո բարկութիւնդ, զատատիան տուա խոհեմ երկրագործը, վասն զի չես գիտեր դու իմ նախատեսութիւններս և միտքս. գիտցիր ուրեմն որ քո աղէկութիւնդ համար՝ պէտք է որ ես քո հետ այս կերպով վարուիմ։ Միշտ քո օգտիդ համար հոգ ունեցեր եմ, և ինչպէս որ դու կը կարծես՝ քեզ գէշութիւն գործելու մտաք ձեռքս վերադ զգցուցած չեմ. այլ այն իմ սրտիս մէջ եղածն, զոր դու անգիտութիւն կը կարծես, ճշմարիտ սէր է։ Եթէ ես քո խոշորացած մեծցած ճիւղերդ չյարգէի, եթէ թողուի զանոնք իրենց գլխուն մեծնային տարածուէին, անշուշտ օր մի զքեզ ես բոլորովին չորցած ծառի կամերուն մէջ կը տեսնէինք. քայց ես քո լայերդ մոխիկ շինելով՝ անպտուղ տերեւներդ և ճիւղերդ կտրեցի, նորա համար որ աւելի պտուղ տաս, և իմ կարծիք ըրածէս աւելի Բագրատն (1) ու Երիքնք նպաստաւորոյց և յաջող պիտի լինին քեզ»։ — Տղոյ՝ դուք որ եթէ ձեր վարժապետը պատժելու լինի զձեզ, իբրև բռնաւոր կը դանդատիք անոր մէջ. ուստի այս առակէս և գիտցիք որ նոքա զձեզ սիրելնաւն համար կ'ընեն։ Դուք էք արդը. վարժապետն է

(1) Բագրատ քան գիւցարանիցն է գրեալ շատուած։

ղխուսն այգեգործը. վայ այն խելքն ոգուն՝ զոր
իւր փարատելոյ շնորհաւորակիր յանդիմանել
եւ պատել. երբ շարութիւն եւ լրբութիւն
ընելու չինի։

Այո՛, որդեակք իմ, ձեր փարատելոյ
անաշառութիւնն, նոցա ձեր ազէկութիւն հա-
մար ունեցած բարեխոսութիւն նշանն է։
Նոցա լրած պատերազմք ոչ իմ ձեր անձին,
այլ միայն ձեր պակասութեանց դէմ է։ Նոքա
կը քանան անկարգութեանց առջեւն առնել,
որոնք կրնան մանանակ մի յետոյ այն ծլած
ընձիւղներն ծագիլ՝ եթէ արմատս ձգելու լի-
նին ձեր հոգւոյն մէջ։ Որ պիտի գայ որ գուք
եւս պիտի ճանաչէք եւ ասէք՝ թէ իրաւունք
ունին եղեր այսպէս ընելու. եւ չէ թէ նոցա
շնորհակալ չպիտի լինիք, այլ ձեր անկեղծ
երախտագիտութիւնն եւս պիտի յայտնէք։

Այս իմ գրուցածս՝ փոքրամ ամէն օր ան-
ուանելու է։ Որքան ոգոյք կան՝ որ երբ մեծա-
նան՝ վատ կը լինին. եւ ապա պատճառն ուրիշ
բանէ յառաջ չգար, եթէ ոչ դիրքնք կրթող
փարատելոյ շնորհաւորոյ ներքոյանութեանն,
որում նոցա մատաղաշ հասակին մէջ հետերնին
փարեալ։ Հետեւեալ փոքրիկ պատմութիւնք
թող ապացոյց լինի գրուցածիս. որ Եռանդուն
աղքատաց ըսուած գրքին ուներա ուրիշ գրու-
քերու մէջ կը կարդացուի։

Իբ. ծրդ ենթացուծուքեան ցոյ գնացող ոգեաց։

Երիտասարդին մէկը գողութիւն պատմելու եւ իր ծայրէն հատակին մէջ գտնուած էր կախուելու։ Երբ կախուելիս մտածեցաւ, իր մտքէն անցաւ մի ցրցուցիչ խրատ, և ոչոյնը ուզեց որ նորա ականջին խօսք մի գրուցէ։ ուստի երբ հրամուն եղաւ, մտածեցաւ իր մտքին եւ բան խօսելու տեղ՝ ակռաներով ականջին մէկը պինդ մի խածաւ փրցուց։ — Զար ոչոյ։ ասաց գատաւորն։ Ինչպէս հանդարտակեցար այդ անգթութիւնն գործել նորա դէմ, որ քեզ կեանք տուաւ։ — Տէր իմ, պատասխանեց ոգորմելին, ահա այս է որ իմ միջոց անցընել տուաւ չուանը։ Մեծ անիկայ պատմելու լինէր դիս իմ բոլոր մտքիս մտքերս գողութեանցս համար, զոր գաղտնաբար բնակիրներս ի՛նէի։ Ի մտածութիւնս եւս իմ վարքս և պակասութիւնս շատ կամ կը լինէի։ բայց նա ընդհակառակն ի՛սուրբութիւնդ և սիրտս կուսոյդ ինձ այս կերպով մոլորեցնելու ասելու։ Վասն որոյ ինքն է պատմուս որ եւս հիմայ դահիճն ձեռքով պիտի կախուիմ և կորուսեալ։»

Չին պատմութիւնն մէջ ուրիշ օրինակ մի կը կարդացուի։ որում ազգի կրնաք իմանալ՝ թէ երիտասարդ մի վատ լինելուն բան պատմուելիքն իր գլխուն հոգալ եւ նորա վարքը ուղղելու համար ամենեւին յանդգնութիւն չունի։

Թերն թ.ը տնձին Թոզուտ եպիսկոպոսդ։

Պիտեմ զոր բռնաւորն երբ իւր իշխանութեան տակ ունեցաւ Պիտի իւր անհաշտ միջնադիր որդին. միտք դրաւ նորա հարկէն վրէժ առնուլ մանաւանդ մանաւանդ իմէ անգութ կերպով մի. թէպէտ և երեւոյթ քարոզիր կ'երեւէր։ Ուստի փոխանակ ապաւենել տալու զորդին, կամ մեռեալ բռնութիւն մի մէջ գոցել տալու, ուզեց նորա միտքն տալել և ոգեւոյն քարոզ գերեզմիկ ձիրքերը փճացընել։ Այս մտաք միանակ դիմաւորեալ մարդոց որ իւր գազանային ցանկութիւնները կատարէ. և հրամայեց նոցա որ ոչ որ նորա կամաց հակառակի։ Անմարդ երիտասարդը զուարճութեան սիրոյն յանիշտակութիւն, տուաւ ինքզինքը խիստ մեծ անառակութիւնները։ Եւ որոմիանուն իւր վերայ հոգ տանող մի չունէր, ուստի և ոչ իւր կրթոյ տասնակ յորդորութիւնը կարելի էր բռնել և տանիմ տակ առնուլ։ Իւր բոլոր բաղձանքները կը կատարէր. և բոլոր շարաութիւնները գործութիւնք կը գործացուէր։ Վերջապէս ինկաւ մոլութեան խիստ խորունկ անդունդին մէջ։ Երբ բռնաւորը տեսաւ թէ միտքը գրուծին պէս եղեր է ոգայն, այնուհետեւ ազատ իւր հոր մօտ գրկեց։ Դիտն որդին գալուն պէս գիտուն վարժապետաց ձեռք յանձնեց. որպէս զի անդադար հոգ տանին անոր և վարքն ու բարքը ուղղեն և կրթեն. բայց ամէն ինչ անօգուտ եղաւ. վասն զի փոխանակ զգաստանալու, այնպէս կատղեցաւ և

մոլորեցուս, որ օրին մէկը բարձր տեղէ մի վայր նետուելով և քներբը (չէնք պարզ) ջախջախելով յուսահատած մեռաւ։

Գիտեմ՝ թէպէտ շատ վարժապետներ եւ ծնողքներ ազնիւ հետ շահագրգռեալ ներգաքրքրութեամբ վարուելով, այսինքն նոցա գործած պակասութիւնքն աչք խփելով եւ ներելով՝ ազնիւք միշտ այսպէս վատ չեն լինիր, քանզի յետոյ միշտ անոնց դժբաղդութիւն մի կը պատահի, եթէ իրենց յանդիմանող և խրատող մի չունենան, վասն զի կամ անարգելս կը լինին, և կամ մէկ յանցանք մի կը գործեն։

Թագաւորի մի գեղեցիկ խօսքերը։

«Իմ բոլոր տերութեանս մէջ գաւառականներ չէին արդեօք գտնուեր . . . — կ'ապաշակէր օր մի թագաւորին մէկը՝ երբ իւր հպարտութիւնն և անտարտութիւնը թագով, խելքն ի վերան եկաւ, զարմանք քանի որ յիշէր՝ կ'ամչնար և կը կարմրէր։ — Ինչո՞ւ համար այսքան անհոգութեամբ հետս վարուեր են իմ վարժապետներս մանուշակ հատակիս մէջ, երբ խելքս քանի մի չէր հասնիր։ Ի՞նչ ազէկ պիտի լինէր իմ, եթէ խստութեամբ վարուելով յանդիմանէին և պատժէին զիս։»

Ահա անոնք որ մանկութեան ժամանակին խիստ փափուկ կը մեծնան և կը կրթուին, եւ իրենց վարժապետը խիստ մեծ ներողամտութեամբ կը վարուի հետերնին, յետոյ երբ չա-

փահան որ լինին, այսպէս կը խօսին և կը գանգատին իրենց վարժապետներէն։ Ասոր հակառակ կը տեսնենք որ խիստ մեծ անաշառութեամբ կրթուող անձինք առելի երախտագիտութեամբ կը յուշընեն իրենց վարժապետաց, ինչու որ կը ճանչնան թէ իրենց պակասութեանց համար կրած պատժեանն և քիչ անգամ աչք խիստ ընին՝ զիրենք սիրելու համար է եղեր, որպէս զի ուզղին և խրատուին։

Երիտասարդ իշխանի մի խնամուն գաստապետաց։

Հարցուցին որ մի Պարկանոնց երիտասարդ գրոսին, թէ իւր երեք դասընկերներէն ո՞րն առելի կը սիրէր։ «Յովհաննէս անուն ընկերս կը սիրեմ, պատասխան տուաւ. վասն զի նա իմ մատաղաշ հասակիս մէջ ամենեւին ինձ չէր խնայեր, և ինչ շարութիւն որ ընէի, կ'երթայր վարժապետին կը զրուցէր որ զիս պատժէ»։

Ասիք դուք եւս այս երիտասարդ իշխանէս սիրել զանոնք որոնք զձեզ յանդիմանելու և պատժելու համար ձեր աչքին գուցէ դէշ կ'երեւին։ Խրատներն և պատժիներդ քան զգէրն և քան զշոգաբարձութիւնն առելի օգտակար են աշակերտին։

Մարերնուդ մէջ վատ մի խորհիք ունենան, սիրելի որդեակք իմ, թէ որ ձեր վարժապետներն երբեմն անաշառութեամբ հետերնիդ վարուին. այլ մանաւանդ երբեւ ձեր որդեակ հայրը սիրեցէք զանոնք, որոնք ձեր ապէկու-

թեան հաճար կը ջանան և հոգ կը տանին ձեզ։ Մի քանի վարժապետաց իրենց աշակերտներուն դէմ թողութեամբ՝ վարուին և անոնց գործած սխալն պակասութեանց աչք խփելը՝ դէշ և վնասակար է միշտ, երբ սահմանեալ խոհեմութեան շափէն իսիսա դուրս ելնեն. և գիտցիք որ եթէ ձեզ մեծ ազատութիւն շնորհեն, ձեր թշնամութեան պատճառ կը լինին. և ընդհակառակն եթէ ձեր վերայ միշտ արհամարհանք հոգ տանին, ու նաև հարկը պահանջած ժամանակ յանդիմանեն և պատժեն զձեզ, ձեր ճշմարիտ երջանկութեան ապահով ճանապարհն մի կը բռնեն։

ԴԱՍԱԿԱՆ ՔԴ.

Հնազանդութեան վերայ։

Բարեկամ չէ ձեզ, որոնք զաւակունք թեմ. միայն պատիս, սէր եւ երախտագիտութիւն ցուցնէք ձեր դաստիարակաց եւ վարժապետաց, այլ և պէտք է որ հնազանդ լինիք նոցա տուած խրատներուն և կրթութեանց։

Թէ որո՞նք են դասատուներն որ կը դաստիարակեն ցոցաց-
իրենց ջարտարութեան հնազանդ լինիլ։

Վարժապետները կամ դաստիարակները ձեր առաջնորդներն են. ուստի պէտք է ձեզ

որ անոնց եղանակն երթայք։ Նորա ձեզմէ առնելի բան պիտանի և ձեզմէ առնելի միտքերնին բաւական պիտոյ է։ Նորա հանար պէտք է նոցա խորհուրդներէն ձերբազատիլն առնելի բաւ հանարիք։ Ձեր ծնողքը զձեզ նոցա կառավարութիւնն յանձնելով, կ՚ուզեն եւ որ հնազանդ լինիք իրենց ամենն բանի մէջ։ Զոյն որոյ անհնազանդութիւն գործած կը լինիք ծնողաց դէմ, եթէ հակառակիք նոցա կամացն՝ որ ձեր ծնողաց փոխանորդներն են։

Այս իրաւունքներուս վերայ պէտք է որ ձեր միտքն բաւ մի պառկի։ Թէ խիստ արդար և իրաւացի է որ դուք հնազանդիք նոցա հրամաններուն, որոնք ձեր կրթութիւնն հոգն իրենց վերայ առած են։

Էրիտասարդ Իլանի մի Ինչպէս կրթուիլն։

Պարկեշտոյ երիտասարդ դուքսը օր մի բարեսիրութենէ դէմ խօսեցած էր իւր պապուն, և իրենց միջնաբանութեան մէջ դրախտը տարցած լինելով, բերնէն սա խօսքը փախուց թէ՝ «Տեսանենք մեզմէ ով իրաւունք ունի»։ Բայց մի քանի բոլոր անցան շանցան, մոռնաց նոցեցան՝ որ իւր բրածը չէր վայլեր, այլ պէտք էր հաւանութիւնն և հնազանդութիւն ցուցընել իւր պապուն։ ուստի կրկնեց նորէն եւ ասաց։ «Իրաւունքը ձերն է, տարակոյս չունիմ, ինչպէս որ դուք ինձմէ աւելի խելացի էք»։

Հնացեղութեան օրինակ։

Պետրոսի աշակերտներն իրենց վարժապետին խօսքերն իրենց Աստուծոյ պատգամ կը համարէին. մինչ զի մէկը չէր համարձակեր երկրային նորա առածներուն. վասն զի իւր յաւասարեալ միտքն և համարումը բաւական փոքր էր իւր խօսքերուն. ասոնք առակ եղած էր աշակերտաց մէջ. եթէ իրարու բան մի հասատաներ ուզէին՝ կ'ասէին. «Այսպէս ասաց վարժապետը»։ Եւ ամէն բան կը վերջանար։ Փիլոսոփայն ուզեց որ իւր աշակերտաց մէջ լուսթիւն մի հասատանէ, որ քիչէն քիչ երկուսարի կը տեւէր. և այն աշակերտներն որ խուսակցիկը կը սիրէին, նոցա համար մինչև հինգ տարի լուռ կենալու պատիժ կը դնէր, որուն սիրով կը համբերէին։

Երանի թէ մեր ժամանակի ազգք եւս այսպէս պատիւ և հնազանդութիւն ցուցընէին իրենց վարժապետաց։ Ճշմարիտն ըսուցեմ, ազգք սրտանց կը հնազանդին վարժապետաց հրամանները. մինչ թէ ուզած բաներնին դիւրին եւ աշակերտաց սրտին սիրուածը լինի, հաճութեամբ մոխիկ կ'ընեն անոնց, մինչ թէ անոյշ խօսքեր խօսին, կամ այնպիսի ճշմարտութիւններ՝ որ իրենց անձնասիրութեան չդպչին. բայց երբ իրենց կամացն հակառակ կենան, կամ իրենց պակասութիւնները յանդիմանեն և շինել ուզեն, նախ ազգք կը սկսին մեռնիլ և կը նեղանին այն անմիտ մարդոց, որոնք կ'ու-

զեն որ ուրիշներն իրենց մոլի գործերը գովեն. և այսպէս խաբուելով կը մնան իրենց կուրութեան մէջ. և անկարելի կը լինի յետոյ իրենց գիտութիւն և առաքինութիւն ստանալ։

Ո՞նչ շահ կը կարծէք դուք որ ընէ մէկ ճանապարհորդ մի, որ առաջնորդ բռնած լինի իրեն ճանապարհը ցուցնելու համար, և ինքն չուզելով նորա ետեւէն երթալ, իւր ուզած ճանապարհներէն քալէ՝ զոր չճանչէր։ Դուք զանիկայ խենդի տեղ չէք դներ, անտարակոյս. վասն զի իւր միտքը գրած տեղն ուր որ է, հոն երթալու տեղ՝ գէշ ճամբաներու մէջ կը կորուսու։ Արդ՝ այս ճանապարհորդն անհնազանդողն օրինակ է, որ իւր վարժապետաց խելացի խրատներուն ականջները գոցելով, ինքն իւր անձը կառավարել կ'ուզէ, և իւր կամքէն ի զատ ուրիշ առաջնորդի չուզեր հետեւիլ։

Կրթութիւն եւ վարժութիւն չընդունող ազգն կը նմանի ամբարտաւան կրակոտ ձիու, զոր մարդ վարժեցընել կ'ուզէ։ Ցուրեք զայն մի վարպետ ձիավարժի որ կրթէ. եթէ կենդանին ամենեւին չուզէ, գլուխը պինտ լինի, և ոտնձ մտիկ չընէ, բարկանայ, չուզէ գնալ կամ վազել՝ ինչպէս որ տէրն կը կամի զինքը կրթելու համար, պարապ կ'երթան ձիավարժին քաշած նեղութիւններն, ձին միշտ անվարժ կը մնայ, և ամենեւին բանի մի չծառայեր։ Ահա այսպէս կը լինի այն ազգն վիճակն որ մտիկ չընէր իւր վարժապետին խնամուն խրատներուն, որ զինքը կրթելու յանձնառու եղած է։

Կ՚ուզէք մէկ ոտքիշ նմանութիւն մի եւս բերեմ ձեզ. որ լաւ մի հասկնաք՝ թէ հնազանդութիւնը օրքան հարկաւոր է ազգայոց։ Ցանեցէք ոտոտ մի մէջ, որուն հողը բնութիւնամբ պտղատու լինի. խիստ ընտիր հաւնտ. եթէ հողն իւր ներսը չընդունի զայն. եթէ հոգ չառնիք ծածկել նորա վերայ՝ որ ծլի. դէպ ի հովն ցանած կը լինիք և չէք կրնար պտուղ մի յառաջ բերել։ Այնպէս կարող եմ ասել անհնազանդ և կամակոր ազգս մի համար։ Պարտաւորութիւն կը ցանէ վարժապետն նորա միտց մէջ գիտութիւն և առաքինութիւն հաւնտը. փուռնը կ՚երթան նորա ուրուած խիստ օգտակար կրթութիւններդ. վասն զի իրենց վարժապետաց ջանքերուն հնազանդութիւնամբ չհետեւելով, և իւր կազմէն ինքն եւս ջանք չընելով, անօգուտ տեղ կորսնցուցած կը լինի իւր ժամանակն և աշխատութիւնը, և նոցա տուած գասերն անպտուղ կը մնան։

Ջանք ըրէք, սիրելի որդեակք իմ, շահ մի կրթելու այս գասէս, և զգոյշ եղէք չհետեւիլ բնաւ այն անհնազանդ ազգայոց անգանելի վարմունքին, որոնք չեն ուզեր ուրիշին գլուխ ծռել, այլ կը համարձակին իրենք ուրիշին օրէնք տալ։ Նարեկացւոյն գրուցածին պէս՝ «Աշա կերտք հեզդ ի յաւանել՝ և փոյթք ի վարդապետել»։ Այս ասած ազգայոցս մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնց անհնազանդութիւնն եւ կամակորութիւնը խիստ շափազանց լինելով, գրեթէ անբան անասնոց կը նմանին։ Ահա ձեզ

փորձի համար սորա վերայօք օրինակ մի տամ։

Գաղղիացի ազնուական պարոնին մէկը մի ածին տղայ մի ունէր, և բնութիւնը շնորհեր էր նորա բոլոր այն ձիրքերն՝ որոնցմով տղայ մի կրնայ սիրելի լինիլ ամենուն. բայց միանգամայն անհնազանդ և կամակոր բնութիւն մի ունէր, որուն չէին կարող համբերել իւր վերակացուներն և վարժապետները։ Զկրնալով ամենեին մէկուն դլուխ ծռել, կ՚ուզէր որ ուրիշներն իւր կամաց հաւանութիւն տային. և եթէ մէկն իրեն դէմ կենար, այնպէս յամառութիւնը կը բռնէր՝ որ կարծես թէ խենդեցեր է։ Օր մի իւր հայրը գուրս ելած լինելով՝ խելքին այնպէս փչեց և ուզեց որ ինքն եւս գուրս ելնէ, և գոռոզութեամբ մի կը հրամայէր որ դուռը իրեն բանան։ Բայց երբ մանկավարժ կիներն անոր դուռ տուին նորա իրաւունք հասկցնելէն ետեւ յայտնապէս ասաց իրեն թէ՝ ուղածդ չպիտի լինի. տղայն է սկսաւ լալ և կանչուրտուել, և չկրնալով յաղթել մանկավարժ կնկան՝ որ ուզածը չէր կատարեր, և դուռն եւս բացուելէն յետոյ կորելով, վասն զի բանելիքով կղպեր էին որ չփախչի, ինկաւ գետինն եւ շարութենէն ինքզինք գետնէ գետին կը զարնէր՝ ամենայնիւ իւր բռնած խենդի պէս։ Ա. յս միջոցիս նոյնս հայրը տուն դարձաւ, եւ տղայն չառնելով՝ հարցուց մանկավարժ կնկան թէ՝ ո՞ւր է, և թէ ինչպէս կեցաւ, խելքո՞ էր թէ ոչ. և նա պատմեց իրեն ինչ որ ըրեր էր։ Հօրը սիրտը նեղանալով՝ սրտէն կը մտնէ, ուր տղայն երեսն ի վայր

փառեր պատկեր էր, զոր շտեսնելու գոլով՝ ոտքով գետնին կը զարնէ, ձեռքերը դէպ ի երկինք կը վերցնէ, և սրտէն խորունկ հառաչանք մի հանելով կը գոչէ։ «Ո՛հ, Աստուած, ինչ կը լսեմ, իմ սրտիս խնդեցնիր է. հա՜, և այնքան խնդեցեր է որ կապուելու չափ ինքզինք գետնէ գետին կը զարնէ։ Ա՜խ, ափսո՜ս ինձ, ուրեմն ես ասկէ յետոյ այն քաղցր մխիթարութիւնը չպիտի ունենամ իմ մտաս տեսնելու զաւակս, թեւերուս մէջ զինքը գրկելու, սիրելու և իմ սիրոյս օրէ օր նոր նշաններն անոր ցուցնելու։ Ուրեմն պիտի ստիպուիմ վանտալ զինքն իմ ալնէս, բանտի մի մէջ կապել տալ, և այն զաւակս որ իմ ուրախութիւնս է, իմ սրտիս ցաւն և երեսիս ամպոյ պիտի լինի։ Ո՛հ Աստուած իմ, եթէ զիս պատժել է մտքդ, սա՛ ինձմէ կ՚ազատեմ իմ հոգիս, այլ սիրական զաւկիս խելքը գլուխը բեր։ Առաւել կ՚ուզեմ մեռնիլ, քան թէ խենդեցած տեսնել իմ սրտիս, և իմ կեանքս ցաւով մաշեցընել»։

Երբ հայրն այսպէս կը խօսէր, ցուցընելով միշտ թէ ինչ յուսահատութեան մէջ է իւր ազգն համար, ազգին որ սնանի մի տակ պահուրտած էր սրահին մէկ ծայրը, իւր հօրն ամէն մէկ շարժմունքներն կը դիտէր, լաւ թեամբ մտիկ կ՚ընէր ամէն գրուցածներն, ձեզ կը թողում որ մտածէք թէ ինչ վիճակի մէջ էր նա այն ժամանակ։ Կը դողայր, կը կարմրէր, և չէր կրնար ինքզինքն յայտնել։ Այսու ամենայնիւ իւր սրտին ցաւն այնքան սաստիկ էր,

որ մէկդի թողուց ամէնայլը. և թէպէտ առանց իւր հայրն՝ որ միշտ ոտքի վերայ վեր ու վայր կ'երթար կուգար, ոտքերը գետնին զարնելով, և ողուն պահուրտած ուզելն դիմացի կողմէն կ'անցնէր, ողայն սկսաւ գոռգոռալով նորա ետեւէն երթալ մինչեւ որ իւր հայրն եւս գառնալու ժամանակ որ անդադար կը գոչէր. «Ով Աստուած. իմ զաւակս, իմ սիրելի՛ զաւակս խենդեցա՜ »։ թնկաւ ողայն նորա ոտքերն և ասաց ատոմիկ լալով. «Չէ՛, չէ՛, հայր իմ, քո զաւակդ խենդեցած չէ. մանաւանդ խօսք կուտայ քեզ որ ապէ յետոյ խիստ խելօք պիտի կենայ »։ Այս խօսքերը լսելով քարի հայրը նորա վիզը կը փաթթուի, գրկին մէջ կը սեղմէ, արտասուքներով կը թրջէ և սիրալիր փայփայանքներով կը յայտնէ անոր իւր հաճութիւնն և սրտին ուրախութիւնը։ Բայց առաւել մխիթարուելցաւ հայրն, երբ ողայն խօսքին վերայ հաւատարիմ մնաց, և յետոյ խիստ զգոյշ եղաւ իւր ամէն մէկ պարտաւորութիւնները հաստատ կատարելու։

Վարձնի կոմսին նամակներուն մէջ եւս ուրիշ այս տեսակ պատմութիւն մի կը կարդացուի, որուն չէի հաւատար՝ եթէ արժանահաւատ մարդիկներէ հաստատուած չլինէր։

Կամակորութեան շարժառիթի օրինակ մի։

Տիկին մի միածին զաւակ մի ունէր. զոր այնքան կը սիրէր և կը գոգայր վերան, որ ամէն

ինչ որ ուզէր՝ մէկէն կը կատարէին. և ամենեւին չէին լացըներ որ չհիւանդանայ, այնչափ որ ուզայն տան մէջ փոքրիկ բռնաւոր մի դարձած էր, և իւր խօսքն յառաջ կը տանէր. իսկ եթէ հակառակէին իրեն, իսկոյն կը կատղէր կը պօռայր և կը կանչուրտուէր։ Տիկնոջ այրը, ազգականներն և քարեկամները 'ի զուր հանկրցընել կ'ուզէին իրեն՝ թէ այս չափազանց սիրոյմ՝ իւր զաւակը գէշ պիտի ընէր։ Օրին մէկը ճայրն իւր իրցին մէջ նստած ժամանակ ուզաւ ձայնն ակամէն կուգայ, որ բակին մէջ սատիկ կուլայր և կատղուելնէն երեսները կը ճանկէր. ծառայն իւր ուզած բանը չտալուն համար։ «Զա՞ր ծառայ, պօռաց տիկինը, իրաւցնէ գուլիրը մ՝ ես եղէր, որ իմ զաւկիս հոգին կը մաշես և ուզածը չես տար։ ազէ, շուտով հետզանդէ ասոր, և ինչ որ կ'ասէ՝ ըրէ։— Ձշմարիտ կ'ասեմ տիկին, պատասխանեց ծառայն, երբէք որ այսպէս կանչէ պօռայ, չկրնար իւր ուզածն առնուլ։» Այս պատասխանիս վերայ շատէ գուրս կը բարկանայ տիկինը, այնպէս որ ձաղ մեացեր էր ջղային ցնցումմ պիտի գայր վերան. կ'երթայ տեղէն, մէկ իրցէն միւսը կը վազէ. իւր այրը կը տեսնէ հոն բարեկամաց հետ մէկտեղ նստած, և կ'ուզայէ որ իւր եսուէն գուրս գայ և այն անհնազանդ ծառային շուտով հանդարտիլ տայ։ Ամուսինն, որ կնկան խելքով մարդ մի էր, և իւր կնոջ վերայ չէր կրնար իշխել, ինչպէս և ոչ կիներն իւր ուզաւն վերայ, ուստերը տնկելով կ'երթայ նորա եսուէն.

և իւր բարեկամներէն պատուհասներ կուգան կը հասարակութիւն՝ որ տեսանելն եմ բանին վերջը ուր պիտի կայանայ։ — Իրրև, ասաց ան իրեն ծառայն, ինչպէս հանդարտակեցար դու գէմ կենալ կնոջս, մեր տղուն ուզածը շտապով։ — Տէր իմ, պա- տասխան տուաւ ծառայն իւր ծիծաղը բռնելով, մեր տղուն ուզած բանն ինչ որ է, եմ ոչ իւր սիրտին մայրը ասայ։ Դուն զի ես չեմ կրնար։ Քառասուն տարի շիտ։ Ջրի գոյլին մէջ լուսինը տեսաս։ և կ'ուզէ որ իրեն տամ զայն։ Այս որ լսեցին այրն ու բարեկամները, սկսան իրեն դալէն ճամբել։ և տղուն մայրն եւս եմ էտ բարկութեան մէջ էր։ ծիծաղը բռնեց։ և ամչցաւ իւր ըրածին։ բայց շատ լաւ եղաւ իրեն այս բանս։ Դուն զի ատոր վերայ ինքն եւս իմացուս՝ եմ սրբան գէշ կ'ընէր իւր զաւկին՝ չարիք դուրս սիրելով զայն։ ուստի անկէ յետոյ սկսաւ այնքան երես շտապ անոր։ խոստովանեցուցին և երբեմն եւս պատմել։ որով եղաւ սիրելի և խելօք տղայ մի։ Ճշմարիտ կ'ասեմ։ տղայ մի որ կամակոր և գոռոզ է։ անկէց աւելի անարդ և աւելի տղայ չկայիր։ Այս բնութիւնն ունեցող տղայոց վերայ պէտք չէ հոգ և խնամք ունենալ։ և շատ անգամ երեսի ինկնելով՝ իրենց արատաց կամացն և գլխաւորն եմ տղուած են։ Բայց բնդհակառակն հնազանդ և խոնարհ տղայք միշտ սիրելի կը լինին։ դիրենք կրթելու և աւելի տարու եւս յաջաւութիւն կ'ունենայ մարդս։ Դուն զի ասոյգ գիտէ որ իւր տուած խրատներն և դասերը օգուտ պիտի

ընեն անոր, եւ նոցա պատուէն օր մի պիտի ուտեն ինքը։

Աշակերտի մի շարժանքի հաղորդութիւնը։

Փիլիսոփայի մէկն իմանալով թէ իւր աշակերտներէն մէկը յանցանք մի գործեր է, մօտը կանչեց ոգայն և ասաց անոր. "Ես քո գործած յանցանքդ չեմ ներեր մինչև որ երեք տարի համբերութիւնդ անարգանք և նախատինք չկրես"։ Տղայն ընդունեց իւր վարժապետին դրած ապաշխարանքը. և երեք տարին լրանալուն, նորա մօտ գնաց որ թողութիւն առնու, ինչպէս որ կը յուսար։ "Սեղմիր, ասաց վարժապետը, դու եկար որ թողութիւն առնուս, բայց ես և ոչ հիմայ պիտի տամ, մինչև որ երեք տարի ևս քո գրածովդ նախատինք եւ անարգանք չկրես"։ Աշակերտը նորէն հնազանդեցաւ այս երկրորդ անգամուս փորձին, եւ հրամանը կատարելէն յետոյ "Հիմայ թողութիւն կը շնորհեմ", ասաց վարժապետը, և կրկնաս ասկէ յետոյ Ամէնք երթայ և իմաստութիւն ուսանիլ"։ Գնաց հոն երիտասարդն և մնաւ փիլիսոփայի մի քով։ Այս փիլիսոփայն սովորութիւն ունէր նորեկ աշակերտաց համբերութիւնը փորձելու համար նախատական խօսքեր կը գրուցեր նոցա. ուստի այս նորեկ աշակերտն դեռ առաջին անգամ գրպարտէն նեղուած կոխելուն և վարժապետին իրեն գէմ ըրած նախատինքները լսելով, սկսաւ ծիծաղիլ և ձայն

չհանել։ Զարմացաւ վարժապետն եւ ասաց. «Ես զքեզ այսքան ծաղր կ'ընեմ կը նախատեմ և դու կը խնդաս»։ Պատասխան տուաւ աշակերտը. «Ես երբեք տարի գրամատուէր եմ մարդոց որ զիս նախատեն. հիմայ այնպիսի մարդ մի գտեր եմ որ առանց գրամատի մի խնձմէ պահանջելու՝ առելի պակաս կը խօսի և կը նախատէ զիս, և չե՞ս ուզեր որ ծիծաղիմ։ — Մոմիր ներս իմ դպրոցս, կրկնեց փիլիսոփայն. դու կատարեալ ես և կրնաս ուսանիլ իմ դաս տուած գիտութիւններս»։

Ղանդագէր, սիրելի որդեակք իմ, այս գեղեցիկ օրինակիս հետեւելու։ Պարտք համարեցէք ձեզ վարժապետին խրատները մոռիկ ընելն, որոնք ձեր ուսման և ձեր բարի վարուց համար կուտան։ Իրաւ քիչ մի նեղութիւն է ձեզ, բայց գիտնաք՝ որ եթէ բռնելու լինիք, շատ յառաջ կ'երթաք գիտութեան և առաքինութեան մէջ և առատօրէն կը վարձատրիք։

Այս եւս գիտնաք, որ այն նեղութիւնները երկար չեն տեւեր. և ժամանակ պիտի գայ որ դուք ձեր գլխուն ազատ պիտի լինիք և հրամայող չպիտի ունենաք հիմակուան պէս, եւ վտանգի մէջ ինկնելու եւս երկիւղ չպիտի ունենաք։ Իսկ հիմայ եթէ ազատ լինիք, շատ գէշ կը լինի ձեզ. ինչպէս որ փորձն եւս կը հաստատէ. վասն զի եթէ տղայ մի ինքն իւր գլխուն թողուի, միշտ դէպ 'ի իւր կորուստը կը քայլէ կ'երթայ նա։

Վերջապէս որ և իցէ ազատութիւն՝ զոր

այս աշխարհիս մէջ մարդս կը վայելէ. հետը միշտ ընդդիմութիւն մի կ'ունենայ. եւ եթէ մէկն իւր ընկերաց հետ սիրով ապրիլ կ'ուզէ, պէտք է որ շատ անգամ ուրիշին կամաց խոնարհի, պէտք է անոյշ եւ հեզ բնութիւն ունենայ, պէտք է որ քան մի տեսնելու կամ լսելու որ լինի, չտեսնելու կամ չլսելու զարնէ. եւ յանձնառու լինի այն ամէն բաներուն՝ որ իւր անձնական պարտաւորութեանց եւ խղճմտանաց չդպչիր.

Այն մարդն որ ուրիշին կամաց ամենեւին հաճութիւն չտար, այլ հպարտութեամբ կ'ուզէ որ ուրիշներն ամէն պարագայի մէջ իրեն միաբանին, նա իւր անձն առելի կ'ընէ, եւ հետեւապէս՝ կամ շուտ կամ ուշ՝ իւր հպարտութեան եւ կամապաշտութեան պատիժը կը գտնէ.

ԳԼՈՒԽ ԺԴ.

Տէրտէր իրենց ընկերաց հետ ինչպէս պէտք է վարուին.

Ձեր ծնողքներէն եւ վարժապետներէն յետոյ կը մնան ձեր հաւասար ընկերները, որոնց հետ կը վարուիք, եւ որոնց հետ առելի կապակցութիւն մի ունիք. այս ընկերական կապակցութիւնը պէտք է որ սրտանց լինի, որպէս զի իրարու վերայ ունեցած ձեր յարգն եւ սէրը հաստատուն լինի, ուստի կը կախուի քան մեծի մասին ձեր կեանց հանգստութիւնն եւ երջան-

կութիւնը։ Այս տեղ պիտի ցուցնեմ ձեզ, սիրելի զաւակունք իմ, այն գլխաւոր պակասութիւնները, որոնցմէ հեռանալ պէտք է դուք ձեր ընկերաց հետ վարուած ժամանակ։

Առաջին պակասութիւն։

Այս ասած պակասութիւններուս առաջինն է գոռոզութիւնը, որով մենք զմեզ ուրիշներէն վեր կը համարինք, կամ ինքզինքնիս խիստ խելացի մարդոց տեղ դնելով, և կամ երեւելի և ազնուական ցեղէ զմեզ համարելով։ Այս պակասութիւնս՝ թող որ քրիստոնէութեան և զըլխովին հակառակ է, որ կը հրամայէ խրթեւ եղբայր նկատել զիրար, այլ և մեծապէս առելի կը ցուցնէ զմեզ մեր ընկերաց աչքին, եւ պատճառ կը լինինք արհամարհութիւն կրելու անոնցմէ, ինչու որ մենք զիրենք արհամարհելու խիղճ չենք ըներ։

Գոռոզութեան դատիչը կրոց երիտասարդը։

Երեւելի վարժարան մի մէջ կրթուող երիտասարդ ազգոց հետ մի ազնուականի ազգ եւս կայր, որ իւր ազնուութեան վերայ խիստ կը հպարտանայր, և ինքն իւր անձին վերայ միշտ պարծենալով՝ կարծես թէ յերկնից ինքած էր։ Բայց նորա այսպէս մեծ մեծ խօսելուն չկրնալով համբերել ընկերները, սկսան առելութեամբ նայիլ անոր երեսը։ Այսու ամենայնիւ

շատերն եւս տեսանելով թէ նորա ինքնապարծութիւնք և հպարտութիւնք թեթեւամտութեան նշաններ էին, կը խղճային իւրեանց, բայց օր մի եւս հպարտութեամբ այնքան խոշոր խոշոր բրդեց, որ ամենքն սկսան արդարել իրեն դէմ. Իւր գասընկերներէն մին եւս, որ հասարակ մարդու որդի էր, և գոռոզ ոգոյն հետը միշտ կը զուարճանայր, իւր հաւասար ընկերը կարծելով, կամ համարելով թէ դպրատան մի բոլոր աշակերտները հարուստ և աղքատ՝ ամենքն հաւասար են, սկսաւ անխարդախաբար վարուիլ հետը, ինչպէս որ միւսներուն հետ կ'ընէր. բայց մեր հպարտ ազնուականը կարծելով՝ թէ այնպէս վարուելովն իւր պատուէն զրկուած կը համարուի, արդարեցաւ և գոռոզութեամբ ու իշխանութեամբ մի ասաց. "Այդ ի՞նչպէս վարուիլ է, ասիրք. չե՞ս գիտեր որ ես պէտի մի զաւակ եմ"։ Այս մէկ ջուխտ խօսքով բոլոր աշակերտաց առջեւն խաղք եղաւ. մէկ մ'ալ նայիս ամենքն շրջս կողմը հաւաքուեցան, որոնք կեղծաւորութեամբ գնանէն բարեւ տալով անոր, իւր պատուատէր անունն երկու մէկ չէին ասեր կը կանչէին ականջն ի վայր։ Այսքան բաւական չեղաւ, այլ քանի որ գասընկերներէն մին իրեն հանդիպէր, նոյն կեղծաւոր քաղաքավարութեամբ կը պատուէր զինքը Պէյ կանչելով։ Վերջապէս քանի այն ատենն հասաւ որ գոռոզամիտ ոգոյն այլ չկրնալով համբերել նոցա ըրած ծաղրաբանութեանցը, ատիպուեցաւ հեռանալ վարժատու-

նէն. և փորձով ուսաւ թէ՝ սնապարծութիւնն և հպարտութիւնն ուրիշ բանի մի օգուտ չունին, բայց եթէ ամենաւն աչքին առելի ընելու զանոնք՝ որ կը ցանկան ուրիշներէն վեր գտնուիլ։

Հետևաբար ինքզինքնիս ոտքերտաւան վարմունքներն եւ արհամարհոտ գէմքով մարդուն երես նայիլը, որով կ'երևցնէ թէ ուրիշները նախատելու համար կ'ընեն։ Անոյշ, քաղաքավար եւ քաղցրաբարոյ եղէք ձեր գտնուելիքներուն գէմ, և գիտցած եղէք որ դուք նոցա հետ ինչ կերպով որ վարուիք, նոքա եւս նոյն կերպով կը վարուին ձեզ հետ։ Եթէ դիրենք պատուէք՝ նոքա եւս զձեզ կը պատուեն, իսկ եթէ առէք՝ նոքա եւս զձեզ կ'առնեն, վրէժխնդիր կը լինին, մինչեւ որ ձեր քիմը կտրեն։

Գոռոզ ոգու վնասներէն։

Փարիզու օրագիրը Ճանապարհորդի մի քանի լսելով՝ հետեւեալ պատմութիւնը հրատարակած էր, ուսկէ մենք եւս քաղելով այս տեղ կը գնենք։ «Գոլոգայնն եւս գտնուած, կ'ըսէ Ճանապարհորդը, Գարգասոնայէն անցայ, ուր տեղ միայն չորս տան մնայի. և պանդոկի մի մէջ նստած կրապատէի որ տեղւոյն պատրաստեն, ուր ուրիշ շատ Ճանապարհներ եւս կային։ Իմ հանելիս քիչ մի յետոյ, Փարիզու կառքով երիտասարդ մի եկաւ նոյն պանդոկը, պոռնէն ներս մտաւ, վայելուչ և շնորհքով հագուած,

պզուած, և առանց մէկուն քարեւ տալու՝ անցաւ հայրիկի մի գիւղը, և իւր շինուս գեղեցկութիւնն վերայ փքանալով և օգնական մի երգելով, սկսաւ քարոզ այն ամէն գանձաւորներուն արհամարհութիւնը մի գիտել ու նայիլ յաւիտեան մինչեւ ցգրեսիւն։ Ուրիշ երիտասարդ մի եւս պարզ հագուստով, որուհիւն մէկ կողմը նստած գիրք մի ձեռքը կը կարդայր բարբարոսիւն խելքն նորա տալով, և ամենեւին աչքը վեր չէր վերցներ երիտասարդին նայելու, որուն գժտրը գալով նորա այնպէս անհոգ անտարբեր կենալը, կը մտանոյ քովը, կէս բերան բարեւ մի կուտայ ու կ'ասէ, "Հրամանքնիդ կը կարդաք այդ ամէն։ — Հրամանքէդ, ինչպէս որ կը տեսնէք, պատասխան տուաւ երիտասարդը։ — Ի՞նչ գիրք է կարդացածնիդ, եմէ հարցնելու ամօթ չէ։ — Կատակերգութիւն գիրք է։ — Ի՞նչ է անուն, ինչ նիւթի վերայ է, որուն այսպէս խելքերնիդ տուած էք, եւ ամենեւին քնկերութիւն չէք խառնուիր։ — Հէքիաթագիր գրուած է. պատասխանեց կարդացողը՝ քմծիծաղելով։ Հարցնողը խիստ ազնիւ իրանցուս նորա միտքը, կատակագիր կարդացուս երեւն, եւ իմամոմելով մի ասաց անոր։ "Կրնայի գիտնալ արդեօք ձեր անունն, որ այսպէս արհամարհութիւնը պատասխան կուտայ ինձ։ — . . . . ինչ տարբեր եմ, որ . . . . այս ինչ գունդը կ'երթամ։ Գուք իմ անունս պէտք է որ ճանչէք։ Գուցէ ձեր հայրը շատ անգամ կուգայր իմ տունս զանազան կերպարանքը

ծախելու »։ Ասոր վերայ սրահին մէջ որքան մարդ որ կայր՝ ամէնքն եւս քրքրոյ մի ձգեցին։ Պարոնին երեսին գոյնը նետեց, և առանց բերան բանալու անհրեւոյթ եղաւ անկէ »։

Հանեսա Թագաւորը։

Ակադոկղէս Վիկիլիայի թագաւորը կաւագործի մի որդի էր, բայց իւր անձնական արժանաւորութեանց համար թագաւորական իշխանութեան հասեր էր։ Այս առաքինի իշխանն իւր սորին ատրճանէ լինելը չմոռնալու համար, կ'ուզէր որ ամէն օր իւր սեղանին վերայ գրուին ոսկի եւ արծրիմէ ամանները։ Հետ մեկուեղ հողէ ամաններ եւս, զորոնք իւր սեղանակից երիտասարդներուն ցուցընելով. «Ահա, կ'ասէր նոցա, այս ամաններս եւս իմ ձեռքս կը շինէի ժամանակս։ Եթէ հիմակուան գործածածներս ասոնցմէ աւելի սուղ և պատուական են, և եթէ կաւին տեղը հիմակ ոսկի եւ արծաթ կը բանեցընեմ, այն իմ անխոնջ աշխատութեանս և իմ քաջութեանս արդիւնքն է »։

Օրինակ ոգեին հանեսութեան։

Փոլ ասպետն, որ լուսապարար կենկան մի որդի էր, փոքրիկ նաւակի մէջ ծնաւ ոսկոյի փոմբրիկներու ժամանակ։ Երբ մեծացաւ նաւաստի նաւու մանչ եղաւ, եւ յետոյ մինչեւ ծովապետութեան աստիճան հասաւ։ Օր մի

Պարսկերեն նաւահանգիստը ժուռ գալով նաւարանի մի քանի պաշտօնեաներուց հետ. նաւապետ մի տեսաւ, որ իւր հին բարեկամն էր. և կը ցանկայր այլոց պէս զինքը տեսնելու, այլ չէր համարձակեր նորա մօտենալու. Փոխ ասելն իմացաւ նորա միտքը, մօտեցաւ քովը բարեկամաբար և ասաց. «Ինչպէս հեռու կը փախչիս ինձմէ. գուցէ կը կարծես դու՝ թէ բաղդը մոռցընել տուաւ ինձ իմ բարեսիրտ բարեկամներս»։ Ելքն իւր հետն եղող մարդկանց գաղտով. «Պարոններ, ասաց նոցա, ահա իմ հին ընկերներուս մէկը։ Եթէ բաղդն ինձ յաջող և նորա հակառակ գնաց, ես այս բանիս համար սորա վերայ ունեցած յարգս չեմ պակասցըներ և առջի աչքովս կը նայիմ։ Համբերեցէք մի քիչ որ նորա հետ առանձին բերան առ բերան խօսակցիմ»։ Ամենքն մէկէն զարմացան նորա այնպէս ազնուական և խոնարհ վարմունքին վերայ։

Ամենուն քով ասելի են այն մարդիկն, որ կը ջանան ծածուկ պահել իրենց առաջին անարգ վիճակն, և իրենց անմիտ փառասիրութեամբ ծաղր և ծանակ կը լինին ամենուն։

Երկրորդ զրկութիւն։

Երկրորդ պակասութիւնն, ուսկէ պէտք էր հեռանալ, այն փառասիրութիւնն է, որ առաւել ազայոց վերայ կը տեսնուի, այսինքն ուրիշ չին յանցանքն իւր ընկերաց յայտնել։

Այս աղքատին օրինակն, որ իւր պարկեշտութեամբն առատորէն և արդարութեամբ վարձատրուեցաւ, ապէկ փարձ մի է, որ մեր անձնական շահուն իրաւ մի շտալէն Ի զատ, շատ անգամ ես խիստ օգտակար կը լինի մեզ առատաձեռնութիւնն։ այսպէս չէ ընչից ցանկութիւնն և գանձ դիզելու սէրը, զոր ունեցող մարդն ազատ չէ երբէք թշուառութիւն-

ներկ։ Ա.յս կիրքս շատ անգամ անիրաւութիւն ընելու եւս պատճառ կը լինի։ Եւ կը տեսնեմ որ գրամի վերայ եղած շափագանց սէրը։ մեղաւորութիւն մի կուտայ մարդոյս որպէս որ իւր գոյքն աւելցնելու։ զոր սովորաբար իւր պատուոյն եւ բարեպաշտութեան վնասովն կրնայ ձեռք բերուիլ։ Փարիսեանութեան սէրն ոչ միայն արդարութիւնն եւ պատիւն կը մոռցնէ։ այլ եւ մինչեւ բնութեան զգացմունքներդ խափանել կուտայ նոցա սրտին մէջ։ ուր պէտք էր որ խոր արմատացած լինէին։

ՑՈԳՈՒԱԾ Գ։

Պատուոյ եւ Իշխանութեան Ցերից։

Գուցէ դուք կը կարծէք՝ թէ մեծ իշխանութեանց հանդէպ ունեցեալ սէրն պատուաւոր են նորա համար որ ատոնցմէ կախեալ մարդոյն վերայ են։ Ա.յլ այնպէս չէ։ սիրելի որդեակք իմ։ եթէ այս դրամանց մեծ երեւցող անձինքն իրենց իշխանութենէն եւ պատուէն չ՚զատ՝ ուրիշ արժանաւորութիւն մի չունին։ մարմի է ասել՝ որ անոնք ճշմարտապէս արժանաւորութիւն չունին։ Կը նմանին այն արծանին, որոնք պատուանգան առնելնալու համար՝ ոսկեղենները աչքին համակցած կ՚երեւին։

Ա.յ։ սիրելի որդեակք իմ։ իշխանութիւնը մարդոյս արժանաւորութեան ուրիշ բան

չեն կրնար բնել. այլ ոչն մեկոյն՝ զոր պատուան
դանելեր զանձանելերուն արձանին կ'ընեն.
Որոնք թէ ոչ ու և հեռատեսոց սեռանոցին աչքին
խիստ մեծ կ'երևցնեն, քանզի մատանի նայողին
խիստ փոքր կ'երևի. Ամենեւին մեկին իր
իշխանութենէն Հատուցը պատուոյ չի գոյան. այլ
մեկոյն բարի փարձանելերովն արձանին եղած է
պատուոյ.

Թոգաւորի մի խնամուն քարձանին իր պիտոյն Ոտ.

Ասիոյ թագաւորներին մին խնամեալով թէ
իր օրդին անկարգութեան տուեր է զինքը.
կանչեց մատն, և իր գերիներուն մէջէն ամե-
նէն անարգն եւս բերել տալով, երկուքին եւս
մերոյին լամբերը մերկացուց. և զարձան զէգ
'ի օրդին տակայ. «Դայլ և ոչ ես մատանի
ապրա մարմնին, յետոյ քա մրոյ զարձան աչքդ
և նայէ՝ թէ ի՞նչ խորութեամբ կայ իշխանի մի
և գերիի մէջ. Ամենեւին զանազանութիւն մի
չեն կրնար գտնել. այլ մարդկոյց կարգանել կը տես-
նես որ ապրա հեռ Հատատար եւ. քանզի եթէ
այս գերիին ոգւոյն մէջ կարող լինէիր թափան-
ցել. կը տեսնէիր որ ապրա Հայրին քան զքոյդ
աւելի գերազանց է. մատն դի ինչ խելքդին
անկարգութեան եւ մոլութեան չարար արանք
զքեզ պատուէդ կը ձգեն և փոխարդ կը յանդ-
նեն ամենուն աչքին. Մի խորութիւն ունիս
իշխանութեան ոմն չգերազանցենէն՝ ապրա մէջ
խնդիրդ կը տեսնես. այլ միայն քեզ թէ՝ ար-

քան որ իշխանապանծ վիճակի մէջ ես, այսու-
ամենայնիւ ամենեւին անարգ գերիի մի ես
իշխաս ես, եթէ դու քեզմէ առելի առաքինի
լինիս ։

Երիտասարդ իշխանազունը քանի մեծամեծ
բարեսէր լինելով, շատ ազատ բրտաբերան այս
խրատս, և առանց գժուարութեան խնդրա-
մէ ամենակատար արժանաւորութիւնն է միայն
որ Ճշմարտապէս մարդ մի ուրիշ մարդէ կը զա-
նազանի ։

Արանց կը ցանկամ ես, սիրուն արդեանք
իմ, որ դուք ես այս իշխանազուն ազգուն պէս
հանճարաւոր առած Ճշմարտութեան ։ Այն մա-
մանակ, այո, ձեր խնամատարութեամբ կը
ջանաք երեւելի լինիլ, և չէք ցանկար ունենալ
անարգ մարդոց, որոնք մեծ երեւոյթս հանար
անարգութիւն և խորամանկութիւն կը բանե-
ցընեն ։ Եւ որոմիկներս ոչ այս միջոցներով
չկարենք իրենց գիտաւորութեան հասնելու ։
ուստի ուրիշին պաշտպանութեամբ կ'աշխատին
մեծ պատիւներու հասնիլ ։ քաջց պաշտպան
եղող անձինքն ոչ երբեք կրնան ասել նոցա
Ճշմարիտ արժանաւորութիւն ։ Իսկ դուք ասո-
րութիւն ըսելէ հիմակուց ձեր վերայ որոնել
երեւելի լինելու հանար հարկաւոր եղած մի-
ջոցները ։ կ'ուզեմ ըսել ձեր խոհեմութիւնն և
խելքն ազիկ բանելու գործածելէք ։ և կանու-
նաւոր ու իսնամատն քնիմացէք մի ուռնելէք ։

ՑՕԴՈՒԱԾ Դ.

Քաջութեան եւ դատերակցական գործոց վերայ։

Երիտասարդ ազայոց աչքերը դիւրաւ կը-նան խաբուիլ, և հնչակէս որ փոքր ազայոց մեծ մասը փայլուն և շողշողուն իրերը կը սիրեն, դուք եւս կը զարմանաք այն կարգէ դուրս դիւցազանց վերայ, որոնց յաղթութիւններն և աշխարհակալութիւնները գովութեամբ կը յիշատակուին պատմութեանց մէջ։ Այլ գիտցիք որ ամենէն մեծ աշխարհակալն արհամարհութեան արժանի է, երբ բռնակալ ժողովրդեան կամ ազգի տիրելէն յետոյ, ինքն իւր կիրքերէն կը յաղթուի, եւ արդարութիւն ու մարդկութիւն ոտքի տակ առնելով՝ այն յաղթութիւնը կը սատանայ։

Աղուտակի մի Խնջոցի դատաստանը։

Մեծն Աղէքսանդր շատ ընդարձակ երկիրներու տիրելէն յետոյ, ուր տեղ իւր պատուասիրութիւնը կ'առաջնորդէր իրեն, հարցուց ծովատապատակի մի, զոր ինքն գերի բռնած էր, թէ ինչ իրաւունքով ծովերուն վերայ ասպատակութիւն կ'ընէ։ Որուն պատասխան տուաւ։ «Նոյն իրաւունքով՝ որով դու բոլոր աշխարհս աւարառութեամբ կը կողոպտես։ բայց ես փոքրիկ նաւու մի վերայ միայն կը յարձակիմ՝ և աւազակ կը համարուիմ, դու որ անթիւ և զօ-

բուռոր նաւաստիներով կը յարձակիս կը թալնես՝ աշխարհակալ կը կոչուիս։ Թերացի է ուռած պատասխանն, որով պէտք է համոզուիլ թէ մեծամեծ գործերը եթէ արդարութեան վերայ հիմնուած չեն, մեծ յանցանքներ են։

Պէյաք ասպետին գեղեցիկ խօսքերը։

Պէյաք ասպետին մեռնելէն յառաջ ըրած խօսակցութիւնէն յայտնի կ'երեւի թէ այսպէս կը մտածէր նա։ Իւր թագաւորին համար պատերազմելու ժամանակ սաստիկ վիրաւորուելով ծառի մի տակ փռուելը պատկեր էր։ Ուրիշներ դուքսը, որ Գաղղիացւոց բանակը կը հալածէր, նորա մատէն անցնելով ճանչցեց զինքն և քովը մտնելով ասաց անոր թէ՝ «Շատ կը ցաւիմ այդպիսի վիճակի մէջ զքեզ տեսնելով»։ Պէյաք զօրավար պատասխան տուաւ. «Պարոն, իմ վերայ պէտք չէ որ ցաւիս, վասն զի ես իրրեւ պատուաւոր և հաւատարիմ զինուոր կը մեռնիմ. այլ քո վերայ ցաւիլ պէտք ես, որ թագաւորիդ և հայրենեացդ դէմ կը պատերազմիս»։ և այսպէս ասելով հոգին աւանդեց։

Հիմակուց սովորութիւն ըրէք, սիրելի որդեակք իմ, այս իմաստուն առածներուս վերայ կանոնաւորել ձեր գաղափարներն և ընթացքը։ Լաւ հասկնացէք միշտ պարտաւորութիւնն քան զփառքը, և մանաւանդ ասոյդ գիտցէք որ ճշմարիտ փառքն իւր պարտաւորութիւնները կատարելու մէջ կը կայանայ, և ամենեւին մի

խարտեշք պատուասիրութեան տուտ հրապոյրներէն։ Վասն զի պատուասիրութեան կիրքը շատ քանիներու յոյս կուտայ, բայց բնաւ օգուտ մի չունի. և մեք ամենն օր կը տեսնենք որ խիստ վեր բարձրանալ ուզող մարդիկ մեկէն վար ինկնելով, ինքզինքնին կը կորանցնեն միշտ։

ՑՕԴՈՒԱԾ Ե.

Տաղանդաց եւ հանճարոյ ցերայ։

Տաղանդն և հանճարը սովոր են իրենց պայծառութեամբ մարդոյս աչքերն առնուլ. և ոչ թէ զանոնք ունեցողներն յարգ և պատիւ կը դառնան, այլ ընդհակառակն տուելի կը լինին եթէ չարաշար գործածեն։

Քանի մի կայ կ'ասեն թէ՝ գէշ մարդոյ մի ունեցած հանճարը, յիմար մարդու ձեռք եղած թրի կը նմանի։ Զկայ հեղինակաց մէջ անկէ վատն և ցեւատակարն, որ իւր խելքոյ հաւանելով՝ այլոց սովորութիւնքն և կրօնքը կ'արհամարհէ։ Այս ոգին ունեցող հեղինակները կը նմանին հաստաբակութեան թոյն խնջրնողներու, վասն զի իրենց դիտաւորութիւնն կարդացողներուն միտքն և սիրտն ապականել և խանգարել է։ Կը տեսնեմ նաեւ որ ասանցմէ մին երբ ուշը վերան բերելով մտածելու լինի անգամ մի՝ թէ ինչ մեծ շարութիւն յառաջ կուգայ իւր գրուածներէն, պարտաւորութիւն մի իրեն

կը հատարէ առջի գրածները մերժելով և հրապարակաւ զանոնք ուրհատարհելու։

Ծերակուտական հրամանին ցրան գնացեալ ցոյը։

Ալասունեանն ոգուն մէկը Տոկէ անուն, դիպուածով առաւել պատմութիւն մի կարդալով, ուղեց որ ինքն եւս ուրիշ պատմութիւն մի շարադրէ նորա նման։ և որոմիներուս սուր միտք ունէր, յաջողեցաւ իրեն գլուխ հանել մարին գրածը։ Լրացընելէն յետոյ իւր մտքը ցրցուց զայն. բայց մայրը Ճշմարիտ քրիստոնեայ լինելով՝ քանի մի երես կարդալով, դարձաւ ասաց անոր. «Ո՛հ, որդեակ իմ, դժբախտ մարդ մի կը լինէիր դու, եթէ Աստուծոյ տուած տաղանդն այսպէս չարաչար գործածես»։ Տղայն հնազանդութեամբ մտիկ ըրաւ մօրը զրուցածին, և Ճշմարիտ առաքինութենէ դրդեալ՝ զատեց իւր անձնասիրութիւնն, և իւր շինած փոքր գրքոյկը կրակը նետեց։

Զգուշի նկոց հնչեալը։

Լսեցէք, որպէս շինած սիրուն առակները շատերուն յայտնի է, դժբաղդութեամբ քանի մի անխելքուշ փոքրիկ պատմութիւններ դրեր եւ տպել տուեր էր։ Յետոյ ծանր հիւանդութեամբ պառկելով, թողար իւր գործած մեղքերը խոստովանեցաւ, և երբ վերջին թոշակն ընդունելու պատրաստուեցաւ, թողութիւն

խնդրեց Աստուծմէ՝ ի ներկայութեան քանի մի երեւելի անձանց Գաղղիոյ Հնմարանին, խոստովանելով անկեղծութեամբ բրած զգիւմբ նոյն պատմութիւնքը գրելուն համար զրոնք սրտանց կ'ատէր, և խոստացաւ որ եթէ առողջանայ, իւր հանճարը բարբարոսին բարբարեան և աստուածպաշտութեան գրքեր շարադրելու նուիրէ։

Եւ որպէս զի մարդս իւր ունեցած տաղանդներուն համար ուրիշին յարգանացն արժանաւոր լինի, հերիք չէ միայն՝ ի շարն չգործածել զայն, այլ եւ պէտք է գործածել զայն փոխայրենելէն։ Մարդոյս խնայուութեան ամենէն մեծ զարդը պարկեշտութիւնն է, որու վերայ հետեւեալ առակը շինած է մեկը։

Ա Ռ Ա Կ

Արամազդ, Պարկեշտութիւն եւ Միւս Առաքինութիւնք։

Արամազդ հնամանուոյ մեծ աստուածը, իւր աստուածային պայծառ մտաց հայելիին մէջ ահագին զառաքինութիւնն, ինչպէս որ միշտ իւր մտքին չէր զատուեր, որուն բոլոր աշխարհս երանութիւն կուտայ, և ամէն մարդ աշխարհիս մէջ ունենալ կը պարտաւորի։ Ցնծայ երբ մահկանացուաց ազգն տկար ուրիշ երկրին վերայ։ Առաքինութիւնք հեւաւորութեամբ նորա բնակարանը գնացին ուրախ դէմքով, և ամէն

մէկն կ՚ասէր անոր թէ՝ Եւ զքեզ երջանիկ պիտի ընեմ։ Պարկեշտութիւնը՝ որ սովոր է միշտ ամենէն եռեռ մնալ, ինքն եւս ուզեց նոցա գացած տեղն երթալ տեղ մի գտնել. բայց ամենեւին պարապ տեղ չէր մնացեր։ Ամենքեան օրհնեցին սիրտը կոտրած և ամշնալով այս դիս և այն դին աշուքները կը պտտցնէր և տեղ մի չգտնելով՝ Եւ պիտի դառնայր իւր երկնային բնակարանը, երբ շատուածոց Հայրն, մարդասիրութեամբ անոր նայելով, «Աղջիկս, ասաց, մոլիկ ըրէ, իմ սէրս քեզ ցուցընելու համար ինչ դաշինք պիտի ընեմ քու հետդ։ Եթէ քեզ համար, սիրուն աղջիկս, քու քոյրերուդ պէս բոյն մի կամ օթարան մի չմոռցի քեզ որ ունենաս այն բնակարանին մէջ, ուր տեղ վայելեսիս և ապատանք մարդն իւր օրոցքը դրած է, բայց գիտցիր որ անոնցմէ աւելի մեծ պատիւ պիտի ունենաս դու։ Քու ընկերներդ ամենն մէկերնին առանձին իշխանութիւն ունին. իսկ զքեզ Ողորմութեան թագաւորն իւր մանուսոր սիրոյն համար այսօր ամենուն վերայ թագուհի կը կարգէ»։ Այսպէս ասաց Աբրահամդ վերոյիշեալ կերպարանքը, և Պարկեշտութեան ձեռքէն բռնելով նաւեցոյց յամբոն։ Այն ժամանակ բոլոր Առաքինութիւններն երկրպագութիւն ըրին նորա գլխոյն։ և նոր թագուհւոյն յաւիտենական հաւատարմութիւն երդուցնելով, մէջերնէն և ոչ մէն կարող է նորա ամբոխը նաւել. և ոչ առաքինութիւնը յարգ մի կ՚ունենայ, եթէ Պարկեշտութիւնն նորա հետ չէ։

Զիրաբ առանց զարկի շարաժամեան՝ առաքի. նաժամբունեալքը զմարդ անապարծ, յանձնապա. տան, և կամակոր կ'ընեն, և առանց այնպիսի զարկաժամբունեալք են, զոր եթէ մէկն ունենայ, ամենուն առաջի կը լինի։

Պատիկ գոց անապարծ։

Մենեզբատէս անուն բժիշկ մի անապար. ժամեալ անուն գրած էր իրեն Արքայէ Փիլիպ մի քանի հոգի բժշկելուն համար, զոր իւր յա. ջողակամեան կուտայր։ Փիլիպպոս՝ Մեծն Աղէքսանդրի հայրն խանդագով գայր, ուզէր հանկարծակի անոր իւր ծիծաղելի գուռզամբ. նէն, ուստի օր մի 'ի ճաշ հրաւիրեց զանիկայ, և զատ սեղան զատրատուել տալով նորա համար, հրամայեց որ միայն խնկատնան մի գնեն ելեալ՝ հանդերձ ծխով։ Բժիշկն առջի բերեալ կարծեց թէ իրեն զատրա էր այն, բայց յետոյ տեսանելով՝ թէ առանց կերակուր բերելու երկար ատեն կը սպասէր անօթի, խնդրաս խակցն այն ծխած խնկին նշանակամբունը։ և բոլոր հրա. ւիրելոց քով խոզալով և ծաղր լինելէն յետոյ, կարանցուց սեղանին մօտ իւր գնելիք տիրոջ. սին հետ միասին բոլոր իւր համբաւը, և ինքն իրեն միայն ասեմ, որպէս զարդարապէս արժա. նի եղաւ իւր անարժանամեանէն։

Այնքան բնաւորմբունն հանգամանքներ ուսած է մեզ, զգոյշ կենցաղք։ Կ'ապաշնամ, որ անոր անապարծամբունն չունենաք։ Զեր հր.

պարտութիւնք բոլոր ձեր ունեցած փառքն ու պատիւը կը փճացնեն. ապականութիւն կը գրկեն. զգոյշ կեցէք նաև խիստ բարձրանալու-թենէ. Առակը կ'ասէ թէ՝ Վերամբարութիւնն ամէն ինչ կը խանգարէ. Եւ իրաւունք ունի է. Ընդարձակն երբեմն մի վերամբարութիւն հանելու յոյս կուտայ մեզ, բայց աւելի կը նուազացնէ. և երբեմն ամօթով կը դադրի. Ուրիշ պակասութիւն մի եւս կայ. որու մէջ շատ ան-գամ կ'իյնին մարդ. այսինքն խնայասիրութիւնը քան զհատուցումն և ծշմարտապէս ապատիպ եղող յանձնութիւնները լաւ հատուցել. Օրինակի համար. շատ մարդիկ խելացի մարդուն պա-տիւ կուտան. և զգուշութիւն մարդուն չեն տար այն փոքրիկ յարգանքն՝ որս ապականուի է. Առաջնոյն ունեցած խելքն. որ այնքան մեծ հատուցուած է. շատ մեծ մարդոց կորուստն պատճառ եղած է. և դոյն խելքն է զանոնք կոր-ուստեցնողը. իսկ ծշմարիտ զգուշութիւն մարդը շատ անձինք շիտակ և ժուռ գործերէ ազա-ուած է և կ'ազատէ միշտ ամէն օր նաև սու-տին ասոնցմէ եղող.

Ամարին գեղեցիկ ցերեկ

Շատ մարդիկ կան որ ոգւոյ գեղեցիկու-թիւնքն և հանճարեղութիւնքն երբեմն չունե-լու ամենեւին հոգ չտանելով. կը նային որ մար-մնով գեղեցիկ և շնորհալի երեւին. և այս բանս ստանալ կանանց մէջ կը ուսումնասիրեն. որոնք գե-

զեղեցկութիւնք գերազանց արժանաւորութիւն մի կը հաճարին։ Բայց միայն առանք չեն այսպիսի յիմարական մտաց ունեցողներբ։ կան շատ երիտասարդ ազգք եւս, որ Աստուծի տեղ դրած են զիրենք. որոնք իրենց ազգս որ զիրենց վերայ գտուղանալով անրարգութեան կը վերաբերեն կ՚ալէ վերկին, որպէս թէ չկան իրենց պէս աշխարհիս վերայ ուրիշ գեղեցկագէմ մարդիկ։ Բայց այս բաներս ունայնաւորութիւն լինելը ձեզ իմացընելու համար, կը հարցընեմ՝, սիրելի որդեակք իմ, կը պատուէիք դուք այն արձանն որուն դիմաց գծագրութիւնները կանգնաւորելիս, կամ թնական և կենդանի գոյն ունենար, և նոյն արձանը շեշտաւոր կենդանի մը առաւել կը հաճարէիք դուք, որուն երեսն այնքան գեղեցիկ չլինէր նման արձանին, անտարակոյս ոչ։ Ապա՝ դիտցիք ուրեմն որ երիտասարդ մի, որուն միայն դէմքը գեղեցիկ է, բայց գոմէրի յատկութիւն մի չունի, այն արձանէն աւելի յարգոյ չկրնար լինիլ։

Կուռքի մի դատքերը։

Կառապաշտութեան ժամանակ տաճարի մի մէջ կուռքի պատկեր կայր անենման գեղեցկութեամբ։ Քրիստոնէութիւնը խիստ սիրով վառուած էր այս պատկերին և Աստուծոյ տեղ դրած կը պաշտէր։ և պատիւ ու մեծարանք կուռացոյր անոր։ Որ մի դիպուածով գեղեցիկ մի արձան եւ կատր կատր եղաւ, եւ ամենքն եւս զարմացան

մեացին տեսանելով որ նորա գեղեցկութիւնն ընդունայն և արտաքին էր, մէջը դատարկ և միայն գարշելի մինեթով լեցուն։ Այս կուռքը շատ կանանց եւ անմիտ երիտասարդներու պատկերն է, որոնք արտաքին կերպարանաք կը փարիսիան կը նազին, և ներսերնին հաստատուն բան մի չունին. ուղղութիւն լեցուն է հոգմով և անմիտ մտածմունքներով, որ կը նմանին արձանին փորին մէջէն դուրս ցատկող մինեթուն։ Երբ մտէն քննելու լինիք, աւելի արհամարհութիւն մի կ'ունենաք նոցա դէմ, քանզի որ այն հայակարգ արձանը տեսողներդ ունեցան, երբ կործանելէն յետոյ տեսան որ այն առջի տեսածնէն շատ տարբեր էր։

Եթէ դուք բնութիւնէն այն արտաքին գեղեցկութիւններն ունեցած էք, որոնք ուրիշներուն աչքերը կը խաբեն, մի պարծենաք և միտքերնիդ մի դնէք թէ ձեր գեղեցկութեան համար ուրիշները պարտաւոր են ձեզ պատուել։ Այլ ձեր պատիւն եւ փառքն այն բաներուն մէջ խնդրեցէք, որոնք գեղեցկութենէն աւելի կը գիմանան եւ հաստատուն են։ Դուն ոմանք եւս որ գեղեցկութիւն մի չունին, և կարծեն թէ զարդարուելով և շինծու գեղեցկութեամբ երեսնին այլ և այլ ներկեր քսելով բնութենէ ունեցած պակասութիւնին կը ծածկեն։ Միտքերնին այնպէս կը դնեն՝ թէ դիրենք տեսնողները զարմանքի մէջ կը մնան, եւ կարծեն թէ ամենէն աւելի պէտք է որ զիրենք պատուեն և յարգեն ամեն մարդիկ։ Նորա համար որ հա-

գած հագուստներն վայելուչ է և զարդարանք-
նին պատուական և թանկ գնով։ Բայց յետա-
գայ երկու պատմութիւններն որ պիտի գրու-
ցեմ ձեզ, լաւ կը հասկցընեն այս պատուոյ
արժանի համարուած սուտ կարծիքները։

Պարոնենկոս տղու մի գոռած սնոբգանը։

Մեծն Պետրոս Բաւսաց կայսրը, Վէրսայլ
քաղաքը գանուելով, և սենեակով թէ պալա-
տին մէջ երիտասարդ պարոնին մէկն ամեն օր
գանագան սեղան նոր զգեստ կը հագնէր, ասաց
իւր մօտն եղողներուն. «Կ'երեւի թէ այս գաղ-
ղիացի տղան իւր գերձակէն գոհ չէ»։ Ինչ-
սնափառ տղան մեծութիւն պիրելուն համար
եղած գոմէշտը։ Ինքը կարծէր թէ այն օտա-
րական իշխանը պիտի զարմանայ իւր վերայ,
բայց ընդհակառակն իշխանը ծաղր ըրաւ զին-
քը։

Ասոր նման ուրիշի մի հոգած սրհամարհութիւնը։

Բրուսիոյ Փրեսերիկոս Թագաւորին ծառա-
ներէն մին օր մի նարա գիտցն եկաւ ձեռք
մի ընտիր զգեստ հագած մարմնոյ գունով,
կարծելով թէ այն գեղեցիկ հագուստով հաճոյ
պիտի լինի իւր Թագաւորին աչաց։ Նարա սիրած
գոյնն լինելուն համար։ Բայց տեսաւ որ խու-
բուեր էր. ուստի դուրս եկաւ և ուրիշ պարզ
հագուստով նորէն ներս մտաւ։ Այն ժամանակ

Գրեգորիոս անոյշ դեմքով մի անոր գառնալով՝ ասաց. «Զրուցէ ինձ, բարեկամ, ճի՞ էր այն անմիան որ քիչ մի յառաջ գիմացս եկաւ մարմնոյ գոյն զգեստ հագած»։ Վասայն շիրբցու քնաւ պատասխան տալ. բայց խիստ լաւ հասկցաւ թէ՝ ընտիր հագուստներով պատիւ մնալն՝ գիւր անմտութիւնը յայտնել է։

Պէտք է որ մեք եւս հագուստներն և զարդարանքներն այնպէս համարիմք, ինչպէս որ կը համարէր Ալիմանոս ն. Արքեպիսկոպոս (Պատմիա) թագաւորը, որ մանկանուանք Գիտուն կը կոչուէր։ Երբ ասացին իրեն՝ թէ ժողովրդին առջեւ խիստ նուաստ հագուստով կ՚երեւի, որ չը վայելէր իւր թագաւորական իշխանութեան, պատասխան տուաւ. «Մարմնոյն և ազամանդներու փայլուն ութիւնը չէ թագաւորին երեւելի յատկութիւնն, այլ իւր գիտութիւնն և առաքինութիւնը»։

ՑՕԳՈՒԱԾ Զ.

Ճշմարիտ արժանաւորութիւնն առաքինութեան մէջ կը կայանայ։

Այո՛, սիրելի որդեակք իմ, մարդոյս ճշմարիտ արժանաւորութիւն՝ միայն առաքինութիւնը կրնայ տալ. եթէ այս չլինի՝ ամէն ինչ ընդունայն է, և որքան գեղեցիկ յատկութիւններ ունենայ մարդ, առելի կը լինի երբ մեղութիւնն նոցա պայծառութիւնը կը խաւարեցնէ։

Այս ճշմարտութիւնս ամէն մարդ ճանչցեր է, և հեթանոսաց իմաստուններն իրենց բարոյականին հիմք այս դրած են, և միշտ իրենց ընթացքն ասով կանոնաւորած են։ Սոքա թէպէտեւ իմացականութենէ՝ զատ ուրիշ լուսաւորութիւն չունէին, այսու ամենայնիւ առաքինութիւնն՝ իրենց պատուոյն միմիայն արժանաւոր բարիք համարած էին, վասն զի աղէկ իմացեր էին՝ թէ այս է միմիայն բարին որ բախտին կամքէն կախեալ չէ բնաւ։

Իմաստասիրի մի գեղեցիկ դատաստանը։

Դեմեարիոս աշխարհակալը՝ Մեկարա քաղաքը կողոպտելէն յետոյ հարցուց Սդիլբոնին, թէ բան մի ամենեւին կորուսած է ինքը. որուն պատասխան տուաւ իմաստասէրը. «Բան մի չեմ կորուսած», վասն զի պատերազմը չկրնար զառաքինութիւնը կողոպտել։

Ամօթ չէ՞ր լիներ, սիրուն որդեակք, եթէ մեք՝ որ բարեբախտութեամբ քրիստոնեայ ծնած եմք, հեթանոսներուն ցուցցած էին քիչ յարգ ունենամք առաքինութեան վերայ։ Սոքա միայն իրենց իմացական զօրութեան լուսովը կը ճանչէին զայն, իսկ մեք ընդհանրական ճշմարիտ կրօնին վարդապետութեամբը ուսած եմք դատել զայն և նորա յարգը ճանչել։

Արդ՝ այս առատաձայնն վարդապետութեանց համաձայն, միայն առաքինութիւնը կրնայ մարդոյս ճշմարիտ արժանաւորութիւն

տալ. և որքան որ աստիճանով, խելքով մեծութեամբ երեւելի լինի, Աստուծոյ առջեւ բան մի չարժէր՝ եթէ առաքինի չէ։

Իշխանի մի իւր զաւակաց գրուցած իմաստուն խօսքերը։

Պէզիլիոս՝ Լուդովիկոս ԺԶ-ին հայրը, այն ճշմարտութիւնն իւր զաւակաց ականջին ստէպ ստէպ կրկնելու համար, եկեղեցւոյն արձանագրութիւնը բերել տուաւ իրեն, որու մէջ նոցա անուններըը գրուած էին. և քանալով զայն ցրցուց անոնց իրենցմէ առաջ գրուած մարդոյն անունը, որ մէկ աղքատ արհեստաւոր մի էր, յետոյ ասաց. "Ահա կը տեսնէք դուք, որ ամենուն ատիճանն Աստուծոյ առջեւ հաւասար է. և միայն հաւատոյ և առաքինութեան տուած յատկութեամբ կրնայ տարբերութիւն մի ունենալ ուրիշէն։ Ժամանակ պիտի գայ որ դուք այն աղքատ արհեստաւորէն աւելի մեծ պիտի լինիք ժողովրդեան առջեւ թէ պատուով և թէ հարստութեամբ. բայց սա ձեզմէ մեծ կը լինի Աստուծոյ առջեւ, եթէ առաքինի լինի"։

Այս գեղեցիկ դասն ամեն ազգայոց կը պատշաճի, եւ ամեն մարդ կրնայ անկէ օգուտ մի առնել։ Մի մոռնաք ուրեմն, բայց միանգամայն միտքերնիդ եւս բերէք, որ ճշմարիտ առաքինութիւն չհամարիք զայն՝ որ հաստատուն առաւելութեան վերայ հիմնած չէ. եւ եթէ ճշմարտապէս առաքինի լինել կ'ուզէք, ուրիշ բանի մի ցանկաք, այլ միայն վերը պատմած իշխանին նման սուրբ լինելու։

Բնութիւն տիեզերական ստեղծագործութեան մի։

Վերոյիշեալ երիտասարդ իշխանին վարժապետաց, որ մի Գաղղիոյ թագաւորաց՝ Նորա Նախնիքներուն ժամանակագրական ցուցակին գիրքը ցուցընելով, հարցուց թէ՝ անոնց մէջ որո՞ւ առաւել նմանիլ կ՚ուզէ։ — Սուրբ Լուդովիկոսին (՝), պատասխան տուաւ իսկոյն, և երանի թէ ես ևս Նորա նման սուրբ լինէի։ Նոյնպէս ևս ուրիշ բանի չէի ցանկար, սիրուն որդեակք, թէ ձեր փառաց և թէ երջանկութեան համար, այլ այս բանիս միայն՝ որ դուք ևս այն ազնուական իշխանին պէս Նոյն գեղեցիկ միտքն ունենայիք։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Գիտութեանց քրոյ։

ՑՕԳՈՒԱԾ Ա.

Գիտութեան յարգՑ։

Այրենին լոյսը մեր աչաց ինչ զօրութիւն որ կուտայ, Նոյնպէս գիտութիւնն ևս մեր միտաց կուտայ։ Ինչպէս որ մարդ մի խաւարին մէջ մնալով՝ բան մի չկրնար որոշել, ոչ իրեն

(՝) Լուդովիկոս Թ. տես երես 27։ Ծանոթութեան մէջ։

ուսկէ գալը գիտէ, և ոչ ուր երթալը, և միշտ չարաչար գերութիւն ինկնելով կը մեռանի, այսպէս խնայիք նաև ոգէտ մարդն։ Մարգարէին առած անշուշտ կոց նման, աչք ունի և չտեսներ. ականջ ունի և չլսեր, վասն զի տեսած իրերէն ամենեւին բան չհասկընար։ Իսուս պարզ բաներն եւս նորա համար խրթին առակներ են, և իւր անմտութեանէն անգամներու հաւատար կը լինի, որոնք կուրցրէն իրենց բնազդեցութեան կը հետեւին։ Ահա խնամուներին շատն այսպէս տրամաբանած են։

Խնամատարի մի գեղեցիկ դատապարտանը։

Զաւակի տէր մարդ մի կ'ելնէ օր մի Արիստիպոս խնամատարին մօտ կ'երթայ, և կ'աղաչէ որ իւր որդին քանի առնու, և փիլիսոփայութիւն և ուրիշ ուսումներ ուսուցանէ անոր։ Խնամատարն նորա ազաչանքը կ'ընդունի այս դաշինքով՝ որ իւր աշխատութեանց վարձ հարիւր դահեկան ապայ։ Տղուն հայրն այս խօսքին վերայ սիրտը փրթելով, որովհետեւ իսուս աղահէր, և այնքան սակ զաւակին կրթութեան համար տալ աչքին խիստ մեծ երեւելով, խնդրեր պատասխան տուաւ Արիստիպոսին։ "Այդ քու ուզած դրամով գերի մի կրնամ ծախու առնուլ։ — Գնա՛ ուրեմն տա, ասաց փիլիսոփայն, որ երկու գերի ունենաս տանդ մէջ"։

Ուրիշ մարդ մի եւս հարցուց նոյն Արիստիպոս փիլիսոփային թէ՝ "Գիտութիւնն ինչ

ոգուտ կրնայ ընել իմ որդւոյս։ — Անկէ քաղած պատուղը, պատասխանեց փիլիսոփայն, այն կը լինի որ հրապարակական խաղերու մէջ գրաւուած ժամանակ ուրիշ քարի մի վերայ նստած քար չհամարուիր ինքը։»

Այս պատասխաններով ինչ իմացընել կ'ուզէր իմաստասէրը. կ'ուզէր հասկցընել թէ՝ կապիտ և ոգէտ մարդը կրնայ քաղքաւուիլ գերիի կամ քարի հետ։ Եւ գիտուիլեան վերայ այնքան մեծ յարգ ունէր, որ երբ ուրիշ անգամ մի հարցուցին իրեն՝ թէ ինչ տարբերութիւն կայ գիտուն և անգէտ մարդոց մէջ, պատասխան տուաւ. «Նոյն տարբերութիւնն՝ զոր կը տեսնենք մարդու իշխանուիլեան տակ եղող քուրակին և ազատ քուրակին մէջ տեղ»։

Դիոգինէսին խնչացի խօսքերը։

Երբեմն Դիոգինէս փիլիսոփայն եւս այս մտաքս էր։ Որ մի երբ պատմեցին ասոր՝ թէ Մեկարացի քնարիշներն խելքներնին միայն իրենց ոչխարներուն տալով, ամենեւին զաւակաց կրթութեան հոգ չեն տանիր. «Եթէ այնպէս է, ասաց Դիոգինէս, լաւ կը համարէի Մեկարացիի գառն լինել, քան թէ որդի»։ Ցայտնի խօսք մի է, որով պէտք է իմանալ թէ՝ նոյն իմաստասէրին կարծեաց համեմատ՝ ազէկ առաջնորդ ունեցող կենդանին լաւ է քան զանգէտ մարդը։

Չէ թէ միայն այս փիլիսոփային մտած մտքն

է այս, այլ միշտ մեր օրերը՝ գուք եւս անշուշտ կը տեսնէք որ ազգս մարդիկ ընդհանրապէս պարտաւելի և տուելի են, եւ անոնց խիստ անարգ անուններ կը տրուի իրենց ազգութեան համար։

Թագաւորի մի գեղեցիկ պատմութեանը։

Ալփոնսոս Ե. Արագոնայի թագաւորին գիտուն պաշտօնեաներէն մէկը, իւր առջեւ հանդարձակութեամբ կը հաստատէր, թէ պատմութեան մէջ կարդացած է՝ որ Պպանիոյ թագաւորին մէկը կ'ասէր, թէ երեւելի իշխանաւոր և խիստ հարուստ մարդոց չմայելիք գիտութիւն ուսանիլ։ Որուն պատասխան տուաւ Ալփոնսոս. "Արդարեւ թագաւոր մի չէ եղեր այդ դրուցողը, այլ արջ կամ գոմէշ մի"։

Էթէ ազգութիւնը պարտաւելի եղած է ամէն ժամանակ, գիտութիւնն քոլոր աշխարհիս առջեւ պատուական համարուած է միշտ։

ՅՕԳՈՒԱԾ Բ.

Գիտութեանց ճերայ եղած յարգը։

Որ և իցէ մարդ՝ որ իւր միտքը գեղեցիկ ուսմունքներով զարդարած է, ամէն տեղ անուն կ'ունենայ. և ուր որ երթայ՝ յարգութեամբ կ'ընդունին զինքը։ Ամէն մարդ կ'աշխատի նորա մօտենալու և հետը խօսակցելու,

և ամենքն ե

բոյնն ասելով՝ թե երեկոյ առած յարգաւորութիւն
ողորմ բանասանելն ունեն Հաստատ էր եւ ոչ
կասարարուութիւն։

Այս պատմութիւն զրոյցներս ամենայն պէտք
է Հաստատութիւն։ թե ասենն ինչպէս երեսն զանձ
մի կը Հաստատութեան յարգել զուսուութիւն, եւ զուսուն
ինչպոց ազատանալոյ պատճառ։

Գիտութիւն մեր երեսնեաց կնոջ փոքր տղայոց։

Ցանկ ձեզ Հասանելիոց փոքր տղայ մի արքունական բերելու Հաստատ կը պատմեմ՝ ձեզ ուրախ լինեն տարեկան տղու մի ուսանող մի ի բրած յաստուածաշունչ գիտութիւնն, որ շատ ժամանակ չկայ գիտուութիւն Հանելոյն բերուութիւն, աշխարհաՀայրուութիւն, պատանութիւն եւ լեզուաբերուութիւն գանելու Հաստատ։ Վասն զի որ զուգ ձեր աչքով տեսանիք ողորմ բրած գանձերը։ Մի Հարցնիր մի պատասխան տալու պէս։ ասենն գիտէ կեցցեն կը պատասխի, ծանոթ կը գարնի տղայական։ «Ո՞Հ գարնանը, ինչ Հրաշալի բան։ երանելի Հայրը, որ այսպիսի զաւակ ունի»։ Բայց գիտութիւնն լեռայ ասենն պէտք է իր որ ասենքն եւս մի կամ երկու տարի իրենց պատճառ ուրախութիւնը կը յայտնեն։ Ասենքն գրիչ կ՚ուզի ասելն, բարբարիրը կը ժողովի եւ կը ցանկանայի գիտերը ասենն։ ասենքն կը սիրի, ասենքն Հեռու կը խուսի։ եւ իւր ասուածը միտեղեւ պարագրայ մի ի կարդացուելը, եւ բոլոր ազգայնոց գարնանը մի ասուա։

Բարեհամբաւ Փիլոս Պիրանոսոյ ասար պէտ զինքն աշխարհիս օրինակ առած էր։ Իւր առջի պատանեկութեան մէջ այնպիսի մեծ յառաջադիմութիւններ բրած էր գիտութեանց մէջ, որ մարդուն մէկը նորա հրաշալի վարդապետութենէն յաղթուելով, կարծեց թէ գերբնական բան մի կայ նորա վերայ։ Բայց յետոյ իսկոյն իմացաւ՝ թէ նորա ընդարձակ հմտութիւնը միայն իւր բնական զարմանալի յիշողութենէն և կարգէ դուրս ունեցած հանճարէն յառաջ կուգայր։ Քանի և հինգ տարեկան որ եղաւ, սկսաւ գիտութեանց մէջ ունեցած կարծիքներն և գրութիւնները հրատարակել, և թէպէտ փոքր հասակի մէջ մեռաւ, բայց իւր ձգած գրուածները բոլոր գիտուն մարդիկ զարմացուց։

Փերէզ երիտասարդն՝ որ Փրոմէնցայի Էքս քաղաքէն էր, տարա պէս երեւելի եղաւ փոքր հասակին մէջ իւր գիտութեան համար։ Եօթ տարեկան որ եղաւ, իւր փոքր եղբօրը կառավարութիւնն իւր վերան ուզեց առնուլ։ Հայրը՝ իրրեւ ազգական խաղ՝ նորա դէմ չկեցաւ։ Մի քանի օր յանձնեց անոր, միայն կամքը հաճեցընելու համար։ Բայց մէկէն տեսաւ որ ծաղկահասակ վարժապետն այնպէս ազէկ կը կատարէր իւր պաշտօնը, որ հայրը բոլորովին վստահանալով, նորա եղբօր դաստիարակութիւնն իրեն յանձնեց, և ուրիշ վարժապետի կարօտ չեղաւ։ Անկէ յետոյ յիրաւի իւր հարազատ եղբօր Մենտորն եղաւ, և այնպէս լաւ

կրթեց նորա վարքն, որ խիստ խելացի վարժապետք եւս չէին կրնար։

Զեմ ասեր թէ բան ամենայն մասին նմանողք եղեք այս գովելի օրինակներուս, վասն զի կարելի է որ բնութիւնք ձեզ շնորհած չը լինի այսպիսի հազուադիւտ տաղանդներ, որպէս զի այս երեւելի երիտասարդ ազգայոց նախանձաւոր լինելու ջանք ընէք. այլեւ ամենայնիւ՝ նոցա օրինակն պէտք է որ քաջալերուիք և զանգաւառութիւն չընէք հոգ տանելու այն բաներուն, որ կրնան օգուտ մի ընել ձեզ՝ ձեր կարողութեան համեմատ հարկաւոր եղած ուսմունքն և տեղեկութիւնները ձեռք բերելու։

Իւր գիտութեամբն երեւելի եղած երիտասարդը։

Ճերդիլ կարդինալն, որ նեբկայ գարուս խիստ գիտուն մարդկանց մէկն էր, ազգայութեան ժամանակին անուանի եղաւ իւր սրամիտութեան եւ լայնախոհութիւնի գիտութեան համար։ Տղայ էր երբ իւր հօր հետ Ճինէվրա գնաց, և հոն լսելով թէ հասարակաց դպրոցներ կան, զինքը հոն տանել տուաւ, և դրան մօտ ոտից վերայ կեցաւ՝ սպասելով աստուածաբանութեան դասուն աշակերտաց դուրս ելնելուն. որոնք երբ տեսան օտարական փոքր ազգայն որ դրսի կերպարանքէն խլուտ ու խռպոտ մի կ'երեւէր; բայց իւր աշխատութիւնը՝ վառվռուն աչքերը, զոր իրենց վերայ ունեցած ուշադրութեամբ կը դիտէր, յայտնի կը ցուցը-

նէ՝ թե որ կը փարեալ էր անոնցմէ մէկուն հետ
տեսնելու. ապա ամենքն ալ նորա գլուխը
ժողովեցան որ խորհրդին և խնամեան մը լինիլը։
Ճէրդիլ աչքը կը տնկէ նոցա մէկուն վերայ, ո-
րուն կերպարանքէն գէմքէն և շարժմունքնե-
րէն կ՚երևայր իրեն՝ թէ ամենէն մեծագի և
ամենէն աւելի բաւականութիւն ունի վիճա-
բանութեան մտնելու։ Ապա կը սկսի քրիստո-
նէական վարդապետութեան վերայ հարցմունք-
ներ բնել. զոր իրենք գաս կ՚առնուին, որպէս
զի իւր բերնէն քանի մի սիրելի գաղտ նոյն
Ճիներվրա քաղաքին մէջ գտնուած կրօնին վե-
րայօք։ Նոր Ճէրդիլ վարպետութեամբ նոյն
նիւթին վերայ այնպիսի տեղ մի բերաւ, որ ոչ-
զոյն իւր բերնովը խոստովանեցաւ, այլ սկսաւ
նեղը խոթել իւր հակառակորդն աւելի նրբին
և զգուշաւոր փոսաներով, որ այնպիսի ծանկահա-
սակ և խակամիտ պատասխան մի մարդ չէր յա-
ռայր։ Նոցա լրած վիճաբանութիւնը լսելով
բոլոր աշակերտներն ելան ժողովեցան այն տեղ
և սկսան իրենք եւս մէջ մտնել և վիճել օգ-
նութիւն ընելով իրենց ընկերին՝ որ նորա ա-
խոյեանին յաղթեն։ Ճէրդիլ միտակ էր և իրեն
կուսակից չունէր, ամենուն պատասխանն ինքը
կուտայր, և ինքն միտակ նոցա մէջ բերած ա-
ռաջարկութիւններդը կը հերքէր անխռովելի քա-
ջասրտութեամբ. և վիճաբանութիւնը կ՚ուրա-
խի՝ ինքն սատանայով փառաւոր յաղթանակը,
և իւր բոլոր հակառակորդներդը պատասխան մի
չկրնալով տալ՝ կը լռեն, կը պարտուին։ Փոքր

վարդապետ ոգոյն նոցա ամենայն առեալ գրա-
նելով, կրկին առաքելոյ նման խօսիլ հնարե-
նին, և բարի նախանձաւորութեամբ մի և ա-
նոյշ խօսքերով նոցա աչքին առջեւ կը բերէ
գժբախտ վիճակնին՝ որոնց մէջ կը գտնուին ա-
զգատոհ եկեղեցիէն բաժնուելով. և միանգա-
մայն հանդերձեալ կեանաց մէջ իրենց հոգ վիճակ
ունենալը, որ հազար անգամ աւելի թշուառ
պիտի լինի կ'ասէր, թէ որ խնդնութեամբ ի-
րենց կամակոր բնութեան մէջ մնանելու լինին։
Մարիկ ընողներուն մէջ ասենելու մէկուն չը
գայս այս վիճաբանին խօսքերը, թէ՝ իւր փոքր
տարիքին նկատմամբ և թէ անուշ լեզուին և
բնաւորութեանն համար, այլ մանաւանդ կը
զարմանային նորա վերայ։ Միայն մէկը գտնուե-
ցաւ մէջերնին, որ այսպէս դարձաւ ասաց ա-
նոր. «Եթէ մեզմէ մէկը ձեր հայրենիքը գայ,
և այսպիսի լեզու բանեցնէ ձեզ, ի՞նչպէս կը
վարուիք հետը»։ Այսքան միայն կրցաւ ասել.
և ասենքն եւս եւս քաշուելցան գնացին ամօթով
և պատկառանքով, և յաղթական ոգոյն ուրա-
խութեամբ լեցաւ, զոր ձեռնարկութեան յաղ-
թանակը պատճառեց իրեն։ Այս երիտասարդ
ոգուն բրած յաղթութիւնն ոչ թէ միայն գե-
բաղանց հանձարեղութեան գործն էր, այլ նա
եւ ուսման մէջ ունեցած չափէ դուրս եռան-
դոյն, փառն զի՛ ոգոյութեան կարդացեր եւ
կշռեր էր երեւելի Պասուեանի Պատմութիւն
փոփոխութեանց բուսած գիրքն, և իւր միտքն
նորա մէջի եղած նրբին և լուսաւոր փաստերն

այնպէս բան բնդունուած էր, որ սուքար էր ասել բան ունենալ։ Այո՛, այո՛, ես բանականն կրնամ հասնիլ դիս, տապարէն կամենալու այն նորագանդներն, որոնք այս գրքոյս մէջ յայտնի ելլալով կը հերքուին։

ԳՕԴՈՒԱԾ Գ.

Գիտութեան օգուտները։

Հարկաւոր ենք գրուածը գիտուիմբ նոր գուք ոչ ոք է ուսումնիք։ մեծ օգուտ կ՚բնէ մեզ, որ մտքնիս բնէ զանազանիք։ Գիտնականն մի, որ ես իսկ ասումնամ ամէն, կը ճանանէ Հանուապարհորդն, որ իւր գնացու Հանուապարհներն կատարելապէս Հանելով, ապահով կը Հասնէ իւր մտադիր տեղն։ բնդ Հակառակն ոչ է ս մտրդը կրնայ դրամնոել կայրի՝ որ խարխաշիլով կ՚ելթեմայ։ ելթիս քայլ կը ելնան՝ կը սահի կ՚ինկնի։ և Հանապարհէն միջոց գուրս կ՚ելնէ։ Հարգարուն մի կ գիտուածներ կը զատանի։ որոնց մէջ գիտուիմբ մեծ օգուտ կրնայ բնել մեր բարեկեցուիմն։ և ոչ բանուիմն մէջ տեղ միխիթարիչ և օգնական կը լինի։

Այո՛, սիրելի արդեանակիր իմ՝, գիտուիմբ միջոց օգտակար է։ Կան ելթելու այնպիսի պաշտանունելիք և միհանկելիք։ որոնց մէջ խիստ օգտակար է գիտուիմբ։ և որս մէջ Հնար չէ Հանարանելիք ունենալ առանց գիտուիմն միջոցի։ միայն դի ինչպէս կ՚ասէ Լաֆոնդէն։

Խիստաւորք մարդ՝ թէ որ տգէտ է։
Իրաւն հանիսին արժանաւոր է։

Մի գարմանալի ուրեմն եթէ այդպիսի դըժուարութիւններ կան, եւ այդպիսի միջոցներ պէտք են գտնել կրթելու եւ ձեր միտքը լուսաւորելու համար։ Այս հարուստ մարդիկն իրենց ունեցածներուն կէս որ յոժարակամ՝ կուտային՝ եթէ քիչ մը բան գիտցած լինէին, զոր իրենց ազգայութեան ժառանգակ գիրութեանէն կրնային ուսանիլ, քաջոյ հիմնոյ որ տարիքնին առեր են, անօգուտ է։ Զատն ոչոյ կը տարբերուին ասել թէ՝ գիտութիւնը հնար չէ գրաւով շահիլ, եւ իրենց բոլոր կեանքոյ մէջ օրտերնին կը ցաւի ազգայութեան ժառանգականին պարապ անցընելուն համար, երբ առիթ կոչը ձեռքերնին՝ կրթութիւն եւ ուսմունք ուսանելու։

Ասկի կրթութիւն չունեցող Իգիտի մի բանաւոր։

Օր մը ուսանելով մեծն Պլատոն որ իւր որդիին խելքերնին կարգալու տուած՝ այնպէս կը պատասխանէր, ասոյց ներքս։ «Բախտաւոր էր դուք որ ազգայութենէ կը սկսիք գլուխներու հանին առնուլ։ Այս ուրեմն կը ցանկայի որ մանուկներուս մէկը պակաս լինէր եւ ուսուցանութեամբ կրթուած լինէր։ Այնպիսի մեծ շահ մի է այս, ուսկէ զրկուած լինելուս համար, միշտ խիստ կը ցաւիմ։

Այնցէք որ դուք եւս այս թագաւորին նման չզգիք յետոյ. այլ քանի որ ժամանակը ձեռքերնիդ է, նայեցէք որ պարապ չանցընէք, միշտ օգուտ մի քաղէք անկէ։ Զրինակ առէք ձեզ մրջիւնին բռնած խելացի ճանապարհը, որ պարզ եղանակին իւր կերակուրը կը պատրաստէ, որ ձմեռուան մէջ հարկաւոր եղած ուտելիքն ունենայ։

Հիմայ դուք գեղեցիկ ու պարզ եղանակի մէջ կը գտնուիք այն հասակին՝ ուր մեծ դիւրութեամբ կրնաք հոգալ հարկաւոր գիտութիւնները, որոնց ժամանակ պիտի գայ որ պէտք պիտի ունենաք։ Հոգ տարէք ուրեմն ձեր մանկութեան ժամանակն անօգուտ չանցընէք, մանաւանդ որ երբ այս երջանիկ հասակն անցնի, ոչ եւս կրնաք յետ դարձընել, եւ տգիտութեան դժբախտ վիճակին մէջ կը մնաք յաւիտեան։

ԱՌԱԿ

Գնոմին մօտ ճանապարհորդը։

Ուղեւորին մէկն անտառներու մէջէ երկար ժամանակ քալելուն, եւ արեւուն տաքութենէն սատկիկ ծարաւով պատակելով, գետ մի կը տեսնէ անտառին մէկ կողմը, որ կանանչ խոտերուն եւ պզտիկ ծառերուն մէջ տեղէն կը մաղէր կ'երթայր, թէպէտեւ ջուրը քիչ էր։ Կը հասնի այն ջրին մօտ, որուն այնչափ կը փափաքէր ... բայց ափսոս իւր անմտութեան.

կանգ կ'առնու մէկէն։ կրնայի ջրին մէջ եւ կ'ասէ ինքն իրեն։ «Պէտք չէ որ ես մէկէն գձիւռիմ խմեմ այս ջրէն։ թէպէտ տաքուիմ ենէ կ'ապրիմ։» Այս գեղեցիկ արծաթի ներսն փայլուն ջուրը կ'անցնին կ'երթան անուշիկ մի խոխոջալով։ եւ քանի որ կը փապէն յաւաջ կ'երթան՝ այնքան կը պայծառանան եւ ջուրը վերը վերը կը ցայտուն։ Ասենին պէտք է ապասեմ որ առելի մաքուր ջուր գան։ ասայ՝ եւ երկնցաւ պառկեցաւ գետին մօտ ծարաւութիւնը շնորհած։ Մէկ մ'ալ։ ամ գժբախտութեան։ երբ պառկած տեղէն երաւ։ տեսաւ որ գետին մէջ ջուր չկայ։ զարմացաւ խեղճն երբ խնդաւ իւր բուրբուքը։ ցաւեցաւ՝ բայց ուշ։ եւ պարապ տեղ բարկութեամբ կը նեղանայր։ վասն զի գետին մէջ եւ ոչ մէկ կաթիլ ջուր կրցաւ գտնել։

Այս ուղեւորն օրինակ է անոր։ որ ծուլութենէն իւր մտաց հատակը փափկութեամբ եւ հեշտութեամբ կ'անցընէ։ եւ կը կարծէ զարմանալին։ կամ ինքնիրեն այնպէս կ'ասէ՝ թէ ժամանակ պիտի կրնայ գտնել որ լրած վատնելուն տեղը լեցընէ։ Կայծակի նման կ'անցնի երթալարարգութեան հատակին։ եւ արդար պառկիլ չտայր։ թէ որ ծոյլ երկրագործին ապահ ձեռքը ժամանակին խոփովը չշինէ շարարատ։ կ'անցնի մտաց հատակը։ ինչպէս որ գետին ջուրը արշնթաց կը փապէն կ'անցնին։ Ո՛հ։ եթէ յանկարծ ջուրը քաշուելու լինին ։ ։ ։ լրած յոյսերուն երթալս բարեւա թող ասէ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Տղայոց ուսանելու ուսմունքները։

Ա.ՆՏՈՒԱԿՈՑՍ կը կարծեմ եւ, սիրելի որ-դեակք իմ, որ նախընթաց գլխոյն մէջ զուս-ցածներս ձեզ մեծ յուզում են որ ցանկայք կրթել և վարժել զձեզ ուսանոց մէջ. Հիմայ եւս մանրամասնաբար պիտի ցուցնեմ ձեզ հարկաւոր եղած այլ և այլ ուսմունքները. Ձեր ուսման առաջին նպատակը պիտի լինի բարի վարք ունենալ, որ Աստուծոյ ընդունելի եւ մարդոց հաճելի լինի։ Բայց ինչպէս կրնաք դուք ուսանիլ այսչափ գիտութիւնը, առանց որոյ ուրիշ ամէն իւնչ անօգուտ են ձեզ, մանաւանդ և վնասակար իսկ։ Այս ասած ուսմունքս է կրօնագիտութիւնը. ապիկայ միայն իւր աստուածային բարոյականութեան սրբութեան և մաքրութեան միջոցով կրնայ ուսուցանել մեզ ազէկ ապրելուն և իմաստութեամբ վարուելուն եղանակը. սոքա համար է որ գիտութեանց դաշտին մէջ ուր տեղ կ'ուզեմ ձեզ առաջնորդել, կրօնագիտութիւնը բոլոր ուսմունքներէն վեր կը դասեմ, զորոնք դուք պէտք է ձեռք բերելու աշխատիք։

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Կրօնագիտութեան քերթ։

Ամէն բանէն աւելի ուսանելու հարկաւոր եղած գիտութիւնը, զոր դուք պարտաւոր էք

մեծ փառքով ձեռք բերել, կրօնքն է՝ զոր Աստուած տուաւ մեզ իբրեւ առաջնորդ դէպ 'ի յաւիտենական երանութիւնն զմեզ տանելու, զոր մեզ համար պահած է և պիտի շնորհէ այս միջոցառ եւ վարձատրիչ աշխարհէն երթալէս յետոյ։

Երբոր կրօնին ցոյց տուած Հաւատն Հաւանելիք և անկէ երթալիք, ամենեւին փոխ չեմք ուզեր մոլորելու. վասն զի նոյն ինքն Աստուած բացած է մեզ զայն և ինքն սորվեցուցած. բայց երբ չգիտնամք այն Հաւատարիմը, կամ մոլորուելով դուրս երթեմք անկէ, դէպ 'ի խաւար կ'երթամք, կը մթանիմք, կ'ինկնիմք անկարգութիւնց մէջ, ուր տեղ մարդոյս միտց պատմաւորն և արտին մոլութիւններդ կը քաշեն կը տանին զմեզ չարաբախտութեամբ։

Անկրօնութեան ցաւալի հետեւութիւնքց։

Այս է զոր մեք դժբաղդաբար միշտ կը տեսնեմք այս վերջին ժամանակներուս մէջ, ուր ամբարիշտ մարդիկ ինքզինքնին փիլիսոփայի տեղ դնելով, պատերազմ բացին կրօնին դէմ. և քիչ մնաց որ պիտի աշնչացընէին զայն։ Աստուածերէն կրօնին դեղեցիկ ջահը, որ մեր աչուքներուն կը շողշողէր, մարելով՝ խաւարը փոխանակեց լոյսին, և կուրութիւնն այնքան տեսցաւ որ Բանէն (¹) 'ի զատ ուրիշ Աստուած չպիտի

(¹) La raison.

ճանչէին, մինչեւ այս մատցածին աստուածութիւնը պիտի կանգնեցընէին Գաղղիոյ մայր եկեղեցւոյն առաջին տաճարի սեղանոյն վերայ՝ կիսամերկ կնկան կերպարանքով. մինչեւ աստուածային պատիւը գաղանի մի՝ հրէշի մի պիտի տային, որ միայն ընդհանուր նզովքի արժանաւոր էր, մէկ Մարաթի մի, այն գազանացեալ մարդուն, որու նմանը չկայր Գաղղիոյ եւ ոչ աշխարհիս մէջ։

Պոռին մոլութիւններն եւս հաւասար էին մատաց մոլութիւններուն։ Երբ այն սուրբ ամբարտակը փլաւ, զոր կրօնը մարդկեղէն շարութեանց դէմ կանգնած էր, շար կիրքերը մէկէն դուրս թափեցան եւ Գաղղիա բոլորովին լցաւ անառակութեանց ջրհեղեղով։ Շատ դարերու միջոցին մէջ չգործուած յանցանքները՝ քիչ տարուան մէջ կատարուեցան եւ ապականութիւնն ընդհանուր լինելով, թէ մեծ եւ թէ փոքր, թէ հարուստ եւ թէ աղքատ, եւ ամէն աստիճանի մարդիկ բոլորն եւս աւրեց եւ ապականեց։ Երիտասարդք Աստուծոյ սուրբ երկիւղը մէկդի թողլով՝ անասնական անառակութեանց տուին զիրենք. մինչեւ աղայքն անգամ՝ որ մինչեւ այն ժամանակ անբաւական համարուած էին, այնպիսի յանցանաց տէր եղան, որոնք ցաւով սրտի կ'ասեմ՝ թէ գժբախտաբար մինչեւ այսօր կը տեւեն. եւ անոնց շար ազդեցութիւնը մինչեւ մեր արեւելեան երիտասարդաց սրտերուն վերայ ներգործած է։

Անկրոն ոգեպոյ սոսկալի անկարգութիւններց։

Մի օրագրութեան մէջ կը կարդացուի թէ՝ 1800 սեպտեմբեր 23 էն մինչև 1801 փետրուար 20, այսինքն հինգ ամսուան մէջ, Փարիզու կառավարչական ատենին մէջ, 75 երիտասարդ ազգաք 'ի դաս բերուելցան իբր գող կամ բարի վարուց դէմ մեղանչող, և թէ՝ անոնցմէ 45 ը բանտարգելութեան դատապարտուելցան այս կերպ շարութեանց տէր լինելնուն համար։ Նոյն օրագրին նոյն թուոյն տակը գրուած ծանօթութեան մի մէջ կը կարդացուի նաև, թէ դատաւորներուն դիմաց հանուած երիտասարդաց համբանքէն դուրս են փոքր ազգաց գործած յանցանքները. և կը հաստատեն թէ՝ Փարիզու մէջ գործուած շարութեանց և անիրաւութեանց կիսէն շատին տէրերը անառակ երիտասարդներն են։ Բայց այս անօրէն գործերը, որ առաջ ամենեւին չէին պատահեր, ուսկէ կը ծագին արդեօք։ Այս բաներս արդարութեան ատենին խնդացնող խոհեմ գործակալը, մի քանի պատճառներ կուտայ, և յատկապէս ազիտութեան կամ կրօնի վերայօք եղած անհոգութեան կ'ընծայէ զանոնք, այն կրօնը՝ որ աստուածային երկիւղ մի բերելով մարդոյս սրտին մէջ, միանգամայն և քաղցր յոյս և մխիթարութիւններ կուտայ ամէն հաստակի մարդոց։

Այս վկայութեանս քով ուրիշ մի եւս կը դնեմ, որ թէպէտ այնքան մեծ չէ, այսու

ամենայնիւ կրնայ նոյնպէս օգտակար ազդեցութիւն տալ մեզ. զոր կրօնքի մարդկանց մանաւանդ եպիսկոպոսաց պտոյն վերայ կը ներգործէ.

Կրօնքի ցրուիմամբ ոչ թիւրիմեան շուքին մէջ մտնող եպիսկոպոսներէն։

Շատ տարի չկայ, գեղացւոյն մէկը Փարիզ գալով, կը հարցընեն իրեն թէ ի՞նչ լուր ունիս գիւղէն, ուր ուրեք ապստամբութեան ժամանակ այնքան անկարգութիւններ կը տիրէին։ — Է՛հ, պատասխան տուաւ գեղացին, հիմայ ամէն ինչ լաւ կարգին է. փառք Աստուծոյ։ Մեզ աւագերէց մի գտանք, որ Աստուծոյ հաճոյ անձ մի է։ Նա զմեզ կը կրթէ, լաւ քարոզներ կուտայ, մեր մոռցած բաներըս միտքերնիս կը ձգէ, և իւր խնամքովը (քանի մի շաբաթ մարդացմէ՝ ի զատ, որոնք կ'ուրանան զԱստուած Նորա հաճար որ գողցուած բաներըս տիրոջը դարձընել կը պատուիրէ,) միւս ամէնքը ուղիղ ճանապարհի մէջ մնան։ Ամէնէն աւելի մեր տղայքն իրենց առաջին վարքերնին փոխելով, այնքան հեռու են հիմայ այն բնութենէն, որքան որ լոյսը հեռու է խաւարէն։ Մինչեւ այս օրս ամէն մէկերնին մէկ մէկ շաբաթուայ դարձեր էին, որոնք ոչ հաց և ոչ մաց մտիկ կ'ընէին, կ'երդուընային, իրարու հետ կը կռուէին, և քիչ քիչ գողութիւնը ձեռք առնելով՝ ընկերք էին անուանակութեամբ անցընել իրենց

կեանքը։ Բայց քանի որ մեր բարի առաջնորդը քրիստոնէական փարեզապետութիւն ուսուց ներ-
ցս, և խոստովանանքի կանչեց և շատերուն եւս հաղորդութիւն տուաւ, որոնք շատ ժա-
մանակէ ի վեր առած չէին։ Պատանեկի նման անոյշ և հեզ եղան, և Հրեշտակի պէս ջերմե-
ռանդ եւ Աստուծոյ սիրոյն փառուած։ Ո՛հ, կեցցէ ուրեմն կրօնքը, որուն ցրցուցած հրաշքոց
և զօրութիւնն հաւատարը չկայ։ Կրօնքը կորսուեցնելով ամէն բան կորսուած էինք։ Բայց
Աստուծոյ ողորմութիւնովը կրօնքով նորէն ամէն բան ձեռք բերինք »։

Իրաւունք ունէր այս բարեմիտ գեղացին այսպէս զրուցելու։ Զանազի կրօնքը կորսուեցնելով ամէն բան կը կորսուեցնէ մարդ։ Ամէն ուրիշ բան չմնար նորա, ոչ լոյս գիրքը ընթերցելու, ոչ ամէն զգալու, ոչ նեցուկ մի գիրքը բռնելու, և ոչ յոյս քաջալերող։ Եւ ողորմելին միայն իւր կիրքերն իրեն առաջնորդ ունենալով, ամէն փոսի մէջ կը դահավիժի կ'ինկնի, ուր մարդոյն կիրքերը կը քաշեն կը տանին բոլոր զանոնք որ անկարգութիւն կուտան գիրքնք։

Բայց երբ իրենց մտաց առջեւ և սրտիցը մէջ գրուած կ'ունենան սաբբ կրօնքին մեծ ու սրտաշարժ ճշմարտութիւնները։ Կը հեռանան այս կորստական ժայռերուն մատէն, և հաստատ կը քայլեն ճշմարտութեան ճանապարհները մէջ։ ու նաեւ ամէն օրուան փորձերով կը տեսնենք, որ եթէ մարդոյ մէջ քարեկրը

թութիւն, ուղղութիւն եւ առաքինութիւն կայ, միայն նոցա մատն է, որոնք ճշմարտապէս կրօնասէր կրնան կոչուիլ։

Ապա ուրեմն, սիրելիներ որդեակք, հիմակուց այս փրկագործ կրօնիս հետ հաստատ սիրով կապուեցէք, որ այն միայն ձեզ իրրեւ ներքուկ եւ առաջնորդ լինելով, կրնայ շինողութ որ ճանապարհէն դուրս ելնէք եւ կորուիք։ Որքան աւելի ճանաչէք զայն, այնքան աւելի սրտանց սիրելու կը ջանայք, եւ որպէս զի ապէկ ճանաչէք զայն, պէտք է որ աշխատիք մատդրութիւնամբ ուսանելու։

Կարող էք դուք հիմայ ուշադրութիւնամբ կարդալ քրիստոնէական վարդապետութեան դասատուութիւնն, որ ձեզ համար մատնուորապէս շինուած են համառօտ եւ աշխարհաբառ։ Բայց երբ զանոնք լաւ ուսանելու լինիք, պէտք է որ ուսմունքը կատարեալ լինելու համար, անկէ յետոյ ուրիշ գրքեր եւս կարդաք որ լաւ ճանաչէք սուրբ կրօնին ճշմարտութիւնները։ Եւ ձեր կարդալու գրքերն են՝ սուրբ Գրոց հին եւ նոր Կտակարանն եւ Կամոգիկեայ հոգեւոր մեկնութիւնները, Ներսէս Շնորհալոյն ուղղափառ դաւանութեան վերայ գրած հոգեւորը, Սարգանոցեանի կրօնագիտութեան գիրքը եւ այլ ուրիշ հաւատոյ եւ կրօնի վերաբերեալ գրքեր, զորոնք Հայաստանեայց սուրբ Եկեղեցին ընդուներ է։ Առնցմամ՝ ինչպէս որ պէտք է, կատարեալ կ'ուսանիք ձեր կրօնքը, եւ կրնաք յետ այնորիկ պատասխան տալ ձեր կրօնին

վերայ եղած հարցմանց, ինչպէս եղաւ Հընդկաստանցի տղուն, զոր կ'ուզեմ կարճօրէն այս տեղ պատմել։

Կրօնի մէջ չաւ կրթուած երիտասարդի մի կռապաշտ մարդն ամչցնելը։

Հընդկաստանցի տղայ մի ուր տարեկան, որ ազէկ կրթուած էր քրիստոնէական կրօնին ճշմարտութեան մէջ, օր մի ընկերութեան մէջ գտնուելով, կռապաշտ մարդուն մէկը սկսաւ ծաղր ընել նորա կրօնքը, և վերջապէս հարցուց անոր թէ ո՞ր է քո Աստուածդ։ Տղայն ամենևին չշփոթեցաւ, այլ մէկէն պատասխան բրաւ ծաղր ընողին և ասաց. "Իմ Աստուածս բոլոր աշխարհիս ստեղծիչն է. անիկայ պարզ հոգի է, և չեմ կարող ցուցընել. այլ անոր տեղը քո Աստուածդ կը ցուցընե՞ս։" Այսպէս ասելով քար մը առաւ ձեռքը, և կրցածին չափ նորա վերայ մարդու կերպարանք մի նկարեց. յետոյ գետին դնելով քարաքանդարարան կերպով մի, հրեց այն գիրն ոտքովին և ասաց. "Ահա ձեր պաշտած չաստուածը։" Այս տղուն խելացի զուարճութեան վերայ սկսան ամենքն եւս ծափ զարնել, և ծաղր ընողը մեծ ամօթով մնաց։

ՑՕԳՈՒԱԾ Բ.

Գրարան չնչուին վերայ։

Կրօնագիտութեան հետ կը պարտաւորիմք

նաև գրաբար լեզուն ուսանել. որ խիստ օգտակար և անհրաժեշտ պարտք է մեզ. Զի թէ ոգայք կան որ գրաբար լեզուն թանձր անգիր են զնոսա իբր անօգուտ համարելով զայն. բայց են զիտեալք մեկ ի նոսա զնոսա կը բերեն իրենց, զոր եմեկ Հանձնելու լինելիս. այնպէս բան և ոչ մարդերնէն կ'անցընեն իս. Գրաբար լեզուն գիտաբեռանց բանարին է. զոր եմեկ մէկը շգիտեայ՝ չկրնար հասկընալ այն գրքերը. զորանք կարգալով մարդս գիտուն և բազմագէտ կը լինի.

Շատ անգամ լսած էք զուք Խորենացւոյն, Եղիշէին, Շնորհալւոյն գրքերը. Ոսկեբերանին Հատերը. Շարականք և ուրիշ անեմիս հեղինակներու գրուածներ. որանց անուն ամենուգ ծանօթ է. բայց ամենեին չեմ կարծեր որ գիտնար եմեկ ասանք ինչ բանի վերայ կը խօսին. կամ եմեկ ինչպիսի մարդիկ են գրողները. Արդ մի որ գրաբար ուսանիլ շուտ զեր. այնպիսին պէտք է որ եկեղեցական պաշտօնի մէջ ևս շմտնէ. վարժապետութիւն. քարոզչութիւն. գրագրութիւն և այլ ուրիշ պաշտօններու ձեռք չդարնէ. զոր բոլոր ազգանուն գործի գնելու և կառավարելու համար՝ պարտաւոր է նախ գրաբար լեզուն ուսանիլ. վասն զի այն պաշտօններուն մէջ մանաւանդ շատ բաներ և գիտութիւններ պէտք է գիտնայ. որոնք միայն գրաբար լեզուով գրուած են.

Ի՞նչ կ'ասես՝ ևս՝ եմեկ նոյն պաշտօններու ձեռք բերելու համար պէտք է գրաբար լեզուն նախ ուսանիլ. մեմեկ ամենեն հայագիտ պարտաւոր չէ

գիտեալ իւր մոլորեալն չի զգաւն. մոլորեալն կ'ասի՝ չէ իմէ մեր խաբեցեալ աշխարհիկ լեզուն. այլ գրաբարն. այն լեզուն որ մեր նախնիք հոգեւորականներս կը խօսէին. Տիգրան. Արամ և Հայկ. ոչ միայն սոսին՝ այլ և Դաւ և Հեռանապէս Արգամ. Իսկ մեր պարտականն լեզուն՝ որ հիմայ մեռեալ լեզուներու կարգը հանուած է. մամուռակու բարբ աշխարհիս կը տիրէր. թեղուն հանար այն ազգին լեզուն մեր առջեւ անարգ արիսի հանարուն. և իմէ որ մեռեալ է. թեղուն հանար շաշխատիր կենդանանալ. Շատերը կան մեր ազգին մէջ որ կ'ասեն իմէ՝ գրաբարը ամենեւին իրենց օգուտ մի չունի և շուկայի մէջ շգործածուիր. իրաւունք ունին. վասն զի չեն գործածեր և նորա հանար անգործածելի մնացած է. դամենիներն և հաշուեւարներն սովորաբար լեզուով գրելը լաւ կը հանարին և գրաբարուին հոգ չեն տանիր. Եկեղեցականն մամեր գուսանները մեր գրաբարն մեր բարին եւս գրաբարն չէ՝ կարգացուիր. մանկ կ'ունենան նորա և ամենեւին բան մի չեն հասկնար. քարոզիչն եւս նոցա տարուեալ պատճառաւ իւր առնարարուեալ մեր ունկնդրին լեզուով կը տարուիր քանի. որպէս զի միայն առնուն. աշխարհարար եւս տարբեր մնին. ունկն եւս չեն շահիր. վասն զի գրաբարն բաներ կը գործածէ. Գոնէ սա մեր աշխարհարար խառնուկ լեզուն չիտկերս հանար ինչ ինչ ամենեկ գրաբարը հանուած կերպով մի. Այս նոցա տարուեալ հանար չէ՝ որ հիմայ նոր տարբերեալ և զած է շատ գրքեր

աշխարհաբառ կը գրուին, (ինչպէս որ մենք եւս ստիպուեցանք այն լեզուով խօսիլ ձեզ հետ), նաեւ օրագիրներն աշխարհաբառ կը խմբագրուին. բայց ափսոս որ զանոնք եւս կարող չեն ինչպէս որ պէտք է՝ հասկնալ. ուստի նորէն կը պարտաւորին գրաբառը ուսանելու. ապա թէ ոչ այն ժամանակը կը ստիպուէր աշխարհաբառն աւելի պարզ եւ ամենուն հասկանալի ընելու համար՝ տառերէն եւ գաւառական բառեր գործածել, որ է մեռբայկանութիւն, եւ մեր լեզուն իբր աղքատ լեզու մի համարել տալ, որ է անարգութիւն եւ ամօթ մեր ազգին.

Ա.ղէ, սիրուն որդեակք իմ, պարտք համարեցէք ձեզ շեշնել գպրատրնէն մինչեւ որ լաւ շաւանիք քերականութիւնը. Այս ուսմունքովս կը լինիք գուք աստուածապաշտ եւ ջերմեռանդ անձինք, աստուածարան, խնամուն, ճարտարախօս, տրամաբան, բարեպաշտ, ու նաեւ՝ զոր շէք կարծէր բնաւ, եռանդուն ազգասէր. վասն զի ձեր ազգասիրութիւնն աւելի բարբարոսը գրաբառ լեզուն է. անով կ'խմանամք մեր մեր լեզուին պատուականութիւնն եւ անդրանիկութիւնը. նորա մէջ կը կարդամք եւ կ'ուսանիմք մեր նախնի նահապետաց եւ հայրապետաց անպարտելի քաջութիւնն, ազգասէր գործերը, զարմանալի մեծագործութիւնները. նոյն Ադամնախօս լեզուով կը կարդամք Եղիշէի գրած ողբալի Պատմութիւնը. Խորենացւոյն պատուելի Հայկաբանութիւնը, որոնց մէջ պոյ-

ծառ կը փայլի ազգասէր ոգին. Ղարեկացւոյն աղերսագուխմխիթարեանները եւ ասատուածային Հոգեբուխ Ճառերը, որոց միջոց Եւրոպացիք անգամ կը զմայլին. Շնորհալւոյն գեղեցիկ ստաղանաւորներեր եւ Լամբրոնացւոյն աքանչելի ստեղծագործմխիթարեանները. որ մէկն գրուցեմ. Ղազարեանցմէ Ի զատ օտարազգի հռչակաւոր հեղինակաց գործերը. Հոմերոսի. Վիրգիլեայ. Վիտայի քրիստոսականին. Միլտոնի. Ցեղեղոնի եւ Կեանքի բանաստեղծական գրուածները. Մէկ խօսքով բուն Հայազգի եւ ազգասէր շեմ կրնար եւս այն մարդն՝ որ գրաբարը լեզուն չգիտեր.

Լեզուագիտութեան տգիտակարութիւնը.

Մէկ աշակերտ մի իւր մայրենի լեզուն ուսանելէն յետոյ՝ լեզուագիտութեան եւս սէր մի ունենալու է, եւ աշխատելու է ուրիշ լեզուներ եւս ուսանիլ. որոնք առելի ընդհանուր եղած են եւ առուտուրի մէջ առելի կ'ունցնին. չէ թէ ամենայն իւր պարարքն է, այլ իւր մասնաւոր օգտին համար ազգէ է որ ուսանի. միայն զի միայն իւր լեզուն առնուլ անցնիլը բաւական չէ. Այլ հարկաւոր է որ հինգայ ազգային բարեկարգ եւ օրինաւոր գպրոցներու մէջ սկսած են ուրիշ օտար լեզուաց եւս դասատուներ կարգել. որպէս զի ազգք իրենց մայրենի լեզուէն յետոյ զանոնք եւս ձեռք բերելով՝ թէ՛ մասնաւոր շահուց եւ թէ ազգային յառաջադիմութեան

եւ քարեկրթութեան նպատակ մի լինի։ Այս եւս յայտնի է որ մի մարդ որքան լեզու գիտայ՝ այնքան մարդ կը համարի։ օտարազգայն հետ խօսակցելու եւ առուտուր ընելու ժամանակ թարգմանի կարօտ չենք։ եւ լեզուագէտ մարդն անաշխատ կրնայ ճանապարհորդել բոլոր աշխարհի երեսը։ Որքան մարդիկ լեզու չը գիտնալով իրենց գործառնութիւնէն եւ շահերէն յետ մնացեր են։ եւ իրենց միտքը չեն կարողացեր բացատրել ոչոց այնպիսի երկրի մի մէջ գտնուելով, ուրտեղ իւր լեզուն հասկցող չկայ։ ուրշոյ գործառութիւններ կը կրէ եւ շփոթութեան մէջ կ'ինկնի։ Անոնցմէ ի զատ լեզուագէտ մարդը շատ վտանգներէ կ'ազատէ զինքը։ ինչպէս հետեւեալ օրինակէն կ'երեւի։

Լատինական լեզուն գիտնալոյ մասին ուշադրութիւնը։

Մարեմոս, որ հին ժամանակները իբրեւ երկրորդ Պիկերոն հանարուած էր իւր ոճոյն վսեմութեանն եւ յատակութեան համար։ հիւանդանոցի մի մէջ հիւանդ պառկած լինելով, երկու բժիշկ զինքը կը նայէին։ որոնք ոչ իսկ լինելին եւ ոչ նորա հիւանդութիւնը կը ճանչէին։ Մարեմոս ակամայ գնելով լսեց՝ որ այսպէս կը խօսէին իրարու հետ լատիներէն լեզուով։ Ցաքանոս էուֆիլիանոս ին անիմա վիլ։ որ կը նշանակէ. Թոյլ մը ընէնք սա անարգ հոգւոյն վերայ։ Սակայն խեղճն նոցա բուսածն իմանալով, եւ մէկն կը ջանայր որ զինքն նոցա ճանկէն ազատէ,

որոնք փորձի համար իրեն դեզ մի պիտի տա-
յին, և դէպ ի անոնց ուղղելով խօսքը՝ ասաց.
Վէ՞ր անիմա ափէլատէս էրօ չուա Քրիսդոս մը-
դուս էպ. այսինքն՝ Ա՞ռ ինչ կը նշանակ դուք այն հա-
գին. դրա համար Յիսուս Քրիստոս ի՞նչ անէր դրան։ Այս
խօսքերը զրուցելով փախաւ Մուբեռաս, ու-
բախանալով իւր արտին մէջ՝ ուղղութեան ժա-
մանակ լատիներէն լեզուն ուսանելուն համար,
զոր եթէ չգիտնայր, անտարակոյս իւր ոգի-
տութեան զոհ պիտի լինէր։

Ուսումն աշխարհագրութեան։

Աշխարհագրութեան ուսումը լեզուագի-
տութեան և մայրենի լեզուին շատ հարիւրապ-
էս մարդուս։ Որովհետև աշխարհագրութիւնը
կ՚ուսուցանէ մեզ երկրիս այլ և այլ գաւառնե-
րուն տեղւանքը, որոնց վերայ շատ անգամ
խօսակցութեան մէջ կը հանդիպի խօսիլ, ուստի
մեծամեծ սխալներ կը գործէք, եթէ քիչ մի
տեղեկութիւն չունենաք այս գիտութեան վե-
րայ։ Ամեն մէկ քաղաքին աշխարհիս մը մասին
մէջ լինիլը չգիտնալով. Ափրիկէինը Եւրոպայու
մէջ կը կարծէք. Ասիայինը Ամերիկային մէջ,
և խաղք կը լինիք ամենուն առջեւ։

Աշխարհագրութիւն չգիտնալուն համար
ծաղր եղող երիտասարդը։

Մի ժողովի մէջ ճամբորդի մի վերայ խօսք

եղաւ, որ Քալէն Տուվը (¹) եկեր էր երկու ժամուն մէջ, թէպէտեւ մէկ քաղքէն մինչեւ միւսն եօթը մղոն հեռաւ է։ Տղուն մէկը լսելով զայս, և չգիտնալով թէ ծովով կը լինի այն ճամբորդութիւնը, ասաց. — Կ'երթամ թէ այս ճամբորդը պատուական և արքնոտաց ձի մի ունէր։ — Չէ. պատասխան տուին իրեն, անիկայ միայն փոյտէ ձի մի ունէր։ — Է՛հ. ինչ կ'ասես, կրկնեց ոգոյն, եօթը մղոն հեռաւ տեղը ինչպէս կրնայ մարդ հասնիլ երկու ժամուն մէջ փոյտէ ձիով մի։ — Բայց հաւատա՛ որ այնպէս եղաւ, պատասխանեց նորէն միւսը. բաւական է միայն գիտնաս՝ որ նորա հեծած ձին թեւաւոր էր և ջրին վերայ կը քալէր։ Այն ժամանակ խելքը տեղ բերաւ ոգուն, և խնդացաւ թէ բաւած ձին նաւ մի էր. ամենայնուն երեսը կարմրցաւ, և հոն եղողներուն առջեւ խաղք լինելուն վերայ ինքնիրեն բարկանալով, կամացուկ մի քաշուելցաւ գնաց անկէ։

Այս մէկ օրինակս կրնայ ձեզ բաւական յորդոր լինիլ, որ զանց շառնէք աշխարհագրութիւնը ուսանելու, որ այնքան հարկաւոր է, և խօսակցութեանն մէջ միշտ կը գործածուի։ Եւ կրնաք բաւ բաւականին տեղեկութիւն մի ունենալ ասոնց վերայ. հասնելու աշխարհագրութեան գրքերը կարդալով, և աշխարհագրա-

---

(¹) Քալէն և Տուվը՝ Գաղղիոյ և Անգլիոյ ծովեզերքին սահմանագլուխներն են, որոնց միջոցը եղած ծովը կ'լուսի նեղոց Քալէնոյ։

կան թղթերն աչքէ անցընելով, որոնց մէջ գրուած կան աշխարհիս շրջս մասերը։

Ուսումն ժամանակագրական։

Աշխարհագրութեան հետ ժամանակագրութիւն եւս պէտք է ուսանիք։ Աշխարհիս սահմանէն միւսիւ ցայսօր անցած ժամանակներուն եւ դարերուն կարգը ճանչելը մեծ օգուտ կ'ընէ ձեզ։ Սոցա մէջ հանդիպուած անցքերն իրարու հետ չէք շփոթեր, եւ մէկ դարու մէջ պատահածն ուրիշ դարու չէք տար, որ է սխալ ժամանակագրական, եւ այս այնպէս սխալ մի է, որ խիստ շատ անգամ կը գործեն ժամանակագրութեան հմուտ չեղողները։

Ժամանակագրութիւն շգիտցող ոչու մի ծաղրելի սխալմունքը։

Աբրոս՝ իւր Աժդահակ պապուն պարարուն մէջ եղած մանուկ, որ մի մատուռակոմխուն ինքն բրուռ. և գիներն գաւոմին մէջ լեցրնելէն յառաջ, որ իմաղաւորին պիտի ասէր. ինքը նախ հանի չեռցնցաւ, ինչպէս որ ասմորուիմխուն էր։ Աժդահակ գիտելով զայն և պատճառը հարցընելով, պատասխան տուաւ Աբրոս և ասաց։ — Վախցայ որ իմոյն չը լինի այս խմելիքը, մանուն որոյ շուրեցի հանին յառաջ եւ առնուի։ Անցած որ տեսայ որ պարարուն մեծամեծայ հացկերոյթ տուած մանուկդ, քչիկ մի խմելնուդ պէս դուք և բոլոր ձեր մեծամեծներդ, ամենքդ եւս մոռուեցաք և ուրիշ բնուիմխուն մի ունեցաք։ Թող տուիք զձեզ այնպիսի բաներ բնելու, զոր մեզ կ'արգիլէիք երիտասարդ լինելուս համար։ Ամենքդ եւս սկսաք անճառնի ձայն մի հանել, պուռալ, և ամենեւին առանձնիդ չէիք գիտեր։ Պարդակուն եղանակաւ մի կ'երգէիք, կարծելով իմ խիստ անուշ երգ մի էր։ Վերջակուրը լինելնալուն՝ երբոք ոտից վերայ որ պարբ բռնելով խաղաք, բայց ոչ իմ մեր ձեր կարգաւոր օրինաւոր չէր, այլեւ ոտից վերայ եւս չէիք կրնար կանգնիլ։ Մէկ խօսքով՝ կ'երեւէր իմ ձեր իմաստ լինիլը մոռցեր էիք, եւ ոչ հրաւիրեալներդ ձեր հպատակաց տեղ կը դնէիք։ — Զրուցէ ինձ ասելու, սրդեակ, ասաց Աժդահակ, քան հայրդ եւս գինի խմելու որ լինի, այս բաներս

չըներ։ — Ո՛չ, պատասխան տուաւ Կիւրոս հա-
մարձակութեամբ, վասն զի՝ երբ անգամ մի իր-
մեր եւս լինի, ետուք չբանեցրնեք »։

Հին Յոցաշրջեան մի շարմանալի չափաւորութիւնը։

Պարսիկներն, որոնց մէջ կրթուած էր Կիւ-
րոս, մինչեւ որ հարկը չատիպէր, իրենց կենաց
պահպանութեան համար ոչ կ'ուտէին և ոչ կը
խմէին, և մի փոքր պարզ կերակրով բաւական
կը լինէին։ Ուստի երբ Կիւրոսին պատը նորա
մանկութեան ժամանակ փառաւոր հայկերցիք
մի տուաւ իրեն, « Ո՛հ, հայր, ասաց անոր, այս
մեծ ծախքով պատրաստուած սեղանդ շատ նե-
ղութիւն պիտի տայ ձեզ, եթէ եկած կերա-
կուրներուն ամենէն ուտելու լինիք։ — Ի՞նչ,
ասաց Աժդահակ, մինթէ իմ պատրաստած սե-
ղանս Պարսկաստանու մէջ եղածներէն փառա-
ւոր և ընտիր կ'երեւի քեզ։ — Ո՛չ, ամենեւին
չեմանիր նոցա, պատասխանեց Կիւրոս, վասն
զի մեք մեր վախճանին հասնելու համար, զոր
սեղան նստած ժամանակ պիտի ունենայ մարդս,
որ է իւր անօթութիւնը մարել, շիտակ և միան-
գամայն կարճ ճանապարհէ մի կ'երթանք. և ու-
րիշ բանի հարկաւորութիւն չունիմք այս բանիս
համար, այլ միայն պատառ մի հացի, և մի քիչ
կոմեռոն կամ ընդեղէնի. և դուք ընդհակառակն
նոյն վախճանին համար այլ և այլ ճանապարհ-
ներէ երթալով՝ հազիւ թէ կէսը կը մատնեք,
ուր մեք աւելի դիւրութեամբ եւ շուտով կը
հասնիմք »։

Այսպէս խօսեցաւ Կիւրոս. բայց իւր խօսքերն իրեն տուած օրինակներովք հաստատելու համար. Աժդահակ իշխանութիւն տալով անոր՝ որ սեղանին վերայ եղած կերակուրներէն օրուն ուզածն առնու ուտէ. Կիւրոս մէկէն առաւ քաշեց Մեդաւորին գինուորներուն, որոնք այն տեղ կանգներ և իրեն ծառայութիւն մի ըրած էին.

Ցանկալի էր որ բոլոր երիտասարդ տղայք այս միտքս բանեցընէին և Կիւրոսի պէս վարուէին. Երբ տղայ մի խիստ պզտիկ հասակէն սովորութիւն ընէ շափաւորութեամբ ապրելու, բաղդը չկրնար իւր կամքն նորա վերայ բանեցընել. և եթէ բարեյաջող վիճակը փոխուելով՝ աղքատանայ եւ ինկնի, որդէն քիչ բանի գոհ լինելու սովորած լինելով՝ ամենեւին նեղութիւն մի չկրեր. և ձեռքի եղած քիչին բաւական կը լինի. Բայց եթէ ընդհակառակն՝ տղայութենէն փափուկ և հեշտասէր կեանք անցընելու սովորած է, չկրնար իւր սրտին ուզած հեշտալի բաներէն յետ կենալ. և եթէ դիպուածով անոնցմէ զրկուի, այս զրկուիլը միայն սաստիկ տանջանք մը կը լինի իրեն.

Վա՜յ այն տղայոց որ խիստ փափկութեամբ կը մեծնան, և աշքերնին ուրիշ բանի չէ, այլ միայն իրենց կամքը կատարելու. Եթէ այնպիսի տղայոց դաստիարակութիւնն ինձ յանձնելու լինէին, զիրենք շափաւորութեան մէջ վարժեցընելու համար, երբեմն երբեմն փորձի մէջ կը դնէի զիրենք, ինչպէս որ Պիթագորաս իւր

աշակերտաց կ'ընէր։ Երբեմն նոցա առջեւն սեղան կը հանէր խիստ ազնիւ կերակուրներով, եւ երբ անօթի աչուքներով աղէկ մի կը գիտէին անոնց, կը հրամայէր որ սեղանը վերցնեն, առանց մէկը ձեռք երկընցընելու եւ այն կերակրոց համը նայելու։

Գուցէ կ'ասէք՝ թէ այս բնչ անգթութիւն է. բայց հաւատացէք ինձ որ ձեզ աղէկ կը լինի. եւ եթէ այս կերպով չափաւոր կենաց սովորիք, որկրամոլութեան ցաւերի հետեւանքներէն ազատ կը մնաք։ Այն ժամանակ ոչ եւս վախ կ'ունենաք ուրիշէն նախատինք կրելու, կարօտութեան եւ այլ տեսակ անկարգութեանց մէջ ինկնելու, աւր տեղ անբարեխառնութիւնք կ'առնու կը տանի բոլոր իրեն գերի եղողները. այլ հաստատակաց յարգը, որոյ համդարտութիւն եւ առողջութիւն կը վայելէք. որոնք չափաւոր կենաց հաստատակ պտուղներն են. եւ զձեզ անցաւոր հաճութենէ մի զրկելով, ձեր կենաց երջանկութիւնը կ'ապահովէք։

Այս տուած գաղերս ձեր մտաց մէջ աւելի խոր տպաւորելու համար, գիտցածիս եւ կրցածիս չափ կը պատուիրեմ ձեզ իրրեւ գլխաւոր առած ընդունելու այս խօսքս թէ՝ Որկրամոլութիւնք, չէ թէ իւր խոստացած հաճութիւնը կուտայ ձեզ, այլ ընդհակառակն օրէ օր աւելի կը թշուառացընէ զձեզ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Քաղաքավարութեան վերայ.

ՑՕԴՈՒԱԾ Ա.

Թէ ինչ է քաղաքաւարութիւնը.

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ ամէն ժամանակ բարեկիրթ մարդոց հարկաւոր յատկութիւններէն մին համարուած է. Այս է որ մարդոյս արժանաւորութեան վերայ այն շքեղութիւնն և գեղեցկութիւնը կ'աւելցընէ, որով սիրելի կը լինի ամէնց.

Առաքինի մարդ մի եթէ սիրուն վարմունքներ չունի, կը նմանի վարպետութեամբ շինուած պատկերի, որու վերայ վայելուչ գոյները չեն տեսնուիր, և կամ ճշմարտապէս ասելով՝ կը նմանի պատուական ադամանդի, այլ շէնքը ոձեւ և անհաւասար. Իւր գեղեցիկ յատկութիւնները՝ այսպէս ասենք, կապիտ վարմունքովն մրճռուած է. Իւր անմարդավարութեամբ կը կորուսանցընէ այն յարգը, զոր կրնար իւր հանճարով ձեռք բերել. և մարդիկ զինքն այն թռչուններուն մէկուն տեղը կը դնեն, որոնք միայն մուրթին մէջ կենդանու հանար ստեղծուած են, և չեն կարեր ցերեկ ատեն երեւիլ՝ առանց ինքնց նեղացաց աչքին.

Զարմանաս մարդոց վերայ ինչ որ կը գրուցուի, նոյնը պէտք է խմանալ հանրամատաքար անքաղաքավար և անկիրթ ազգ մի կամ երբ-

տասարդի համար։ Եթէ ասենցմէ մին կամ խիստ կոպիտ և կամ յանդուգն լիներլով, արժանի չհամարի իրեն մէկուն բարեւ տալու կամ առնելու, և կամ իրեն բարիք մը ընողին շուքը շնորհակալ լինիլ, ահա կ'բռնուի անբաղաքաւոր ոգոյ մի։ Եւ կարծես թէ անտառաց մէջ անբան անասնոց հետ մեծցած է։

Բայց ընդհակառակն, երբ ոգոյ մի շնորհալի կերպով մարդու դիմաց ելնէ, պարկեշտութեամբ և շնորհքով պատասխան տայ իրեն բան հարցընողին, եթէ իւր մեծերուն հետ ակնածութեամբ վարուի, եթէ ընկերութեան մէջ խօսելու կամ լսելու ժամանակը գիտնայ, այն ժամանակ թէպէտեւ ամեն կերպով հարկաւոր եղած արժանապատուութիւնը չունենայ, այսու ամենայնիւ կը սիրեն և կը յարգեն զինքն և անուշ գովեստներ լսելու եւս արժանի կը լինի։

Ահա, սիրուն որդեակք իմ, այսպէս և դուք որքան շնորհալի և սիրուն եղանակաւ այլոց հետ վարուիք այնքան կը սիրուիք և աչք կը մտնէք, վասն զի մարդս ձեր ունեցած արժանաւորութիւնն արտաքին վարմունքնէդ կը գտնէ։

ՑՕԴՈՒԱԾ Բ.

Մարդաճաճանչեան եւ սիրուն ջարմանքի վերայ։

Լսեցէք որ սովորեցընէք զձեզ ամեն պարագայի մէջ և ամենուն հետ մարդավայր և սի-

բուն եղանակաւ վարուելու. վասն զի մարդա-
վարութիւնն եւ շնորհալի վարմունքն ամէն
մարդու գէմ պէտք է ունենալ, և ամէն տեղ
պէտք է ցուցընէք ծանր և նազելի շարժուածք
մի, զգուշանալով անվայելուչ նստուածքէ,
ձամբան շուտ շուտ քայլելէն. այլ և մարմնոյն
շարժմունքը պէտք է չափաւոր լինի, դէմքին
վերայ ամենեւին չպիտի ցուցընէ գոռոզու-
թեան կամ տհաճութեան նշան մի, կամ որպէս
թէ՝ աշխարհս բնաւ իրեն հոգը չընել, զուրիշը
մարդու դեղ չդնել։ Ընկերութեան մէջ զգու-
շանալ պէտք էք հակառակ զրոյցներէ, կամա-
կորութեամբ վիճաբանութիւն ընելէ, մարդուս
խօսքը ընդմիջելէ, անվայելուչ բառեր գործա-
ծելէ, որ ոմանք մարդոց բերանէն կը լսուին։
Բազմութեան մէջ առաջին տեղը շնորհել, նոր
եկողներուն ուրախ երեսով ելնել ու բարեւել. նստելու
երեսներու ժամանակ վայելուչ և շնորհալի եղա-
նակ մի ունենալ. մինչեւ որ չհարցուին՝ պա-
տասխան չտալ. խոսքու մէջ միշտ հաւասար
և միակերպ լինել, թէ կորսնցընելու լինի և թէ
շահելու. ճանապարհին քայլած ժամանակ եթէ
իւր հետն եղողն իրմէ մեծ է, ինքն անորմէ
առաջ եւ միշտ վարի կողմէն երթալու է, եւ
նայելու է որ նախ ինքն բարեւ տայ ուրիշին.
կերակրոյ ժամանակ պէտք է չափաւոր լինել
պահեցող և մաքուր։

Մէկ ամբողջ հատոր մի բաւական չէր լի-
նէր, եթէ ուզէինք մարդավարութեան պա-
հանջած բոլոր պարտաւորութիւններու մէկիկ

մէկիկ գրելու։ Սակայն կարող են ձեր փափագը լեցընել քաղաքավարութեան համար շինուած մանաւոր գրքերը։ Միայն թէ հոգ տանելու է նոցա մէջ եղած դատերն լաւ միտք պահելու, և ոչինչ բանի տեղ չհամարել այն կանոնները, որոնք կրնան օգուտ ընել ձեզ յայտմ մասին։ Թէպէտեւ առաջին անգամ կարդալուդ այդ-քան օգտակար չերեւին ձեզ, այսու ամենայնիւ զանոնք պահելը հարկաւոր է, մանաւանդ երբ կ'ուզէ մէկը քաղաքավար երեւիլ մարդու քով եւ պատիւ առանց աշխարհիս առջեւ։ ուր ընդհակառակն, ինչպէս վերն ըսի, անկիրթ եւ անքաղաքավարէն աւելի աւելի մարդ չկայ հիմակուան ժամանակս։ Եթէ ուրիշ կողմէ արժանաւորութիւն եւս ունենայ, իւր անշնորհ վարմունքով զայն եւս կը կորսուցընէ, եւ տեսնողին այնպէս կարծել կուտայ, որպէս թէ բնաւ կերպով մի արժանաւորութիւն չունի։ Ծննդեամբ կամ հարստութեամբ երեւելի եղող մարդու կը նմանի, որ ռամիկ մարդոց հետ խառնուած կը լինի, եթէ իւր ասոյնանին վայելած հարգուստը չհարգնի, եւ մարդու մէջ անարդ և գծուծ կերպարանքով երեւի։

ՑՕԴՈՒԱԾ Գ.

Քաղաքաշարութիւնն եւ մարդաշարութիւնն ազնուական շարժուելին մէջ կը կայանայ։

Պէտք չէ կարծել թէ քաղաքավար մարդ լինելու համար, բաւական է միայն մարդավա-

բական արտաքին արարողութիւն մի ցոյց տալ. Ճշմարիտ քաղաքավարութիւնն այնքանով չը բաւականանար։ Նախ գլխաւորապէս պէտք է ամենուն հետ գեղեցիկ շնորհալի և մարդասէր վարմունքներ բանեցընել։ Զատիկ բաւական չէ միայն բարեւ տալ, եւ հետերնին տեսութիւն ըրած մարդոց պատիւ ընելն յայտնի ընել, այլ արժան է պարտաւորել զիրենք, և Ջանալ ծառայութիւն մի ընել եւ գործերնուն գտնուիլ առիթ մի պատահելուն։ Այս միջոցով, զոր կրօնն եւ մարդկութիւնն եւս կը պատուիրէ մեզ, ուրիշէն յարգ եւ բարեկամական սէր կը ստանանք։

Քաղաքացիութիւն ջոնթատրեակ։

Օպիենէի կոմսը Ճանապարհորդութիւն ընելով հասաւ երեկոյեան դէմ փոքրիկ քաղաք մի։ Հոն պանդոկ մի իջնելով՝ հրամայեց պանդոկապետին որ կերակուրը պատրաստէ. և շուրջելով միւսակ նստել սեղան, մարդ մի խրկեց նոյն քաղաքի աւագերէցին, ազաչելով որ գայ ընկերութիւն ընէ օտարական Ճանապարհորդի մի, որ միւսակ կերակուր ուտելու սովորած չէր։ Միանգամայն ազաչեց որ ներողամիտ լինի ինքն անձամբ չկրնալուն համար զինքը հրաւիրելու գալ Ճանապարհին յոգնած լինելուն։ Աւագերէցը դեգ ու անկիրթ մէկն լինելով չընդունեց նորա հրաւէրքը, այլեւ քանի մի կոպիտ խօսքեր եւս զրուցեց, որ անծանօթ Ճանապարհորդին

ժամանակը պիտի քերել։ Ասիկայ իրեն փոխանորդ
ի՞նչ ունէր, ընկերատէր և անուշ երիտասարդ
էր, որ այն ժամանակս դիպուածով նորա քով
գտնուելով, ուզեց որ նորա կողմէն ինքն եր-
թայ ստարականին անդամակից լինի։ աւադե-
բէջը հաճութիւն տուաւ, պատուիրելով իրեն՝
որ շատ շխատահի այն գինուորին վերայ։ Ասի-
նենէի կոմսը փոխանորդին հետ անդամ նստաւ,
և տեսաւ որ խելացի ու խիստ անուշ երիտա-
սարդ է։ Իրարմէ զատուելէն առաջ շնորհա-
կալ եղաւ նորա մարդասիրութենէն։ և ուր որ
լեռոյ առանց իրեն քան տալու, եպիսկոպո-
սական պաշտօն շնորհել տուաւ, առանձին
թեմ եւս պարգեւեց իրեն՝ անպատմելի զար-
մանք պատճառելով աւադերէցին, որ այս դէպ-
քովը ուսաւ թէ՝ բնաւ պէտք չէ անքաղաքա-
վարութիւն ցուցնել եւ ոչ շքեղանշցած մար-
դուն, և թէ՝ մարդավարութիւնը միշտ գովելի
և շահաւոր է։

Բայց դայս եւս գիտցած եղիք որ, քաղա-
քավարութիւնն ոչքան որ շահաւոր է մարդոյս,
ամարդութիւնն եւս այնքան վնասակար է,
մինչեւ հետեւեալ պատմութենէն աղէկ կ'ի-
մացուի։

Պատիւ կրոց կողմանէը։

Գաղղիացւոց պատմութեան մէջ կը կար-
դացուի, թէ Ենրիկոս Դ. որոյ եղած լինելով,
ինքնակալութիւն ժամանակ որ եկաւ՝ գնաց մինակուկ

պանդոկ մի. և Հարցուց պանդոկապետին՝ թէ փորը կշտացընելու բան մի ունի։ Պատասխան տուաւ պանդոկապետը թէ՝ կերակուր չկայ, վասն զի ուշ եւ մնացեր, ասաց. իսկ թագաւորը տեսաւ որ կրակին վերայ շամփուր մի կայր լեցուն միսով, Հարցուց ծառէն. «Որո՞ւ համար է ապա այդ խորովիկը»։ Պանդոկապետը պատասխան տուաւ թէ՝ անիկայ քանի մի պարոնների համար կը պատրաստէր, որոնք պանդոկին վերի յարկը սենեակի մի մէջ հաւաքուած են և կը կարծէր թէ թագաւորական մարդիկ էին։ Թագաւորը, որ պանդոկապետին աչքին հատարակ զինուոր մի կ'երեւէր, ազաչեց որ երթայ այն պարոնները զրուցէ թէ՝ իւր պանդոկը ճանապարհորդ մի եկեր է յոգնած ու անօթի, և կ'ազաչէ զիրենք որ իրենց խորոված է՝ մաս մի հանեն, կամ իրենց սեղանն առնուն զիրենն եւս, ասելով թէ՝ իւր մասին ինչ որ ինկնի՝ կը վճարէ. բայց պարոնները երկու խնդիրքը մէկէն մերժեցին՝ ասելով. «Մեր կերակուրը մեզ հագիւ կը բաւէ, և թէ՝ ուրիշ անծանօթ մարդ չենք ուզեր մեր սեղանը»։ Ենրիկոս բարկանալով այսպիսի յանդուգն պատասխանին վերայ, զոր բարձր ձայնով կուտային որ ազէկ մի լսուի, իւր հեռն եղող բոլոր մարդիկը ներս մղուց, որոնք ասա տասուներկու հոգի կային, որոնց մէջ էր նաեւ պահապան զօրաց գլխաւոր Վիդրիի պարոնը, որուն հրամայեց խարազանով լաւ մի վարձատրել նոցա կողմանէ թիւնը։ Հրամանն ինչպէս որ պէտք է՝ ի գործ

դրուեցաւ, և պարոններն իրենց վնասովն ուսան՝ թէ քաղաքավարութեան պարտքերը չկատարողն, ուրիշն աւելի իրեն կը վնասէ։

Քաղաքացիութիւնը կամ աշխուժականութիւնը ոչինչ է բնական չինի։

Ձեզ քաղաքավարութեան և աշխուժական վարմունքներու յորդորելովս, միտքս այն չէ թէ՝ դուք ինքզինքիդ արուեստակութեան տաք, այսինքն ձեր վարմունքը բնականէ դուրս լինի շարժուածքով, հագուստով և զարդարանքով, որ առաւելապէս երիտասարդաց վերայ կը տեսնուի. եւ ասոր համար իրրու ծաղր ընելով զիրենք՝ իգացեալ աշխուժական կը կանչեն։

Տղայք, զգոյշ կեցէք, մի գուցէ այս ծաղրական օրինակաց հետեւիք, որ է արուեստակեալ սուտ քաղաքավարութիւն։ Եւ այս կերպ մարդավարութիւն բանեցընող երիտասարդը թէպէտեւ խելացի և խնամուն լինի, աւելի առելի կ'ընծայէ զինքը։ Նորա խելքը միտքը միայն իւր գեղեցիկ կերպարանաց, պչրանաց, կոտրտուելուն, զարդարանաց և իւր անձին գեղեցկութեան հետ լինելով, իւր բոլոր յարգը պատիւը այս անցաւոր արտաքին բաներուս վերայ կը հաստատէ, և այլոցմէ յարգ և մեծարանք տեսնելու արժանաւոր կը կարծէ զինքն, անոր համար՝ որ մի քանի քաղաքավարական արարողութիւններ (գոմիպլիմէնթներ) գիտէ, և կը պարծի՝ որպէս թէ լաւ կը ճանչէ խոնարհ-

հուխտեան ինչ լինելը. բայց սակայն խելացի մարդիկ չեն խաբուիր բնաւ այս արտաքին խաբեբայ վարմունքներէն։

Ազնուաբարոյ և շնորհալի եղիք, բայց ձեր քաղաքավարութիւնը շինծու չլինի. և Ջանացէք այնպէս շարժուածքներ ունենաք, որ պարզ և բնական լինին։

Իսկ այն շինծու քաղաքավարութիւնն որ միայն արտաքին կերպարանաց վերայ կը կայանայ, ծաղրական է, և ուրիշ բանի չծառայեր, այլ միայն տխմար մարդոց առջև դնելու զմեզ։

Երիտասարդ տղուն մէկը, որուն Վեսպասիանոս կայսրը պաշտօն մի շնորհած էր, զոր և ինքը խիստ կը բաղձայր ստանալու, փուխտաց անոր շնորհակալութեան երթալու. և կարծելով հաճելի բան մի ընել նորա աչքին, գլխէն մինչև ոտքերն անուշահոտ իւղերով օծուեցաւ, և խիստ ազնիւ հագուստ մի հագաւ։

Բայց Վեսպասիանոս այնպէս զզուեցաւ նորա արուեստական արտաքին կերպարանքէն, որ իւր շնորհած պաշտօնը ձեռքէն առնելէն յետոյ, որով իրեն պատիւ բրած էր, նորա գրգանաց և զարդարանաց վերայ շատ զանց առը ունենալն եւս յանդիմանելու համար՝ բարկանալով ասաց իրեն։ «Շատ ազէկ էր որ սխտոր հոտէիր»։

Ուրիշ պակասութիւն եւս, որ նոյնպէս մարդամարութեան եւ ազնուական վարմունքին հակառակ է, և դուք իսկ պէտք է զգոյշ կենաք միշտ անկէ, այն խենդութիւնն է, որով

մարդս բան գիտցողի մի տեղ անցնել կ'ուզէ, և առով կը ցանկայ ուրիշէն յարգ առանալու, այս մոլութիւնս եւս առաւելապէս ազգայոց մէջ հասարակ եղած է։ Ասոնցմէ քանի քանիները կը տեսնուին ամէն օր, որոնք մոքէ զուրկ և ամենեւին բան մի չգիտնալով՝ ամէն խօսքի մէջ կը մտնեն, և խնամառնէ մարդու մի պէս կրակուին խօսիլ գոռոզ և ամբարտաւան գէմքով, իրենցմէ գատ ուրիշ գամենքն եւս կը նախատեն, և այս կերպով կը խաբեն ապէտ մարդիկը։ Իսկ իսկապէս և արդարտ մարդը գիտէ նոցա ինչ առնիանին և ինչ արժանաւորութեան տէր լինելը։ Կը տեսնեն որ այս գոռոզամիտ մարդոց բոլոր կատարելութիւնն ամենիս ունայնամիտութեան մէջ կը կայանայ, որու վերայ կը պարծենան, և ամէն մարդ եւս գիրենք իրենցմէ տեղ գնելով վրանին կը ծիծաղին։



ԳԼՈՒԽ ԻԶ.

Կենաց վիճակ ընտրելու վերայ։

Թէպէտեւ գուք հիմայ այն հասակին մէջ չէք որ կարող լինիք որոշել ձեզ կենաց վիճակ մի, այսու ամենայնիւ, սիրուն որդեակք իմ, որովհետեւ քիչ ժամանակէն պիտի ստիպուիք գործի մի ձեռք զարնելու, ուստի պարտք կը համարիմ ինձ այս բանիս վերայօք խրատ տալ

ձեզ, որպէս զի հիմնական կարող լինիք հարկաւոր զգուշութիւններն ընել, որ շտապիք այս ամենահարկաւոր գործիս մէջ։

ՑՕԳՈՒԱԾ Ա.

Այս ցնորութեան հարկաւորութիւնը։

Ամէն աւելի հարկաւոր գործ կրնամ ասել թէ չկայ, ուստի կախեալ է բան մեծի մասին հոգւոյ յաւիտենական փրկութիւնը. վասն զի երբ բարեպաշտութեամբ լաւ ընտրութիւն ընելու լինի, և աստուածային կոչման հետեւի, կրնայ այն ժամանակ յոյս ունենալ բարեյաջող փախճանի մի հասնելու. վասն զի Աստուած՝ որ հաւատարիմ է, անխնամ չթողուր բնաւ զանոնք որ իւր կոչման ձայնին կը հետեւին։ Բայց ընդհակառակն՝ մէկը եթէ նորա կոչման ձայնին մտիկ չընէր, թող վախնայ նա իւր հոգւոյն փրկութեան վերայ. վասն զի կրնամք այնպէս կարծել թէ նա Ղատափնամութեան կարգադրութեանց հակառակ ընտրած վիճակին մէջ չկրնար այնքան օգնութիւն գտնել։

Նորա որ լաւ կ'ընտրեն իրենց վիճակը, որու մէջ պիտի ապրին, կը նեմանին այն ծառերուն՝ որոնք իրենց յարմար եկող երկրի և կլիմայի մէջ կը տնկուին։ Առանց մեծ հոգ ունենալու նոցա վերայ և մշակելու, զարմանալի արագութեամբ կ'աճին, տերեւաւոր ճիւղերնին կը տարածեն, եւ խիտ գեղեցիկ եւ առատ

պատուղ կը բերեն։ Իսկ ընդհակառակն նոքա որ երկնային կոչման անհաւատարիմ լինելով, Աստուծոյ կոչում բրածէն տարբեր վիճակ մի կ'ընտրեն իրենց, կը նմանին այն ծառերուն, զորոնք ուրիշ գաւառ ու երկիր կը փոխեն կը տանին, որ իրենց յարմար չեն գար։ Անօգուտ տեղը կը ջրեն զանոնք եւ մեծ հոգ կ'ուզենան վրանին մշակելով, որ ածին և ծաղկին, վասն զի միշտ տկար և միշտ անպտուղ կը մնան։ Կամ թէ որ պտուղ եւս տան, ամենեւին համ հոտ չեն ունենար, և կատարեալ չեն հասունցար։

Մէկ խօսքով՝ այն վիճակին ուր տեղ Աստուած կը կոչէ առաջնորդել մեզ դէպ ի փրկութիւն նաւահանգիստն։ Ասկէ հրաժարուելով եթէ ուրիշ ճանապարհէ գնամք, յայտնի է որ վտանգի մէջ կը ձգենք զմեզ. եւ կ'երթանք կը զարնենք գլուխնիս այնպիսի տեղ մի, որ մոքերնիս դրած նպատակէն դուրս հակառակ ծայր մի կը լինի։

Մի կարծէք թէ ասով պարապ երկիւղ տալ կ'ուզեմ ձեզ. այս անհակառակելի ճշմարտութիւն մի է, եւ բոլոր աշխարհս կը ճանչէ։ Ուրեմն, սիրելի որդեակք իմ, հոգ տարէք որ իմանաք թէ ի՞նչ վիճակ ընդունելու կը հրաւիրէ զմեզ Աստուած։ Մի յուսարիք հետեւիլ երիտասարդաց մեծագոյն մասին արիւնակին, մանաւանդ մեր ժամանակի, որոնք առանց հոգերնին ընելու Աստուծոյ իրենցմէ խնդրածը, խելքերնուն փչածին պէս կենաց վիճակ մի կ'ընտրեն. և այն վիճակին մէջ ուրիշ բան չեն

խնդրեր, այլ զայն միայն որ իրենց ախորժակին յարմար և իրենց մոլի հակամիտութեանց հաճելի լինի։ Գոնէ զուք եւս այն սուրբ ոգուն պէս զրուցեցէք, որ երբ ուրիշներըլ կը սոխ-պէին զինքն աշխարհ մտնելու, ուր տեղ սատանայածային կոչուելն զինքը կանչած չէր, եւ իր առջեւ կը բերէին թէ ինչ մեծ պատիւներու եւ սատանայածաց տէր պիտի լինի եթէ կարդուի. «Ի՞սէր ներքին զգացողութեամբ. «Զինչ օգուտ է զաշխարհ ամենայն շահիլ՝ եւ զանձն իւր տուժել»։

Թէպէտեւ աշխարհիս ամենէն մեծ իշխանութեան աթոռը նստած լինիք, եթէ Աստուծոյ կամաց հակառակ է այն, լաւ պէտք էր ձեր միտքին վերայ, և դժբախտ մարդու տեղ դնել զձեզ։

Ուրեմն արժան է ամեն բանէն յառաջ Աստուծոյ կամքն իմանալ, եւ ձեր ընդունելու միտքին մէջ ուրիշ բան չդնելով, այլ միայն Աստուծոյ ձեր վերայ ունեցած դիտաւորութիւնները կատարել. վասն զի կենաց որ և իցէ միտքի մէջ մտնելն առանց Աստուծոյ կամքն իմանալու, կը նմանի նաւու մի մէջ նստելու առանց նաւապետի, որ յետոյ մեծ վտանգի մէջ կ'իյնի, միջեւը նաւաբեկ լինելու։

Բայց վերջապէս Աստուծոյ կամքն ազէկ ճանչելու, և այս ամենահարկաւոր գործին մէջ չսխալելու համար, պէտք է կարեւոր միջոցներ և նախապատրաստութիւններն ի գործ դնել, զոր խոհեմութիւն և կրօնը կ'ուսուցանեն մեզ։

ՑՕԴՈՒԱԾ Բ.

Աստուած ցնծութիւն ցնծալու համար դեռ եղած նախացգուշութիւնները։

Ա. Պէտք է անարատ և կանոնաւոր կեանք վարել, վասն զի հաստատակամ Աստուած անարատ և անմեղ հոգւոց հետ կը հաղորդակցի։

Բ. Պէտք է դէպ 'ի Աստուած դիմել աղօթիւք և սէպ սէպ ասել Սամուէլին պէս. «Խօսէ՛ Տէր, և յայտնէ ինձ քու կամքդ». կամ ինչպէս և՛ասէր Դաւիթ. «Ցո՛ց ինձ, Տէր, այն ճանապարհն, ուսկէ պէտք է որ ես գնամ, ինչու որ ես իմ հոգիս դէպ 'ի քեզ վերցուցի»։ Այսպէս աղօթք որ ընես, Աստուած եւս քեզ մոտիկ կ'ընէ, մանաւանդ եթէ ջերմեռանդութիւն ունենաս և հաղորդութենէ ետ չկենաս։

Գ. Հարկ է խորհուրդ հարցընել Աստուծոյ պաշտօնէից, կ'ուզեմ ասել ձեր խղճմտանաց կառավարին, նաեւ ձեր ծնողաց, զորոնք Աստուած իբրեւ առաջնորդ տուած է ձեզ։ Ուրեմն ամենեւին բան մի որոշէք առանց խրատ հարցընելու նոցա, և առանց անկեղծութեամբ ձեր իրաւունքներն նոցա յայտնելու։ Պարտաւոր էք դուք նոցա կամքէն դուրս չելնել և հնազանդութիւն ցուցընել։

Սակայն կան այնպիսի առիթներ, որու մէջ պէտք չէ ծնողաց բաղձանացն և կամաց յարմարիլ. վասն զի երբ Աստուած, օրինակի համար, ձեզ յայտնապէս խնդրնէր թէ կ'ուզէ

որ դուք եկեղեցական պաշտօնի մէջ մնանք. և եթէ ձեր ծնողքը շատախօսութեամբ ուզեն զձեզ յաշխարհ մոցընել, ուր տեղ ձեր հոգւոյն փրկութիւնը մեծ վտանգի մէջ ինկնելու լինի, այն ժամանակ օրէն է դէմ կենալ նոցա կամաց, բայց առանց որդիական հնազանդութենէ և ակնածութենէ յետ կենալու, զոր պարտաւոր էք իրենց. պէտք էք պատասխան տալ նոցա Աստուծոյ այս խօսքը, զոր անգամ մի զրուցեցին. «Իրաւունք է որ մեք ձեր հրամանն Աստուծոյ հրամանէն մեծ համարիմք»։ Կամ եթէ ընդհակառակն՝ ձեր ծնողքն անխորհրդաբար, կամ ծաղրական ջերմեռանդութեամբ ուզեն զձեզ քահանայ կամ վարդապետ ընել, որ հակառակ լինի Աստուծոյ կամաց, նոյնպէս պէտք չէ նոցա հնազանդիլ։ Վասն զի շատ օրինակներ ունիմք մեր առջեւ, որոնք մանկութեան ժամանակ առանց կարող լինելու անձամբ ընտրել իրենց վիճակը, ծնողաց անխոհեմ ընտրութեամբ եկեղեցական պաշտօնի ձեռք զարնելով, և կամ կարօտութենէ տառապեալ՝ առանց Աստուծոյ կամքն խնդրելու, շահու եւ հանգստութեան համար սրբազան կարգն ընդունելով, որքան վատ հետեւանքներ ունեցեր են յետոյ. չարաչար գործածելով իրենց պաշտօնն, որուն խիստ մեծ զգուշութեամբ պէտք էր մտնեցին։ Վասն զի՝ ինչպէս կրնանք ասել՝ թէ Աստուծոյ պաշտօնն անվրէպ կը կատարէ նա, որ անշուշտ առանց երկնային կոչման նոյն սրբազան կարգին ձեռք զարնելով,

զանիկայ իրեն գործիք մի կ'ընէ խեղճ ժողովուրդը կողոպտելու, անարժան գործերու յանձնառու լինելով, և իբրեւ գայլ ոչխարաշգեստ անմեղ գառանց մէջ մտնելով, անուշ լեզուով զանոնք կ'օրսայ և յաւիտենական կորուստը կը զրկէ, փոխանակ դէպ 'ի երկնից ճանապարհն առաջնորդելու։ Ահա այսպիսիներն առանց լաւ ընտրութիւն ընելու և Աստուծոյ կամքը ճանչնալու եկեղեցական վիճակն ընդունողներն են։

Աստուածային կոչման հաւատարիմ եղող Եպիսկոպոսը։

Երբ Փրանկիսկոս Սալէզին խմացաւ այն վիճակն ուր կը հրաւիրէր զինքն Աստուած, իւր ծնողքը պարապ տեղը կ'ասէին իրեն՝ թէ ծնողացն անդրանիկն է, և թէ նորա համար պէտք է որ իրենց նեցուկ և օգնական լինի. անօգուտ տեղն նորա կը զրուցէին՝ թէ եկեղեցական վիճակն ընդունելու համար ունեցած բաղձանքը իւր անխոհեմ ջերմեռանդութենէ յառաջ եկած է, և թէ՝ իւր հոգւոյն փրկութիւնը թէ աշխարհիս և թէ եկեղեցական կարգին մէջ կրնայ ստանալ։ Պարապ տեղը նորա դիմաց կը բերէին պատուաւոր և բազմաշահ աստիճաններն, որոնց կրնար հասնիլ յաշխարհ մտնելով. ամենեւին ինչ որ ըրին՝ չկարողացան նորա միտքը դարձընել իւր սուրբ դիտաւորութենէն։ Աստուծոյ կամքն իւր ծնողաց կամքէն մեծ համարեց, և այն իրեն խոստացած անցաւոր փառքերէն հրաժարիլը լաւ գտաւ, քան թէ

աստուածային կոչման շնորհքները կորսուցը-նել, որ գինքը սրբութեան գերագոյն աստի-ճան բարձրացուց։

Ահա, սիրուն որդեակք իմ, գուք եւս պէտք էք այս օրինակիս հետեւելով հնազան-դիլ երկնային կոչման, առանց մտիկ ընելու ձեր ծնողաց, որոնք կ'ուզեն իրենց կամացը դարձնել զձեզ. ապա թէ ոչ՝ մարդոց հրա-մանն Աստուծոյ հրամանէն մեծ համարած կը լինիք, և զձեզ արժանի կ'ընէք պատժոց, որով շատ անգամ կը պատուհասէ Աստուած զա-նոնք, որ իւր կամաց դէմ կենալով՝ այնպիսի վիճակ մի կ'ընտրեն, ուր ի վերուստ կոչուած չեն։ Մէկ օրինակ մի միայն կ'ուզեմ բերել հոս Լատին գրքէ մի, ուսկէ կրնաք մակաբերել թէ՝ ինչպէս Աստուած անաչառապէս կը պատժէ զանոնք որ կը համարձակին Նախախնամութեան դիտաւորութեան հակառակ՝ իրենք իրենցմէ կոչումն ընել։

Իւր կոչումն զոկանցուն համար դատի կրոց Երիտասարդը։

Ինչ ատեն Բենեդիկտոս Հայրն իւր սրբու-թեան համբաւով կը հռչակուէր, եկեղեցական Երիտասարդին մէկը, օր մի նորա մօտ գնաց որ ազատէ ազատել զինքը դիւէն, ուսկէց թշուա-ռաբար կը տանջուէր։ Սուրբն աղօթք ընելով Աստուծոյ, ազատեց այսահարեալ տղայն չար դիւին ձեռքէն. բայց բժշկելէն յետոյ պատ-ուիրեց նորա Աստուծոյ կողմէն՝ որ սրբազան կարգ չընդունի, ասելով՝ որ եթէ համարձակի

քահանայ ծառայելու։ Աստուած նորին խիստ
նամբարեալ կամաց զբարին նորա մարդասէրն տիրել
լու ի պատուոյ իւր յանդգնութեան։ Զգալի բիւրոյ
խիստ վարանեալք այս ապականելիքն՝ մինչդր
զբան սուրբ ճշմարտութիւն խոստանէ զուրբ չինել։
բայց կամի մանուանակ անցանելն մոռանալով։ կամի
իւր ձեռագրեալն ամրապնդելով։ Համարձակեցաւ
իւր եպիսկոպոսութիւն երթիալ եւ արքայական կարգդ
խնդրել։ Իսկ նա սուրբ ճշմարտութիւն բրուած կամն
խոստացուցեալ նոցին ինքացած չգիտելով՝ չէ շատաց։
մինչեւ առաւել նորա քահանայութեան ասոյ
ձանալ։ բայց զի նա Տոգիս բնակութեամբ էր զայն։
կիսամեռն խնկեալով եպիսկոպոսութիւն ասէն եւ իւր
անդամոցն սուսերայն կերպով մի ծանանկուելով։
ապրելոյ ձայնով պատայ՝ մեռ նոցն բարկութիւն մեջ
նորին դիւանդեցաւ։ արժանեալ պատոյի իւր
յանդգնութեան։ միասն զի տեսանց մոռիկ բնեալ
Աստուծոյ հրամանին։ որ ի՝ արդիւնիկ զինքդ
սուրբ ճշմարտութիւն բերելով արքայական ասոյ ճանն
չինելու։ յանդգնաբար խնդրեր եւ բնդուներ էր
նոցն սուրբ կարգդ։

Զիմ Աստուած միշտ ոչարել ի սատանիկ կերպ
պոյ շարաւանք զանոնք՝ որ իրենց կոչման Տեա
ռատարանութեամբ չեն հաւանիր։ սակայն ան
պատուոյ եւ չմոռցաք։

Որքան մարդիկ կան որոնց ի գանանամիտ
փոխուած է այն բարդրանամիտութիւն։ զոր կր
յուսացին գանել նոցն միջնակին մեջ։ զոր Ա
ստուծոյ կանոնց հակառակ բնակութիւն եւ չեռոց
զայն բնդունելիւն ղղջացան։ Բայց մեկ եւ այն

անցաւոր երջանկութիւնք մարքերնուն գրած են պէս փայլած եւս չիներ։ այսու ամենայնիւ յաւակցութիւնն ապաւնի է։ փոխն զի զաւառս է յաւիտենական երջանկութիւն արքայութիւն հաւատով մի ոյնպիսի Ճանապարհէ՝ որ Աստուծոյ ցրցուցած է տարքեր և ներհակ է։

Զանոնցմէ անդնդին՝ մէջ շատ ամբարիշտներ կան։ որոնց հոն բնակելուն պատճառն իրենց կոչուելն հրաժարիլն է։ և կրնային փրկութիւն ունենալ նուազհանգիստ հաւատով՝ եթէ հաւատարմութիւնը հեռուէին անոր։

Այսպէս օրինակով ուրիշ ամէն ջանք ի գործ դնել։ որ Ճանապարհն այն Ճանապարհն ուսիկ Աստուած կ'ուզէ զէպ ի իրեն առաջնորդել զձեզ։ և զայն Ճանապարհէդ չեւոյ՝ իմ վերը ցրցուցած զանազան միջոցներն ի գործ դնելով։ զնացէք նոյն Ճանապարհէն անելիկիս զրոնս։ և մի եւս անկէ դուրս ելնէք։

Աստուածաշունչս ասկէ կախեալ է ձեր երջանկութիւնը եթէ այս և եթէ հանդերձեալ աշխարհին մէջ։ Այն կենաց միջոցին ուր Աստուած կը հրաւիրէ զձեզ։ ընդունելու որ լինիք։ իրրեւ մէկ գրուս մի կ'ուզենար եթէ այս աշխարհս վերջ հանդիսաւ կեանք փարելու։ և եթէ երկնից մէջ անեանց փառքը ժառանգելու։

Արդ։ որ և իցէ միջոց մի որ ընդունիք։ Ընտրեցէք։ միթէ որդեակք իմ։ հաւատարմութեանը կատարելու նորա պարտաւորութիւնները։ Ամէն միջոց մէջ քարի փարքը ճշմարիտ երջանկութեան աղբիւրն է։ ուստի չիրնար

մարդ ճշմարտապէս երջանիկ լինիլ, եթէ միշտ առաքինի և պարկեշտ չէ։ Եթէ դժուար բան է առաքինութիւն և բարեպաշտութիւն ճանապարհներուն մէջ միշտ հաստատ քայլել, ապա մեծ մեծ օգուտներ կան անկէ քաշելու՝ եթէ քնաւ չմոլորիք։

Եւ որովհետև մեր երջանկութիւնը բոլորովին մեզմէ կախեալ չէ, և նոքա՝ որոնց հետ պիտի կենակցիմք, կրնան զմեզ կամ երջանիկ կամ դժբախտ ընել, ուստի պարտք կը համարիմ ինձ խմացընել ձեզ՝ որ եթէ անդամ մի ամուսնութեան միջնակին ընդունելու լինիք, հարկ է ձեզ այն կարգը հաստատելնէդ յառաջ ճանչել ոչ միայն ձեզ ընկեր ընելու անձին խնամուն վարքը, այլ և նորա բարքն ու վարքը, որպէս զի յետոյ անօգուտ տեղ չզղջաք։

ԴԼՈՒԽ ԻԷ.

Տէրէք ժայռերուն դէմ զարնելին կը գգուշացուին, և աշխարհս մէջ շատ անգամ հանդիպած վտանգները։

ԺԱՄԱՆԱԿՍ և աշխատութիւնս կորսնցուցած կը լինիմ, սիրելի որդեակք իմ, եթէ՝ ինչպէս որ միանգամ այս տեղս ըսի՝ ջանալով ձեր սրտին մէջ շինելու առաքինութեան սէրը հանդերձ բարոյական խրատներով, դուք եւս ձեր կողմէն հոգ չտանիք գգուշանալ անառակ արդայոց խօսքերէն և օրինակներէն, որոնք՝ ինչպէս ես կը կարծեմ, խիստ դէշ ժայռեր են, և

խոսում վախենալ պէտք են ունենալ՝ անփորձ երիտասարդներից։

Շատ շատ և անհամակ տղայք կան, որ գէշ խրատներ կուտան իմ տուածներուս գլխովին հակառակ, զորոնք ձեր մտաց մէջ տպաւորելու համար ձեզի եկած ջանքն ըրի։ Կան ուրիշներ եւս որոնք կ'ասեն՝ թէ երիտասարդական հասակը զուարճութեանց գարուն է, և թէ՝ խնդութիւն է ուսմանէ և աշխատութենէ զայն անցքերեալը։ Ուրիշներն եւս կը խրատեն՝ թէ պէտք է ամէն մարդոց յարմարիլ և որու հետ որ կը տեսնուի մէկը, նոքա օրինակին հետեւելու է։ Կը գտնուին այնպիսիներ եւս, որ ձեր պարկեշտ և բարի վարքը ծաղր կ'ընեն։

Ահա ասենք և ասենց պէս ուրիշ շատ հակառակ խօսքեր կը լսէք հարիւրաւոր տղայոցմէ, զորոնք կ'երևի թէ դժոխքը դուրս փսխած է երկրիս երեսը, փարձելու եւ մոլորեցընելու համար զանոնք որ կ'ուզեն բարեկարգ և բարի օրինակ լինել այլոց։ Բայց դուք մի խաբուիք նոցա խաբէութենէն։ Զձեզ երեսն 'ի վայր կ'ուզարկեն, վասն զի ձեր բարեկարգ ընթացքն իրենց անառակութեանց լուսոյ յանդիմանութիւն մի է։ Բայց սոյգ գիտցիք որ իրենց սրտին մէջ կը յարգեն զձեզ և ձեր երջանիկ վիճակին վրայ եւս կը նախանձին։ Գուցէ նաեւ երբեմն ձեր հասատատուն առաքինութիւնը տեսնելով՝ կը պատուեն զձեզ։ Մինչեւ ձեր առջեւն իրենց անմիտ կատակներն եւս կ'ամչնան քանի մը։

Ընառակ ազայոց առարինութիւնք դատուելոյն։

Բնբնարտիսնս Միենայցին իւր առանձն ժամանակ շատ անգամ հանդիպելոցս անկիրթ եւ շար ազայոց մէջ գտնուել։ քայց որոշեցուցս ամենքն եւս կը ճանչէին նորա առարինութիւնը, ասոնց չէին կրնար անոր արժանաւոր եղած պատիւը շնորհել։ Իւր ներկայութիւնը տանձ մի էր։ որ միանգամ խիստ անառակ ազայն կը զսպէր։ Մի քանի ազայք մէկտեղ ժողովուած ժամանակ երբ նա երեւալու լինէր, ամենքն մէկէն կը լռէին։ — Լռեա՛ կեցէք։ կ՚ասէին իրարու։ Բնբնարտիսնան հոս է —։

Բայց թէպէտեւ լերբ ազայք ձեզ արհամարհութիւն միայն ցուցընելու լինին։ միթէ դուք առատօրէն չէք փարձատրուիլ ձեր խղճին քարի վկայութիւնքն եւ քարեկիրթ մարդոց ձեզ տուած յարգութիւնքը։ Միմիայն առաքինի մարդ կրնայ մեզ պատիւ ընել։ որուն անթիւ անառակ ազայք չեն կարեր փառաւել։ եւ ոչ թէ այլոց մեր վերայ ունեցած կարծիքն։ այլ մեր անձին վերայ մեր ունեցած կարծիքն է որ կը նայ երջանիկ ընել զմեզ։

Բայց դուք որոշեցուցս խեղ ազայոց անառակութեան եւ անպարկեշտ լեզուին գայթակղութիւնն դեմ չէք կարեր երկար դիմանալ եւ քաջութիւնքդ յաղթել։ ուստի մեծ խնամատարութիւնն այն է՝ որ նոցա հաղորդակցութիւնէն հեռու փախչիք։

Լերբ եւ անառակ ազայոց օրինակն եւս

փոխարինաւոր ժողովն մի է, ուստի զգուշանալ պէտք է. վասն զի պէտք չէ կարծել՝ թէ ամենեւ եկեղեցական ոգւոյն իսկ ուսուցած բնաւորութեան կանոնացս համեմատ կրօնաւորութիւն։ Շատերքը կը սեպուին գոնէ որ զբաղուին ներհակ ճանապարհներու մէջ կը քայլեն. եւ զոյգ՝ խրատուած չարիսն հանդիպիլ ձեզ ուղիղ շաւիղն ծոցելու։

Եթէ սեպուին գոնէ որ անթիւ յիսնար մարդիկ ինքզինքնին խրթեւ խոց գահավէժ ուղղի մի վար կը ձգեն. գոնէ չէ թէ նոցա չէր հեռուելիր. այլ իրենց կուրութենէն միայն իսկ կը խաղնաք եւ կը սոսկաք։ Արդ՝ նոցանէս սոսկալ պէտք է, երբ անուանակ եկեղեցականքդ չար օրինակ տալու յինին ձեզ։ Սոքա եւս այլոց պէս յիսնար մարդիկ են. բայց սոցա կարուսանն ամենեւին զձեզ իրենց հետ չմոլորեցընելն է՝ զաստուածելի իմաստութեան եւս կ՚ընեն իրենց յիսնարութեամբը։ Վասն զի նոքա իրենք թեպետ ոչ թիւն օրինակը միշտ կանոն չէին մեզ. այլ նոցա միայն սիրոյն հետեւելու համար, որոնց վարքը լեցուած է գիտութեամբ. բայց երբ ճշմարտութեան շաւիղն նոքա եւս ոտքնին ունին, այն ժամանակ սուրբերուն հետեւելու ուրախ ենք հետեւելու մեր՝ պարտաւորք ենք հետեւիլ անոնցմէ։

Երկու ուսումնական եկեղեցականաց խնամուն քարոզ։

Թէպէտ ժամանակ սուրբ Գրիգոր եւ սուրբ Բասիլեայ իրենց ուսման ժամանակներուն կը պարծանք էին. իրենց բարեմասնութիւնքը պատուեր էին մարդոց եւ

անառակ տղայք։ Բայց մինք, կ՚ասէ սուրբ Գրիգոր, այն ընդհանուր մարմնեան մէջ նման նոմիրն կը բերէինք բանասանեղծներուն առաջին պէս՝ մի գեսոյ։ որ ծոյու լեզու ջրերուն մէջ իւր անուշութիւնը կը պահէ, կամ անուանոյ մի՝ որ կրակին մէջ անիւնաս կը մնայ առանց տաքութիւն զգալու։ Մենք նոցա հետ ամենեւին սեռութիւն չէինք ըներ, որոնց օրինակը կարող էր զմեզ գլուխ հանել։ Մենք Ամէնքս մէջ երկու ճանապարհ միայն կը ճանչէինք, մէկը Եկեղեցոյն, միւսը գայրատան։ Իսկ այն ճանապարհներն որ գէպ 'ի աշխարհային հանդէսներ, թատրոններ, հասարակաց խաղալու տեղեր և պարահանդէսներ կ՚առաջնորդեին, երբէք չէինք ճանչեր։

Զեզ օրինակ առէք, սիրասուն որդեակք իմ, այս երկու սուրբ երիտասարդաց վարքը։ Նոցա հետ միայն յաճախ սեսնուեցէք, որոնք կրնան ձեզ օրինակ տալ քրիստոնէական առաքինութեանց։ Բարի խրատներն իրարեւ կանոն սիրով ընդունեցէք։ և ընդհանրապէս խօսելով՝ նայելու էք որ խրատն անփորձ երիտասարդներէն չընդունիք, այլ խելացի մարդոցմէ՝ մանաւանդ ծերունիներէն ընդունիք՝ որոնք տարիքով և փորձառութեամբ իմաստուն եղած են։ քայց հասարակօրէն տղայք չեն ուզեր նոցա մօտ երթալ խորհուրդ հարցնելու, բան ուսանիլ։ մանաւանդ անոնցմէ հեռու կենալը պարծանք կը համարին իրենց։ մինք իրենցմէ շատ բան գիտնամք ասելով՝ մարդու տեղ չեն դներ զմ-

բենք, եւ կ'անարգեն եւս։

Պառնամք նորէն շար օրինակաց վերայ խօսելու, որոնք խեղճ նորահաս ազգայոց մեծագոյն մասին գլխէ ելնելուն ցաւալի պատճառն է. ուստի պարտաւոր եմ ասել ձեզ՝ թէ առանց շարունակ հոգ տանելու շար ազգայոց օրինակէն հեռու փախչելու և դէմ կենալու, անկարելի է անմեղութեան վիճակին և առաքինութեան սիրոյն մէջ մնալ։ Դժբաղդաբար եթէ յանցանքի մէջ ինկնելու լինիք, զգոյշ կեցցիք շատել այն խօսքը, թէ՝ ահա ուրիշ ազգք եւս կ'ընեն. և մի կարծէք թէ ասով կրնաք արդարանալ։

Ուրիշներուն պակասութիւնները չեն կարեր մերին արդարացնել։ Գործուած շարութիւնը բնաւ ներելի չկրնար լինիլ՝ թէպէտ եւ գործողները անթիւ և անհամար հոգի լինին, այլ միշտ շարութիւն կը համարուի, և հեռուապէս արժանի է միշտ արհամարհելու եւ անկէ միշտ հեռի փախչելու։

Պէտք չէ վախնալ թէ մասով կը ցուցնեն զմեզ՝ ասելով. "Ահա եղակաս մարդ մի". երբ շուղեմք միանալ մեծութեան կուսակցաց կամ գերի եղողներուն հետ։ Այս եղականութիւնն (¹) որքան որ հարկաւոր է մարդուս, այնքան եւս աւելի գովելի է, և առաքինի մարդը զայն իրեն փառք և պարտաւորութիւն համարելու է։

(¹) Եղականութիւնը առանձին մի հպարտութիւն է, որով մարդս շուզէր ուրիշին վերուց կամ գործոց յարմարիլ. թէեւ բարի լինին։ այլ ինչն իւր յատկութեամբ կ'ուզէ միշտ առանձին կամ մեկ հատիկ լինել աշխարհիս վերայ։

Գրքի երկրորդութիւն։

Զոմանք երբեմն ասացողք կը սանձնէք որ ժողովուրդն ամենն որ կուգայ առջեւս խառնիկ կը նստի բնութիւն. և թերեւս այն բազմաբնակեալն օրինակին չհնազանդիլն ի գաւառս. իւր փարթամութենէ նոցա կը հանդարտիցի. և երբ այլք բարձր ասողք կ'երդնին կուգայ արաշաւն մատուցանելու. այս քերթողաւոր խորհրդոցս մինակ կ'երթայք իւր արաշաւոնք Հրամանաւն նոսրերու Երուսաղէմայ ասանդրին մէջ։

Այս առաջինն օրինակիս մերայ ձեր փարթիր շինակեցէք. սիրուն արդեանք իմ. շար օրինակներուն յանդուգն յարձակման քաջասրտութիւնք գէմ դրէք. և եթէ ասնէք որ բոլոր մարդիկ թերթիներնին անուանակոչեալն ասուած են. զաւ մեջս հաստատիմ կենցիք իմ հոգեշահ խրատներուս մէջ. զորոնք աշխատեցայ ձեր սրտին մէջ տպաւորել։

Այլոց շար օրինակներն անարգած մատնեակներդ. սիրոյ նայիք որ զաւ և ես այլոց գայթակղութիւնք շար չմնիք։ Զայլոց մեծ մասին փառ լինելու սրտնեռ իրենք իրենց մէջ զերար գլխակ հանելն է. ուրեմն մի զրուցէք այնպիսի բան մի՝ որ ձեր բնակիրին գայթակղութիւն տայ. այլ իրրեւ Զնազարիոս բարեկամ այնպիսի բարի խրատներ տուէք. որոնց պէտք ունին։ Բայց ձեր փարթն և ես այնպէս լինելու է որ խոստիներդ հետ գարձնիրնիդ և յարմար գան։ վասն զի ինձանմէն խրատներով գանուիք ապէ-

կամենան յորդորելովք անոգուտ կը թիւի, եթէ
իւրաքանչիւր օրինակներով շարունակեան միտեցու-
նէք նոցա սիրտը։ Զկոյ արդարեւ ընկերու-
թիւնն մէջ շատ օրինակներէն աւելի ցաւալի
բան մը, և ոչ դուք՝ որքան մեծ զգուշութիւն
եւս ընելու թիւնիք, կրնար շատ ուրիշներ վատ
օրինակ մը։ Ու բիշներու գայթակղեցնելով՝
դուք ձեր անձին կը վնասէք, և մանաւանդ
վատ անուն կը ստանաք՝ թէ դուք անձամբ յան-
ցանք մը գործէք և թէ ուրիշներ գործել տաք։

Եւ որովհետև միտքս դրած եմ ցուցնել
ձեզ այս գրքուս մէջ այն մայրերն՝ ուսկէ բղ-
գուշանալու պէտք էր շղթայուելու, որպէս զի
առաքինութեան մէջ յաջողուիք։ Ի՛նչ զեմ
այս տեղս մը բանի խոսք եւս կատարելագու-
թեանց կամ թանաքանան անուանելու և
պարտականութիւնս վերջացնիք։

Երեսուներորդ մեծ ազգն մասն այնպէս կը
կարծեն, թէ տուէ թանաքանան ուսանելու
ուսնելու և ոչ փորձ ունենալ մը անկէ։
բայց խնդրուն և առաքինի մարդիկ միտքնին
կը հաստատեն՝ թէ թանաքանելու շատ վատ
գաղար և վատակար բան մը կայ։ մանաւանդ
անմարմն և անպարկեշտ ազգայոց համար։ Եւ այս
տեղս չեմ ուզեր մէկիկ մէկիկ գրել այն մարդոց
իրաւունքներն, զորոնք թէ՝ գրուցածներ իրենց
ազգայոցմէ կը բերեն։ այլ միայն ձեզ գաղա-
փար մը տալու համար այն վատութիւն վերայոք։
ուր տեղ թանաքանան գնացող ազգաց անպարկեշ-
քար կ'ինկնին։ բանաւորեան կը համարիմ տեղ

ձեզ մէկ հեզինակի մի կարծիքն, և իւր արդէն գրուցածը։

Թասին կարծիքն եւ օրինակը։

Այս ասած հեզինակս է երեւելի Գազզիացին Թասին, որ իւր սասոմիկ կիրքերէն և փառասիրութենէն մղուելով, առաջին անգամ ինքզինք բոլորովին թատերական գործեր յօրինելու տուած էր, և միշտ նոցա կը գրգռէր երջանիկ յաջողութեամբ. և կ'երեւէր թէ սրա չափ խելք տուող չկայր այս ուսմունքը յառաջացընելու, յոժարութիւն մի ձգելու հասարակութեան սրտին մէջ, և նորա պաշտպան կենալու։ Բայց երբ իւր կրից եռանդը դադրեցաւ և ինքն իրեն եկաւ, մտադրութեամբ հոգւոյ աչք կշռեց իւր վարքը, և փոխանակ ինքզինքն արդարացընել ուզելու, դատապարտութեան արժանաւոր համարեց՝ դատապարտելով տեսարաններն, ինչպէս որ բրաւ։ Ցետոյ թատերական գործեր յօրինող հեզինակները կը նմանեցընէր հասարակութեան թոյն խմցընողներու։ Թասին այս իւր կարծեաց հաւանելով, ոչ թէ միայն հրաժարեցաւ անկէ յետոյ թատերական բան գրելէ, այլ և իրեն օրէնք մի դրաւ թատրոնի մէջ և ոչ ոտք կոխելու։ և իւր արդէն ուրիշ բան չէր պատուիրեր, այլ միայն կը գգուշացընէր որ ամենեւին թատրոն չերթայ։ Եւ ահա այս բանիս վկայութիւն՝ նորա սոյն մասին իւր արդէն գրածը։

«Դու գիտես, սիրելի զաւակս, ինչ որ քեզ
» արդէն գրուցած եմ թատերական գործողու-
» թիւնց եւ կատակերգութիւնց վերայօք։
» Մաւալի քաղաքին մէջ թատերգութիւն մի
» պիտի կատարուի այս մօտերս։ Խիստ մեծ
» բան է քեզ եւ ինձ համար՝ որ դու չերթաս
» հոն։ Թագաւորն եւ բոլոր պաղատի մարդիկ
» գիտեն՝ որ ես իմ վերայ պարտաւորութիւն
» դրած եմ ոչ եւս թատրոնի մէջ ոտք կոխե-
» լու, ուստի վատ կարծիք կ՚ունենային քո վե-
» րայ եթէ այդ ծաղիկ հասակի մէջ իմ խրատ-
» ներս զանց ընելու լինիս։ Լաւ գիտեմ որ մար-
» դոց մօտ պատիւդ չես կորսուցներ թատրոն
» երթալով, բայց դու ոչի՞նչ բան կը համարիս
» Աստուծոյ առջեւ անպատիւ եւ անարդ լինելը։
» Կարծես դու թէ մարդիկ անգամ չեն զարմա-
» նար տեսնելով որ իմ տուած խրատներուս
» հակառակ կը վարուիս։ Մոռնէ՞ անգամ մի
» որ Պարկոնիայի եպիսկոպոսը, որ այս
» տեսակ զբօսանքները խիստ աւելօք կը սիրէ,
» դեռ մինչեւ ցայսօր ամենեւին մէկ տեսարան
» գացած չէ »։

Ականջ մի տաք ուրեմն այն տղայոց, որոնք դէմ կենալով կ՚ասեն՝ թէ կատակերգական եւ թատերական տեսարաններն ամենեւին վնաս մի չունին։ Դատին այս մասին մէջ ամենէն աւելի միտած եւ խելք տուած էր, եւ դուք հիմայ կարդացէք նորա հարազատ կարծիքը։ Ասիկայ ձեզ կանոն մի կրնայ լինել, ձեր վերայ առնելով իւր որդւոյն գրած խրատաբանութիւնը։

Մեր ազգին մէջ, և այն մի քանի երեւելի
բազաքաց մէջ միայն. քանի մի տարիներ ի վեր է
սկսեալ է այս սեւատակ հրապարակական ներ-
կայացումներ։ Որքան Եւրոպայի սեւատարանաց
ազատ ու հանդարտակ և մարդկային հանգստա-
թեան ներհակ ներգործութիւնները շունչով,
նոցա վտանգները եւս շունչն։ Թատերական
ներկայացմանց սեւի դրդիչ և անտարակ երբ
տատարաց դիւրազգայ կիրքերը վրդովող մա-
սերն են սիրահարական գործերը։ և որովհե-
տեւ ասքս նորահաս օրիորդաց միջանուռթեամբ
կը խաղացուին։ նոցա հրապուրիչ սեռքն ու
կերպարանքը միայն բաւական լաց ցկիր մի է
սատանեկութեան դիւրատաւ կրիցը բորբոք-
ման։ Վասն որոյ բարեբախտ կը համարիմ ես
զիս որ ազգային ներկայացումներն այս սեւատակ
արարուածներ չեն։ այլ միայն ազգային դշա-
նաւոր դիպած եւ դիւցազնագործութեանց
անձնաւորեալ պատմութիւնքն են։ իսկ ոչիչ
արտաքին արարուածներն եւս բարոյականա-
թեան վերայ հիմնուած գործեր են։ Այսպս ս-
գուանները, զոր շատ կարի երբէք ասուած,
հատարակութեան յայտնի եղած են։ և առանց
պարտուակու խանգարեալ՝ այս սեւատակ ներկայա-
ցումներն, որոնց դերասանները միայն արական
սեռէ են, շունչն իրենց մէջ խղացուցիչ եւ
հուսալամիտ սեռիներ։ վասն որոյ փոխանակ
երիտասարդութեան աշխոյժն իւղաբեր մեզկե-
լու և հանձարն ու միտքը ծնեցուցու եւ բիմեցու-
ցու սիրոյ դիւրաբեկելու, ընդհակառակը կը

վառէ եւ կը թոթափէ այրեալն մեհանձնութիւնն եւ ապգամիրեալն եռանդով, եւ նորա սիրոն ու միտքը կը կրմէ եւ կը հրահանգէ առաքինական բարեմասնութիւնքը։

Իմ խօսքս մի միայն Եւրոպացիներ թատերաց վերայ են, որոց ներկայացումներքը թէ պէտք բարոյականութիւնն զուրկ չեն, այլ բուռ որուն նորա արուեստնուն լեզուն մեր ազգի պատուական շատերուն անծանօթ է, վասն որոյ առանց կարենալու նորա ասացուածքներէն իմանալ մի քաղել, բարոյապէս օգուտ ու շահ կրնել, այլ միայն գերասանուհեաց արտաքին հրապուրիչ պատկերներէն գիւթուելով, եւ իրենց անմեղ սիրտերին եւ զգայնութիւնին մուտնալով, վրդովմամբ կրնք յետ կը գառնան, եւ կը մնան թէ ներսապէս եւ թէ բարոյապէս։

Վասն որոյ ահա ես եւս Պասքին իւր ազգէն առած պատուէրը ձեզ կուտամ, սիրելի ազգակք իմ, ամենեւին ոչք շկոխէք օտարազգի թատրոնաց մէջ, ուր անմեղ գիւրաւ կը կորուցուին ձեր անմեղութիւնքը, իսկ ազգային թատրերքը, թէպէտ քիչ մի յառաջ ասացի, չունենալով այն միջոցներքը, կրնաք երբեմն երթալ, մանաւանդ ձեր կուսակցաց հանդիսին մէջ, վասն զի ձեր մտաց դատողութիւնն եւ խնդացմանուն իրաւունքը կատարեալ լինելով կրնաք ազնիւ գիշեր անցնել։

Պարահանդէսներն եւս քիչ վտանգաւոր չեն անփորձ երիտասարդաց համար, որ գոնէ

թատերախաղերու քարոյական մասերն եւս չունին։ Երեւելի պարատականին մէկը, որ ազէկ կը ճանչէր նոցա վատնդները, եպիսկոպոսի մի հետ նոցա վերայօք խօսելով՝ այսպէս ասաց. «Եւ ամենեւին չէի կարծեր թէ պարտհանդէս-«ներն այսքան վատնգաւոր լինին։ Այս ժողով-«ներուս մէջ հաւաքուող անձինք սովորաբար «երիկ ու կնիկ մարդիկ միասեղ կը լինին, որոնք «եթէ առանձնութեան մէջ շատ ներդութիւն «կը կրեն իրենց կրից յաղթելու, այսպիսի «տեղուանք որ գտնուին, դիւրաւ կը յաղթին «փորձութենէ, ուր ճգնաւորք անգամ այս «հանդէսին զարդարանքները, ջահերը եւ «քաղցրաձայն նուագարանները տեսնելով ու «լսելով՝ կը վառին կը բորբոքին։ Վասն որոյ «ես այնպէս կը կարծեմ՝ թէ քրիստոնեայ «եղողը հեռու փախչիլ պէտք է պարտհան-«դէսներէն։ Եւ կ՚երեւի ինձ՝ թէ տեսչական «տեսանները, որ մարդոց բարի վարուց հոգ «տանելու համար հաստատուած են, արգիլել «պէտք են զիրենք հոն երթալու»։

Կարծեմ, սիրելի որդեակք իմ, որ ձեր երթալու ճանապարհը ուսուցանելու համար յարմար ինչ որ կայր՝ խօսեցայ ձեզ, հեռացնելով միանգամայն ձեզմէ այն ժայռերն՝ որոնց խիստ շատ անգամ կը զարնուիք։ Եւ մի կարծէք թնա՛ թէ ձեզմէ պահանջածս դժուար բան մի է՝ ի գործ դնելու։ Մեւս անցեալ դասերուն մէջ ձեզ նկարագրած եղանակներս, որով պէտք էք վարուիլ աշխարհիս մէջ, ամենեւին դժուա-

բութիւն մի չունին, նաեւ ձեզ հասակակից եւ վիճակակից անհամար տղայք ի գործ դրած են, եւ այնպէս կը վարուին։

Այս բաներուս զօրաւոր փորձերը սեսաք վերը գրած օրինակաց շարու�ուն մէջ. բայց առաւել ոյժի համոզուիք ինձ՝ եթէ շարանց վարքը կարդալու լինիք, որու մէջ ներկայացուած սուրբ մարդիկն ամեն ժամանակ եւ աշխարհիս ամեն կողմն երեւելի հանդիսացան գերազանց առաքինութիւններով, նաեւ խիստ դժուար պարագաներու, հակառակ գործերու եւ սոսկալի հալածանաց մէջ։ Այս գիրքս, զոր օրը գոնէ մէկ քառորդ ժամ պէտք էք կարդալ, խիստ շահաւոր կը լինի ձեզ, ձեր սրտին մէջ եռանդ մի կը ձգէ նոյն ճշմարիտ դիւցազանց նմանելու, այս աշխարհիս մէջ ձեր երջանկութիւնը կը շինէ, եւ հանդերձեալ կենաց մէջ յաւիտենական եւ կատարեալ ուրախութիւն ստանալու ապահով յոյս կուտայ։

ՑԱՆԿ ԵՒԻԹՈՑ

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ 7

Ա. Թէ ինչպէս հարկաւոր է որ ազգայք մանկաւ թիւնէ սկսին առաքինաւորիանալ հետաւորել 11

ԱՌԱՆՑ. Երկու նաւաստիներ 14

Բ. Հնամեայ սովորութիւն կայ՝ որ խնայողներն ազգայոց՝ թէ գժուարագոյն բան է մանկաւ թիւնէ մատնեալ ուսուցանել զայս ուսումնաւորութիւնն առ զղջել 16

ԱՌԱՆՑ. Կապիրն և նորարարն 20

Գ. Աստուածպաշտաւորութիւն վերայ 23

ՅՕԳԼ. Ա. Աստուածպաշտաւորութիւնէ առաջի հարկաւոր բան չկայ 25

ՅՕԳԼ. Բ. Ամէն բանէն առաջի աստուածպաշտաւորութիւնն բնական է է 26

ՅՕԳԼ. Գ. Աստուածպաշտաւորութիւնք միայն կրնայ զմիտ երջանիկ քնել 29

ՅՕԳԼ. Դ. Աստուածպաշտաւորութիւն պարտաւորոց թիւնէ դիւրաւ կրնան 'ի գործ դրուել 31

Դ. Աստուածպաշտաւորութիւն այլ և այլ կրթաւորութիւնքը . 35

ՅՕԳԼ. Ա. Աղօթք 36

ՅՕԳԼ. Բ. Սուրբ պատարագ 37

ՅՕԳԼ. Գ. Առանց հաղորդաւորութիւն առնել 39

ՅՕԳԼ. Դ. Աստուածպաշտաւորութիւն գրքերուն քնութիւնքը 42

ՅՕԳԼ. Ե. Պահպանութիւն հրեշտակին առաջնորդաւորութիւն ճանապարհորդաւորութիւն քնոգ երթաստարգը . . . 44

Ե. Անմեղաւորութիւն վերայ 47

Զ. Անմեղաւորութիւն պահանջեալ խնամքներն և նախապաշտաւորութիւնքը և զանոնք պահպանելու միջոցները . 58

Է. Աղի թարեկամաց վերայ 63

ԱՌԱՆՑ. Խնձորին ծառն իւր պտուղներն մի թիւցած . 64

Ը. Նոյն նիւթին վերայ. պոսինքն նոյն փառաւորին՝ որոնք ամէն կ'ինկնին ազգայք մեզի ընկերանալու հետ առաջնորդելով 74

ԱՌԱՆՑ. Պզտիկ մուկն և ձիր կատուն 76

ԳԼՈՒԽ Երես

Թ. Վ. Դատաստան եւ վերջին գրքերը 81
ԱՌԱՆՑ. Երկրպագումն ու ապաշխարութիւն 85
Ժ. Տէրոջ պարտաւորութիւնները իրենց ծնողաց դէմ. 87
ԺԱ. Տէրոջ իրենց գաստիարակաց եւ վարժապետաց դէմ ունեցած պարտաւորութիւնները 105
ԱՌԱՆՑ. Խաչ առնելը խոնարհաբար շուտը 114
ԺԲ. Վարժապետաց անաշառութիւնը պետք չէ որ աշակերտաց սիրը պատճառեն անանցանելի 119
ԱՌԱՆՑ. Ընթերցումն եւ այլ գործք 120
ԺԳ. Հնազանդութեան վերայ 127
ԺԴ. Տէրոջ իրենց ընկերաց հետ ինչպէս պետք է վարուին . 139
ԺԵ. Թէ ինչպէս պետք են վարուիլ ազգայք ազգատոյց հետ եւ ինչպէս ազգութիւն քանի՛ սեռ են նոցա . . . 161
ԺԶ. Բարի գործութեան օրինակ 167
ԺԷ. Ճշմարիտ ազատութեան վերայ 185
ՅՕԴ. Ա. Ճշմարիտ ազատութիւնը չի՛նչ ազնուութեան վերայ չէ 184
ՅՕԴ. Բ. Մարդուս ազատութիւնը փարթամութեան վերայ չէ 188
ՅՕԴ. Գ. Պատուոյ եւ իշխանութեանց վերայ . . . 195
ՅՕԴ. Դ. Քաջութեան եւ պատերազմական գործոց վերայ 196
ՅՕԴ. Ե. Տաղանդաց եւ հանճարոց վերայ 198
ԱՌԱՆՑ. Աղուանգաց. Պարկեշտութիւն եւ վերա Աստուածութիւնը 200
ՅՕԴ. Զ. Ճշմարիտ ազատութիւնն առաջինութեան մէջ կը կայանայ 207
ԺԸ. Գիտութեանց վերայ 210
ՅՕԴ. Ա. Գիտութեան յարգը . . . . . »
ՅՕԴ. Բ. Գիտութեան վերայ եղած յարգը . . . 215
ՅՕԴ. Գ. Գիտութեան օգուտները 220
ԱՌԱՆՑ. Գեղեցիկ մեր Հանդապարհորդը 222
ԺԹ. Տէրոջ ուսանելու ուսումնարանները 224
ՅՕԴ. Ա. Կրօնական վերայ . . . . . »
ՅՕԴ. Բ. Գրաբար լեզուին վերայ 251
Ի. Աշխատասիրութեան վերայ 244
ԻԱ. Ծուլութեան եւ գաղտագիտակցութեան վերայ . . 251

ԳԼՈՒԽ ԵՐԵՍ

ԻԲ. Զրաստանաց և խաղալու վերայ 258
Յոդ. Ա. Արգելուած զրաստանքներ 259
Յոդ. Բ. Խաղալ և խաղալու ժամանակ պէտք եղած կանոններու վերայ 265
ԻԳ. Սահմանութիւն վերայ 271
ԻԴ. Որկրամոլութիւն վերայ 278
Յոդ. Ա. Որկրամոլութիւնն անարգ մոլութիւն մի է . 279
Յոդ. Բ. Որկրամոլութիւն չար հետեւանքները . . 282
ԻԵ. Քաղաքավարութիւն վերայ 289
Յոդ. Ա. Թէ ի՞նչ է քաղաքավարութիւնը . . . . »
Յոդ. Բ. Մարդավարութիւն և սիրուն վարմունքի վերայ 290
Յոդ. Գ. Քաղաքավարութիւն և մարդավարութիւն ազնուական վարմունքին մէջ կը կայանայ . . . 292
ԻԶ. Կնոջ վիճակ ընտրելու վերայ 298
Յոդ. Ա. Այս ընտրութիւն հարկաւորութիւնը . . 299
Յոդ. Բ. Աղէկ ընտրութիւն ընելու համար պէտք եղած նախապատրաստութիւնները 302
ԻԷ. Տղայք ժայռերուն դէմ զարնելէն կը զգուշացուին . և աչխարհիս մէջ շատ անգամ հանդիպած վատանքները 308